

**Copyright 2009**

by the Armenian Prelacy of Canada  
All Rights Reserved

Published by  
the Armenian Prelacy of Canada  
3401 Olivar-Asselin  
Montreal, Quebec  
Canada  
Prelate, Archbishop Khajag Hagopian

Library and Archives of Canada  
**The History**  
**of the Sourp Hagop Armenian Apostolic Church**  
**Montreal, Canada**  
**(1958-2008)**  
by Rev. Karnig Koyounian

ISBN: 978-0-9731550-3-9

**«ԲԱՆ ԵՒ ԳԻՐ» ՄԱՏԵՆԱՀԱՐ ԹԻՒ 7**

**ԳԱՌՆԻԿ Ք. Գ.**

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ**

**ՈՐ Ի յՈՒԹՐԷԱԼ, ԳԱՆԱՏԱ**

**1958-2008**

**(50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)**

**ՄՈՆԹՐԷԱԼ 2009**

Սոյն շահորը լոյս տեսաք

ՀԱՌՐՀԻ

**ԲԱՍՏՐՄԱՃԵԱՆ ՖՈՆՏԻ**

ԱՊՏԱԶԵՌՆ ԱԵԿԵՆԱՍՈՒԹԵԱՆ

**Ի ՅԻՇԱՏԱԿ**

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՀԻՄՆԱԳԻՐԱԵՐԷՆ

*Հրատ, Երոտատ և՛ Յարոք*

***Բասրյանն արարուտու***

*La publication de ce livre fut possible  
grâce au don généreux  
de la Fondation Pastermajian  
à la mémoire des frères*

***Hrant, Yervant et Hagop Pastermajian***

*Membres fondateurs de la communauté arménienne  
Sourp Hagop*



Յակոբ, Երուանդ եւ Հրանդ եղբայրներ

Ձօն՝  
անդ հանգչող  
հօրս



Սուրբ Յակոբ Մծբնացի եւ հրեշտակը

## ՆԱԽԱԲԱՆ

Երեք տարիներ առաջ նախաձեռնեցի եւ սկսայ ուսումնասիրել Մոնթրէյալի Ս. Յակոբ եկեղեցւոյ համայնքին վերաբերող արխիւները եւ աղբիւրները: Ընդարձակ աշխատանք մըն էր, որ մեծ սիրով եւ խանդավառութեամբ յառաջ տարի, քանզի համայնքը արժանի էր իր յիսնամեայ վաստակին պատմութիւնը ունենալու:

Ուսումնասիրութեանս պատրաստութեան ընթացքին կարգացի բերաւոր էջեր՝ թէ՛ ձեռագիր, թէ՛ մեքենագրեալ, թէ՛ գրաչարեալ, եւ թէ՛ տպագրեալ: Հիներուն ալ հարցուցի. ոմանք կրցան լուսաբանել որոշ հարցեր, ուրիշներ՝ տարտամ պատասխաններ տուին:

Ներկայ հայ ընկերութեան մէջ յիշողութեան աշխատանք չի տարուիր: Անցեալի հայ ընկերութիւններուն յիշողութիւնը աւելի խոր էր եւ աւելի վստահելի:

Անշուշտ ծանօթ է, որ պատմագրական աշխատանք մը պարտաւոր է նախ կենալ արխիւներու եւ գրեալ աղբիւրներու վրայ, եւ ապա՝ յիշողութեան: Այս սկզբունքով ըրի պրպտումներս եւ հատորը աւարտեցի:

Գիրքին Ներածութիւնը, եւ առաջին գլուխը, որ միւս ութ գլուխներէն լայն է, եւ համայնքի ընթացքին գլխաւոր ճամբան կը ներկայացնէ, դրուագ առ դրուագ լոյս ընծայած էի Հորիզոն Շաբաթաթերթի էջերուն մէջ՝ 9 Յունիս 2008-15 Յունիս 2009:

2008-ի Նոյեմբերին հրատարակուած «50-ամեակ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ» Հորիզոն Բացառիկին (ՀԲ) մէջ, փութանակի համառօտած էի աշխատանքիս Ներածութիւնը, Ա. եւ Բ. Գլուխները (Բ. Գլուխը կը վերաբերի Ս. Յակոբի Հայեցի Դաստիարակութեան Օճախներուն) եւ անոնց վրայ աւելցուցած նաեւ է. եւ Ը. Գլուխները, որոնք ցանկեր են (ՀԲ, էջ 51-93):

Այս գիրքի խմբագրման առիթով՝ հրապարակին յանձնուած էջերուն վրայ աշխատեցայ, ճշգումներ կատարեցի եւ վերագասաւորեցի զանոնք. հետեւաբար, կը խնդրեմ որ ապագային չօգտագործուին Շաբաթաթերթի Հորիզոնին մէջ լոյս տեսած դրուագները, իսկ Հորիզոն Բացառիկի ուսումնասիրութիւնը կրկին հրատարակման պարագային՝ սրբագրուի այս գիրքէն մեկնելով:

Համայնքին երանեալ բարերար՝ Տիգրան Հաճէթեանի փափաքն




էր գիրքին մէջ տեսնել անգլերէն կամ ֆրանսերէն ամփոփումը յիսնամեայ ընթացքին: Օրին խոստում տուած էի կատարել արդար փափաքը, եւ ահա Յաւելուածին մէջ զետեղած եմ ֆրանսերէն ժամանակագրութիւնը:

\*  
\* \*

Այստեղ կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել յատկապէս Սուրէն արք. Գաթարոյեանին, որ հսկայ աշխատանք տարաւ եւ Ս. Յակոբի արխիւները հաւաքեց ու դասաւորեց: Շուրջ երեսնամեակ մը առաջ նախական հաւաքում եւ դասաւորում կատարած էր բժ. Վիգէն Մասէրէճեան: Նաեւ՝ Արմէն ա. քհնյ. Իշխանեանին, Վրէժ-Արմէն Արթինեանին, Վարուժան Սերոբեանին, Շահան Բագրատունիին, Յակոբ Սիմոնեանին, Յակոբ Պուլկարեանին եւ Վանուհի Իսաջանեանին՝ իրենց շատ շահեկան լուսաբանութիւններուն համար: Այլեւ՝ Հայկ Գազանճեանին՝ ուսումնասիրութեան վերընթերցման եւ թանկագին նկատողութիւններուն համար: Վիգէն Աբրահամեանին՝ էջադրման համար: Հորիզոն Շաբաթաթերթի խմբագրութեան՝ որ թէ՛ պարբերականին էջերուն մէջ յատուկ տեղ տրամադրեց, թէ՛ Հորիզոն Բացառիկի մը արտօնութիւնը տուաւ, եւ թէ՛ իր հին ու նոր թիւերը իմ տրամագրութեան տակ միշտ բաց պահեց: Ինչպէս՝ երէցկնոջ՝ Նինա Գոյունեանին, իր համբերութեան, զոհողութեան եւ քաջալերանքին համար:

Հուսկ կը փակեմ իմ այս խօսքը՝ երախտագիտութիւնս յայտնելով Բաստրմաճեան Ֆոնտի վարչութեան անդամներուն: Իրենց իսկ կողմէ՛ եկաւ առաջարկը այս ուսումնասիրութեան ծախսը ստանձնելու: Թող Աստուած իրենց արթնութիւնը միշտ վառ պահէ: Եւ յաւերժ օրհնեալ մնայ յիշատակը Հրանդ, Երուանդ եւ Յակոբ Բաստրմաճեան եղբայրներուն:

ՀԵՂԻՆԱԿ



Սէնթ Զօթիքի Ա. Յակոբ եկեղեցին



Այժմու Ս. Յակոբ եկեղեցին

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

## Ս. ՅԱԿՈԲԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ

1958-2008

### ՄՈՒՏՔ

*«Զի թէպէտ եւ եմք ածու փոքր  
եւ թունով յոյժ ընդ փոքու սահմանեալ  
եւ զօրութեամբ տկար եւ ընդ այլով  
յոյով անգամ նուանեալ թագաւորութեամբ,  
սակայն բազում գործք արութեան  
գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս,  
եւ արժանի գրոց յիշատակի».*

**Մովսէս Խորենացի:**

Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան 27 Օգոստոս 1960-ի Տարեկան Տեղեկագիրին մէջ գրուած է. «Կը կարծեմք, որ մէկ նոր հայ համայնքի մը պատմութեան հիմն է, որ կը դրուի: Որքան նիգ ու գոհողութիւն կատարուի, այնքան աւելի փայլուն եւ յիշատակելի կ'ըլլայ այդ պատմութիւնը»:

Համայնքը նամբայ ելած էր գոհողութեան մշակոյթին մէջ, որ Սփիւռքի գոյապայտարին մղիչ ուժը եղաւ: Ծնած էին կուսակցական (Միհրան Փափագեան կոմիտէութիւնը՝ 1956 թ.) եւ բարեսիրական (ՀՕՄ-ի Մոնթրէալի մասնաճիւղը՝ 1957 թ.) միաւորները. եւ ահա 18 Յուլիս 1958-ին Յակոբ Բաստրմանեանի տան մէջ կը գումարուէր մեկնակէտային ժողով մը, որ պիտի նպատակադրէր կեդրոն/եկեղեցի մը ունենալ:

Այդ բուականէն ստիճան, արութեան գործերու հանդիսադրում մըն է Ս. Յակոբի համայնքին կեանքը, ըստ իր հովանաւոր սուրբի օրինակին, որ հակառակ բոլոր անտանելի դժուարութիւններուն եւ փորձութիւններուն, առանց յուսահատելու Մասիսն ի վեր բարձրացաւ, եւ ինչպէս հրաշապատումը կ'ըսէ՝ Նոյեան կամ փրկութեան Տապանէն մասունքի արժանացաւ:

# Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

## Ա. ՀԱՅԵՐՈՒ ԳԱՂԹԸ ԳԱՆԱՏԱ:

19-րդ դարու կեսին, 13 հայերէ բաղկացած համայնք մը կար<sup>1</sup>:

Սակաւաթիւ հայեր Գանատա կը մտնէին 19-րդ դարու վերջաւորութեան, եւ 20-րդի սկզբնաւորութեան: Մեծամասնութիւնը Օսմանի ենթակայ երկրէն պիտի ըլլար: Դաժան օրեր էին այնտեղ. ստրկական կացութիւն եւ անտանելի պայմաններ: Միւս կողմէ՝ Գանատայի ներգաղթի քաղաքականութեան ընտրողական նկարագիրը, անոր մէջ տիրող ցեղային նուիրապետութեան գաղափարը մեծ դժուարութիւն կը ստեղծէր, եւ որուն յաղթահարմամբ է նաեւ, որ հայեր Գանատա կը մտնէին:

1890-ական տարիներէն մինչեւ Յեղասպանութիւնը՝ Գանատա ներգաղթողներուն մեծամասնութիւնը Քղիէն էր<sup>2</sup>:

Քղեցիները նախ սկսան Միացեալ Նահանգներ ճամբորդել: Նոյն ատենները փոքրաթիւ քղեցիներ Գանատա ալ կը հասնին: Իսկ 1900-1914 Միացեալ Նահանգներ մտած 1925 քղեցիներէն 221-ը գանատական քաղաքներ (Պէնտֆորտ, Համիլթըն, Սէյնթ Գաթրինզ, Տանտաս, Թորոնթօ եւ Կալթ) կը տեղափոխուին<sup>3</sup>:

Քէպեգ նահանգին մէջ շատ սակաւաթիւ հայեր կային 1890-ական թուականներուն: 20-րդ դարու առաջին տասնամեակին՝ Մոնթրէալի մէջ շուրջ 300 հայեր կ'ապրէին<sup>4</sup>:

1920-ին՝ 1915-ով ընդհատուած ներգաղթը կը վերսկսի, եւ ըստ պաշտօնական տուեալներու՝ մինչեւ Գանատական Հայ Գոնկրէսի գործունէութեան սկզբնաւորումը, այսինքն՝ 1950-ի սեմը, Գանատա մտած են 1315 հայեր:

Ըստ 1931-ի պաշտօնական մարդահամարին, Գանատայի մէջ բնակող շուրջ 620 հայեր կային: Եւ այս 620-ին 132-ը բնակած են Քէպեգ նահանգին մէջ: Ենթադրուած է, որ Քէպեգի մէջ բնակած հայերուն թիւը պէտք է շատ աւելին եղած ըլլայ քան 132-ը. համաձայն այս կարծիքին, 1930-ականներու սկզբնաւորութեան մօտաւորապէս 650 հայեր կ'ապրէին նա-

հանգիսն մէջ<sup>5</sup>:

1948-ին կը հիմնուի Գանատական Հայ Գոնկրէսը (Canadian Armenian Congress: ԳՀԳ-ը որեւէ կապ չունի Գանատահայոց Գոնկրէսին հետ - Congress of Canadian Armenians -, որ 2004-ի Յունիսին սկսաւ, եւ քաղաքական արեւելում ունի: Մինչդեռ ԳՀԳ-ը գաղթականական եւ ընկերային ծառայութիւն մը եղաւ), նպատակ ունենալով ամէն ջանք ի գործ դնել՝ համոզելու համար տեղական կառավարութիւնը, որ հայերը ասիական ցեղի չեն պատկանիր, ու սրբագրել տալով օրէնքին այն անարդար մասը՝ դիւրացնել հայերու Գանատա մուտքը<sup>6</sup>:

ԳՀԳ-ին առաջին նախագահը կ'ըլլայ Յակոբ (Ճէք) Մուրատեան, իսկ 1952-էն մինչեւ պաշտօնական վախճանը 1968՝ Երուանդ Բաստրմաճեան<sup>7</sup>:

Իգապէլ Գաբրիէլեան-Չըրչիլ ԳՀԳ-ի մասին գրած է, որ թէեւ անոր անդամները իրենց սեփական գործով եւ ընտանիքով ծանրաբեռնուած կամաւորներ էին, սակայն տարողութիւնը եւ տեսակը գործին որ Գոնկրէսին անունով տարին՝ ահագին էր<sup>8</sup>: Այս կազմակերպութեան եռանդուն գործիչն էր Երուանդ Բաստրմաճեան, եւ իր կողքին՝ Քերոբ Պտուկեան: Վերջինս ԳՀԳ-էն անկախաբար ալ գործեց:

Կազմակերպութեան միջնորդութեամբ հազարաւոր հայեր Գանատա մտան, շուրջ 5000:

Մինչեւ անցեալ դարու կէսը, Գանատա ներգաղթող հայերուն մեծ մասը Օնթարիօ կ'ուղղուէր: 1953-էն սկսեալ՝ կամաց կամաց կը փոխուի հասցէն՝ ի նպաստ Քէպեգի: Այդ առնչութեամբ, ԳՀԳ-ի գլխաւոր երկու դէմքերուն՝ Եր. Բաստրմաճեանի եւ Ք. Պտուկեանի մոնթրէալաբնակ ըլլալը կարեւոր դեր պիտի խաղար<sup>9</sup>:

1950-ական թուականներուն սկիզբը, Քէպեգի հայ համայնքին թիւը չէր անցներ 300-350-ը<sup>10</sup>: 1962-ին գրեթէ 75%-ը հայերուն Օնթարիօ նահանգին մէջ կը բնակէր, իսկ աւելի քան 25%-ը՝ Քէպեգ նահանգին<sup>11</sup>: Պատկերը նոյնը պիտի մնար մինչեւ 80-ականներու երկրորդ հնգամեակը: Արդէն 90-ականներուն սկիզբը՝ Քէպեգի հայութեան թիւը անցած էր Օնթարիոյ գաղութը: Իսկ 1991-ին՝ պաշտօնական թիւը 13,895 էր<sup>12</sup>:

1950-1959 1370 հայեր գաղթած են Գանատա. Յունաստանին, Թուրքիային, Ֆրանսային, Եգիպտոսին եւ Սուրիային: 1960-1966 շուրջ 4950 կ'ըլլայ թիւը, եւ ինչպէս 1950-1959, նաեւ այդ տարիներուն մեծամասնութիւնը Մոնթրէալ կը հաստատուի: Այն ատեն եկողներէն շատերը Եգիպտոսէն էին: Ապա ալիքներ կու գային Լիբանանէն, Թուրքիայէն, Յունաստանէն, եւ Իսրայէլէն:

1960-ականներու սկիզբը՝ Մոնթրէալի հայութեան թիւը արդէն 900-ի հասած էր<sup>13</sup>: Այս թիւը շատ արագօրէն կը մեծնայ: Արդէն 1965-ի վերջաւորութեան 5,000-ի մասին կը խօսուէր<sup>14</sup>:

1966-ին Գանատայի կառավարութեան ներգաղթի բաժանմունքին կողմէ ներգաղթողներուն ցեղային ծագումի նշման ջնջումը՝ պիտի դժուարացնէր այդ տարիներէն սկսեալ Գանատա մտնողներուն ինքնութեան թիւին ճշգրտմը:

1970-ին, Գանատայի հայութիւնը պաշտօնականօրէն կը հաշուուի 6250 հոգի: Արդարեւ, դժուար է ըսել, թէ 1966-1970 քանի՞ հայեր եկած են այս երկիրը: Անհաւանական չէ ենթադրել, թէ դարուն եօթներորդ տասնամեակի սկզբնաւորութեան՝ առաւել քան 10,000 հայեր կ'ապրէին Գանատայի տարածքին սփռուած, գլխաւորաբար Օնթարիօ եւ Քէպեգ նահանգներուն մէջ:

Մինչ 1960-ականներուն Գանատա ներգաղթողներուն մեծամասնութիւնը Եգիպտոսէն էր, 1970-1993 Լիբանանէն կ'ըլլայ անիկա: Եգիպտահայերը գրեթէ ամբողջութեամբ Մոնթրէալ կը հաստատուէին, իսկ Լիբանանահայերէն զանգուած մը Օնթարիոն պիտի նախընտրէր, յատկապէս Թորոնթօն:

1994-էն ասդին Հայաստանէն եկողները աւելի կ'ըլլան քան Լիբանանէն եկողները:

1980-ական թուականներէն ասդին իրանահայերու եւ իրաքահայերու արտագաղթը Գանատան ալ հասցէ պիտի ունենար: Օնթարիոն պիտի ըլլար անոնց նախընտրած նահանգը: Մեծաւ մասամբ Թորոնթօ պիտի ուղղուէին եւ հաստատուէին անոնք:

Ըստ մարդահամարներուն, 1996-ին Օնթարիոյի հայութեան պաշտօնական թիւը 16,735-ի հասած էր, իսկ Քէպեգի հայութեան թիւը՝ 18,215-ի:

Գանատական այլ նահանգներէն՝ Պրիթիշ Գոլմպիան շուրջ 1500 հայեր ունէր 1990-ականներու սկզբնաւորութեան<sup>15</sup>: Անոնց մեծամասնութիւնը կեդրոնացած էր Վանգուվըր եւ Ռիչմընտ քաղաքներուն մէջ<sup>16</sup>:

2001-ին համար մարդահամարները ցոյց կու տան, թէ 40,505 հայեր կ'ապրէին Գանատայի մէջ: Իսկ Քէպեգի հայութեան պաշտօնական թիւը 18,860 էր: Նոյն տարուան Օնթարիոյի հայութեան պաշտօնական թիւն էր՝ 18,245:

2006-ին՝ Քէպեգի գաղութը պաշտօնապէս 23,230 հաշուրւած է, մինչ Օնթարիոյի գաղութը՝ 23,330: Եւ Գանատայի հայութեան պաշտօնական ընդհանուր թիւ ցոյց տրուած է 50,500:

Քէպեգի հայութեան մեծագոյն մասը կեդրոնացած է Մոնթրէալի եւ Լաւալի մէջ: Արդ, 21-րդ դարու սեմին, նահանգին մէջ բնակող հայերուն թիւը աւելին էր քան պաշտօնականօրէն ներկայացուածը: Ըստ կարծիքի մը, 2003-ին 25,000-30,000 հայեր կ'ապրէին Մոնթրէալի եւ Լաւալի մէջ<sup>17</sup>: 2008-ին Մոնթրէալի ու անոր շրջակայքին եւ Լաւալի ու անոր շրջակայքին բնակող հայութեան թիւը 30,000-ի շուրջ է<sup>18</sup>:

2008-ին, Օնթարիոյի ամենակեդրոնացած համայնքին՝ Թորոնթոյի թիւը կը տարուբերի 20,400-20,800-ի միջեւ<sup>19</sup>: Իսկ հարաւային Օնթարիոյի տարբեր քաղաքներու եւ մայրաքաղաքի՝ Օթթաուայի հայութեան գումարով՝ նահանգի հայերուն թիւը կրնայ բարձրանալ 24,000-25,000-ի: Ըստ Թորոնթոյի Հայ Կեդրոնէն տեղեկութեան մը, Օնթարիոյի հայութեան ընդհանուր թիւը ներկայիս 25,000-30,000-ի միջեւ է:

Եւ եթէ այս գումարներուն վրայ աւելցնենք Պրիթիշ Գոլմպիայի գաղութին թիւը՝ որ ներկայիս շուրջ 3000 կ'ենթադրուի, ապա ուրեմն Գանատայի հայութեան ընդհանուր թիւը աւելի քան 60,000 կ'ըլլայ:



**Բ.- ՄՈՆԹՐԷԱԿԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԾԽՈՒՄԸ ԵՒ ՏԵՂԱՓՈՒՍՈՒԹԻՒՆՆԵՐԸ (ԵՐԷԿ ԵՒ ԱԿՍՕՐ):**

*Ինչպէս նախորդ բաժնով ականարկեցի, Մոնթրէալի հայութեան պատմութիւնը կը սկսի 1890-ական թուականներուն: 20-րդ դարու սկզբնաւորութեան շուրջ 300 հայեր կ'ապրէին Մոնթրէալ:*

*Հայերու առաջին բնակարանները քաղաքի հարաւ-արեւելեան տարածքին մէջ եղած են<sup>20</sup>: Արդէն հիւսիսային կողմը մինչեւ 1960-ականները «անտառ» էր, ինչպէս կ'ըսուի, ուր նապաստակ որսալու կ'երթային: Հողամշակութեան դաշտեր ալ կային այնտեղ:*

*1930-1940-ի առաջին տարիները քաղաքի հայութեան թիւը 200-էն քիչիկ մը աւելի էր: 1931-ին հիմնուած Մոնթրէալի Հայուհեաց Բարենպատակ Միութեան հասցէն (1101 Bleury St.) շրջանին մէջ թեթեւ կեդրոնացում մը կը թելադրէ: 1940-ականներու վերջաւորութեան ոմանք Միացեալ Նահանգներ պիտի անցնէին եւ գաղութին թիւը նուազէր<sup>21</sup>: Մնացողները կը բնակէին Ave. du Parc, Hutchison, Jeanne Mance, St. Laurent, Park Extension, Ave. de l'Esplanade, St. Zotique, եւ մինչեւ աւելի հիւսիս՝ Jean Talon-ի, Boul. Crémazie-ի մէջ<sup>22</sup>: Այս շրջանը այն օրերու Մոնթրէալի նորաչէն ծայրամասն էր եւ բանուկ շուկան, յատկապէս իր Ave. du Parc-ով:*

*1950-ի կէսէն մինչեւ 1960-ականներու վերջը հայեր կեդրոնացած են նեղ տարածութեան մը մէջ, որ Ave. Mont-Royal-էն Jean Talon երկարող Ave. du Parc-ն էր, եւ անոր յարակից փողոցները, յատկապէս՝ Bernard եւ Ave. du Parc-ի ծիրը: Նաեւ Boul. l'Acadie-ի արեւելեան կողմը, որուն հիւսիսային եւ արեւելեան սահմանները Ave. Crémazie-ն եւ Ave. Querbes-ն էին<sup>23</sup>: 1960-ի սեմին 1000 հոգինոց գաղութը մեծամասնութեամբ հաւաքուած էր աշխարհագրական այս շրջագիծին մէջ: 1960-ականներուն Park Extension-ը կը լեցուէր<sup>24</sup>:*

*1950-ականներուն Գանատա գաղթած հայերուն առաւել քան մէկ երրորդը Յունաստանէն էր: Յաջորդ ալիքը՝ Թուրքիա-*

յէն: Անոնք պիտի հաւաքուէին վերոյիշեալ տարածութեան մէջ:

Park Extension-ի բնակարանային շէնքերուն կառուցումը 1960-ականներուն՝ մեծ թիւով հայեր պիտի հաւաքէր այնտեղ:

1970-ականներուն կամաց կամաց կը սկսի հայութեան դէպի Լաւալ (յատկապէս Chomedey-ի շրջան) եւ դէպի South Shore (մանաւանդ Brossard եւ Longueuil) տարածուիլը<sup>25</sup>: Տասնամեակի վերջաւորութեան՝ Nouveau Bordeaux եւ St. Laurent շրջաններուն մէջ հայերու ներկայութիւնը կը բազմանայ, իսկ սկզբնական տարածքին մէջ կը նուազի<sup>26</sup>: Այս շրջաններուն մէջ հայերու բնակելուն մեկնակէտ թուականն էր 1960-ի երկրորդ կէսը:

Ըստ 1981-ի Գանատայի մարդահամարին, Քէպեզ նահանգին մէջ ցեղային ծագումի հաշուառումով՝ կ'ապրէին 10,380 հայեր, որոնց 10,130-ը Մեծն Մոնթրէալի մէջ կը բնակէր: 1979-ին, քաղաքին հայութեան 60%-ը կեդրոնացած էր Outremont-ի արեւմտեան կողմէն մինչեւ Լաւալ նայող հիւսիսային ափը քաղաքին: Հաւանական է ենթադրել, որ Մեծն Մոնթրէալի դաղութը 1979-ին 14,000-ի շուրջ էր, եւ ինչպէս նշեցի՝ դէպի Լաւալ ալեակ մը ճամբայ ելած էր տասնամեակի սկզբնաւորութեան, եւ փոքր համայնք մը արդէն կազմուած էր:

21-րդ դարու սեմին, Քէպեզի հայութեան պաշտօնական թիւը 18,860 էր, եւ որուն 18,445-ը Մեծն Մոնթրէալի բնակիչ էր<sup>27</sup>:

Սակայն կարելի է հաստատօրէն ըսել, որ Քէպեզի հայութեան թիւը շուրջ 30,000 է, իսկ անոր աւելի քան մէկ երրորդը կ'ապրի Լաւալի տարբեր շրջաններուն մէջ, եւ յատկապէս՝ Chomedey-ի:

Հայութեան տեղափոխութիւնները կը շարունակուին. վերջին տարիներուն զգալի է դէպի Լաւալի Ste. Dorothée, Ste. Rose եւ Fabreville շրջաններու նորակերտ բնակարանները հասնող ալիք մը: Նաեւ ալեակ մը՝ դէպի Մոնթրէալի հիւսիս-արեւմտեան շրջանները, դէպի Pierrefonds եւ Dollards-des-Ormeaux: Մինչ ազգային, եկեղեցական, մշակութային, ընկերային եւ մարզական կառոյցները կը գտնուին Cartierville-ի, Ville St. Laurent-ի եւ ապա Chomedey-ի ու Laval des Rapides-ի մէջ, բացի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկեղեցիէն, որ Outremont-ի մէջ է:

## Գ.- ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԵՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ (ԵՐԷԿ ԵՆ Այսօր):

Գանատայի մէջ Հայ եկեղեցւոյ պատկերը հասկնալու համար՝ կարեւոր է նայիլ Միացեալ Նահանգներէն ներս Հայ եկեղեցւոյ անցեալին, եւ այն բոլոր հարցերուն ու տազնապներուն, որոնք յարուցուեցան, եւ ձեռքբերումներուն՝ որոնք արձանագրուեցան:

1880-ական տարիներուն, Միացեալ Նահանգներու Նիւ Եորք, Փրովիտէնս, Պոսթըն, Ուսթը եւ այլ քաղաքներու մէջ համայնքային բջիջներ կը կազմուէին<sup>28</sup>:

Միացեալ Նահանգներու առաջին Հայ եկեղեցին կը հիմնուի Ուսթրի մէջ:

Ուսթրի պանդուխտ հայերը կրօնական եւ ազգային շունչին կարօտ՝ կը յաճախէին բողոքական ժողովարան մը: Անոնց մեծամասնութիւնը Հայ Առաքելական Եկեղեցւոյ զաւակ էր<sup>29</sup>: Հայ պատուելի մը կը քարոզէր ժողովարանին մէջ:

1888-ին Մկրտիչ Փորթուգալեան Մարտիրոսայէն կ'այցելէ Ուսթը, որ այն ատեն Միացեալ Նահանգներու ամենէն հայաշատ կեդրոնն էր եւ 1200 հոգի կը հաշուէր<sup>30</sup>: Այն օրերուն երբ Ամերիկա կ'ըսէին՝ Ուսթը կը հասկնային<sup>31</sup>: Արմենական կուսակցութեան հիմնադիրը ճառ պիտի խօսէր, ուստի դիմում կ'ըլլար օգտագործելու համար ժողովարանը: Հայ պատուելին կ'ընդդրմանար: Ան եկեղեցւոյ ամերիկացի երէցին Փորթուգալեանը կը ներկայացնէր որպէս կասկածելի ու վտանգաւոր յեղափոխական մը, որ Թուրքիայէն արտաքսուած է<sup>32</sup>:

Արդ, կը վարձուէր սրահ մը, ուր Փորթուգալեան ազգայնաշունչ ճառ մը կը խօսէր: Նոյն առիթով ան կը շեշտէր հաւաքական ինքնութեան պահպանման համար կարեւորութիւնը սեփական եկեղեցիի, մամուլի եւ դպրոցի:

Շուտով նամակ մը կը յղուէր Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարան եւ կուսակրօն եկեղեցական մը կը խնդրուէր<sup>33</sup>: Օրուան պատրիարքը՝ Խորէն արք. Աշըգեան 13 Յունիս 1889 թուակիր Կոնդակով Յովսէփ Ծ. վրդ. Սարաճեանը Միացեալ Նահանգներու

րու հոգեւոր հովիւ կը նշանակէր, ըստ Պատրիարքութեան Կրօնական Ժողովի որոշումին<sup>34</sup>:

Սարաճեան ծ. վարդապետ՝ պատրիարքին Կոնդակը հետը Յուլիս 25-ին Ուսթը կը հասնի<sup>35</sup>: Եւ անմիջապէս Հոգաբարձութիւն մը կը կազմէ՝ սեփական եկեղեցի ունենալու գործը յառաջ տանելու համար<sup>36</sup>: Տարի մը չանցած կը սկսի եկեղեցւոյ շինարարութեան գործը եւ կ'աւարտի վեց ամիսէն: 18 Յունուար 1891-ին Հոգեւոր հովիւին ձեռամբ օծուելով Ս. Փրկիչ կը կոչուի անիկա<sup>37</sup>:

Սարաճեան ծ. վարդապետ «իր դժուար պաշտօնը համբերութեամբ ու կորովով» պիտի տանէր եւ 1893-ին հրաժարելով մեկնէր Պարսկաստան՝ ստանձնելու համար Ատրպատականի Թեմին Առաջնորդական Տեղապահի պաշտօնը<sup>38</sup>: Իրեն պիտի յաջորդէին երկու հովիւներ, որոնցմէ իւրաքանչիւրը իր դժուարութիւններուն առջեւ ընկճուելով՝ հրաժարէր:

Ամենայն Հայոց Մկրտիչ Ա. Խրիմեան Կաթողիկոս 2 Յուլիս 1898 թրուակիր Կոնդակով էջմիածնի հովանիին ներքեւ կ'առնէր Միացեալ Նահանգներու հայութիւնը:

Ինչո՞ւ կ'ըլլար իրաւունքի այս փոխանցումը՝ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքութեան էջմիածնին:

Օրմանեան սրբազան այսպէս բացատրած է.-

Բաւական ժամանակէ ի վեր հայ առեւտրականներ սկսած էին հաստատուիլ Եւրոպիոյ զանազան կեդրոնները. Մանչեսթըր, Փարիզ, Մարիսիլա, Անվերս, եւս եւ հիւսիսային Ամերիկայի քաղաքները, որոնք ընդհանրապէս տաճկահայեր էին եւ անոնց հոգեւոր պէտքերը Կ. Պոլսոյ պատրիարքարանին կողմէն կը հոգացուէին, եւ արտասահմանի գաղութներ Կ. Պոլսոյ թեմեր կը նկատուէին, որոնց մէջ հայ մնայուն մատուռներէ ետքը՝ հայ եկեղեցիներ ալ սկսած էին շինուիլ, ինչպէս Անգղիոյ՝ Մանչեսթըր, Ամերիկոյ՝ Ուսթը եւ Գաղղիոյ՝ Փարիզ, եւ ուրիշ քաղաքներ: Այս գաղութները որ առաջ լոկ խոհական վաճառականներէ կը կազմուէին, վերջին շփոթութեանց պատճառով, հետզհետէ բազմամարդացած էին տաճկահայ փախստականներով, կուսակցական գործիչներով եւ արկածախնդիր պանդուխտներով, եւս եւ ռուսահայ նմանիներով: Արդէն կուսակցական կեդրոն-

ներն ալ Եւրոպիոյ մէջ էին եւ հոն կը հրատարակուէին շար-  
ժումները գրգռող եւ միտքեր յուզող պարբերականները, որոնք  
բնական էր, որ օսմանեան արքունիքին մտադրութիւնը հրաւի-  
րէին իրենց վրայ, եւ խափանելու համար մինչեւ իսկ պետական  
նպաստներով խրատատու պատուիրակներ եւ շահելու աշխա-  
տողներ ղրկուեցան Կ. Պոլիսէ, թէպէտ բնաւ արգիւնաւորու-  
թիւն եւ յաջողութիւն չունեցան:

Նոր վարչութեան (պատրիարքական - ԳՔ) գործի գլուխ  
անցած ատենը այդ կացութիւնը բուռն ու սաստիկ աստիճանի  
հասած էր (...): Արքունիքը քաջալերուած վարչութեան խոհա-  
կան ընթացքէն՝ սկսաւ պահանջել, որ կուսակցական կեդրոննե-  
րը խափանէ, գործիչները շահի կամ զսպէ (...): Օրմանեան գոր-  
ծին անհնարութեանը գիտակ՝ ջանաց միշտ իրմէ հեռացնել  
այդպիսի յանձնառութիւն մը (...):

Օրմանեան միանգամ ընդմիշտ գործը վրայէն նետելու եւ  
պատասխանատուութենէ զերծ մնալու համար սկսաւ պատաս-  
խանել, թէ ինքն թուրքիոյ պատրիարք ըլլալով՝ արտասահմանի  
վրայ ներգործելու եւ ազդելու միջոցներ չունէր: Ըստ այսմ ալ  
կանխած եւ իրիմեան կաթողիկոսի հաղորդած էր, թէ որչափ ալ  
մինչեւ վերջին ատեններ Եւրոպիոյ եւ Ամերիկոյ նոր գաղութ-  
ներուն հոգերը Կ. Պոլսոյ Աթոռէն նայուած էին, սակայն պա-  
տահական եւ առժամեայ եղած էր, երբ գործը կարեւորութիւն  
ալ չունէր: Բայց քանի որ գաղութները աճած են, եւ Եւրոպա ու  
Ամերիկա առանձինն առաջնորդութիւններ ըլլալու կարեւորու-  
թիւնն ստացած են, այլեւս Մայր Աթոռոյ կը պատկանի անոնց  
հոգը ստանձնել, զի իւր Աթոռին իրաւասութիւնը թուրքիոյ եր-  
կիրներով սահմանափակուած է, եւ անկէ դուրս չի կրնար օրի-  
նաւորապէս իրաւունք գործածել:

Խրիմեան կաթողիկոս անհակառակ հաճեցաւ այդ առա-  
ջարկութեան եւ իսկոյն Եւրոպիոյ եւ Ամերիկոյ առաջնորդու-  
թիւնները նուիրագործեց...<sup>39</sup>:

Դառնալով մեր պատմութեան ընթացքին, իրիմեան Հայ-  
րիկ Ուսման գիմնումին ի պատասխան Կոնդակին մէջ հետեւեալը  
ըսած է. «ես միայն նորան (իմա՝ Յովսէփ Կալս. Սարաճեանին)

յարմար եւ արժանաւոր տեսայ Ամերիկայի համար հովիւ նշանակելու»:

Յովսէփ եպիսկոպոս Նիւ Եորք կը հասնի: 1898-ի 16 Հոկտեմբերին կը պատարագէ: Եւ յընթացս Ս. Պատարագին կը կարգացուի Հայրապետական Կոնդակը<sup>40</sup>:

Ուսթրի հայութիւնը մեծ շուքով կը դիմաւորէ զինք: Որմէ ետքը ութ տարիներ արդիւնաւէտ պաշտօնավարութիւն կ'ունենայ, ի հեճուկս իրեն դէմ յարուցուած «դառն հակառակութեանց ու այլազան արգելքներու»<sup>41</sup>:

1908-1913 Սարաճեան եպիսկոպոսի ծառայութեան յաջորդած եօթը տարիները նորահաստատ թեմին համար կ'ըլլան «անորոշ եւ քայքայիչ շրջան մը»<sup>42</sup>: Եւ եկեղեցական կեանքը անփառունակ աստիճանի կը հասնի<sup>43</sup>:

1913-ին էջմիածին կը հրահանգէ Եւրոպայի Հայոց Առաջնորդ Գէորգ արք. Իւթիւճեանին՝ Միացեալ Նահանգներ մեկնելու լուծել առաջնորդական տազնապը: Հայրապետական Լիազօր Պատուիրակը Միացեալ Նահանգներ կը փութայ, Ուսթրի մէջ իր նախագահութեամբ Երեսփոխանական ժողով կը գումարուի, եւ Առաջնորդ կ'ընտրուի Արսէն Ծ. վրդ. Վեհունի<sup>44</sup>:

Վեհունի Ծ. վարդապետ քառասային վիճակի մէջ կը ստանձնէ իր պաշտօնը: Նորընտիր Առաջնորդը առանց տնտնալու գործի կը լծուի<sup>45</sup>:

1915 թուականն էր: Մեծ Եղեռնի եւ տեղահանութեանց արձագանգները կը հասնին Միացեալ Նահանգներ:

Գաղութը կ'եռեւեփի: Բոլոր կազմակերպութիւնները կ'ուզէին օգնել եաթաղանին ենթակայ հայութեան: Սակայն քանի որ, ըստ հայկական ողբալի սովորութեան, հակամարտ ճակատներ ստեղծուեցան եւ զաղութային համերաշխութիւն չտիրեց<sup>46</sup> օգնելու ցանկութիւնը մնաց հատուածական ու թերի: Ի՜նչ աղէտաւոր հոգեբանութիւն:

Գաղութը երկպառակութեան մէջ էր: 1920-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեանց կը ստիպուի իբր Լիազօր Պատուիրակ զրկել Երեւանի Առաջնորդ Խորէն արք. Մուրադբէգեանը՝ «վերահաստատելու Ամերիկահայ եկեղեցւոյ ամ-

բողջականութիւնը, եւ վերածելու եկեղեցական համայնքը մէկ հօտի՝ մէկ հովիւով»<sup>47</sup>։

Հայրապետական Լիազօր Պատուիրակը Միացեալ Նահանգներ կու գայ, եւ կարգ կանոնը կը վերահաստատէ։ Առաջնորդ կ'ընտրուի Տիրայր արք. Յովհաննիսեան<sup>48</sup>։

Էջմիածնէն ճամբայ ելած Տիրայր արքեպիսկոպոս՝ 1921-ի Մարտին Ուսթր էր։

Իր օրով որոշումը կ'առնուի Առաջնորդարանի կեդրոնը Ուսթրէն Պոսթըն փոխադրելու։ Որոշման գործադրութիւնը երկու տարի վերջ կ'ըլլայ՝ 1923-ին։

Իսկ 1927-ին է, որ Առաջնորդարանի կեդրոնը Նիւ Եորք կը փոխադրուի։ Նոյն տարին կը ստեղծուի Գալիֆորնիոյ Թեմը, որուն առաջին Առաջնորդը կ'ըլլայ Գարեգին եպս. Խաչատուրեան (իւր յաջորդները՝ Մամբրէ եպս. Գալֆայեան, Շնորհք եպս. Գալուստեան, Բաբգէն եպս. Վարժապետեան, Թորգոմ եպս. Մանուկեան, Եղիշէ եպս. Սիմոնեան, Վաչէ արք. Յովսէփեան, եւ Յովնան արք. Տէրտէրեան)։

Տիրայր արքեպիսկոպոս հակառակ նաեւ իր լուրջ դժուարութիւններուն, կրցաւ իրագործումներով արդիւնաւորել իւր շրջանը։ Եւ երբ տեսաւ, թէ ինք այլեւս էջը կրնար պահել գաղութին խաղաղութիւնը, 1928-ին ներկայացուց իւր հրաժարականը<sup>49</sup>։

Տիրայր արք. Յովհաննիսեանի կը յաջորդէ Ղեկնող արք. Դուրեան։

Դուրեան արքեպիսկոպոսի առաջնորդութեան շրջանը կարճ կ'ըլլայ. լեցուն հարցերով։ Կացութիւնը, որուն մէջ ծառայութեան կը կոչուէր ան, այնքան բարդացած էր, որ Իգապէլ Գաբրիէլեան-Չըրչիլի բնորոշումով՝ «Հերգիւլեան մարտահրաւէր»-ի մը առջեւ կը դնէր որեւէ ղեկավար<sup>50</sup>։

Գերզայուն կացութեան մէջ, երբ քաղաքական հակամարտ կիրքերը բուռն եւ բորբոքեալ էին՝ ան Չեկայի սարսափին ենթակայ եւ չարհարեալ Էջմիածնի թեկադրութեամբ պիտի ըլլար այնքան «լոյալ» Սովետական Հայաստանի վարչաձեւին եւ անոր տրամադրութիւններուն, որ յընթացս Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցոյ սրահին մէջ գումարուած օրինական

ժողովը՝ հրաւիրէր զանգուածի մը քայլը՝ իր հրաժարումը պահանջող, մինչ Առաջնորդին համակիր զանգուածի երեսփոխաններ՝ խնդրագրերով կը դիմէին իրեն եւ արտօնութիւն կը ստանային Երեսփոխանական ժողովը «չարունակել» Մարթինիք պանդոկին մէջ: Առաջնորդը այս արտօնութիւնը կու տար առանց իր նոր որոշման մասին պաշտօնապէս տեղեակ պահելու Մայր Տաճարի սրահին մէջ ժողովեալները:

Պանդոկին մէջ հաւաքուած երեսփոխանները «կատարեալ վստահութիւն» պիտի յայտնէին Դուրեան արքեպիսկոպոսի նկատմամբ<sup>51</sup>: Եւ էջմիածինը պիտի ճանչնար անոնց կեցուածքը: Այսպէս է, որ ամերիկահայ գաղութին վիհը սկիզբ կ'առնէր եւ ապա կ'երկարէր մինչեւ Գանատա:

Արդ, 1933-ի երկփեղկեալ ժողովներով իսկ կը յառաջանային «օրինաւոր» կոչուած իշխանութիւն մը, որ էջմիածնի օրհնութիւնը կը վայելէր, եւ իբր «հերձուածող» ամբաստանուած իշխանութիւն մը, որ կը զրկուէր Միւռոնէ եւ քանի մը եկեղեցականներու օժանդակութեամբ միայն՝ կրնար իր ժողովուրդի հոգեւոր կարիքները հոգալ:

Աղէտալիօրէն խստացող հակառակութիւնը եւ ատելութիւնը (չատ հաւանաբար խաւար կողմէ մըն ալ կատարելապէս ձեռնածուած) կը յանգի Դուրեան արքեպիսկոպոսի սպանութեան 1933-ի վերջը, երբ ան Նիւ Եորքի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ թափօրի ելած էր: Այս սպանութիւնը փոթորիկի մէջ կը նետէր հայութեան հատուածները, «մինչեւ անգամ միեւնոյն ընտանիքի անդամներ»<sup>52</sup>:

«Ամերիկահայութեան համար յաւէտ ամօթ եւ նախատինք պիտի մնան այդ տարիներուն ընթացքին ծնունդ առած կիրքերը, երբ քաղաքէ քաղաք կուրներ եղան, եկեղեցիներ ու եկեղեցիներու սպաններ ձեռքէ ձեռք խլուեցան, մահ եղաւ, ու մեռելներն անգամ գերեզմանէն հանուեցան՝ ուրիշ, աւելի ցանկալի դրացիներու մօտ թաղուելու համար»<sup>53</sup>, գրուած է:

Մայր Աթոռը կ'որոշէ Հայրապետական Պատուիրակ զրկել Միացեալ Նահանգներ՝ տեղւոյն վրայ քննելու համար կացութիւնը: Պիտի սպասուէր մինչեւ 1936-ի գարունը, երբ Խորէն Ա.



Մուրատբէգեան Կաթողիկոսի պատուիրակը՝ «զգայուն, հոգե- սէր եւ գիտուն, միանգամայն արուեստագէտ հոգեւորական» Գարեգին արք. Յովսէփեանց Ամերիկա կը հասնէր:

Գարեգին արքեպիսկոպոս Միացեալ Նահանգներ հասնելուն պէս անհրաժեշտ տեսակցութիւններուն եւ խօսակցութիւններուն կը սկսի, եւ կոչ կ'ուղղէ միասնականութիւն վերահաստատելու «խորապէս վիրաւոր» թեմէն ներս: 1938-ին կ'ընտրուի Առաջնորդ, երբ արգէն էջմիածնի մէջ Խորէն կաթողիկոս խեղդամահ սպաննուած էր<sup>54</sup>:

Բարձր զարգացումով եւ իմաստուն այս եկեղեցականը թեմին մշակութային որակ տուաւ:

Ան սկիզբէն փորձեց կողմերը հաշտեցնել եւ միասնականութիւն վերստեղծել: Իր ճիգերը շարունակեց Առաջնորդ ընտրուելէն ետքն ալ, սակայն ի վերջոյ յայտարարեց՝ «ես պարտուեցի»:

Գարեգին արքեպիսկոպոսէն ետք Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին առաջնորդութիւնը ստանձնեցին Տիրան արք. Ներսոյեան, Սիոն արք. Մանուկեան, Թորգոմ արք. Մանուկեան եւ Խաժակ արք. Պարսամեան:

\*

\* \*

Իբր «հերձուածող» ամբաստանուած հատուածը՝ «երկար եւ ապարդիւն ճիգերէ ետք» կը տեսնէ, որ «միութեան յոյսերը ի դերեւել ինքն»: Ուստի ճարահատ 1957-ի 23-24 Փետրուարին Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր Եկեղեցոյ մէջ Երեսփոխանական Ժողով կը գումարէ: Ժողովը «անցեալի բոլոր փորձերու լոյսին տակ», միաձայնութեամբ կ'որոշէ դիմել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան՝ որպէսզի անոր Հովանաւորութիւնը ունենայ<sup>55</sup>:

Երեսփոխանական Ժողովը 24 թուակիր դիմումագիրով մը Զարեհ Ա. Կաթողիկոսէն կը խնդրէ, որ ան հաճի Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հովանաւորութիւնը շնորհել թեմին<sup>56</sup>:

Եւ Զարեհ կաթողիկոս 17 Սեպտեմբեր 1957-ին հեռագրով

կը պատասխանէ. «Ընդառաջելով Ձեր քսանչորս Փետրուար հազար ինը հարիւր յիսունեօթ թուակիր դիմումագրին, Ձեզ կ'առնենք մեր Կաթողիկոսական իշխանութեան ներքեւ»<sup>57</sup>:

Ապա 12 Հոկտեմբեր 1957-ին Կոնդակով՝ «...Անցաւոր եւ երկրային նկատումներ մեր Ս. Եկեղեցւոյ ոգեկանութեանէն գերիվեր դատուած են: Գործադրուած է խտրական աններելի եղանակ, որով Հայաստանեայց ՄԻ եւ ՆՈՅՆ Ս. Եկեղեցւոյ մէջ արուեստակեալ բաժանում յառաջ բերուած եւ գիտակցաբար շահագործուած է»<sup>58</sup>:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր Հովանաւորութիւնը կը շնորհէր 26 եկեղեցիներու շուրջ բոլորուած համայնքներու:

Խորէն արք. Բարոյեան՝ Լիբանանի Թեմին առաջնորդը իբր Հայրապետական Լիազօր Պատուիրակ Միացեալ Նահանգներ կու գայ 1959-ի Ապրիլին (նախապէս՝ 1957-ին ալ ան եկած էր եւ Ամերիկայի կացութեան մասին տեղեկագիր պատրաստած) եւ Նիւ Ժըրզիի մէջ Մայիսին գումարուած Ազգային Երեսփոխանական ժողովին կը նախագահէ, ուր նոր Ազգային Վարչութիւն կ'ընտրուի: Նոյն ատեն ժողովականները Առաջնորդական Տեղապահ կ'ընտրեն Հրանդ եպս. Խաչատուրեանը<sup>59</sup>:

Խաչատուրեան եպիսկոպոս Առաջնորդական ծառայութեան կը կոչուի 1961-ի Նոյեմբերին: Իրեն պիտի յաջորդէին Գարեգին արք. Սարգիսեան<sup>60</sup>, Մեսրոպ արք. Աշճեան<sup>61</sup>, եւ Օշական արք. Չոլոյեան<sup>62</sup>:

Մինչեւ Օշական արքեպիսկոպոսի առաջնորդութեան 2002 տարին, Գանատայի Հայ եկեղեցին կապուած պիտի ըլլար Միացեալ Նահանգներու Արեւելեան Թեմին:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հովանաւորութեան ներքեւ Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմը կը հաստատուի 1972-ին. այնտեղ Առաջնորդական ծառայութեան կոչուեցան Սմբատ արք. Լափաճեան, Եփրեմ արք. Թապաքեան, Տաթեւ արք. Սարգիսեան եւ Մուշեղ արք. Մարտիրոսեան:

Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յանձնառութիւնը եւ ծառայութիւնը Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ՝ երախտագիտութեամբ պիտի արժեւորուի ապագայի քննական պատ-

մագրութեան կողմէ, երբ բոլոր կիրքերը մարած ըլլան, եւ ող-  
ջախոհութիւնը հաստատուած:

\*

\* \*

Գարեգին արք. Յովսէփեանցի երկփեղկեալ հատուածները միացնելու ճիգերէն ետք, յաջորդը՝ Տիրան արք. Ներսոյեան իր կարգին Գէորգ Զ. Կաթողիկոսի յանձնարարութեամբ բանակ-  
ցութիւններ վարեց «անջատեալ հատուած»ին հետ:

1945-ին Տիրան սրբազան, տակաւին եպիսկոպոս, իր հետ էջմիածին կը տանի «անջատեալ կողմի» Կեդրոնական Վար-  
չութենէն միութեան ի նպաստ նամակ մը:

Բանակցութիւնները մետասաներորդ ժամուն կը ձախողին:

1955-ին Վազգէն Ա. Կաթողիկոսի ընտրութեամբ՝ դարձ-  
եալ միութեան յոյսը կ'արթննայ, բայց անմիջապէս խռովու-  
թիւնը ծայր կ'առնէ, երբ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը ոչ թէ  
յափշտակելու խորթակով, այլ ազգային եւ եկեղեցական պա-  
տասխանատուութեան ոգիով իր հովանաւորութիւնը կը շնորհէ  
Հրէսիսային Ամերիկայի «անջատեալ» հայ եկեղեցիներուն:

1968-ին երբ Վազգէն Ա. Միացեալ Նահանգներ կու գայ եւ  
կ'օծէ Նիւ Եորքի Ս. Վարդան Մայր Եկեղեցին: Ասիկա «պատեհ  
առիթ» տեսնուած է՝ բանակցութիւնները վերսկսելու համար:

Երկարամեայ բանակցութիւններ կ'ըլլան ներկայացուցչա-  
կան յանձնախումբերուն կողմէ, եւ սակայն դժբախտաբար կը  
յանգին ապարդիւն վախճանի:

\*

\* \*

Միութեան ճիգերուն խանդավառ նուիրեալներէն Մեսրոպ  
արք. Աշճեան 1995-ին Մոնթրէալի մէջ գումարուած Ազգային  
Երեսփոխանական Ժողովին ուղղած իր ճառին մէջ գրած է հե-  
տեւեալը թէ՛

...լուրջ ըլլանք եւ խոստովանինք, որ բազմաթիւ տարիներ  
«լուր կը ծեծէինք»: Զիրար կ'ամբաստանէինք: Մեր եղբայրնե-

րու աչքերուն մէջ շիւղեր կը տեսնէինք, բայց երբեք մեր աչքերուն գերանները: Միշտ մեղադրելի կը գտնէինք «միւս կողմ»ը: Եւ իրենք ալ նոյնպէս մեզ կը մեղադրէին եւ կը խարանէին «անջատեալ եղբայրներ» կնիքով: Այժմ ընդունինք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին Ս. Էջմիածնի Կաթողիկոս ընտրութիւնը (ակնարկութիւն Գարեգին Բ. Սարգիսեանի ընտրութեան – ԳՔ) շատ անորոշութիւններ ստեղծեց: Ամէնքս ալ (...)  
շփոթած եւ զգոյշ ենք, սակայն նոյն ատեն՝ յոյսով լեցուն:

Մեր Առաջնորդութեան մէջ կը գիտակցինք, որ այլեւս չենք կրնար հին ճամբաներով երթալ: Հիմա անհրաժեշտ է համարձակ, անկեղծ, քաջ եւ հաւատքով լեցուն քայլեր առնել, որպէսզի կարենանք միացեալ Առաջնորդութեան մը գաղափարը ակադեմական բանավէճերէ դուրս բերել, նաեւ դուրս բերել յանձնախմբային սպառիչ մթնոլորտէն: Փոխանակ արգելքներ կանգնելու, իրարու անվստահութեամբ նայելու, ատելութիւն տարածելու՝ միանանք յանձնառութեան գործընթացով մը<sup>63</sup>:

Այժմ միութենական երկխօսութիւն չկայ:

Արամ Ա. Կաթողիկոս Հիւսիսային Ամերիկա եւ Գանատա իր Հովուապետական առաջին այցելութենէն ետքը, Անթիլիաս վերադառնալով «Թուղթ» մը կը գրէր եւ կը պատգամէր. «...թեմական միութիւնը անհրաժեշտութիւն է: Միութիւնը ժողովուրդի կեանքէն բխող ու գործակցութեան ճամբով աճող ընթացքի մը պսակումն է: Արդ, պէտք է ամէն գնով խուսափիլ այնպիսի քայլերէ ու մօտեցումներէ, որոնք ներքին զգայնութիւններ ու հակասութիւններ կը յառաջացնեն: Պէտք է աշխատինք բոլորս ալ գործակցութեան, փոխադարձ հասկացողութեան ու վստահութեան մթնոլորտ ստեղծել՝ մանաւանդ ժողովրդային մակարդակի վրայ»<sup>64</sup>:

\*

\* \*

Կիրակի, 25 Նոյեմբեր 2007 թուականը աննախընթաց ուրախութեան օր էր Ս. Յակոբ Առաջնորդանիստ Եկեղեցւոյ համար: Ծիգ տարուած էր Ս. Պատարագի երգեցողութեան համար

հրաւիրել Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ Կոմիտաս երգչախումբը:

Եւ ըստ Յիսուսի առակին՝ թէ բախեցէք եւ դուռը պիտի բացուի, Կոմիտաս երգչախումբը այդ օր կ'երգէ Ս. Պատարագը՝ ղեկավարութեամբ իր տաղանդաւոր խմբավարին՝ Վարուժան Մարգարեանի: Իր կարգին նոյն առիթին համար Առաջնորդ Խաժակ արք. Յակոբեան<sup>65</sup> քարոզելու հրաւիրած էր իր պաշտօնակիցը՝ Բագրատ եպս. Գալստանեան:

Նախքան քարոզի ժամը Խաժակ արքեպիսկոպոս դրուատական ելոյթ մը կ'ունենայ Բագրատ եպիսկոպոսի մասին: Ապա բեմ կը հրաւիրէ Գերաշնորհ սրբազանը:

Այդ առիթով Բագրատ եպիսկոպոս Ներսէս Շնորհալիի «Իմաստութիւն Հօր, Յիսուս» աղօթքը իր քարոզին հիմք կ'առնէ, եւ կու տայ նշանակալից պատգամ մը: Ան իր պաշտօնակիցի հրաւէրին մէջ կը տեսնէ սիրտ սրտի, միտք մտքի, կեանք կեանքի, ձեռք ձեռքի, հաւատք հաւատքի, սէր սիրոյ աշխատելու եւ գործակցելու հրամայականը եւ կը յայտարարէ այդ հրամայականին կենսականութիւնը Հայ եկեղեցւոյ համար: Ան նաեւ վստահութեամբ կը շեշտէ թէ՛ «մենք կրնանք լուծուամբ գտնել մեր բոլոր տեսակի խնդիրների եւ դժուարութիւնների, բայց նախ պէտք է խօսենք ոչ թէ վախից մղուած, այլ առանց վախի»:

\*

\* \*

Առջի դարավերջին եւ անցեալ դարասկիզբին Գանատա հասնող հայութեան բեկորներ կը հաստատուէին հարաւային Օնթարիոյ տարբեր քաղաքներուն մէջ: Շուտով եկեղեցական կարիքներու համար Նիւ Եորքէն այցելու հոգեւորականներ պիտի ունենային պարբերաբար: Սակայն անոնց նայուածքը հայրենի երկրին ուղղուած էր, ուստի եկեղեցաշինութեան անհրաժեշտութիւնը պիտի զգացուէր 1920-ական թուականներուն միայն:

Գանատայի հողին վրայ առաջին Հայ եկեղեցին կը կառուցուի Սէյնթ Գաթրինայի մէջ: Այնտեղ 1929-ին կը յառաջացուի Ծխական Մարմին մը, որ հանգանակութեան կը ձեռնարկէ:

1930-ին է, որ եկեղեցին կը բարձրանայ եւ նոյն տարուան 30 Նոյեմբերին՝ ձեռամբ Տիրայր արք. Յովհաննիսեանի կ'օծուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ անուանով: Եկեղեցին երկար տարիներ պիտի ծառայէր հարաւային Օնթարիոյի մէջ սփռեալ հայուլթեան:

Ողբերգական օրերուն Միացեալ Նահանգներու հայուլթեան միջեւ յառաջացած վիճը Գանատա կը հասնէր: Եւ հայուլթեան զանգուած մը ամբողջ՝ իր կրօնական կարիքները գոհացնելու համար զանազան եկեղեցիներու կը դիմէր:

Երբ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր հովանին կը տարածէր Միացեալ Նահանգներու լքեալ հօտին վրայ՝ Գանատայի սակաւաթիւ հայուլթեան մէկ հատուածն ալ այդ շնորհէն կ'օգտուէր:

Միացեալ Նահանգներու Կիլիկեան Թեմին ենթակայ Գանատայի առաջին եկեղեցին Ս. Յակոբը պիտի ըլլար, ապա Գանատայի տարածքին հայուլթեան թիւի աճին հետ այլ եկեղեցիներ կառուցուէին եւ համայնքներու կազմակերպման օժախներ դառնային. Թորոնթոյի՝ Ս. Աստուածածինը, Գամպրիճի՝ Ս. Նշանը, Վանգուվըրի՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչը:

Մինչեւ 1980 Նոյեմբեր, Արեւելեան Միացեալ Նահանգներու էջմիածնեան Թեմը կը հոգար կարիքները Գանատայի իր համայնքներուն: Յետ այնու, Գանատայի հօտը կ'ունենայ իր սեփական Թեմը, որ կը կոչուի «Գանատահայոց Առաջնորդութիւն»: Առաջին Առաջնորդը կ'ըլլայ Վազգէն արք. Քէշիշեան ապա կը յաջորդէ Յովնան արք. Տէրտէրեան, իսկ այժմ Առաջնորդն է Բագրատ եպս. Գալստանեան:

2002-ի Հոկտեմբերին Գանատայի Կիլիկեան հօտը իր անկախ կարգավիճակը կ'ունենայ եւ կը հաստատուի «Գանատայի Ազգային Առաջնորդութիւն»ը: Անոր առաջին առաջնորդ կ'ընտրուի եւ ներկայիս կը ծառայէ Խաթակ արք. Յակոբեան:

Գանատահայոց Առաջնորդութիւնը ունի հետեւեալ եկեղեցիները.

- 1.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Մոնթրէալ:
- 2.- Ս. Երրորդութիւն, Թորոնթօ:
- 3.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Սէյնթ Գաթրինգ:
- 4.- Ս. Մարի, Համիլթոն:

5.- Ս. Վարդան, Վանգուվըր:

6.- Ս. Խաչ, Լաւալ:

7.- Ս. Մեսրոպ, Օթթառա:

8.- Ս. Վարդան, Միսսիսսոկա:

9.- Ս. Յարութիւն, Ուինծըր:

Նաեւ ծիսական ծառայութիւններ հաստատած է Գինկսթըր-  
նի, Էտմընթընի, Գալկըրիի, Ուիննիպէկի, Մոնգթոնի, Հալի-  
ֆաքսի, Քէպեզ քաղաքի եւ Ելլոնայֆի մէջ<sup>66</sup>:

Իսկ Գանատայի Ազգային Առաջնորդութիւնը՝ հետեւեալ  
եկեղեցիները.

1.- Ս. Յակոբ, Մոնթրէալ:

2.- Ս. Աստուածածին, Թորոնթօ:

3.- Ս. Նշան, Գամպրիճ:

4.- Ս. Գէորգ, Լաւալ:

5.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Վանգուվըր:

6.- Ս. Պօղոս, Սէյնթ Գաթրինգ<sup>67</sup>:

Թէ՛ Միացեալ Նահանգներու եւ թէ՛ Գանատայի կրկնա-  
գոյգ թեմերը բազմապատիկ հիմնական պատճառներ ունին՝  
իրենց միջանիպատիկ տարակարծութիւնները ամենայն յար-  
գանքով մէկ կողմ դնելու, միաբանելու, իրենց հսկայ կարողա-  
կանութիւնը տեսնելու եւ առաքելութեան Հայ եկեղեցին վերա-  
կանգնելու համար:

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ա. ԳԼՈՒԽ

ԱՌԱՋԻՆ ՀԱՆԳՐՈՒԲԱՆ

(1958-1972)

**ԵԿԵՂԵՅԱՇԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ  
ՀԱՄԱՅՆՔԱԿԵՐՏՈՒՄ**

Ա. Դրուագ

*«Ս. Յակոբ սքանչելագործ Հայրապետը՝  
Մծբինի պարթևական տոհմէն էր.  
եւ ըստ հայոց ճատրնտիրնէրուն՝  
նորաքրոջ որդին Ս. Գրիգոր Լուսաւորչի».*  
Վարք Սրբոց:

Հայրենի տան աղքատութիւնը, ստրկական վիճակը, բռնութիւնները, հալածանքները, եւ անոնց կատարում՝ Մեծ Եղեռնը հայեր պիտի սփռէր նաեւ Գանատայի տարբեր քաղաքներուն մէջ:

Փոքրաթիւ նորեկներ 20-րդ դարու սկզբնաւորութեան պիտի համախմբուէին Պրէնթֆորտ, Սէյնթ Գաթրինզ, Համիլթըն, Կալթ եւ այլ քաղաքներու մէջ: Անոնց նայուածքը պիտի մնար ետեւ, սիրտը հոն՝ պապենական յարկին մէջ՝ թէեւ խեղճ կամ լքուած կամ աւերուած, եւ մտքին մէջ՝ վերադարձի գաղափարը



միշտ վառ: Անոնք եկեղեցի պիտի չկառուցէին: Ոմանք ներամփոփ՝ իրենց մարմինները եկեղեցիի պիտի վերածէին եւ հայ կրօնական աւանդութեամբ շնչէին, եւ ուրիշներ իրենց հոգեւոր կարիքները գոհացնէին տեղական տարբեր եկեղեցիներ յաճախելով:

Գանատայի հողին վրայ առաջին Հայ եկեղեցին կանգնած է Սէյնթ Գաթրինգի մէջ, ինչպէս ակնարկեցի: Այնտեղ 1929-ին յառաջացուած է ծխական մարմին մը, որ հանգանակութեան աշխատանքի սկսած է:

Համայնքը իր բոլոր կողմերով եւ կազմակերպութիւններով Գարլթըն փողոցին վրայ (Carlton Street) 1930-ին եկեղեցի մը կը կառուցէր, որ պիտի օծուէր նոյն տարուան 30 Նոյեմբերին՝ ձեռամբ Տիրան արք. Յովհաննիսեանի եւ կոչուէր Ս. Գրիգոր Լուսաւորիչ<sup>1</sup>: Ծովսր Նիւ Եորքի էջմիածնեան, եւ այն օրերուն միակ Առաջնորդարանին կապուած էր: Այս եկեղեցին երկար տարիներ պիտի ծառայէր հարաւային Օնթարիոյի մէջ սփռեալ հայութեան:

Հայ եկեղեցւոյ Մոնթրէալի փոքր հօտը կազմակերպելու համար, 1948-ին՝ Միացեալ Նահանգներու Առաջնորդ Տիրան արք. Ներսոյեան Նիւ Եորքէն կու գայ եւ կը նշանակէ եկեղեցական մարմին մը<sup>2</sup>:

1920-ական թուականներէն մինչեւ 1950 քաղաքին հայութիւնը իր հոգեւոր կարիքներուն համար դիմած էր Ս. Յովհաննէս Աւետարանիչ (Saint John The Evangelist) Անկլիգան եկեղեցիին (Ontario եւ St. Urbain փողոցներուն անկիւնը): Տարին միայն երկու անգամ հայրերուն աւանդութեամբ Ս. Պատարագ տեսած էր շնորհիւ Նիւ Եորքէն առաքուած այցելու քահանաներու<sup>3</sup>: 1950-էն ետք է, որ Ս. Պատարագի մատուցումները յաճախակի պարբերականութիւն կը ստանան, շուտով վերածուելու համար կ'իրականօրեայ պաշտօնի:

1957-ին դիմումը կը կատարուի եւ 1958-ի Փետրուար 6-ին Ս. Գրիգոր Լուսաւորիչի համայնքը պետութեան մօտ օրինական գրանցում կ'ունենայ<sup>4</sup>:

Գրանցման առիթով, Միսական Խորհուրդը իր առաջին շրջաբերականը կը հանէ եւ կը յայտնէ. «Պարտք կը գգանք հոս յիշելու անունները այն տասը եկեղեցասէր ազգայիններուն, որոնք նա-

խանճախնդիր Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ իրաւունքներուն, միասնաբար եւ պաշտօնապէս Քէպեզ նահանգի կառավարութեան ներկայացուցին խնդրագիրը՝ ստանալու համար (...) վաւերացումը Մոնթրէալի Հայ Առաքելական Եկեղեցւոյ.-

Տիարք Բաստրմաճեան Երուանդ, Գալփաքճեան Ազատ, Խոճոյեան Յովհաննէս, Խոճոյեան Նուպար, Ղարիպեան Եւնիկէ, Շիրոյեան Արշի (Խաչիկ), Ուլուզեան Թորգոմ, Պտուքեան Քերոբ, Չարխուկեան Զարեհ եւ Տիրատուրեան Վահան»<sup>5</sup>:

20 Յունիս 1969-ին է, որ կարելի կ'ըլլայ համայնքին՝ սեփական եկեղեցի մը ունենալ. անիկա կ'օծուի նախագահութեամբ Կ. Պոլսոյ Պատրիարք Շնորհք արք. Գալուստեանի՝ 6 Դեկտեմբեր 1970-ին<sup>6</sup>:

Պատրիարքին կողքին օծման կը մասնակցէին թեմին Առաջնորդը՝ Թորգոմ արք. Մանուկեան եւ Գանատայի Առաջնորդական Փոխանորդը՝ Վաչէ եպս. Յովսէփեան: Իսկ եկեղեցւոյ կնքահայրն էր Գրիգոր Մազմանեան: Այս կնքահայրը նաեւ եղած է բարերարը Ուոթըրթաունի (Միացեալ Նահանգներ) Ս. Յակոբ եկեղեցւոյ խորանին<sup>7</sup>:

## Բ. Դրուագ

«Յաղթող եւ սուրբ հայրապետ՝  
նման մեծին Մովսէսի»,  
Ներսէս Ծնորհալի:

Սկիզբը նշած էի, որ Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգաբարձութեան 27 Օգոստոս 1960-ի Տարեկան Տեղեկագիրին մէջ գրուած է. «Կը կարծենք, որ մէկ նոր հայ համայնքի մը պատմութեան հիմն է, որ կը գրուի: Որքան ճիշդ ու զոհողութիւն կատարուի, այնքան աւելի փայլուն եւ յիշատակելի կ'ըլլայ այդ պատմութիւնը»<sup>8</sup>:

Ահա 18 Յունիս 1958-ին տեղի կ'ունենայ Ս. Յակոբ եկեղեցւոյ պատմութեան մեկնակէտային ժողովը: Այս ժողովով կը

սկսի եկեղեցի-համայնքին առաջին հանգրուանը, որ պիտի երկարէր մինչեւ 1973, այսինքն՝ դէպի նորաշէն եկեղեցին եւ կեդրոնը փոխադրուելու թուականը:

Յակոբ Բաստրմաճեանի բնակարանին մէջ (4899 Sherbrooke St., West, Montreal) կը հաւաքուին Երուանդ Բաստրմաճեան, Լեւոն Տէր Ասատուրեան, Քերոբ Պտուկեան, Երուանդ Սաւոյեան, Հայկ-Արամ Առաքելեան, Հրանդ Բաստրմաճեան, Քերոբ Պայման, Օննիկ Քէօթահլեան, Հայկ Մարգարեան, Լեւոն Թոքաթլեան, Կարապետ Մուրատեան, Սերգօ Պօյաճեան, Պետրոս Գաբրիէլեան եւ հիւրընկալը<sup>9</sup>:

Հանդիպման նպատակը կ'ըլլայ խօսիլ եւ քննարկել կեդրոն/եկեղեցի կառոյցի մը շինութեան կամ հաստատման ծրագիրը<sup>10</sup>:

Այս նպատակի իրագործման համար, ժողովականները նախ կը յառաջացնեն Գործադիր Մարմին մը, որուն անդամներ կ'ընտրուին՝ Երուանդ Բաստրմաճեան (ատենապետ), Լեւոն Տէր Ասատուրեան (փոխ-ատենապետ), Յակոբ Բաստրմաճեան (գանձապահ), Հայկ Մարգարեան (ատենադպիր), Քերոբ Պայման, Երուանդ Սաւոյեան եւ Քերոբ Պտուկեան (խորհրդականներ)<sup>11</sup>:

Ք. Պտուկեան ետքը (1959-ի Փետրուարին) պիտի դառնար փոխ-ատենապետ եւ մինչեւ իր հրաժարումը (1966-ի Յուլիս) զայն վարէր նուիրումով եւ մեծ օգտակարութիւն ունենար Ս. Յակոբ եկեղեցւոյ հիմնարար այն տարիներուն: Իսկ Լ. Տէր Ասատուրեան պիտի ստանձնէր ատենադպիրի պաշտօնը (Յուլիս 1959) եւ զայն վարէր տարի մը: Ան կազմակերպողի իր տաղանդով կը յաջողէր վերոյիշեալ դէմքերը համախմբել Ս. Յակոբի եւ կեդրոնի ստեղծման ծրագրին շուրջ:

Առաջին ժողովին ընթացքին պարզուած տեղեկութիւններու, կարծիքներու եւ մտքերու փոխանակումներէ ետքը, Գործադիր Մարմինը կ'որոշէ հետաքրքրուիլ քանի մը շէնքերով, եւ տեսնելու՝ թէ օգտագործելի՞ են համայնքային կեանքի ստեղծման համար<sup>12</sup>:

24 Յուլիսին (առաջին ժողովէն մինչեւ 25 Փետրուար 1959՝ 13 ժողովներու համար Գործադիր Մարմինի անդամները հաւաքուած են Յակոբ Բաստրմաճեանի տան մէջ), Լ. Տէր Ասա-

տուրեան, Ք. Պայման եւ Ք. Պտուկեան կը գեկուցեն Սէնթ Զօթիքի վրայ գտնուող շէնքի մը մասին, որ նախապէս եկեղեցի եղած էր, եւ ապա վերածուած դեղերու մթերանոցի, ու այն օրերուն ծախու հանուած էր: Կ'առաջարկուի, որ Գործադիր Մարմինը զբաղի զայն գնելու գաղափարով: Ժողովականները կ'ընդունին առաջարկը եւ Ք. Պտուկեանէ կը խնդրեն Saint John The Evangelist եկեղեցւոյ հովիւին՝ Տէր Հերբլտ Հերցլըրի հետ խօսիլ եւ անոր ներկայացնել Գործադիր Մարմինին մտադրութիւնը ու լսել եկեղեցականին ցուցմունքը<sup>13</sup>:

Անհաւանական չէ, որ Սէնթ Զօթիքի շէնքը գնելու թելադրութիւնը եղած ըլլայ նոյնինքն Տ. Հերցլըրէ, որուն մօտիկ էր Ք. Պտուկեան:

Նոյն ատեն Ք. Պայմանէ ալ կը խնդրուի քաղաքապետարան երթալ եւ շէնքին իբր համայնքային կեդրոն/եկեղեցի գործածելիութեան եւ սեփականացման պայմաններուն շուրջ հետաքրքրուիլ<sup>14</sup>:

## Գ. Դրուագ

Ք. Պտուկեան կը տեսնուի Տ. Հերցլըրի հետ, որ կը խոստանայ օգտակար ըլլալ: Իսկ Ք. Պայման կը տեղեկացնէ, թէ գացած է քաղաքապետարան, եւ ըստ ստացած պատասխաններուն, դժուարութիւն չի տեսներ շէնքի սեփականացման եւ իբր համայնքի կեդրոն գործածութեան համար՝ արտօնութիւն ձեռք ձգելու մէջ<sup>15</sup>:

Եւ Տ. Հերցլըրի ցուցմունքով՝ Ք. Պտուկեան կը դիմէ Ճոն Հարքնըս Տիքսըն Եպիսկոպոսին (Bishop John Harkness Dixon — ան Մոնթրէալի Անկլիգան Եկեղեցւոյ Եպիսկոպոսն էր 1943-1960: Ապա կը դառնար Գանատայի Մետրոպոլիտը՝ երկամեայ շրջանով մը), եւ անոր միջնորդութիւնը կը խնդրէ շէնքի գնման համար:

Տիքսըն Եպիսկոպոս Chesebrough-Pond Canada Limited

(Box 590, Markham, Ont.) ընկերութեան գանձապահին՝ Ն. Ռ. Ռիչըրտսընին (N. R. Richardson) գրած է նամակ մը, որ 26 Ապրիլ 1958 թուականը կը կրէ:

Այս նամակը չի կրնար գրուած ըլլալ նշեալ թուականին, այլ՝ աւելի ուշ: Անուշագրութեան թէ մտազբաղութեան վրէպ մըն է:

Ք. Պտուկեան իր կարգին Ն. Ռ. Ռիչըրտսընի նամակ գրած է 28 Օգոստոսին: Եւ սկիզբը ակնարկած է, թէ Տիքսըն եպիսկոպոսէն արդէն տեղեակ է՝ ընկերութեան ուղղած անոր նամակին մասին:

Եպիսկոպոսը հետեւեալը գրած էր. «Mr. K. Bedoukian, President of Ararat Rug Company Limited of Montreal, has informed me that the Armenian Church in Montreal has been negotiating with the Pertussin Medicine Company, with a view to securing the warehouse at the corner of St. Zotique and Jeanne Mance Streets, Montreal.

I have had sufficient contact with Mr. Bedoukian to know his constant interest in the Armenian group in Montreal, who are greatly indebted to him for his leadership and valuable help. They are good citizens but, like all such congregations, they find it difficult financially to establish themselves in a permanent and suitable building. I can assure you that any sympathetic consideration which you can give them would be well worth while»<sup>16</sup>:

Այս նամակէն, ուրեմն, կը պարզուի թէ եպիսկոպոսին հասնելէ առաջ, արդէն խօսակցութիւն սկսած էր Սէնթ Ջօթիքի շէնքը չփախցնելու համար: Ք. Պտուկեան համայնքին անունով կապի մէջ մտած էր Ernest Pitt and Company-ին հետ, որուն վստահուած էր շէնքին վաճառքը:

Ք. Պտուկեան իր նամակին մէջ գրած էր. «I understand from Bishop Dixon that he has written to you on behalf of the Armenian Community of Montreal.

To further elaborate on the Bishop's letter, I would like to outline the problem. The majority of the Armenian community in Montreal are immigrants who have arrived in Canada within the last three years. Although we are presently using the facilities of the Anglican Church, the time has come when it is now possible to move out on our

own. We intend to establish a church and community centre.

Your plant, situated at the corner of Jeanne Mance and St. Zotique streets (which was originally a church) would suit our purpose admirably. We have contacted your agent in Montreal who informs us that the price is \$40,000. This sum is presently quite beyond the reach of our small congregation.

Although fully realizing that the following request may be considered rather presumptuous, we feel constrained to ask if it would be possible for you to intervene on our behalf with the Board of Directors of the Pertussin Company in regard to an adjustment of the asking price»<sup>17</sup>:

## Դ. Դիրուագ

11 Սեպտեմբեր 1958 թուակիր պատասխան նամակին մէջ գանձապահը՝ Ն. Ռ. Ռիչըրտսըն գինը նուազեցնելու առաջարկին մասին կը յայտնէ, թէ իրենց Կեդրոնական Վարչուլթիւնը տրամադիր չէ, եւ եթէ ոչ որոշեալ գինը՝ բայց անոր մօտիկ գումար մը պէտք է վճարուի շէնքի գնման համար:

Յետ քանիպատիկ եւ գանազան խօսակցութիւններու եւ դիմումներու՝ Գործադիր Մարմինին յարմար տեսած գինը՝ \$25,000<sup>18</sup> կ'ընդունուի, եւ 6 Նոյեմբեր 1958-ին Chesebrough-Pond's Ltd.-ին ուղղուած նոտարային առաջարկը Գործադիր Մարմինին կողմէ կը ստորագրուի եւ կը զրկուի Օնթարիօ:

11 Նոյեմբեր 1958 թուակիր նամակով մը Ն. Ռ. Ռիչըրտսըն կը տեղեկացնէ նոտարային առաջարկին ընդունուած ըլլալը<sup>19</sup>:

Ըստ G. T. Graydon Limited / General Contractors ընկերութեան ատենապետ՝ Ռ. Ու. Կրէյտընի (R. W. Graydon), Սէնթ Զօթիքի շէնքը \$25,000-է աւելի չէր արժեք: Արդ, Գործադիր Մարմինը գնման իր առաջարկին մէջ՝ այդ կարծիքին հետեւած էր:

Ռ. Ու. Կրէյտըն՝ Եր. Բաստրմաճեանին ուղղած իր նամակին մէջ, հետեւեալը տեղեկացուցած էր շէնքին մասին.-

We have examined the church property at 250 St. Zotique West which you are considering for purchase.

In our opinion very little has been spent in the way of maintenance on this building in the past fifty years. The exterior concrete foundation walls have disintegrated to a depth of four to five inches in some cases.

The centre beam supporting the upper hall floor must be replaced, as it is quite evident that the extra column in the basement was added to reduce beam deflection.

All window frames and sills must be replaced since they have rotted beyond repair. A portion of the exterior brick on the rear wall will have to be removed and rebuilt, and all the exterior brickwork will have to be raked out and pointed.

The concrete staircase and landing at the front entrance must be renewed completely. The front entrance doors require considerable attention, as well as the exterior woodwork at the roof eaves»<sup>20</sup>:

*Գործադիր Մարմինը կը փափաքի ունենալ շէնքին պատմականը: Եւ կ'իմանայ, թէ անիկա նախապէս կոչուած էր «Livingstone Presbyterian Church»:*

*Եկեղեցին կառուցուած էր 1908-ին եւ սկսած գործել 1909-ի առաջին Կիրակի օրը: Համայնքը 1925-ին պառակտուած էր<sup>21</sup>: 1920-ականներու վերջաւորութեան եկեղեցւոյ շէնքը ծախուած էր եւ դեղերու մթերանոց դարձած:*

## Ե. Դրուագ

*Գործադիր Մարմինին անունով, Եր. Բաստրմաճեան՝ հետը իր բազմամեայ ընկերոջ՝ Յակոբ (Ճէք) Մուրատեանի, կը դիմէ Ամերիկայի Ազգային Կեդրոնական Վարչութեան (ԱԿՎ)՝ խնդրելով անոր օժանդակութիւնը: Որուն ի պատասխան՝ հրաւէր կը ստանայ 1 Նոյեմբեր 1958-ին Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ սրահին մէջ գումարելի ԱԿՎ-ի ժողովին ներկայ ըլ-*

լալու, պարզելու Մոնթրէալի ծրագիրը եւ օժանդակութեան խնդրանքը յստակ եզրերով դնելու<sup>22</sup>։

Եր. Բաստրմաճեան Նիւ Եորք կ'երթայ։

Յ. Մուրատեանին ուղղած 6 Նոյեմբեր 1958 թուակիր նամակէն կը տեղեկանանք, թէ պրն. Մուրատեան կանխելով ընկերը, Նիւ Եորք գացած էր եւ Մոնթրէալի ծրագիրը պարզած։ Այդ առնչութեամբ Եր. Բաստրմաճեան հետեւեալը գրած է Յ. Մուրատեանին. «I want to thank you for making the trip to New York, and pleading our cause — in your usual eloquent manner — and convincing all present that they should come to our rescue if and when we ask for help»<sup>23</sup>։

Պրն. Բաստրմաճեան ժողովէն կը վերադառնայ «չատ լաւ տրամադրութիւններով», եւ վստահ, որ Ա.ԿՎ.-ի կազմը «իր լաւագոյնը պիտի ընէ» Մոնթրէալին զօրավիգ կանգնելու<sup>24</sup>։

## Զ. Դրուագ

12 Դեկտեմբեր 1958-ին Գործադիր Մարմինը կ'որոշէ 4 Յունուար 1959-ին շէնքին դռները բանալ ժողովուրդին առջեւ։ Ապա հետեւեալ Շրջաբերականը կը հրատարակէ.-

Սրտի անհուն գոհունակութեամբ կը յայտարարենք, որ շնորհիւ եղած գոհողութիւններուն՝ Մոնթրէալի Հայ Համայնքը տէրն է շէնքի մը, որ կը հաւատանք պիտի ծառայէ մեր մշակութեային կարիքներուն, եւ վերնայարկի նորոգութենէն ու յարգարումներէն յետոյ՝ մեր կրօնական պէտքերուն։

Հակառակ այժմու իր անհրապոյր վիճակին, նկատի ունենալով, որ Համայնքը անհամբեր է այցելելու եւ տեսնելու նոր գնուած շէնքը, բոլոր հայերը ջերմապէս կը հրաւիրուին այցելելու Մոնթրէալի սոյն ապագայ անդրանիկ Հայց. Եկեղեցին։

Յունուար 4-ի Կիրակին կը յայտարարենք Այցելութեան Օրը։ Դռները կը բացուին առաւօտեան ժամը 11.00-ին եւ այցելուներ կ'ընդունուին մինչեւ յետ միջօրէի ժամը 4.00-ը<sup>25</sup>։



4 Յունուարը փոթորկոտ օր մըն է, սակայն շէնքը կ'այցե-  
լեն 150 հոգիներ: Սուրճ կը սպասարկուի եւ կրամաֆոնով եկե-  
ղեցական երաժշտութիւն կը սփռուի<sup>26</sup>:

Գործադիր Մարմինը, որ նախապէս խօսած էր ընկերակ-  
ցութիւն (incorporation) մը կազմելու մասին, 7 Յունուար 1959-  
ին դարձեալ կ'արժարծէ նիւթը եւ նշանակելով տասներեք ան-  
ձինք իբր անդամներ ընկերակցութեան՝ կ'որոշէ անմիջապէս  
դիմում կատարել<sup>27</sup>: Անդամներն էին՝ Օննիկ Քէօթահլեան, Եր-  
ուանդ Բաստրմաճեան, Երուանդ Սաւոյեան, Քերոբ Պտուկեան,  
Քերոբ Պայման, Յակոբ Բաստրմաճեան, Կարպիս Բարձիկեան,  
Հայկ Մարգարեան, Լեւոն Տէր Ասատուրեան, Կարապետ Մու-  
րատեան, Սերգօ Պօյաճեան, Միչըլ Զատըրճեան եւ Պետրոս  
Գաբրիէլեան<sup>28</sup>: Այս ժողովին նաեւ որոշում առնուած է եկեղե-  
ցին կոչելու «Մոնթրէալի Անգրանիկ Հայաստանեայց Առաքե-  
լական Ս. Եկեղեցի»<sup>29</sup>:

Փաստաբան՝ Գլոտ Ս. Ռիչըրտսըն (Claude S. Richardson)  
1959-ի Մարտին կը տեղեկացնէ. «A Charter under part three of  
Quebec Companies Act, has been granted to the First Armenian  
Apostolic Church»<sup>30</sup>:

Արդ, իբր ընկերակցութիւն առաջին պաշտօնական ժողովը  
կը գումարուի 11 Մարտ 1959-ին, եւ եկեղեցւոյ գրասենեակին  
մէջ<sup>31</sup>:

## Է. Դրուագ

Շէնքի գնման համար արդէն վճարուած էր \$10,000-ը եւ  
մինչեւ «օրինական գործողութիւններու» աւարտը՝ 28 Փետր-  
ուար 1959, կը մնար \$15,000-ը<sup>32</sup>:

Եր. Բաստրմաճեան ԱԿՎ-ին ուղղած իր նամակին մէջ գրած  
է, թէ անհնարին է վերոնշեալ թուականին դիմագրաւել յանձնա-  
ռութիւնը եւ ունենալ պէտք եղած գումարը՝ անհրաժեշտ նորո-  
գութիւնները կատարելու եւ գործածելի դարձնելու համար շէն-  
քը: Եւ շեշտած՝ թէ «ձեռնարկը ինքնին առողջ եւ ապահով» է ու

ժամանակի ընթացքին նորակազմ համայնքը պիտի կարենայ «իր սեփական գոհողութիւններով ամբողջովին վճարել» շէնքին բոլոր ծախսերը: Կը տեղեկացնէ, թէ Մոնթրէալի հայուլթեան թիւը նուազագոյնը 800 հոգի է, որ 1959-ին իսկ պիտի հասնի 1000-ի: Ան կ'աւելցնէ, որ թէեւ գաղութին բոլոր անդամները մաս չեն կազմեր Անդրանիկ Հայց. Եկեղեցւոյ հօտին, սակայն մեծամասնութիւնը անոր կապուած է: Ուստի, կը խնդրէ, որ ԱԿՎ-ը \$20,000-ի «սահմաններուն մէջ» փոխատուութիւն մը ընէ: Եւ կը վստահեցնէ, թէ համայնքը 1961-էն սկսեալ՝ երեք տարիներու ընթացքին պիտի վերադարձնէ պարտքը<sup>33</sup>:

Եւ ԱԿՎ-ի ատենադպիրը՝ 21 Փետրուար 1959-ին Գործադիր Մարմինին կը յղէ նամակ մը, ուր կ'ըսէ.

«Ստացած ենք Ձեր Փետրուար 12 թիւ նամակը (ակնարկուութիւն Եր. Բաստրմաճեանի մէջբերեալ նամակին - ԳՔ)՝ տեղւոյդ նորակազմ համայնքի նոր եկեղեցական շէնքի մը գնման առթիւ, որով մեզմէ օժանդակութիւն մը կ'ուզէիք, պարզելով խնդրոյն ստիպողական պայմանները, եւ նոյն նպատակով եկած էր նաեւ եկեղեցական մարմնոյդ փոխ-ատենապետ՝ Մեծայարգ Տիար Ք. Պտուկեան, որ այս մասին, զբաւոր նամակէն զատ՝ բերանացի բացատրութիւններ տուաւ:

Ձեր նամակով կը յայտնէիք, որ \$10,000 կանխավճարով \$25,000-ի գնած էք շէնք մը, եւ Փետրուար 28-ին օրինական գործողութիւններով պիտի վճարուի \$15,000-ի գումար մը՝ վերջնականապէս շէնքին տէր դառնալու համար: Յայտնած էիք նաեւ, որ գաղութը ներկայիս ունէր 800 անդամ եւ տարուան ընթացքին պիտի բարձրանար 1000-ի: Եւ այդ ժողովրդեան մեծամասնութիւնը Ձեր համայնքին հետ էր:

Նախապէս ալ, Նոյեմբեր 1-ի (1958 - ԳՔ) նիստին, Ձեր յարգելի ատենապետը՝ Տիար Եր. Բաստրմաճեան բացատրած էր տիրող պայմանները եւ մենք խոստացած էինք մեր կարելի օժանդակութիւնը՝ Հայաստանեայց նոր եկեղեցի մը ունենալու Գանատայի մէջ: Ազգային Կեդրոնական Վարչութիւնը իր գանձէն փոխատուութեան ձեւով կ'ուզէ յատկացնել \$10,000 Ս. Եկեղեցւոյդ համար, որոշ օրինական պայմաններով:

Անհրաժեշտ է, որ անմիջապես կազմուի Մոնթրէալի Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն մը, որ անդամներու քուէով կարող է ըլլայ նոյնութեամբ՝ Ձեր Էֆգէֆիւթիֆ Քըմիթիին: Հոգաբարձութիւնը հիմնական պաշտօնական Մարմինն է, ըստ մեր Ազգային Սահմանադրութեան, որմէ կը ղրկենք Ձեզի օրինակ մը...»<sup>34</sup>:

ԱԿՎ.-ը կը փութայ երկու վճարագրերով \$10,000-ի գումարը ղրկել, որ պիտի հասնէր «ճիշդ օրին»: Եւ Գործադիր Մարմինին կողմէ մնացեալ գումարին վճարումով շէնքը 27 Փետրուարին կը դառնար համայնքին սեփականութիւնը:

## Ը. Դրուագ

Գործադիր Մարմինը շրջաբերական մը կը հանէ եւ 1959-ի Մայիս 10-ին համար Մոնթրէալի հայերը կը հրաւիրէ «խորհրդակցական ժողով»ի մը: Շրջաբերականը կ'ըսէ.-

Սիրելի հայրենակից,

Մոնթրէալի Անդրանիկ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Մարմինը գոյացնելէ յետոյ եկեղեցիի եւ սրահի մը համար պէտք եղած նիւթական միջոցները ու իրականացնելէ ետք անոնց գնումը, անյետաձգելի պարտականութիւն կը նկատէ անմիջապէս անցնիլ աշխատանքի՝ կազմակերպելու եկեղեցական-մշակութային կեանքը մեր հաստատութիւններէն ներս:

Կը յուսանք, թէ Ձեր նիւթական գոհողութիւններէն ետք՝ պիտի փափաքիք նաեւ բերել Ձեր բարոյական օժանդակութիւնը մեր կազմակերպական այս աշխատանքներուն:

Ուստի Ձեզ կը հրաւիրենք մէկ լայն խորհրդակցական ժողովի, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մայիս 10-ին, մեր եկեղեցւոյ մէջ, կ. վ. ժամը 2.00-ին, ուր Ձեզի պիտի գեկուցուի ցարդ տարուած աշխատանքներուն եւ անոնց արգիւնքին մասին:

Ձեր հետ պիտի խորհրդակցինք նաեւ մեր կազմակերպական աշխատանքներուն շուրջ»<sup>35</sup>:

Շրջաբերականը կը կրէ Եր. Բաստրմաճեանի ստորագրու-  
թիւնը: Անիկա թուական չունի: 15 Ապրիլի նիստին է, որ Գոր-  
ծադիր Մարմինը որոշած է այս ժողովը գումարել: 29 Ապրիլի  
նիստի ատենագրութեան համաձայն, Մայիս 10-ի ժողովին հա-  
մար կարգադրութիւնները եղած են արդէն: Արդ, անհաւանա-  
կան չէ, որ Շրջաբերականը ցրուըլած ըլլայ Զատիկի տօնին  
առիթով՝ 17 Ապրիլին:

Մայիսի 10: Ժողովին ներկաներուն թիւը՝ Գործադիր  
Մարմինի անդամներուն հետ միասին՝ 60 է<sup>36</sup>:

Եր. Բաստրմաճեան կը համառօտէ Գործադիր Մարմինին  
գործունէութիւնը եւ կը բացատրէ, ըսելով. «Մենք այս ծրագի-  
րը (այսինքն՝ եկեղեցւոյ եւ կեդրոնի - ԳՔ) յղացանք 10 ամիս-  
ներ առաջ, ու բոլոր սրտովս ուրախ եմ, որ խնդիրը յաջող կեր-  
պով մինչեւ հոս հասաւ: Բայց պէտք չէ շլանանք մեր յաջողու-  
թեան վրայ, այլ պէտք է միշտ արթուն եւ աշխատող ըլլանք»<sup>37</sup>:

Ան քիչ մըն ալ կը խօսի շէնքի մասին եւ կ'ըսէ, թէ անիկա  
«բաւական նորոգութեան պէտք ունի»: Կը տեղեկացնէ, թէ  
Գործադիր Մարմինին անմիջական կատարելիքը պիտի ըլլայ  
շէնքին սրահը «լաւ մը շտկել»<sup>38</sup>:

Նոյն առիթով խօսք կ'առնէ Լ. Տէր Ասատուրեան: Ան  
կ'ոգեւորէ ներկաները եւ կը բացատրէ, թէ ինչպէս յոգնու-  
թեամբ եւ չարհարանքով այս հսկայ եւ պատիւի արժանի գործը  
յաջողութեամբ իրականացուած էր: Ապա կը յայտարարէ, թէ  
համայնքը կը պարտի այս յաջողութեան «մեծ մասը» Եր.  
Բաստրմաճեանի եւ իր եղբայրներուն, որոնք «ըրին իրենց կա-  
րելին, եւ աւելիով՝ թէ՛ նիւթական եւ թէ՛ բարոյական»<sup>39</sup>:

Այս ժողովին նաեւ նոր անդամներու արձանագրութիւն  
կ'ըլլայ. ըստ ատենագրութեան, 67 անուններ կ'արձանագրուին:  
Կը կազմուի յանձնախումբ մըն ալ, որուն պարտականութիւն կը  
տրուի անդամ հաւաքել<sup>40</sup>:

Շէնքին նորոգութիւնները կը սկսին Յուլիսի կէսին:

Եւ 1959-ի վերջաւորութեան հրապարակուած Գործադիր  
Մարմինի Ա. Զեկոյցը կ'ըսէ. «Եկեղեցւոյս շինութեան աշխա-  
տանքները երեք ամիսներէ ի վեր կը շարունակուին: Վարի

յարկի մասը, որ շինութեան գլխաւոր մասը կը կազմէ, ամբողջական փոփոխութեան ենթարկուեցաւ եւ գեղեցիկ ու ներկայանալի սրահի վերածուեցաւ. Նոյեմբերին սկիզբները կարող պիտի ըլլան յանձնել մեզի:

Սրահի կահաւորումէն եւ սարքաւորումէն յետոյ, պիտի սկսուի եկեղեցւոյ նորոգութեան (...) եւ այնուհետեւ համայնքս օժտուած պիտի ըլլայ Հայաստանեայց եկեղեցիով եւ սրահով մը, որ կոչուած է ծառայելու համայնքիս հոգեւոր եւ մշակութային պահանջներուն»<sup>41</sup>:

Այս թափին մէջ յարմար տեսնուած էր 26 Նոյեմբեր 1959-ին Հայրապետական Լիազօր Պատուիրակ Խորէն արք. Բարոյեանի ձեռամբ եկեղեցւոյ օծումը, որ սակայն չաւարտած նորոգութիւններուն պատճառով՝ պիտի յետաձգուէր 1960-ի գարնան:

Խորէն արքեպիսկոպոս Նիւ Եորքէն Մոնթրէյալ կու գայ 27-30 Հոկտեմբեր 1959-ին: Համայնքին յարատեւութիւն կը ներշնչէ եւ սիրոյ ու եղբայրութեան պատգամներով Ս. Էջմիածնի յաւերժացումը կը մաղթէ, եւ ցոյց կու տայ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան դերը՝ իբր Մայր Աթոռին զօրացուցիչ: Իսկ Մոնթրէյալի համայնքը թէեւ փոքրաթիւ, բայց որակաւոր եւ օրինակելի կը զնահատէ<sup>42</sup>:

Եկեղեցին պիտի օծուէր Ամերիկայի Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Առաջնորդական Տեղապահ՝ Հրանդ Կպս. Խաչատուրեանի ձեռամբ:

## Թ. Դրուագ

Գործադիր Մարմինը կը հրաւիրէ Տեղապահ սրբազանը «Մոնթրէյալի հայոց եկեղեցին օծելու»<sup>43</sup>:

Հրանդ Կպիսկոպոս կը պատասխանէ 13 Ապրիլ 1960-ին, եւ կ'ըսէ. «Այս աւետիսը խորունկ արձագանդ գտաւ մեր հոգիին մէջ, նաեւ բաժնեկից դարձուց զմեզ Ձեր եւ Մոնթրէյալի հաւատացեալ մեր ժողովրդեան անչափելի եւ ընդհանրական ուրախութեան:

Բարեբախտ զուգադիպութեամբ հաւանաբար, ընտրած էք Հոգեգալստեան Տօնի Կիրակին՝ եկեղեցւոյ օծման օր իբրեւ: Ս. Հոգին այդ օր իր աստուածային զօրութեամբ պիտի իջնէ ու հանգչի եկեղեցւոյ կամարներուն ներքեւ եւ Ս. Խորանին վրայ, ու դարձնէ զայն Տուն Աղօթքի եւ Բնակարան Հրեշտակաց:

Տարիներ առաջ սակայն, վստահաբար, Ս. Հոգին իր զօրութեամբ ներգործեց Ձեր բոլորի ներաշխարհին մէջ. հաւատքի հուրը՝ իր ջերմութեամբ ու լոյսը՝ իր ճառագայթումով դրաւ ամէն մէկուդ հոգւոյն մէջ, որուն իբրեւ տեսանելի պտղաբերում՝ անհուն խանդով ու կորովով հաստատեցիք Ձեր եկեղեցին:

Խօսքս Ձեզի է, իմ հարազատ եւ սիրելի ժողովուրդ հայոց Մոնթրէալի, ամուր եւ միշտ կանգուն պահեցէք ուրեմն, Ձեր իսկ բազուկներով ու քրտինքներով շահած աղօթքի այս սուրբ եկեղեցին, որուն կամարներուն եւ շունչին ներքեւ միայն կարող պիտի ըլլաք պահպանել հայոց ազգին սուրբ հաւատքը եւ մայրենի քաղցր լեզուն»<sup>44</sup>:

Սրբազանը 4 Յունիսին եկեղեցւոյ օծման նաւակատիւքին կը նախագահէ եւ յաջորդ օրը զայն օծելով՝ Ս. ՅԱԿՈՒԲ կ'անուանէ<sup>45</sup>, ըստ եկեղեցւոյ կնքահօր՝ Հրանդ Բաստրմաճեանի փափաքին (Բաստրմաճեան եղբայրներուն՝ Հրանդի, Երուանդի եւ Յակոբի հօրենական մեծ հօր անունը Յակոբ էր):

Օծման առիթով, Գործադիր Մարմինի 7 Մայիս 1960 թուակիր նամակ մը զրկած էր Զարեհ կաթողիկոս, ուր կ'ըսէր. «Մեծ է մեր ուրախութիւնը եւ անխառն՝ մեր հրճուանքը ի լուր Ձեր պատուական համայնքի շինարարական ջանքերուն: Մարմնով հեռու, սակայն հոգւով Ձեզի հետ պիտի ըլլանք օծման օրը եւ պիտի աղօթենք առ Աստուած, որ Ձեր նորաշէն եկեղեցին ըլլայ Մոնթրէալի մեր սրտահատորներուն համար կրօնասիրութեան, ազգասիրութեան եւ եղբայրսիրութեան ներշնչարան մը, կանգնած ի փառս Աստուծոյ եւ ի պարծանս ազգիս հայոց:

Հաւաքուեցէք Հայց. Եկեղեցիէն ներս եւ հոն մէկ կողմ թօթափեցէք աշխարհային բոլոր մտածումներն ու զգացումները եւ հոն հաղորդութեան մտէք Աստուծոյ հետ, սրտեռանդն աղօթեցէք Անոր եւ ոյժ ստացէք մեր Ս. Հայրապետներու ներկայութենէն:

Ի սրտէ կը մաղթենք, որ Ձեր նորակառոյց եկեղեցին ըլլայ Տաճար Աստուծոյ Կենդանւոյ եւ միութեան շաղախ ազգին բոլոր զաւակներուն միջեւ»<sup>46</sup>:

## Ժ. Դրուագ

Յետ օծման, համայնքը կը պատրաստուի «փառաշուք եւ հանդիսաւորապէս» կատարելու եկեղեցւոյ անուան առաջին տօնախմբութիւնը, որ տեղի պիտի ունենար Դեկտեմբեր 17-18 Շաբաթ եւ Կիրակի օրերուն<sup>47</sup>:

Տեղապահ սրբազանը 17 Դեկտեմբերի երեկոյեան կը նախագահէ նախատօնակի արարողութեան եւ կը կատարէ Ս. Յակոբ եկեղեցւոյ առաջին ձեռնադրութիւնները. կը ձեռնադրուին դպիրներ եւ սարկաւազներ<sup>48</sup>:

Յաջորդ օրը կը պատարագէ եւ ի ժամու քարոզի կը կարդայ Ջարեհ կաթողիկոսի Կոնդակը՝ Կիլիկիոյ Ս. Աթոռին Անթիլիաս փոխադրութեան եւ հաստատման 30-ամեակին առիթով գրուած:

Կոնդակէն հատուած մը կը մէջբերեմ. «1920-էն ասդին, եւ աշխարհիկ ոյժերու դժբախտ դասաւորումին հետեւանքով, Կիլիկիան Ս. Աթոռիս վիճակուեցաւ Հայց. Եկեղեցւոյ եւ Հայ ժողովուրդին ծառայութեան ծանրագոյն, այլ քաղցր բաժինը: Ու պարագաներու բերմամբ արդէն անձամբ իր ժողովրդեան եւ ընդարձակուած թեմերու բազմապիսի կարիքներուն հասնելու իր պարտականութեանց առընթեր, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը երբեք չվարանցաւ ընդառաջելու՝ անհովիւ, անմխիթար մնացած կամ անտեսուած հոծ եկեղեցիներու կոչին, զանոնք առնելու իր հովանիին ներքեւ, յանուն Հայց. Եկեղեցւոյ պաշտպանութեան, պայծառութեան եւ Սփիւռքի մէջ հայապահպանութեան սրբազան եւ անյետաճգելի գործին»<sup>49</sup>:

Ս. Պատարագէն հտքը, ժողովուրդ եւ վարչականք սրահ կ'իջնեն: Խանդավառ մթնոլորտի մէջ ամէնքը բուռն կը բաղձան կրօնական լիակատար իրաւունքներ ունենալու համար Charter-ի

դիմում կատարել<sup>50</sup>: Ուստի, Գործադիր Մարմինը հարկաւոր քայլերը կ'առնէ եւ դիմումը Նահանգային Խորհրդարան կը ղրկուի, որուն կողմէ ընդունուելէ եւ Տեղակալ-Կառավարիչին կողմէ ստորագրուելէ ետք, Ս. Յակոբ եկեղեցին 22 Փետրուար 1961-էն սկսեալ կը դառնայ պաշտօնապէս ճանչցուած կրօնական կազմակերպութիւն<sup>51</sup>:

## ԺԱ. Դրուագ

Արդար է արձանագրել, որ ՀՅԴ Միհրան Փափազեան կոմիտէութեան լծակցութիւնը սկիզբէն եղաւ ամբողջական: Եկեղեցի եւ կոլսակցութիւն փոխադարձ իրաւասութեանց նկատմամբ յարգալից մօտեցումը եւ միասնական գործունէութիւնը բարիք կրնան ըլլալ միայն՝ հայակերտումի աշխատանքին մէջ:

Եր. Բաստրմաճեան ՀՅԴ-ի վերաբերեալ հետեւեալը ըսած է.

«Ես անոնցմէ եմ, որոնք կը հաւատան, թէ կոլսակցութիւնները օգտակար են ժողովուրդներու ազգային, հանրային եւ քաղաքական կեանքին մէջ, երբ հաւատարմօրէն կը ծառայեն այն ժողովուրդին, որուն անունով իրենք ասպարէզ են իջած:

Կոլսակցութիւններ չկան միայն բռնապետական իշխանութիւններու ենթակայ երկիրներու մէջ, ուր տիրող իշխանութիւնը կը ճզմէ բոլոր կոլսակցութիւնները, ինչպէս եղած է անցեալին մէջ՝ Հիթլէրի եւ Մուսոլինիի օրերուն, ինչպէս է այսօր Համայնավար կարգերու տակ կամ Թուրքիոյ մէջ:

Ազատ երկիրներու մէջ, կոլսակցութիւնները գոյութիւն ունեցած են միշտ եւ ունին, ու կը գործեն փոխադարձ յարգանքի սկզբունքին վրայ: Ամենէն ծանր պայքարներու ատեն իսկ, անոնք կը պահեն իրենց պաղարիւնը, եւ կը յարգեն կենցաղագիտական ամէն պատշաճութիւն: Այդ ժողովուրդները ու այդ կոլսակցութիւնները կը գիտակցին, թէ կոլսակցութիւններու ներկայութիւնն ու գաղափարական պայքարը անհրաժեշտ է բարգաւաճումի ու զարգացման համար:



Նոյնն է պարագան Հայ ժողովուրդին համար:

Հայ ժողովուրդի զարթօնքին հետ, Հայ կուսակցութիւնները եկան՝ իբրեւ մղիչ ուժ զարկ տալու մեր հաւաքական վերելքին՝ ձեւաւորելու եւ ղեկավարելու վերածնութեան մեր շարժումը:

Գաղտնիք չէ, ու բոլորս ալ կը հաւատանք, թէ ինչպէս բոլոր ազգերու, նաեւ Հայ ժողովուրդին մէջ կուսակցութիւնները սխալներ գործած կրնան ըլլալ: Մենք չէինք, որ բացառութիւն պիտի կազմէինք ազգերու ընտանիքին մէջ:

Այս իրողութիւնը պատճառ մը չէ, որ ժխտենք կամ հերքենք այն միւս ճշմարտութիւնը, ըստ որուն՝ կուսակցութիւնները միշտ ալ օգտակար եղած են, ու այսուհետեւ եւս մեծ դեր ունին կատարելիք:

...Վերջին երեք կամ չորս տարիներու ընթացքին է, որ աւելի սերտօրէն գործակցելու առիթը ունեցայ այս համայնքին մէջ՝ ՀՅԴ-ի հետ, եւ նկատեցի սքանչելի այն ոգին, որ կայ այս կազմակերպութեան ներս. խօսքէ աւելի միշտ գործելու հետամուտ՝ զանգուածներուն մէջ զոհաբերութեան ոգին արթնցնելու ձգտումով: Զոհողութիւն ու նուիրում, որոնցմով այնքան հարուստ եղած է ինքը՝ ՀՅԴ-ն, ինչպէս անցեալին, նաեւ ներկայիս:

Շատ մը բարեկամներ, ինծի նման անկուսակցական, յաճախ հարց են տուած ինծի, թէ ինչպէ՞ս ես կրնայի գործակցել դաշնակցականներուն հետ:

Պատասխանս եղած է միշտ հաստատ ու յստակ. Դաշնակցական հայերը մեզի՝ բոլորիս նման ունին հայեցի ու տոհմային կրթութիւն. յամառ ու նուիրեալ աշխատողներ են եւ անկեղծօրէն կը հաւատան Հայ ժողովուրդի արդար դատին եւ անիրաւուած իրաւունքներուն...»<sup>52</sup>:

Յիրաւի, ՀՅԴ Միհրան Փափագեան կոմիտէութեան կազմակերպուածութիւնը եւ ներգրումը իրենց մեծ նպաստը պիտի ունենային Ս. Յակոբի Սէնթ Զօթիքեան եւ ներկայ կառոյցներու ստեղծումին եւ գործունէութեան մէջ:

Կոմիտէութեան 50-ամեակին առիթով (2006 թ.) Հովիւ եւ Հոգաբարձութիւն հտեւեալ վկայութիւնը գրեցին.-

Քաղաքական կառոյցները շատ կարեւոր են. անոնք

կեանքի իրականութեան մէկ տարածքը կը ստանձնեն: Անոնց առաքինութիւնը կը կայանայ եւ կը յայտնուի իրենց ստանձնածը ըստ կարելիութեան յաջողութեամբ վարելուն մէջ: Եւ արդարօրէն, Միհրան Փափազեան կոմիտէութիւնը արժանի է 50-ամեայ յաջողութեան դափնեպսակին: Առանց անոր տեսլականին եւ ժողովրդավար մօտեցումին՝ Մոնթրէալը պիտի չըլլար այն՝ ինչ որ է այսօր<sup>53</sup>:

Ինչպէս իր առաջին օրերուն, այժմ եւս կառոյցը բազմաթիւ մարտահրաւէրներու առջեւ է, եւ ճամբան դիւրին չէ ու կը նմանի ամէն պայքարի ճամբու: Համայնքը նոր դէմք մը ահա կ'առնէ, եւ նոր սերունդին հայեացքը, առաջնահերթութիւնները եւ ժամանակի ու գործունէութեան դասաւորումներն ու կերպերը խիստ տարբեր են սովորականէն:

## ԺԲ. Դրուագ

Միհրան Փափազեան կոմիտէութեան քովն ի վեր՝ Ս. Յակոբի համայնքին սկզբնաւորութենէն ասդին՝ բազմերես եւ մշտանորոգ իր ծառայութիւնը բերաւ ու կը բերէ ՀՕՄ-ի Մոնթրէալի մասնաճիւղը եւս, որ 1993-էն ասդին ծանօթ է «Սօսէ» անունով, ի յիշատակ հայ ազատագրական պայքարի դէմքերէն՝ Սօսէ Մայրիկի:

Մասնաճիւղը Ս. Յակոբի համայնքին մէջ «օգնութեան սուրբ գործին» նուիրեալ սպասաւորներու «լոյսի բանակ»ն է եւ եկեղեցւոյ բոլոր աշխատանքներուն սերտ գործակիցը:

ՀՕՄ-ի Սօսէ Մասնաճիւղի հիմնադրութեան 50-ամեակին առիթով Ս. Յակոբ եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը սա վկայութիւնը գրեցին.-

ՀՕՄ-ը աշխարհով մէկ հայ հոգիի ընկերային յանձնառութեան ամենէն բաբախուն օրինակն է: Տարբեր վայրերու եւ տարբեր պայմաններու մէջ՝ անոր զոհողութեան սահմանը այնքան մեծ է եւ այնքան տարածուն, որ մարդ հիացումով եւ խոր

յարգանքով լեցուած կը խոնարհի անոր առջեւ:

Յիսուսի սքանչելի մէկ առակն է Տասը Կոյսերու մասին պատմածը: Անոնցմէ հինգը իմաստուն էին եւ հինգը՝ յիմար: Ամէնքն ալ ճամբայ ելած էին դիմաւորելու փեսան: Անոնցմէ հինգը իրենց լապտերներուն հետ պահեստի ձէթ չառին, իսկ հինգը իրենց հետ սրուակով ձէթ առին եւ այդպէս ճամբայ ելան: Երբ փեսան ուշացաւ, բոլորն ալ թմրեցան եւ քնացան լապտերներու լոյսին մէջ: Կէս գիշերին կանչ մը յայտարարեց փեսային գալը եւ հրաւիրեց հարսնետոնները՝ որ փեսան դիմաւորելու ելլեն: Յիմար կոյսերը տեսնելով, որ իրենց լապտերներուն ձէթը կը վերջանայ, իմաստուն կոյսերէն ձէթ ուզեցին: Բայց իմաստունները չէին կրնար տալ, այլապէս իրենք ալ կրնային առանց ձէթի մնալ: Ուստի թելադրեցին յիմար կոյսերուն՝ երթալ եւ ձէթ գնել: Երբ յիմարները ձէթ գնելու գացին, փեսան հասաւ եւ իմաստունները փեսային հետ հարսանեկան խրախճանքին մտան: Իսկ երբ յիմարները վերադարձան, հարսնետան դուռը փակ գտան, եւ հակառակ իրենց ճիգին՝ դուռը չբացուեցաւ իրենց առջեւ:

ՀՕՄ-ը սկիզբէն շարժած է եւ կը շարժի իմաստուն կոյսերուն պէս: Անիկա ապագան նախատեսողն է եւ յար արթնութեամբ կը գործէ մեր կեանքէն ներս: Անիկա միշտ ձէթ ունի իր մօտ եւ իր լապտերները երբեք մոռթ չեն հագնիր: Նոյնն է պարագան ՀՕՄ-ի Սօսէ Մասնաճիւղին<sup>54</sup>:

Իրաւ է, որ անոր գործունէութիւնը մնայուն հրաւէր է՝ կանխաւ ձէթ ապահովելու, այսինքն՝ ծրագրելու ծառայութեան ճանապարհը եւ ուղիղ քալելու մինչեւ նպատակ:

Մասնաճիւղը կը հիմնուէր 1957-ին: Եւ երբ տարի մը ետք համայնքը ոտքի կ'ելլէր՝ սեփական եկեղեցի մը ունենալու առաջադրանքով, ՀՕՄ-ը հոն էր իր բարոյական եւ նիւթական աջակցութեամբ:

Եւ այս յանձնառութիւնը փոխադարձ էր:

Սկիզբի օրերէն, համայնքին նուիրեալներ՝ Հրանդ, Երուանդ եւ Յակոբ Բաստրմաճեան եղբայրները, ինչպէս նաեւ Քերոբ Պտուքեան՝ նեցուկ կանգնեցան մասնաճիւղին<sup>55</sup>, որովհետեւ խո-

րապէս կը հաւատային անոր առաքելութեան եւ զայն կը ճանչնային իբր հարազատ մայր մեր համայնքին: Նոյն ճանաչումը եւ սէրը ունեցան Հոգաբարձութեան յաջորդական կազմերը:

Մէնթ Զօթիքեան տարիներուն Մոնթրէալի մասնաճիւղը դիմաւորեց նոր գաղթողները, անոնց տեղական պայմաններուն եւ օրէնքներուն ծանօթացուց, այցելեց նորապսակ զոյգերուն, նորածին երեխաներու ծնողներուն, եւ հիւանդներու: Անիկա տունէ տուն շրջեցաւ եւ նուիրատուութիւն հաւաքեց՝ պնակ մը տաք կերակուր մատուցելու համար նորեկ երիտասարդներուն: Մաս պատրաստեց, Քրիստոսի Ս. Ծնունդը աւետեց դռնէ դուռ շրջագայելով, եւ այլն:

Այն օրէն երբ եկեղեցին Շաբաթօրեայ վարժարանը բացաւ (1959 թ.), ՀՕՄ-ը անոր առաքելութեան մէջ իր ներդրումը ունեցաւ: Իսկ երբ ստեղծուեցան Արարատ ճամբարը (1971 թ.), Ծաղկոցը (1973 թ.) եւ Ամէնօրեան (1974 թ.), ՀՕՄ-ը մեծապէս սատարեց եւ կը շարունակէ սատարել կրթական այս հաստատութիւններու պահպանման համար Հովիւ եւ Հոգաբարձութեան ճիւղերուն: Իսկ հիմա ան կը հասնի նաեւ Արամ եւ Պերճուհի Մարգարեան մանկամսուրին:

Մասնաճիւղին օգնութիւնը միայն Հոգաբարձութեան առաքելութեան նպաստելու համար չեղաւ: Անիկա հասաւ համագործակից բոլոր միութիւններուն, այլեւ իր հոգատար ձեռքը երկարեց հայրենիք:

Արդար պիտի ըլլայ նշել, որ մասնաճիւղին ծառայական ոգին ազգային սահմանին մէջ չմնաց, նաեւ օժանդակեց տեղական կարիքներու:

Հազար ներբող՝ անոր ծառայութեան ստուերն իսկ չեն արժեր:

Ծառայութիւնը կ'ապրի եւ կ'ապրեցնէ:

## ԺԳ. Դրուագ

1961-ի Ապրիլին Մոնթրէալ կու գայ եւ 11-16 կը մնայ Թէոդիկի ժառանգորդ, մտաւորական եւ խմբագիր՝ Կարօ Գէորգեանը<sup>56</sup>:

Ան շրջագայութեան ելած էր դէպի Միացեալ Նահանգներ եւ Գանատա՝ ուսումնասիրելու համար երկու երկիրներու հայութեան կեանքը եւ գրելու իր «Ամէնուն Տարեգիրք»ին մէջ:

Կ. Գէորգեան իր ուսումնասիրութիւնը պիտի լոյս ընծայէր 1962-ին՝ տարեգիրքի 238-492 էջերուն վրայ:

Գանատայի հայութեան յատկացուած բաժնով<sup>57</sup>, ան նախ գրած է գաղութի կազմութեան եւ նորեկներու ներգաղթին մասին: Ապա երեք գլուխներով զարգացուցած է ուսումնասիրութիւնը: Գլուխները վերնագրուած են՝ «Գանատահայ Համայնքներ / Վիճակագրական Տեղեկութիւններ Եւ Ազգային-Եկեղեցական Կազմակերպութիւններ», «Ընդհանուր Հաստատումներ» եւ «Դէմքեր Գանատահայ Գաղութէն»:

Ներկայացնելով Մոնթրէալի համայնքը, գրած է. «Գանատահայ գաղութի ամենէն հայաշատն է Մոնթրէալի համայնքը: Այլեւ ամենէն կենսունակը՝ ազգային-հասարակական կեանքի գծով: Հին եւ նոր սերունդներով ամբողջութեամբ հայախօս՝ ինչպէս առհասարակ գանատահայ միւս համայնքները»<sup>58</sup>: Այն օրերուն Մոնթրէալի հայութիւնը 912 հոգի էր, որուն 2/3-ը Ս. Յակոբի համայնքին անդամ էր<sup>59</sup>:

Ապա գրած է Թորոնթոյի (600 հայեր), Համիլթընի (500 հայեր) եւ Սէյնթ Գաթրինզի (700 հայեր) համայնքներուն մասին: Նաեւ նշած է, թէ Պրէնթօրտի մէջ կան 200 հայեր, Կալթի՝ 150, Ուինծըրի՝ 150, Կուէլֆի՝ 75, Օթթաուայի՝ 50, Լանտընի՝ 50, Վանգուվըրի, Ուինիփէկի եւ Հալիֆաքսի մէջ՝ 50, եւ այլեւայլ վայրերու՝ 25:

Մոնթրէալի դէմքերէն երկու անջատ մասերով գրած է Եր. Բաստրմաճեանի եւ Ք. Պտուկեանի մասին: Անոնցմէ առաջ Լ. Տէր Ասատուրեանի մասին հետեւեալ վկայութիւնը տուած է. «

(Ան) իր փորձառութեամբ ու նուիրումով, այլեւ տեղացի եւ նորեկ այլ ուժերու հետ սերտօրէն գործակցելով, մեծապէս օգտակար կը հանդիսանայ համայնքին, բոլոր մարզերուն մէջ»<sup>60</sup>:

Եր. Բաստրմաճեանի մասին՝ «(Ան) կը ներկայանայ իբրեւ առանցքը ազգային-հասարակական կեանքին եւ գործերուն»<sup>61</sup>:

Ք. Պտուկեանի՝ «(Անոր անունը) սերտօրէն կապուած պիտի մնայ գանատահայ նորագոյն գաղութի կազմութեան պատմութեան հետ եւ միշտ պիտի յիշուին իր մատուցած ծառայութիւնները»<sup>62</sup>:

«Ընդհանուր Հաստատումներ» վերնագրին տակ շահեկան անդրադարձներ եւ ապագայի միտքեր արձանագրած է մտաւորականը:

Ըսած է. «Գանատահայերը՝ ամերիկահայ գաղութին հետ բազմատեղով՝ ունին հիմնական առաւելութիւն մը. հայախօս են 100-ին 90 համեմատութեամբ, եւ ազգային դիմագիծի տկարացումը գրեթէ աչքի չի զարներ»<sup>63</sup>: Իսկ գանատահայութեան մօտ լեզուի պահպանութեան առնչութեամբ հետեւեալ կարծիքը յայտնած է. «նոյնիսկ ժամանակի թաւալումով եւ սերունդներու յաջորդականութեամբ, գանատահայ գաղութը պիտի հիննայ շատ աւելի ուշ, իսկ հիննալու պարագային ալ պիտի շարունակէ մեծ մասով պահպանել մայրենի լեզուն, բարքերը, աւանդութիւնները եւ մանաւանդ ազգային ինքնագիտակցութիւնը»<sup>64</sup>: Ան իր կարծիքը արդարացնել ուզած է՝ նախ ակնարկելով Միացեալ Նահանգներու ներգաղթի խիստ քաղաքականութեան յարաբերաբար՝ Գանատայի ընծայած դիւրութիւններուն. անոնց իբր հետեւանք՝ «նոր բազմութիւններ պիտի շարունակեն հասնիլ Գանատա, բերելով իրենց հետ թարմութիւն», ըսած է<sup>65</sup>: Եւ երկրորդ՝ Գանատայի ձուլարանը տեսած է տարբեր Միացեալ Նահանգներու ձուլարանէն: Համաձայն իրեն, Գանատայի ձուլարանը երկուքի բաժնուած է. «այնտեղ իրարու հետ մրցման մէջ են իրարմէ բոլորովին անջատ երկու քաղաքակրթութիւններ — անգլիսաքսոնն ու ֆրանսականը: Տրամաբանական պիտի ըլլար հետեւաբար նախատեսել, թէ այս մրցակցութիւնն իսկ, ընդհանրապէս հնարաւորութիւն պիտի

տայ մեզի պէս փոքրամասնութիւն կազմող տարրերուն՝ պաշտպանուելու եւ կող չհերթալու մէկէն կամ միւսէն առանձնաբար եւ կամ երկուքէն ալ միասին՝ հաւաքաբար...»<sup>66</sup>:

Սակայն Կ. Գէորգեան գանատահայութեան մօտ մայրենի լեզուին սէրը եւ ազգային արժէքներուն հանդէպ հետաքրքրութիւնը վառ պահելու համար պայման մը սեւեռած է, ըսելով. «Այս ուղղութեամբ շատ բան կախում ունի գիտակցօրէն եւ ազգային նախանձախնդրութեամբ տարուելիք հաւաքական աշխատանքներէն... Գանատայի իւրապատուկ պայմանները, ձուլման վտանգը դիմադրաւելու տեսակէտով, անշուշտ նպաստաւոր են եւ հետեւաբար աւելի կը դիւրացնեն այդ աշխատանքները: Բայց նպաստաւոր ըլլալը միայն չի բաւեր, որովհետեւ հոգը կրնայ աստիճանաբար եւ անզգալաբար սահիլ ոտքերուն տակէն, եթէ երբեք իրերու ընթացքը ձգուի պատահականութեան եւ ձեռք ձեռքի տուած հետեւողական ճիգեր ի գործ չգրուին...»<sup>67</sup>:

## ԺԴ. Դրուագ

Նախապէս ակնարկած էի Միացեալ Նահանգներու Ազգային Վարչութեան 21 Փետրուար 1959 թուակիր նամակին, որով կը պահանջուէր Գործադիր Մարմինին վերածուծը Հոգաբարձութեան: Ս. Յակոբ եկեղեցին իր Հոգաբարձական առաջին ժողովը կ'ունենար 27 Յունիս 1961-ին:

Լրաքաղի Մայիս-Յունիս 1961-ի թիւին մէջ գրուած է. «Եկեղեցական կազմակերպութեանս վերին մարմնոյ անունը այսուհետեւ պիտի կոչուի ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻԻՆ Ս. ՅԱԿՈԲ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ»:

Գործադիր Մարմինի անուան այս փոփոխութիւնը կ'ըլլայ «անունի միօրինակութիւնը պահելու համար Կիլիկեան թեմերու եկեղեցական վերին մարմիններուն հետ»<sup>68</sup>: Այստեղ նշելի է, որ Ս. Յակոբի Հոգաբարձութեան պարագային, պատասխանատուութեան սահմանները շատ աւելի ընդարձակ էին եւ են քան

լուկ եկեղեցական մարմնի մը. «Հոգաբարձութիւն» անունը Մոնթրէալի մէջ նշանակ է համայնքի վարչական վերին կառույցին, որուն պատասխանատուութեան ենթակայ են եկեղեցի, կրթական դրութիւն (այս եզրը կը գործածեմ՝ որովհետեւ 1971-էն ասդին Ս. Յակոբ եկեղեցւոյ կրթական հաստատութիւններուն թիւը աճեցաւ) եւ համայնքային կեդրոն:

«Նոր Տարեշրջանի Առթիւ» խմբագրականով Լրաքաղ Յուլիս-Օգոստոս 1961-ի թիւին մէջ ըստւած է.-

Անցեալ երկուքուկէս տարիներու դժուարութիւնները յաղթահարուեցան շնորհիւ մեր ազգանուէր ժողովուրդի յայտնաբերած բարոյական եւ նիւթական անսպառ զոհողութեանց:

Հայ համայնքը երբ կ'որոշէր հիմնել իր «հաւատքի եւ լոյսի տունը»՝ նիւթական որեւէ պատրաստութիւն չունէր: Եւ ահա հասած էր գովելի հանգրուանի մը<sup>69</sup>:

Նոյն խմբագրականը աւելցուցած է, թէ եկեղեցւոյ «վերին մարմինը» կամ Հոգաբարձութիւնը չէ գոհացած իր ձեռք բերած յաջողութիւններով, եւ թէ՛ կէս ճամբան իսկ կտրած չի համարեր ու կը ձգտի լաւագոյնին: Ապա կը տեղեկացնէ, որ Հոգաբարձութիւնը կազմակերպած է օժանդակ մարմիններ եւ յանձնախումբեր, որոնց կ'անդամակցին շուրջ վաթսուն անձեր եւ «որոնց բոլորանուէր աշխատանքով է, որ Ս. Յակոբ եկեղեցին, Հայ Դպրոցը (ակնարկութիւն՝ Շաբաթօրեային) եւ Հայ մշակոյթը կանգուն պիտի մնան»<sup>70</sup>:

Յիրաւի, Հոգաբարձութեան սկզբնական ծրագիրներուն յաջողութեան մէջ մեծ դեր ունեցան անոր նշանակած զոհաբերուող եւ աշխոյժ հետեւեալ մարմիններն ու յանձնախումբերը.- Եկեղեցւոյ Հոգատար Մարմինը (ասիկա նախապէս «Եկեղեցւոյ Հոգաբարձութիւն» կոչուած էր), Կրթական Մարմինը, Մշակութային Յանձնախումբը, Եկեղեցասէր Տիկնանց Մարմինը, Տնտեսական Յանձնախումբը, Շէնքի Յանձնախումբը, Նորեկներու Հոգատար Յանձնախումբը եւ Զեռնարկներու Յանձնախումբը:

Յանձնախումբեր պիտի դադրէին, յանձնախումբեր պիտի անուն փոխէին, եւ պատասխանատուութեան ընդարձակումին հետ՝ նոր յանձնախումբեր պիտի նշանակուէին ու գործէին:



Ճանապարհին վրայ՝ զանազան ձեռնարկներու համար՝ ժամանակաւոր բազմաթիւ յանձնախումբեր պիտի յառաջացուէին: Ի մի խօսք՝ Հոգաբարձութեան ծրագիրներուն իրականացման մեծապէս սատարեցին անոնք եւ իրենց հետեւողական եւ եռանդուն գործունէութեամբ ստեղծեցին Ս. Յակոբեան ներկայ իրականութիւնը:

Այսօր՝ 50-ամեակի թուականին մէջ, Հոգաբարձութեան հովանիին տակ կը գործեն իրենց յանձնախումբերով միասին՝ երեք Մարմիններ. Կրթական Գործադիր Մարմինը, որ կը զբաղի Ս. Յակոբի կրթական հաստատութիւններով, բացի Կիրականօրեայ դպրոցէն. Տնտեսական Գործադիր Մարմինը, որ կը զբաղի կրթական հաստատութիւններուն նիւթական գործառնութիւններով. եւ Եկեղեցւոյ Գործադիր Մարմինը, որ կը զբաղի բոլոր այն յանձնախումբերով եւ վարչութիւններով՝ որոնք եկեղեցւոյ ծառայութեան մէջ են: Եկեղեցւոյ Գործադիր Մարմինի հովանիին տակ է, որ կը ծառայէ Կիրականօրեայ դպրոցը:

Հոգաբարձութիւնը նաեւ նշանակած ունի հետեւեալ յանձնախումբերը, որոնք անմիջականօրէն իրեն կապուած են.- Անձնակազմի կամ Պաշտօնէութեան Յանձնախումբը, Կրթանպաստի Յանձնախումբը, Ս. Յակոբ Հիմնադրամի Յանձնախումբը, Շինարարական կամ Վերանորոգութիւններուն Յանձնախումբը եւ Ճաշասրահի Յանձնախումբը: Ընդհանուր թիւը բոլոր անոնց՝ որոնք Ս. Յակոբի կառոյցին կը սպասարկեն այսօր թէ՛ իբր անդամ Հոգաբարձութեան կազմին, թէ՛ իբր անդամ Մարմիններուն եւ մնայուն ու ձեռնարկային յանձնախումբերուն, եւ թէ՛ վարչութիւններուն (Դպրաց Դաս եւ Հոգեւոր Քոյրերու Աղօթածոցով)՝ կ'անցնի 100-ը:

Այս տարածուն կազմակերպական ճիգը՝ որպէսզի նիւթականը ոգի դառնայ, եւ հայ հաւատքի ու լոյսի այս նաւը լեռնածեւ ալիքներէն անցնելով հասնի՝ իր նաւահանգիստը:

## ԺԵ. Դրուագ

«...գիտակցիճք ու մաղթենք  
որ յաղթողը ըլլայ միայն ու միայն Ս. Աւետարանը,  
քրիստոնէական մեր կրօնքը  
եւ ազգային գիտակցութեան եւ ինքնաճանաչման ոգին».  
Զարեհ Ա. Կաթողիկոս:

Մինչ համայնքային խանդավառ գործունէութիւնը իրագործումներով կ'արգիւնաւորուէր, եւ կ'ըլլար պատճառ նոր ծրագիրներու եւ յանձնառութիւններու, պիտի հասնէր գոյժը Զարեհ Ա. Կաթողիկոսի վախճանման:

22 Փետրուար 1963-ը սուգի օրն էր նաեւ Ս. Յակոբի համայնքին: Յետ կարճատեւ, բազմաչարչար, այլ բեղուն գահակալութեան, կը վախճանէր Զարեհ Հայրապետ՝ «Աքանչելի»ն:

Ան բարձրագոյն պատասխանատուութեամբ եւ յօգուտ Հայ եկեղեցւոյ՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը շնորհած էր բոլոր անոնց, որոնք զրկուած ըլլալով մեր հայրերու հոգեկերտ եւ ժողովող տապանէն՝ դիմած էին Առաքեալներէն եկող եւ Լուսաւորիչէն հասնող ու ողբերգական ճամբաներով աքսորական Հայրապետութեան: Մոնթրէալի համայնքը անոնցմէ էր...

Լրաքաղի Փետրուար 1963-ի համարը կը բացուի գուժելով Զարեհ Վեհափառի վախճանումը, եւ անոր պատգամներէն չորս մտքեր կը քաղէ: Անոնցմէ մէկը՝ ահաւասիկ.-

Իմ սրտագին ողջոյնի խօսքս կ'ուղղեմ էջմիածնայ Նախամեծար Մայր Աթոռին, անոր արժանընտիր գահակալ Վազգէն Ա. Կաթողիկոսին, այն հաստատ համոզումով եւ գիտակցութեամբ, որ Նախամեծար Մայր Աթոռը եւ Կիլիկեան Աթոռը՝ լծակիցներ եւ գործակիցներ են նոյն ժողովուրդին ու Աւետարանին ծառայող:

Մեր Աթոռին կապը պիտի մնայ անքակտելի էջմիածնայ հետ, հակառակ անոր, որ պիտի գտնուին այդ կապը թուլցնել

ուզողներ: Անխախտ ու ամուր պիտի պահենք այդ կապը, որովհետև անով միայն անայլայլ պիտի պահենք ազգային եւ եկեղեցական դիմագծութիւնը հայութեան<sup>71</sup>:

Նոյն թիւին մէջ կը կարդանք նկարագրականը Հոգեհանգստեան արարողութեան, որ Ս. Յակոբ եկեղեցւոյ համայնքը կատարած է:

*Թղթակցութիւնը կ'ըսէ.-*

Սեւեր էր հագած Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցին, Փետրուար 24-ի Կիրակին:

...Խոնարհած ճակատներն ու վշտակիր նայուածքները կ'արտայայտէին այն անհուն ցաւը, որ այս անսպասելի աղէտը պատճառեց հայ սրտերուն: Մուտքի դուռը սեւ ժապաւէնով էր պատուած, ջահերը սեւ քօղերու մէջ առնուած, իսկ խորանին առջեւ, Գահին վրայ դրուած էր վախճանեալ կաթողիկոսին լուսանկարը սեւ շրջանակի մէջ<sup>72</sup>:

Արարողութեան ավարտին, Հոգաբարձութեան անունով Լ. Տէր Ասատուրեան ըսած է.-

Սուգ կայ այսօր Հայց. Եկեղեցւոյ բոլոր կամարներուն տակ. սուգ են նաեւ բոլոր հայ սրտերը:

...Բոլորիս ծանօթ են Զարեհ Ա. Կաթողիկոսի բազմանուէր ծառայութիւնները իր հօտին, սկսեալ այն օրերէն, երբ տակաւին մատաղ հասակի մէջ, Հալէպի նման հայաշատ կեդրոնի մը առաջնորդ ընտրուած, Զարեհ Ծ. վարդապետ Փայասլեան, դեկավարի մը յատուկ իմաստութիւնը եւ արիութիւնը ունեցաւ եւ թոյլ չտուաւ, որ իր տարագիր ժողովուրդը գործիք դառնայ գաղթարար իշխանութեանց ձեռքին մէջ, հիւրընկալ երկրի բնիկ արաբ ժողովուրդի շահերուն դէմ:

Ի գուր չէր, որ 1956-ին թափուր մնացած Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի գահակալին ընտրութիւնը երբ կը կատարուէր, բոլորի աչքերը յառեցան դէպի Զարեհ եպիսկոպոսը:

Այն արուեստական ու տմարդի պայքարը, որ մղուեցաւ նորընտիր կաթողիկոսին դէմ օտար ու մոլթ ձեռքերէ ղեկավարուած, իր անբասիր անձին մաքուր անցեալը չէ, որ խնդրոյ առարկայ կը դարձնէր, այլ Հայց. Եկեղեցիին անկախութիւնը եւ

անձեռնմխելիությունը, որովհետեւ հակակրօն եւ անաստուած վարդապետությունը կը ձգտէր գործիք դարձնել մեր սուրբ Հայրապետներու եւ նահատակ ժողովուրդի շինած, պահպանած եւ մեզի ժառանգ թողած Հայց. Եկեղեցին:

...Իր ընդգրկած սկզբունքին մէջ եղաւ քաջ ու անյողզողդ, որպէս Խրիմեան Հայրիկ, իր իսկ թշնամիներուն հանդէպ եղաւ անյիշաչար ու ներող, որպէս ծառայ Յիսուսի: Գիտցաւ ներել մոլորեալներուն, բայց նաեւ տառապեցաւ անոնց գործած աւերներուն ի տես, եւ այս տառապանքն էր, որ զինք դասեց վշտալի ու նահատակ Հայրապետաց կարգին<sup>73</sup>:

Ջարեհ Ա. Կաթողիկոսի վախճանումէն ետքը՝ Կիլիկիոյ Ս. Աթոռին կը բարձրանայ Խորէն Ա. Կաթողիկոս:

## ԺԶ. Դրուագ

Խորէն արք. Բարոյեան 5 Մայիս 1963-ին, Անթիլիասի մէջ կ'ընտրուի Կաթողիկոս Կիլիկիոյ Ս. Աթոռին, եւ 12 Մայիսին կ'օծուի: Մոնթրէալէն իբր պատգամաւոր՝ Յակոբ Բաստրմաճեան ընտրութեան կը մասնակցի եւ ներկայ կ'ըլլայ օծման արարողութեան:

23 Յունիսին գումարուած Անդամական է. ժողովին, ան մեծ յուզումով եւ հետաքրքրականութեամբ նկարագրած է իր տեսածներն ու իմացածները<sup>74</sup>:

Լրաքաղի խմբագրութիւնը կ'որոշէ 1963-ի Մայիսի թիւին մէջ Հայրենիք օրաթերթէն արտատպել յօդուած մը, Ս. Յակոբի համայնքին լաւագոյնս ներկայացնելու համար նորած կաթողիկոսին դիմանկարը: Յօդուածը գրուած էր գիրի ու գրականութեան սպասաւոր եւ եռամեծար ուսուցիչ՝ Բիւզանդ Եղիայեանի կողմէ: Ան կաթողիկոսին ուսուցիչ եղած էր, եւ տեսած անոր աճումը, նաեւ հոգեւորականի ասպարէզին մէջ անոր յառաջընթացն ու իրագործումները:

Բիւզանդ Եղիայեան վստահութեամբ արձանագրած է, թէ

այս կաթողիկոսի օրով եւս Կիլիկեան Աթոռի լուսամիտ գահակալներուն գործունէութիւնը պիտի շարունակուի:

Խորէն կաթողիկոս իր հոգեւորական ծառայութեան սկզբնական օրերէն՝ անձնուիրութեամբ կատարած էր իր ստանձնած պաշտօնները:

Կոչուելով ազգային-թեմական ասպարէզին, պիտի յայտնուէր իբր շինարար եւ վարչագէտ եկեղեցական մը: Երբ հիւսիսային Սուրիոյ մէջ կարիքը կը զգացուէր թեմ մը կազմակերպելու, 1942-ին ձէգիրէ առաքուած էր, եւ տարիներով՝ «նոյնիսկ վտանգելու գնով իր առողջութիւնը» աշխատած ու կազմակերպած վարչական գործերը, մանաւանդ աշխատած, որ ազգային վարժարաններուն թիւը բազմանայ:

1951-ին Լիբանանի Թեմին Առաջնորդ ընտրուած էր:

Իր առաջնորդութեան օրերուն եւ իր փութաջանութեամբ՝ Լիբանանի հայութեան կեանքը «անօրինակ բարգաւաճում մը» կ'ապրէր: «Ջարմանալի արագութեամբ» իրարու կը յաջորդէին եկեղեցական եւ կրթական կառոյցներու շինութիւնները:

Կիլիկիոյ Ս. Աթոռին վրայ նոր ժամանակներու պայծառ դէմք մըն է, որ կը բարձրանար Խորէն արքեպիսկոպոսի ընտրութեամբ<sup>75</sup>:

Ջարեհ կաթողիկոսի օրերուն՝ անոր աջակիցն էր:

1957-1958 իբր Կաթողիկոսական Լիագօր Պատուիրակ կ'այցելէր Միացեալ Նահանգներ, Եւրոպա եւ Պարսկաստան. կը ծանօթանար գաղութներու կացութեան, եւ ազգային-վարչական կառոյցներու վերակազմութիւնը կը կատարէր այն գաղութներուն, որոնք դիմում կատարած եւ արժանացած էին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանիին<sup>76</sup>:

Խորէն արքեպիսկոպոս երկու անգամ Միացեալ Նահանգներ անցած էր Լիագօր Պատուիրակի պաշտօնով. մէյ մը 1957-ի Հոկտեմբերին, եւ ութ ամիսներ շրջած էր բոլոր գաղութներուն մէջ եւ «աննախընթաց խանդավառութիւն» ստեղծած ամենուր: Այս հանգրուանին մեծ թափ կը ստանար եկեղեցիներու շինութիւնը: Երկրորդ անգամ՝ 1959-ի Ապրիլին<sup>77</sup> եւ մինչեւ Դեկտեմբեր կազմակերպչական հեւքոտ գործունէութիւն ունեցած էր:

Ինչպէս նախապէս գրած էի, ան Մոնթրէյալ կու գար 1959-ի վերջաւորութեան՝ հրաւերովը Գործադիր Մարմինին: Ու համայնքը «պատմական եւ անմոռանալի օրեր» կ'ունենար:

Այս այցելութեան առիթով Խորէն արքեպիսկոպոս ըսած է. «Անցեալին մէջ սրածուրբիւնն էր, որ կը սպառնար մեր գոյութեան: Հիմա սակայն, մասնաւորապէս Սփիւռքի մէջ, տարբեր վտանգ մը կը սպառնայ մեզի՝ այլասերման վտանգը: Ամէն տեղ կը պայքարինք անոր դէմ, մեր եկեղեցական, մշակութային եւ քաղաքական կազմակերպութիւններով. ասոնց ամենէն գլխաւորը Հայ եկեղեցին է, որովհետեւ հոն ամփոփուած են մեր ազգային բոլոր արժէքները: Մեր նախնիքները իրենց սուրբերով եւ նահատակներով մեզի կը խօսին եկեղեցւոյ միջոցով... Հայ եկեղեցին հայ ժողովուրդին հայրենիքը եղած է, զոր պէտք է ի գին ամէն զոհողութեան պահենք»<sup>78</sup>:

Ան Մոնթրէյալէն մեկնած էր դրական տպաւորութիւններով եւ յոյսերով:

Նոր Հայրապետի հովանիին ներքեւ, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերը եւ համայնքները իրենց ծառայութիւնը պիտի շարունակէին եւ ծաւալէին այն ոգիով եւ պատասխանատուութեամբ՝ որ սփռեալ եւ սփռուող հայեր կը ժողովէր առաքելական տապանին մէջ:

## ԺԷ. Դրուագ

Մոնթրէյալի համայնքը արագօրէն կը մեծնար եւ եկեղեցի/կեդրոնը նեղ սկսած էր գալ: Քաղաքին հայութեան թիւը մօտաւորապէս 2000 էր, իսկ Ս. Յակոբի անդամներուն թիւը մեծով-պզտիկով՝ 700-ի հասած<sup>79</sup>:

Հետաքրքրական առաջարկ մը պիտի կատարուէր 23 Մայիս 1963-ի Անդամական Ընդհանուր Ժողովին. անիկա կը վերաբերէր Հայ Աւանի մը ստեղծումին<sup>80</sup>:

Եր. Բաստրմաճեան 30 Յուլիս 1963-ի Հոգաբարձական Ժո-

ղովին անդրադառնալով նիւթին, կը գեկուցէ Շոմէտիի (Լաւալ) ժեզիւ կղզիին վրայ թաղի մը շուրջ եղած խօսակցութիւններու մասին. սոյն հողը ունէր 600,000  $m^2$  տարածութիւն եւ բաւարար էր 50 պարտէզով տուներու շինութեան եւ ընդարձակ եկեղեցւոյ մը կառուցման համար<sup>81</sup>:

16 Յունիս 1964-ին Հոգաբարձութիւնը մինչեւ իսկ խմբակ մը կը նշանակէ, զոր «Հայ Աւանի Յանձնախումբ» կը կոչէ, եւ անոր կը վստահի ուսումնասիրութիւնը ականի մը ստեղծման կարելիութիւններուն<sup>82</sup>:

Այս ցանկութիւնը պիտի մարէր:

1964-65 տարեշրջանի Տարեկան Տեղեկագիրը կ'ըսէ. «...տարեշրջանի սկիզբի օրերէն իսկ Հոգաբարձութիւնը զբաղեցաւ Հայ Աւանի խնդրով: Երկար որոնումներէ վերջ սակայն, նախընտրեցինք մնալ մեր ներկայ հողին վրայ եւ մեծցնել եկեղեցին եւ սրահը»<sup>83</sup>:

2 Ապրիլ 1963-ին է, որ Հոգաբարձութեան ժողովին պիտի առաջարկուէր եկեղեցւոյ շէնքը մեծցնել կամ նոր շէնք մը փոխադրուիլ: Առաջարկը գաղափարներու փոխանակման, կամ այսպէս կոչուած՝ մտքի փոթորկումի կը ծառայէր<sup>84</sup>: Նիւթը երկրորդ անգամ սեղան պիտի գար 18 Յունիս 1963-ին, եւ որոշուէր յառաջիկայ Անդամական Ընդհանուր Ժողովին օրակարգի առարկայ դարձնել զայն<sup>85</sup>: Ու այդպէս կ'ըլլար. Եր. Բաստրմաճեան ընդունելով հարցին անմիջականութիւնը, կը վստահեցնէր թէ՛ Հոգաբարձութիւնը մօտէն կը զբաղի անով, եւ յոյս ունի, որ լուծումը պիտի չուշանայ<sup>86</sup>:

Լրաքաղի Մարտ 1965-ի թիւին մէջ Հոգաբարձութիւնը հաղորդագրութեամբ մը կը տեղեկացնէ, թէ մօտ երեք տարիներէ կը հետապնդէր Ս. Յակոբ եկեղեցւոյ կալուածին ընդարձակումը, եւ ուրախ է յայտնելու, որ «դէպքերու բարեդէպ դասուորութեամբ» կարելի եղած է Jeanne Mance փողոցին վրայ՝ եկեղեցւոյ կից կալուածը դարձնել ազգային սեփականութիւն: Եւ կ'աւելցուէր. «Jeanne Mance փողոցին նայող մեր կալուածին ճակատը 25 ոտքի ընդլայնում մը կ'ունենայ եւ հնարաւորութիւն կու տայ մեզի նոր շէնքի մը շինութեան՝ մեր մշակութա-

յին կարիքները բաւարարելու համար...»<sup>87</sup>։

Եւ սրահի ու նոր կալուածի լաւագոյն օգտագործման համար վերաշինութեան յատկագիծ կը ներկայացուի, քննարկում եւ ծախսերու հաշիւ կը տեսնուի, ու կը պարզուի, թէ սրահի ընդարձակումը պիտի արժէր \$200,000-ի գումար մը, իսկ եօթ դասարաններու ստեղծումը՝ մօտ \$100,000։

Նիւթական այս պատկերին առջեւ, աւելի յարմար պիտի դատուէր հող մը գնել եւ անոր վրայ կառուցել բոլոր յարմարութիւններով եկեղեցի-կեդրոն-դպրոց մը<sup>88</sup>։

Կու գար առաջարկը Սէն Լորանի շրջանին մէջ ծախու ընդարձակ հող մը գնելու, որ շուրջ 80,000  $m^2$  էր եւ որուն գինն էր \$120,000։

14 Հոկտեմբեր 1965-ի ժողովին Եր. Բաստրմաճեան նկատել կու տար, թէ հողը գնելու պարագային համայնքը ծանր յանձնառութեան մէջ կը մտնէր եւ թէ «չորս-հինգ տարիէն առաջ կարելի պիտի չըլլար որեւէ շինութեան ձեռնարկել»<sup>89</sup>։

Ապա խորհրդակցական ժողով մը տեղի կ'ունենար սրահին մէջ, որուն հրաւիրուած էին մասնակցելու ՀՅԴ Միհրան Փափագեան Կոմիտէն, ՀՕՄ-ի տեղական մասնաճիւղի վարչութիւնը, ՀՄԸՄ-ի եւ Կամֆի վարչութիւնները, ՀՅԴ Երիտասարդացի եւ Համագգայինի վարչութիւնները եւ Եկեղեցւոյ Հոգատար Մարմինը<sup>90</sup>։

Հոգաբարձութեան ատենապետը՝ Եր. Բաստրմաճեան բացման խօսքին մէջ կ'ըսէր. «Պատմական ժողով մըն է այս օրուանը, որովհետեւ առնուելիք որոշումները այսօրուան համար չեն։ Մենք պէտք է հեռուն տեսնենք։ Պիտի աշխատինք 50 կամ 75 տարի ետք եկողներուն համար։ Մոնթրէալի համայնքը այժմ ունի 5,000 հայութիւն, որ հինգ տարուայ մէջ կրնայ կրկնապատկուիլ։ Այս եկեղեցիին վրայ կատարելիք մեր նորոգութիւնները եւ փոփոխութիւնները վաղը մեզ պիտի չգոհացնեն։

Բարեբախտաբար հող մը գտած ենք, որ մօտաւորապէս 80,000  $m^2$  է կ'արժէ \$120,000, եւ որովհետեւ չունինք այդ գումարը՝ չորս-հինգ տարի ստիպուած պիտի ըլլանք գոհանալ մեր ունեցածով եւ վճարումներ կատարել՝ պարտքէն ազատելու հա-



մար»<sup>91</sup>: Ապա ատենապետը կը ներկայացնէր հողին վայրը եւ ժողովեալները կը հրաւիրէր կարծիքներու փոխանակման: Արտայայտուողներուն մէջ Լ. Տէր Ասատուրեան կ'ըսէր. «Որքան մեծ ըլլայ մեր ծրագիրը, այնքան աւելի հնարաւոր կը դառնայ անոր յաջողութիւնը»<sup>92</sup>: Մասնակիցները նորը կառուցելու ընդհանուր խանդավառութեան եւ յանձնառութեան մէջ կը մեկնէին:

Ակնարկուած հողին գինը Հոգաբարձութիւնը բարձրացուած պիտի գտնէր, եւ նիւթը պիտի գար նոյն շրջանին մերձակայ 78, 440  $\text{m}^2$  հողի մը, որ այժմու Ս. Յակոբեան կալուածին մէկ մասն է:

Եւ Ս. Յակոբը պիտի դառնար Մոնթրէյալի հայութեան ոգեկան եռանդուն աւան մը:

## ԺԸ. Դրուագ

«Մի՛ տկարանար,  
հաստատուն կեցիր  
եւ լեցուիիր ապագայի վառ յոյսերով»,  
Սուրէն վրդ. Գաթարոյեան:

Այժմեան Ս. Յակոբ եկեղեցւոյ եւ համայնքային կեդրոնի հողաչեղտը գնելու որոշումը կը տրուի 30 Նոյեմբեր 1965-ին<sup>93</sup>: Անմիջապէս նախագիծը կը պատրաստուի, որ ետքը քաղաքապետարանի վաւերացման կը զրկուի: Քանի մը փոփոխութիւններէ ետք՝ նախագիծը կը վաւերացուի: Եւ 25 Ապրիլին Հոգաբարձութեան ատենապետ՝ Եր. Բաստրմաճեանն ու քարտուղարը՝ Յակոբ Փիլիկեան կ'երթան նոտարին գրասենեակը եւ Nordic Development Corporation-ին հետ կը ստորագրեն առուծախի թուղթերը: Եր. Բաստրմաճեան անձնապէս կը ստանձնէ պատասխանատուութիւնը գնման գումարի լրիւ վճարումին<sup>94</sup>: Նոտարին պահանջքով յետոյ թուղթերը կը ստորագրեն նաեւ Կարապետ Բարձրիկեան, Յակոբ Բաստրմաճեան, Երուանդ Սալոյ-

եան, Նուպար Սերոբեան եւ Լեւոն Տէր Ասատուրեան<sup>95</sup> :

Արդէն աւանդութիւն մը դարձած էր եկեղեցւոյ օծման տարեդարձը կատարել, եւ Կիրակի, 5 Յունիսը կ'ըլլայ «ոգեւորման եւ ուրախութեան օր մը»:

Կը տօնուի օծման 7-րդ տարեդարձը:

Առաջնորդը՝ Հրանդ արք. Խաչատուրեան կը պատարագէ եւ կը պատգամէ: Յետ Ս. Պատարագին, Հոգեհանգիստի արարողութեան ընթացքին կը յիշուին Հայաստանի Առաջին Հանրապետութեան կերտման համար նահատակուած հերոսները եւ Սողոմոն Թեհլիրեանը<sup>96</sup>:

Յաջորդ օրը՝ 6 Յունիս 1966-ին Գափրի պանդոկին մէջ Խորհրդակցական ժողով մը կը գումարուի նախագահութեամբ Առաջնորդ սրբազանին, որուն կը մասնակցին Հոգաբարձութեան լրիւ կազմը, Հոգաբարձութեան նախկին անդամներ, եկեղեցւոյ հովանիին տակ գործող բոլոր յանձնախումբերը եւ յարակից կազմակերպութեանց վարչութիւններէն երկուքական ներկայացուցիչ եւ եկեղեցւոյ յաճախ օգտակար խումբ մը ազգայիններ<sup>97</sup>:

Օրակարգի նիւթը կ'ըլլայ՝ թէ ինչպէ՞ս կարելի է կազմակերպել հողի գնման հանգանակութիւնը: Ժողովը թեւադրանքներ կ'ընէ, եւ կ'առաջարկէ, որ անոնք Հոգաբարձութեան կողմէ մամբաման քննուելէ ետք յստակ գիծերով ներկայացուին Անդամական Ժողովին<sup>98</sup>:

Եւ նկատի ունենալով, որ ՀՕՄ-ը սկիզբէն զօրավիգ եղած էր համայնքի կերտման ճիգերուն, յարմար կը տեսնուի նամակ մը գրել անոր 46-րդ Պատգամաւորական Ժողովին, որ պիտի գումարուէր Գալիֆորնիոյ մէջ, եւ ներկայացնել ապագայի ծրագիրը:

Հոգաբարձութիւնը ՀՕՄ-ի Պատգամաւորական Ժողովին նամակ մը կը գրէ 24 Յունիսին եւ կը պարզէ նոր եկեղեցի-համայնքային կեդրոն-դպրոցի շինութեան հանգրուան առ հանգրուան իրագործելի ծրագիրը այսպէս.

1.- Եկեղեցին շինել 400 հոգիի տեղով եւ անոր անմիջական սրահը առժամաբար գործածել որպէս դպրոց:

2.- 600-700 հոգի պարփակող արդիական սրահ մը շինել, որ ըլլայ հասութեամբ՝ զանազան ներհամայնքային ձեռնարկ-

ներու տրամադրելի:

3.- Դպրոցը շինել 8-10 դասարաններով, տեսչարանով ու յարակից սենեակներով:

Մոնթրէալէն Ալիս Տէր Ասատուրեան իբր պատգամաւորուհի պիտի մեկնէր Գալիֆորնիա, եւ իր կարգին ներկայացնէր քաղաքին հայութեան աճումը, անոր պահանջները նոր դպրոցի եւ եկեղեցւոյ: Եւ ՀՕՄ-ի Պատգամաւորական Ժողովը վերստին կ'որոշէր օժանդակել<sup>99</sup>:

23 Օգոստոս 1966 թուակիր նամակով Հոգաբարձութիւնը ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան գրած է. «Տիկ. Ալիս Տէր Ասատուրեանի զեկոյցէն եւ Ձեր 15 Յուլիս 1966-ի նամակէն մեծ գոհունակութեամբ տեղեկացանք, որ Միութեանդ 46-րդ Պատգամաւորական Ժողովը — անշուշտ Պատուարժան Կեդրոնական Վարչութեանդ թելադրութեան վրայ — վերանորոգած է տասը հազար տոլարի իր յատկացումը Մոնթրէալի Ազգային դպրոցի ծախսերուն:

...Մոնթրէալի հայութեան թիւին տարուէ տարի աճը, ստիպեց Հոգաբարձութիւնս աւելի հեռատես մօտեցում մը ունենալ գալիք տարիներու մեր կրօնական, կրթական եւ մշակութային կարիքներուն համար:

Արգարեւ, Ս. Յակոբ եկեղեցւոյ այժմու կալուածը շատ փոքր է եւ անբաւարար՝ կարենալ ի մի խմբելու մեր ազգային հաստատութիւնները:

Մեր ուսումնասիրութիւնները մեզ մղեցին փնտռել եւ գտնել աւելի ընդարձակ հողաբաժին մը, ուր կարողանայինք կեդրոնացնել մեր եկեղեցին, դպրոցը, սրահը եւ յարակից ուրիշ հաստատութիւնները, գոհացնելով համայնքին կարիքները, գոնէ գալիք տասը տարիներուն համար»<sup>100</sup>:

28 Յունիս 1966-ին, Հովիւ եւ Հոգաբարձութիւն կ'որոշեն ժողովրդային լայն հանգանակութեան մը ձեռնարկել եւ գայն կատարել 5 տարիներու վրայ վճարելի խոստումագրերու դրութեան մը կիրարկումով<sup>101</sup>:

Յառաջ քալելու ընդհանուր տրամադրութեան մէջ կը սկսէր հանգանակութիւնը, որ 18 Դեկտեմբեր 1966-ին Քուին

էլիզապէթ պանդոկին մէջ կազմակերպուած ճաշկերոյթին մեծ յաջողութեամբ՝ արշաւի մը պիտի վերածուէր:

Այս հանգանակային ճաշկերոյթը կը վայելէր հովանաւորութիւնը եւ ներկայութիւնը Առաջնորդ՝ Հրանդ արքեպիսկոպոսի: Նախագահն էր Եր. Բաստրմաճեան: Օրուան իբր բանախօս հրաւիրուած էր Քէպեզի գբօսաշրջիկութեան, անտառներու եւ որսի նախարար Կապրիէլ Լուպիէ: Պատուոյ հիւրերու շարքին մաս կը կազմէր Մոնթրէալի քաղաքապետ Ժան Տրափոյի ներկայացուցիչ տքթ. Ժան Լարոշ եւ դաշնակցային խորհրդարանի լիպերալ երեսփոխան Ժան-Փիէռ Կուայէ:

Ճաշասրահը լեցուած էր ազգային կառոյցներու ներկայացուցիչներով եւ խոռոչներամ ժողովուրդով. ընդհանուր թիւը շուրջ 400 էր:

Եր. Բաստրմաճեան անգլերէն եւ ֆրանսերէն լեզուներով կը ներկայացնէ հանգանակութեան պատճառը: Նախ կը կատարէ գանատահայ եւ մասնաւորաբար մոնթրէալահայ գաղութին պատմականը, եւ կ'ըսէ. «Մինչեւ 15 տարի առաջ, 1910-ական թուականներէն սկսած՝ մի քանի հարիւր հաշուող Մոնթրէալի գաղութը այսօր հասած է մօտաւորապէս 10,000-ի եւ հինգ տասը տարիէն կրնայ հասնիլ 25,000-ի, ուստի անհրաժեշտութիւն է օրէ օր բազմացող եւ երիտասարդ այս գաղութին՝ ունենալ հայու անուան եւ պատուին արժանի եկեղեցի եւ դպրոց: Պէտք է արագ շարժիլ. մտածումը եւ խօսքը գործի վերածել: Ժամը հնչած է եւ ահա պաշտօնապէս կը ներկայանանք ձեզի այն հաստատ համոզումով, որ բոլորդ բարոյապէս եւ նիւթապէս պիտի աջակցիք մեզի, նոր սերունդի ապագան հայապահպանման անկիւնէն ամուր եւ հաստատ հիմերու վրայ դնելու, արժանանալով անոնց օրհնութեան»:

Բանախօս նախարարը իր ճառի ընթացքին որոշ եզրեր կը գտնէ հայու եւ ֆրանսացի գանատացիի դոյատեւելու եւ ապրելու վճռակամութեան մէջ: Կը յիշէ սակայն, թէ հայերը շատ աւելի դաժան պարագաներ դիմադրուած են՝ պահելով հայրենական աւանդութիւնները: Եւ այժմ այս ասպնջական ցամաքամասը կու գան ծաղկեցնելու: Ան կը շնորհաւորէ Հովիւն ու

Հոգաբարձութիւնը, որ հայաոճ եկեղեցի եւ կեդրոն շինելով՝ կ'ուզեն աճապարել հայութեան դրոշմը դնելու Մոնթրէալի շրջաններէն մէկուն մէջ:

Ապա խօսք կ'առնէ բանաստեղծ Արսէն Երկաթ, որ ֆրանսերէնով կը ներկայացնէ հայ ժողովուրդի կերտելու ոգին եւ կ'ըսէ. «Notre peuple qui a donné au monde toute une phalange glorieuse d'artistes, pourra, j'en ai la certitude, enrichir la terre où se sont posés ses pas, d'un renouveau de printemps.

...Nous nous sommes donc établis sur cette terre promise, et voulons y élever un clocher au bord d'un chemin tracé par la lumière»:

Այս հանգանակային ճաշկերոյթին յաջողութիւնը այնքան մեծ էր (նուիրատուութիւններու գումարը պիտի հասնէր \$110,000-ի), որ Լրաքաղ անոր մասին գլխատառերով կ'ըսէր. «ՈՍԿԵԱՅ ԳԻՐԵՐՈՎ ԳՐՈՇՄՈՒԱԾ ՊԻՏԻ ՄՆԱՅ ՄՈՆԹՐԷԱ-ԼԱՂԱՅ ՏԱՐԵԳՐՈՒԹԵԱՆՑ ՄԷՁ»:

Յանձնառութիւնը բոլորինն էր՝ մեծէն պզտիկ: Ուսանելի է այն օրերուն 14 տարեկան պատանիի մը խանդավառիչ օրինակը: Պատանին նամակ մը պիտի ուղղէր Անդամական ժողովին, ըսելով.-

Ասկէ 14 տարի առաջ ծնողքիս հետ երբ Մոնթրէալ եկայ վեց ամսուայ էի: Ութը տարի առաջ, երբ այս եկեղեցին եւ սրահը գնուեցաւ, ես ալ այն ատենուան առաջին 15 աշակերտ-աշակերտուհիներէն մէկն էի: Հինգ տարի յարատեւօրէն մեր Ս. Յակոբ եկեղեցւոյ Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ դասերէն բնաւ բացակայ չեղայ: Այս առթիւ ուրախութեամբ կը գրեմ ձեզի, որ մեր սիրելի ուսուցիչներուն տքնաջան աշխատանքը եւ մեր հայկական դպրոց յաճախելը պարապի չգնաց: Ահաւասիկ այս ճերմակ թուղթին վրայ Մեսրոպեան տառերով գիրը իմս է: Հոս պէտք է խոստովանիմ, որ հայրիկս շարադրութիւնս եւ տառասխալներս շտկեց: Կը հաւատամ, որ այս մէկը որչափ զիս կ'ուրախացնէ՝ նոյնպէս մեր յարգելի հոգաբարձուներուն համար պարծանք է, որ մեր սիրելի ուսուցիչներուն կամաւոր աշխատանքը իր արդիւնքը տուած է:

...իբրեւ անդամ եկեղեցւոյ, իբրեւ երրորդ շրջանի շրջանա-

ւարտներէն եւ ձեր հարազատ սանը, կը խնդրեմ որ Հոգաբարձութիւնը եւ Ընդհանուր ժողովը հետեւեալ սրտաբուխ նուիրատուութիւնս ընդունի:

Այս տարի 1966-ի ամառնային արձակուրդի շրջանին առաջին անգամ գործի սկսայ: Կարճ ատենուայ մը մէջ շահեցայ \$25,00:

Կիրակնօրեային մէջ կրօնքի պատմութիւններէն «Աղքատ որբեւայրի»ին լուման մեծ ազդեցութիւն գործած էր վրաս: Եւ այսօր ծնողքիս հաւանութեամբ ես ալ իմ առաջին վաստակս կը նուիրեմ Ս. Յակոբի նոր շինուելիք եկեղեցիի, դպրոցի եւ սրահի ֆոնտին: Եւ կը հաւատամ, նոյնպէս կ'աղօթեմ, որ այս իմ առաջին նուիրատուութիւնս ճամբայ պիտի բանայ բազմաթիւ հազարներու<sup>102</sup>:

## ԺԹ. Դրուագ

«...ես սպրած եմ ձեզի չսփ ձեր տառապանքը».

Հայլէ Սելասիէ

Կայսր Եթովպիոյ:

1965: Արդէն Ամենայն Հայոց Վազգէն Ա. եւ Կիլիկիոյ Խորէն Ա. Կաթողիկոսները «սրտառուչ միաձայնութիւն»ով մը պատգամած էին եւ տարին՝ Հայոց Յեղասպանութեան յիսնամեակ հռչակած: Անոնք նաեւ Եթովպիոյ մայրաքաղաք՝ Ատտիս Ապապայի մէջ, 24 Յունուար 1965-ին, Ս. Երրորդութիւն Մայր Տաճարի Խորանին վրայ մատուցուած Ս. Պատարագով եւ Հոգեհանգստեան արարողութեամբ բացումը կատարած էին յիսնամեակին<sup>103</sup>:

Այս պատմական առիթով, Գարեգին եպիսկոպոս, որ Խորէն կաթողիկոսի շքախումբին մաս կը կազմէր, զոյգ Հայրապետներու Ատտիս Ապապայի մէջ «նախախնամական» հանդիպման մասին ըսած է, թէ անոնք իրենց ցոյց տուած միասնականութեամբ «օրինակ հանդիսացան ողջ հայութեան», եւ աւելցուցած.

«Այսօր, կ'ըսեմ, ոչ ոք իրաւունք ունի արտասահմանի մէջ մեր անուանով վէճ ստեղծելու. ոչ ոք իրաւունք ունի այսօր երկրորդականը առաջնակարգին վրայ անցնելու: Ա՛յս է այս տարուան մեր ՆՇԱՆԱԲԱՆԸ: Ունինք տարակարծութիւններ, տարակարծութիւնները մարդկային են, դարուն կը պատկանին, պայմաններուն կը պատկանին: Բայց հայութիւնը վեր է ե՛լ պայմաններէն ե՛լ ժամանակներէն: Ու այդ հայութիւնը այսօր մէկ է, որովհետեւ Հայ Դատը մէկ է: Որովհետեւ Հայ Իրաւունքը մէկ է, որովհետեւ մեր ապագայի ձգտումը մէկ է: Ու կան մարդիկ, որ կրնայ ըլլալ չունենան հեռատեսութիւնը, եւ անմիջականը տեսնեն, հեռուորը չկարենան տեսնել: Սակայն մեր Վեհափառները հեռուն տեսան ու անմիջականի արգելքներէն անդին անցան...»<sup>104</sup>:

Արդ, 24 Յունուար 1965-ը կ'ըլլայ մեկնակէտը համազգային տարողութեամբ յիշատակելու Հայոց Յեղասպանութեան զոհերը: Հակառակ Հայրապետներուն օրինակին, ի սփռուս աշխարհի ցրուած Հայ եկեղեցւոյ համայնքներէն բոլորը չէ, որ կրցան կրօնական միացեալ արարողութիւններ կատարել եւ բաւարարուեցան աշխարհական ձեռնարկներով: Ու Մոնթրէալն ալ անոնցմէ մէկը եղաւ:

Գաղութին մէջ բոլոր համայնքներէն ներկայացուցիչներ՝ Թաուն Էնտ Գանթրի իջեւանատան սրահէն ներս ժողով գումարած էին 17 Փետրուարին եւ յառաջացուցած «Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակին Միացեալ Յանձնախումբ»<sup>105</sup>: Նոյն օրը յանձնախումբի անդամներէն մէկը փափաք յայտնած էր, որ 24 Ապրիլին քաղաքի եկեղեցիներէն մէկուն մէջ Ս. Պատարագ մատուցուի եւ Հոգեհանգստեան արարողութիւն կատարուի բոլորին մասնակցութեամբ: Բայց համայնքի մը ներկայացուցիչները կը տեղեկացնէին, թէ «իրենց կամքէն անկախ պատճառներ»ով, կամ աւելի յստակ՝ թեմական հարցերու թակարդէն բռնուած ըլլալով, չէին կրնար կրօնական սրբազան արարողութիւն կատարել Ս. Յակոբի համայնքին հետ: Ուստի, միացեալ յանձնախումբին կը վիճակուէր աշխարհական ձեռնարկներու կազմակերպումով զբաղիլ<sup>106</sup>:

Իսկ Ս. Յակոբի Հովիւն ու Հոգաբարձութիւնը կ'որոշէին

Ապրիլեան Եղեռնի զոհերուն համար Ս. Պատարագը եւ Հոգեհանգստեան արարողութիւնը կատարել Մոնթրէալի Անկլիգան եկեղեցւոյ Մայր Տաճարին՝ Christ Church Cathedral-ին մէջ<sup>107</sup>:

Ս. Պատարագը կը մատուցուի: Հոգեհանգիտար տեղի կ'ուենայ: Եւ ժողովուրդը դուրս գալով եկեղեցիէն, կ'անցնի դիմացի Ֆիլիփս հրապարակը, եւ կը սպասէ համագաղութային թափօրի կազմութեան:

Թափօրը կը կազմուի եւ կը շարժի կէսօրին: Կը յառաջանայ Տորչեսթըր պողոտայէն եւ կ'ուղղուի դէպի Տոմինիլըն հրապարակը, ուր կը գտնուի Անծանօթ Զինուորին Յուշարձանը: Ծաղկեպսակ կը գետեղուի եւ քաղաքապետ ժան Տրափոյի անունով խօսք կ'անէ փոխ-քաղաքապետ Արթիւր Կանիոն: Ան յանուն քաղաքապետին իր վիշտը կը յայտնէ բազմութեան եւ սփոփանքի քանի մը խօսքերէ հտք՝ կ'ըսէ. «Կենսունակ ժողովուրդի մը գաւակներն էք դուք: Ձեր այս երկրորդ հայրենիքին մէջ կը վայելէք ամէն կարգի ազատութիւն... լծուեցէ շինարար աշխատանքի եւ դուք եւս բերէք ձեր արդիւնաւէտ բաժինը Գանատայի վերելքին»<sup>108</sup>:

Երեկոյեան քաղաքի մէկ սրահին մէջ (Փլաթօ Հալլ) տեղի կ'ունենայ համագաղութային ոգեկոչումը: Այդ առիթով արտասանուած խօսքերէն մէջբերելին է՝ Le Devoir օրաթերթի խմբագիրներէն ժան Մարք Լէժէի խօսքը, զոր Լրաքաղ տուած է «մօտաւոր ամփոփում»ով:

Պրն. Լէժէ ըսած է. «Այս վշտալի տարեդարձը շատ կենսական է, որ հետաքրքրէր բոլոր մարդիկը: Որովհետեւ հայ մարդուն այս եղածներով՝ համայն մարդկութիւնն է, որ տրոբուած, վիրաւորուած եւ նուաստացուած է: ... Եղեռնը որ ի գործ դրուեցաւ հայ ժողովուրդին վրայ յիսուն տարիներ առաջ, իր նախընթացը չէ ունեցած պատմութեան մէջ: Հայոց տուած մէկ ու կէս միլիոն նահատակները ռազմաճակատի վրայ ինկած գինուորներ չէին, ոչ ալ պատերազմական գերիներ, այլ անգէն, անպաշտպան ու անմեղ ժողովուրդ մը, որ ոչնչացուեցաւ կանխամտածուածութեամբ:

Բայց պատմութիւնը ունի նաեւ իր սքանչելի դարձուածքը, եւ այսօր միլիոնաւոր հայեր՝ տարածուած աշխարհի վրայ,



կը շարունակեն կերտել հոգեղէն եւ մշակութային արժէքներ...»<sup>109</sup>։

Մեծ Եղեռնի Յիսնամեակը անցած է վաղուց, սակայն Երջանկալոյս կաթողիկոսներուն միասնականութեան օրինակը դեռ կը պատգամէ։

«Որ ունիցի ականջս լսելոյ՝ լուիցէ», ըսած է Յիսուս։

## Ի. Դրուագ

Յաւերժականօրէն երիտասարդ կառոյցն է ՀՄԸՄ-ը։ Եւ անիկա այսօր աշխարհացրիւ հայութեան մատղաշ, պատանի եւ երիտասարդ սերունդները ազգային ու բարոյական արժէքներու շուրջ կը համախմբէ ամենայն աշխուժութեամբ եւ եռանդով։

Ս. Յակոբի համայնքին ստեղծման օրերուն, Մոնթրէալի մէջ պիտի ընձիւղէր նաեւ անիկա՝ Յունաստանէն նորեկ երիտասարդներով։ 50 տարիներու ընթացքին, քաղաքիս հայութեան թիւին աճումով՝ ՀՄԸՄ-ը ամուր, բազմանդամ եւ կազմակերպ միութիւն մը, արդար է ըսել՝ ընտանիք մը պիտի դառնար։

Անոր առաջին քայլերէն մինչեւ այսօր՝ համայնքին եկեղեցական վարչութեան նպաստն ու օգնութիւնը անսակարկ եղան։ Ու իր հասակ առնելուն հետ՝ անիկա իբր հարազատ անդամը նոյն գերդաստանին՝ ձեռք տուաւ համայնքային կեանքի վերելքին, եւ կը շարունակէ իր մեծ ներդրումը ունենալ Մոնթրէալի մշտանորոգ ընթացքին մէջ։

1958-ին կը հիմնուի, եւ նախ ճամբայ կ'ելլէ ոտնագնդակի խումբով մը, որուն անունը «Արմինիա» կը դնեն<sup>110</sup>։

1959-ին է, որ անոր սկառտներու առաջին խումբը կը ծնի<sup>111</sup>։ Յաջորդած տարիներուն, կազմակերպութեան մարմնամարզական եւ սկառտական շարքերը կ'աճին։

Մոնթրէալի ՀՄԸՄ-ի պատմութեան մէջ կարեւոր թուական մըն է 1965-ը, երբ անիկա պաշտօնապէս կը կապուի այն ատենուան մեծագոյն կառոյցին՝ ՀՄԸՄ-ի Մերձաւոր Արեւելքի

Շրջանային վարչութեան<sup>112</sup>:

Նոյն թուականին է, որ Մոնթրէալի մէջ Աղեքսանդրիայէն նոր եկած հայ երիտասարդներ կը հիմնեն «Կամք / Մարմնամարզական Ակումբ եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութիւն» անուն միութիւնը<sup>113</sup>: «Կամք»ը սփիւռքահայ մարզական եւ սկառտական անդրանիկ կազմակերպութիւնն էր, հիմնուած 1912-ին, Աղեքսանդրիա, Եգիպտոս<sup>114</sup>:

Արդ, 1965-ին Ս. Յակոբի համայնքին շուրջ կային երկու սկառտական եւ երկու մարմնամարզական միութիւններ: Ասիկա ուժերու ցրուում էր: Ուստի, իմաստուն որոշումով՝ անոնք մէկ կառոյցի կը վերածուէին 26 Յունիս 1966-ին<sup>115</sup>: Մոնթրէալի ՀՄԸՄ-ը այն թուականէն կը ճանչցուի ՀՄԸՄ-Կամք անունով:

Ինչպէս նախապէս գրած էի, 1960-ականներու կէսին Սէնթ Ջօթիքը ալ նեղ կու գար: Եւ երբ որոշումը կ'առնուէր նոր վայր մը փոխադրուելու ու այնտեղ սեփական ձեռքերով նոր «մեղուակիթակ մը» շինելու, ՀՄԸՄ-Կամքը եւս խանդավառ պատրաստակամութեամբ կը կանգնէր Հովիւ եւ Հոգաբարձութեան կողքին, քովն ի վեր բոլոր յարակից կառոյցներուն: Այդ նպատակով կատարուած հանգանակային եւ ծրագրումի ճիգերուն մէջ ՀՄԸՄ-Կամքն ալ պիտի մասնակցէր: Անոր վարչութիւնը իր 10 Յունուար 1967 թուակիր նամակով՝ Հովիւին եւ Հոգաբարձութեան գրած է. «Ս. Յակոբ եկեղեցւոյ ձեռնարկած հսկայ շինարարական ծրագիրը, որ մեզի ներկայացուցիք (...) կը նախատեսէ նաեւ մարզական սրահ մը:

ՀՄԸՄ-Կամք գօրավիճ է վերոյիշեալ աշխատանքին, եւ որոշած է մասնակցիլ այս ծրագրի իրագործման, թէ՛ բարոյապէս եւ թէ՛ նիւթապէս: Բարոյապէս՝ վարչութիւնս պիտի թելադրէ իր բոլոր անդամներուն եւ համակիր շրջանակին, որ օժանդակեն՝ կերտելու համար այս բացառիկ Հայ Կեդրոնը: Նիւթապէս՝ վարչութիւնս որոշած է մասնակցիլ մարզասրահի շինութեան \$50,000-ով»<sup>116</sup>: Այս որոշումէն ետքն ալ՝ ՀՄԸՄ-Կամք յաճախ նոյն լծակցութեամբ իրեն բաժին քաղցր բեռը վերցուց:

Հակառակ բոլորի ցանկութեան, ծրագիրը իր ամբողջութեան մէջ մէկ անգամէն պիտի չիրականանար: Նոյնիսկ կրճա-

տումներ պիտի ըլլային եւ յարմարցուէին համայնքի նիւթական կարողականութեան: Ուստի, դարձեալ որոշումը կ'անուէր հանգրուանային յառաջընթացով մը ծրագիրը ի գլուխ հանել:

ՀՄԸՄ-Կաւմբը պիտի սպասէր մինչեւ Հայ Կեդրոնի լրացուցիչ շինութեանց աւարտը՝ 1979: Նորակերտ մարզարանը այլ երագի մը իրականացումը պիտի ըլլար անոր համար: Մարզասրահը կը կոչուի կազմակերպութեան անունով:

Ներկայիս ՀՄԸՄ-Կաւմբը ունի սկառուտական եւ մարզական ընդարձակ գործունէութիւն մը: Անիկա 733 հոգի կը հաշուէ. 281 սկառուտներ, 265 մարզիկներ, եւ 187 անդամներ<sup>117</sup>: Միութիւնը Ս. Յակոբ վարժարանի վարձուելէն՝ 1987-էն ասդին լայնօրէն կ'օգտագործէ շէնքին ընծայած կարելիութիւնները: Նախապէս՝ Սէնթ Ջօթիքին նեղ գալէն մինչեւ 1987՝ գրեթէ թափառականի վիճակ ունէր, սակայն մեծագոյն զոհողութիւններով ու առանց վճատելու՝ նուիրումով քալեց:

ՀՄԸՄ-Կաւմբ՝ 2008-ին միաժամանակ տօնեց թէ՛ աշխարհասփիւռ կազմակերպութեան 90-ամեակը եւ թէ՛ իր հիմնադրութեան 50-ամեակը: Այդ առիթով իր գրած Օրհնութեան Գիրին մէջ այսպէս ըսած է Արամ Ա. Կաթողիկոս. «90 տարիներու վրայ տարածուած ՀՄԸՄ-ի կեանքը կարելի է արդարօրէն բնորոշել որպէս խոր հաւատքով զսպանակուած ու անանձնական նուիրումով շողախուած հաւաքական ծառայութիւն՝ ի խնդիր մեր եկեղեցւոյ, ժողովուրդին ու հայրենիքի սրբազան արժէքներուն ու գերագոյն երազներուն կենսագործման»<sup>118</sup>:

Վեհափառին հաստատումը նոյնքան հարազատ կը հնչէ ՀՄԸՄ-Կաւմբին համար ալ:

Ի՛նչ երջանիկ պիտի ըլլայ այն թուականը, երբ Մոնթրէալի եւ Լաւալի հայ երիտասարդութիւնը ունենայ մարմնամարզական այս միութեան արժանի համալիր մը...

## ԻԱ. Դրուագ

Ս. Յակոբ եկեղեցւոյ հիմնադիր աշխատանքները ընթացք էին առած, եւ Հոգաբարձութիւնը խումբին մէջ իրեն օժանդակ յանձնախումբերու՝ նաեւ կը կազմէր Մշակութային Յանձնախումբ մը:

Եկեղեցւոյ մշակութային գործունէութիւնը սկզբնական տարիներէն ասդին՝ համեստ լուծայ մը պիտի ըլլար: Անիկա, սակայն, ինչպէս իրեն յարակից միւս կառոյցներուն, նաեւ միշտ քաջալեր հանդիսացաւ Համազգայինին, որ 1963-ին կը հիմնուէր<sup>119</sup> (տեղական Համազգայինի «Սանահին» անունը 1995-ին տրուած է):

Մոնթրէալի մէջ Համազգայինին ծննդավայրը Ս. Յակոբ եկեղեցւոյ ներքնասրահն էր: Օրին Լրաքաղ ուրախութեամբ կը ծանուցանէր մշակութային միութեան հիմնումը, եւ յոյսով կը տեսնէր, թէ անիկա պիտի ունենայ իր մեծ ազդեցութիւնը՝ նորակազմ գաղութի մշակութային զարգացման մէջ<sup>120</sup>:

Միութիւնը շուտով կը ծրագրէ թատերական, երաժշտական, դասախօսական եւ այլ ձեռնարկներով ներկայանալ գաղութին:

Կազմակերպութեան ստեղծումէն տարի մը առաջ՝ Սէնթ Ջօթիքեան շրջանակը թատերախումբ մը յառաջացուած էր եւ բեմ ելած: Համազգային այդ գործունէութիւնը իր անուան եւ ծրագրին ներքեւ կ'առնէ: Թատերախումբը կոչուած էր թատերագիր եւ արձակագիր Շիրվանզադէի անունով: Ետքը կ'ունենար «Համազգայինի Թատերասէրները» անունը, իսկ 1976-ին է, որ դերասան Պետրոս Աղամեանի անուամբ պիտի կոչուէր:

Թատերական ներկայացումներու աշխոյժ գործունէութիւն մը տեսանելի է 1970-ական եւ 1980-ական տարիներուն: Այս հանգրուանը կը համարուի Համազգայինի թատերական ելոյթներուն հարուստ շրջանը: Յետ կարճատեւ դադարի մը՝ 1990-ականներուն ջահը կրկին վեր կը բարձրացուի, սակայն երկար չի մնար: Ներկայիս ճիգեր կը տարուին վերականգնելու համար թատերախումբը:

Համազգային իր երգչախումբը կը կազմէ, եւ շուտով՝ 1964-ին իր առաջին ելոյթը կ'ունենայ: Քիչ անցած՝ անիկա «Քնար» կ'անուանուի, եւ մինչեւ 1990-ականներու սկիզբը ծաղկուն կեանք մը կ'ունենայ: Ինչպէս ըստւած է, «Քնար»ը հոգեկան հայրենիքի զմայլելի մթնոլորտին մէջ պիտի փոխադրէր զինք ունկնդրողները, որոնք տարեկան հանդէսներու ընթացքին բազմութիւններու պիտի վերածուէին: Երգչախումբը ազգային սահմանէն անդին՝ նաեւ այլ շրջանակներ պիտի ներշնչէր հայ երգին ու երաժշտութեան գեղեցկութեամբ: Վերջին քանի մը տարիներուն, միայն քանի մը ձեռնարկներ կը զարդարեն միութեան երգչախմբային գործունէութիւնը: Յուսալի է, որ մշակոյթի այս կալուածը վերստին շունչ առնէ, որովհետեւ անիկա ժողովելու մեծ գորութիւն ունի, եւ քարոզչական ընտիր ու ազնուական միջոց է:

Դասախօսական իր առաջադրութեան մէջ, Համազգայինը մինչեւ օրս հետեւողականօրէն կը գոհացնէ: Անոր դասախօսական առաջին ձեռնարկը տեղի ունեցած էր իր ստեղծումէն անմիջապէս յետոյ՝ Թարգմանչաց տօնին առիթով: Թարգմանչաց տօնին ընտրութիւնը իբր մեկնակէտ՝ նշանակալից է: 1963-ի այդ թուականէն ի վեր՝ Համազգայինը դասախօսութիւններու շահեկան եւ ոսկեայ շարք մը ունի:

«Անի» պարախումբը պաշտօնապէս կը կազմուի 1968-ին: Թէպէտ նախապէս Սէնթ Զօթիքի ներքնասրահին մէջ պարի ուսուցում կատարուած էր եւ տարբեր վայրերու մէջ ու առիթներու՝ ելոյթներ տեղի ունեցած էին:

Պարախումբը տարեկան հանդէսներով եւ իրեն յարակից միւս կառոյցներու ձեռնարկներուն մասնակցութեամբ՝ կը ճութացնէ գաղութային կեանքը: Անիկա նաեւ պատեհութիւններ կ'ունենայ եւ կը մասնակցի ոչ-հայ մշակութային ձեռնարկներու եւ փառատօններու, ու հայ պարարուեստի նախաճաշակ մատուցելով՝ խնդութեան մթնոլորտ կը ստեղծէ:

Մոնթրէալի Համազգայինի առաքելութեան մէջ ի շարս այլ ծառայութիւններու՝ յիշատակութեան արժանի են Գրատարածը եւ Գրադարանը:

Գրատարածը 1972-էն ասդին հայ գիրքը խորտիկներու պէս մատչելի կը դարձնէ ընթերցողներուն: Իսկ 1973-ին նոր թափ կը ստանայ՝ ներկայ Հայ Կեդրոնը փոխադրելով իր սպասարկութիւնը:

Հայ գրող մը յուսահատ ժամուն յայտարարած է, թէ պիտի գան օրեր երբ հայ գիրքը պիտի չծախուի: Գրատարածը կը փորձէ այդ նախատեսութիւնը անկարելի դարձնել այս ափին վրայ...

Գրադարանը 1976-ին նախաձեռնուած է, ժառանգելով Սէնթ Զօթիքի օրերուն կազմուած ՀՅԴ երիտասարդական միութեան գրադարանը: Վերջին շուրջ տասը տարիներուն է, որ անոր գիրքերը արագօրէն պիտի շատնային՝ շնորհիւ կազմակերպ եւ գրասէր ճիգերու, ինչպէս՝ նուիրատուներու. օրինակ՝ Գանատայի Հայոց Առաջնորդ՝ Խաժակ արք. Յակոբեան իր հազարաւոր գիրքերէն նկատառելի քանակ մը նուիրեց Համազգայինին: Մինչ նախապէս հաւաքուածները 4000 գիրքեր կը հաշուէին, վերջին տասնամեակին հաւաքուած գիրքերուն թիւը 20,000-ի շուրջ է:

Որեւէ հաւաքականութիւն, որ մշակութային առաքելութեան մը կը լծէ ինքզինք, շատ կենսական է, որ գրադարանի մը պահպանութիւնը եւ աճումը եւս իր մտահոգութեան կեդրոնը դարձնէ: Առանց գրադարանի մշակոյթ չկայ:

Համազգայինի անդամներու ցանկը 260 հոգի կը հաշուէ այժմ:

Միութեան 75-ամեակին առիթով անոր Կեդրոնական Վարչութիւնը ուզած էր, որ բոլոր մասնաճիւղերը ճիգ թափեն «երիտասարդ թարմութիւն բերելու իրենց գործունէութեան բոլոր մարզերէն ներս»<sup>121</sup>:

Անշուշտ երիտասարդութիւնն ալ պէտք է գիտնայ, թէ մշակոյթին ծառայելով է, որ կը գտնէ իր համազգային հարազատ ինքնութիւնը:

## ԻՔ. Դրուագ

Ինչպէս ցոյց տուի ժէ. եւ ժԸ. դրուագներով՝ համայնքը ճամբայ ելած էր իր նոր օճախը կառուցելու:

1968-ի Ազգային Երեսփոխանական ժողովը կը գումարուի Մայիս 15-17, Տիթրոյթի մէջ: Մոնթրէալի երեսփոխաններ Եր. Բաստրմաճեանն ու Լ. Տէր Ասատուրեանը, եւ հովիւր՝ Սուրէն վրդ. Գաթարոյեան՝ այնտեղ առիթը կ'ունենան Ս. Յակոբի ծրագրին մասին խօսելու<sup>122</sup>:

Համայնքին ներկայացուցիչները կը պարզեն շրջանին հակիրճ պատմականը, ընդհանուր կացութիւնը, համայնքային գործունէութիւնը, կարիքները եւ նիւթական վիճակը: Ու կը յայտնեն ստիպողականութիւնն ու «համահայկական բնոյթ»ը ծրագրին<sup>123</sup>:

Անոնք յաջողած էին դրական տրամադրութիւն մը ստեղծել երեսփոխաններու մօտ: Եւ տեղւոյն վրայ «ինքնաբուխ հանգանակութիւն» մըն ալ սկսած էր, ու պատճառ դարձած՝ որ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը Մոնթրէալի երեսփոխաններուն եւ հովիւին հետ մեկուսանան եւ խորհրդակցին: Խնդրուած էր, որ յընթացս ժողովի կատարուող հանգանակութիւնը կենայ, եւ խոստացուած էր \$100,000-ի փոխատուութիւն մը ապահովել:

Ապա Երեսփոխանական ժողովը «իւր լրիւ կազմով եւ միաձայնութեամբ» հետեւեալ բանաձեւը որդեգրած էր.-

Ազգային Երեսփոխանական ժողովը լսելէ ետք Մոնթրէալի երեսփոխաններ Լ. Տէր Ասատուրեանի եւ Եր. Բաստրմաճեանի կողմէն՝ օգնութեան հասնելու Մոնթրէալի արագօրէն ուճաճող համայնքին, որուն համար խիստ անհրաժեշտ եւ ստիպողական պահանջք է կեղեցիկ-գպրոց-սրահ-մարզասրահ կառոյց մը ունենալը, կը լիազօրէ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, որպէսզի ան գործակցաբար Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան, միջոցներ գտնէ ընդօրոյթ \$100,000-ի գումար մը հայթայթել փոխատուութեամբ կամ որեւէ ուրիշ եղանակով<sup>124</sup>:

Երեսփոխանական Ժողովը Ազգային Վարչութեան պիտի թելադրէր, որ գումարը փոխ տրուի մինչեւ 6 ամիս, եւ Մոնթրէալը «յանձնառու կեցնէ» 5-6 տարիներու ընթացքին մաս առ մաս պարտքը վերադարձնելու Առաջնորդութեան: Թելադրութիւնը ահամայ ամբողջացուած պիտի չըլլար մինչեւ յաջորդ տարուայ Ժողովը: Ուստի Երեսփոխանական Ժողովը պիտի կրկնէր՝ անմիջապէս ամբողջացնել խոստացուած գումարը...

Ազգային Կեդրոնական Վարչութիւնը 1 Յունիս 1968 թուակիր նամակով կը հրաւիրէ Մոնթրէալի երկու երեսփոխանները՝ Եր. Բաստրմաճեանն ու Լ. Տէր Ասատուրեանը ներկայ գտնուելու Պոսթըն, Շաբաթ 27 Յունիս 1968-ին՝ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ հովուատան մէջ գումարելի խառն նիստին, որուն հրաւիրուած էին մասնակցելու նաեւ ՀՅԴ Կեդրոնական Կոմիտէն եւ ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութիւնը<sup>125</sup>:

Երեսփոխանները Պոսթըն կը փութան:

Նիստը կը վերահաստատէր փոխատուութեան համար Ազգային Երեսփոխանական Ժողովին որոշումը, սակայն կը թելադրէր Ժողովրդային հանգանակութեան չձեռնարկել, գլխաւոր երկու պատճառներով.

1.- Առաջնորդարանի շինութեան. եւ

2.- ՀՕՄ-ի 1970-ին 50-ամեակի առթիւ կատարելիք հանգանակութեան<sup>126</sup>:

«Մոնթրէալի Համար Հարիւր Հազար Տոլարի Հայթայթման Յանձնախումբ»ը կազմուած էր 7 Սեպտեմբեր 1968-ին<sup>127</sup>, եւ գործի լծուած: Հանգանակութեան աշխատանքը հեզասահ չէր: Կ'որոշուէր դրամահաւաքին միայն մէկ նպատակ տալ. դպրոցաշինութիւն: Ապա կարելի կ'ըլլար մինչեւ 1969-ի Փետրուար ամիսը՝ \$65,000-ի խոստումներ ապահովել: Անոնց արձագանգն է, որ կը կարդանք Հայրենիք օրաթերթի 9 Փետրուար 1969 թիւին մէջ:

Օրաթերթը հաղորդած է թէ՛ «չնորհիւ կրթանուէր ազգայիններու անվերապահ աջակցութեան, \$65,000-ի գումար մը կարելի եղած է ապահովել ի նպաստ Մոնթրէալի մէջ ամէնօրեայ վարժարանի մը հաստատման»<sup>128</sup>:

Եր. Բաստրմաճեան եւ Լ. Տէր Ասատուրեան Հայ Կրթական



Հիմնարկութեան վարիչ-քարտուղար Բիւզանդ Կուանեանի հետ յաջորդաբար պիտի շրջէին Միացեալ Նահանգներու մէջ. առաջինը արեւմտեան շրջանին, իսկ երկրորդը՝ արեւելեան:

Մինչեւ 1970-ականներու սկիզբը՝ որոշեալ փոխատուութիւնը գրեթէ գոյացած պիտի ըլլար:

Առաջնորդը՝ Հրանդ արքեպիսկոպոս 8 Մայիս 1970-ին ներշնչուած նամակ մը գրած է, ըսելով. -

Ու ահա ծրագիր-երազը այլեւս գործնականացման ճամբուն մէջ կը մտնէ (...), երբ համայնքիդ սեփական հողը — այլեւս հայուն հողը — իր սիրտը կը բանայ վերջապէս՝ իր ընդերքին մէջ ընդունելու համար նոր կառուցելի եկեղեցի-դպրոցին սուրբ հիմնաքարերը, որոնք անցեալ տարի օրհնուեցան ու օծուեցան մեր սիրելի Հայրապետին՝ ՆՍՕՏՏ Խորէն Ա. Կաթողիկոսի ձեռամբ:

Համասփիւռ եւ գերիվեր երջանկութիւն բոլորիդ հոգիներուն մէջ: Այդ երջանկութիւնը մերն ալ է, վասնզի ահաւասիկ Մոնթրէալի հայութիւնդ ձեր «ծիծեռնակի բոյն»էն գերմարդկային ճիգով մը դէպի վեր կը խոյանաք եւ «արծուբոյն» կը կառուցէք հոգեւոր, ազգային եւ իմացական սնունդ ջամբելու համար ձեր պատանի-երիտասարդ սերունդներուն...<sup>129</sup>:

## ԻԳ. Դրուագ

«Հսկեցէ՛ք արթուն,

եւ տէր կանգնեցէ՛ք ձեր արդար իրաւունքներուն»,

Խորէն Ա. Կաթողիկոս:

10 Դեկտեմբեր 1948-ին Միացեալ Ազգերու Կազմակերպութեան (UN) Ընդհանուր Ժողովը որդեգրեց եւ հռչակեց Մարդկային Իրաւանց Համաշխարհային Յայտարարութիւնը (Universal Declaration of Human Rights):

Քսան տարիներ ետք՝ «Մարդկային Իրաւանց Միջազգային Տարի» (International Year for Human Rights) էր, երբ վեր

առնուեցան Համաշխարհային Յայտարարութեան սկզբունքները, որոնք կ'ուզէին զարգացնել եւ ապահովել անհատ մարդոց քաղաքական, քաղաքացիական, տնտեսական, ընկերային եւ մշակութային իրաւունքները, նաեւ վերջ տալ ամէն խտրականութեան եւ հիմնական ազատութիւններու ուրացումին:

Մարդկայնական այս միջնորոտին մէջ, 28 Դեկտեմբեր 1968-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսը՝ Խորէն Ա. պատգամ մը կը հրատարակէր:

Անիկա լոյս պիտի տեսնէր նաեւ Լրաքաղի մէջ<sup>130</sup>: Ի՞նչ ըսած է կաթողիկոսը:

Ըստ իրեն, 20-րդ դարու «ներկայ կեանքին մէջ» խաղաղութեան եւ արդարութեան «աւետարանական սկզբունքները» հետզհետէ աւելի ջերմ ընդունելութիւն կը գտնեն, եւ «Համայն մարդկութիւնը ի խորոց սրտի կը փափաքի հասնիլ այդ ցանկալի խաղաղութեան եւ արդարութեան»:

Մարդկային Իրաւանց Համաշխարհային Յայտարարութիւնը ան կը մեկնաբանէ՝ որպէս «յայտարար նշան (...) մարդկային արդի ընկերութեան քաղաքակրթական եւ բարոյական հասկացողութեան»: Այսինքն՝ ըսել կ'ուզէ, թէ իրեն ժամանակակից մարդկային ընկերութիւնը քաղաքակրթական եւ բարոյական գիտակից մակարդակի մը բարձրացած է: Ապա կը պարզէ այդ գիտակից մակարդակին կորիզը թէ՛ մարդ էակը ծնած է ազատ եւ հաւասար, ինչ ալ ըլլայ իր ցեղային ծագումը կամ գոյնը, սեռը կամ դասակարգը: Ան իրաւունք ունի ազատօրէն ապրելու՝ գերծ բռնութենէ եւ կամայական ու նուաստացուցիչ վերաբերումներէ, որոնք իսկապէս վայել չեն մարդուն, երբ ան ինքզինք ըմբռնէ եւ իրագործէ իր աստուծաստեղծ եւ աստուածատիպ պատկերին համաձայն:

Անշուշտ աւելորդ է ըսել թէ՛ ո՛չ Մարդկային Իրաւանց Համաշխարհային Յայտարարութեան սկզբունքները, եւ ո՛չ ալ Մարդկային Իրաւանց Միջազգային Տարուան ընթացքին վեր առնուած գաղափարները Միացեալ Ազգերու Կազմակերպութեան կողմէ՝ չէին հռչակուած եւ չէին մեկնաբանուած աստուածաբանական հիմքի վրայ: Կաթողիկոսին նայուածքն է անիկա:

Իր պատգամին մէջ կարեւոր կէտ մըն է հետեւեալը, որ կ'ըսէ. «Մարդու ազատութեան, արժանապատուութեան եւ հաւասարութեան իրաւունքներու ճանաչումը անհատ մարդէն անդին՝ կը տարածուի մանաւանդ հաւաքականութեանց եւ յատկապէս ազգերու վրայ»: Այստեղ՝ կաթողիկոսը քննադատականօրէն կը շեշտէ. «Բոլոր անոնք որ կը հռչակեն անհատ մարդու իրաւունքները եւ կ'անտեսեն ազգերու իրաւունքները, կա՛մ անկեղծ չեն եւ կամ թերի է իրենց ըմբռնումը Մարդկային Իրաւանց մասին»: Արդարեւ, մարդկային իրաւունքներու յայտարարութեան մէջ, ինչպէս նաեւ միջազգային տարուան ընթացքին արծարծուած գաղափարները կը վերաբերէին անհատ մարդուն եւ ոչ թէ՛ ազգերու:

Ան կը բացատրէ, թէ հայ ժողովուրդը «առանձնապէս զգայուն է» մարդկային իրաւունքներու նկատմամբ, «որովհետեւ իր պատմութեան բովանդակ տեւողութեան, միշտ յարգած է մարդկային իրաւունքները՝ ոչ մէկ ազգ ստրկացնելով եւ ոչ մէկ երկիր քանդելով»: Անիկա «մարդկութեան ազնուական ըմբռնումներուն եւ ապրումներուն արձագանգը եղած է միշտ»: Այս «զգայուն»ութեան որպէս պատճառ ցոյց տուած է դարեր շարունակ անոր իրաւագրկումը թշնամի ուժերու կողմէ, որոնք «աւերած ու ավարած են իր երկիրը եւ մահ սփռած իր գաւազներուն վրայ»: Հակառակ այս իրողութեան, ան «իր սրբազան յամառութեամբ ու պարտութիւն չճանչցող ոգիովը, երբեք հրաժարած չէ իր իրաւունքներէն, այն քաջ հաւատքով եւ խոր համոզումով, որ հրաժարիլ իրաւունքներէ՛ պիտի նշանակէր ըլլալ նուազ մարդ, նուազ քրիստոնեայ եւ նուազ հայ»:

Պատգամի վերջաւորութեան խորէն կաթողիկոս կը յորդորէ հայութիւնը «որ ի սփիւռու աշխարհի» է՝ ըլլալ արթուն, եւ իր «դարաւոր իրաւունքներու բռնաբարուած ըլլալու դառն իրողութեան դէմ» ծառանայ «բանիւ եւ գրով»: Եւ աշխարհին ցոյց տայ, որ «եթէ խաղաղութիւնը պայմանաւոր է Մարդկային Իրաւանց յարգումով, ապա եւ հայ ժողովուրդի իրաւունքներու ճանաչումը անհրաժեշտ է»:

Մարդկային իրաւունքներուն պաշտպանութիւնը ազնուա-

ցուցիչ է եւ հայ ինքնութիւնը կ'արժեւորէ. Հայ Դատին բարոյականը այսպէ՛ս տեսած էր Խորէն Ա. Կաթողիկոս:

## ԻԴ. Դրուագ

26 Նոյեմբեր 1969: Նոր կառուցելի ազգային եւ եկեղեցական օճախին կառուցման գումարը ցոյց կը տրուի \$900,000-\$1,000,000: Իսկ 12 Մայիս 1970-ի ատենագրութեան մէջ իբր արդիւնք համայնքի այլազան կառոյցներու պահանջներուն համապատասխանող շինութեան ծրագրի՝ ճարտարապետներու գրասենեակի նուազագոյն գինը արձանագրուած է \$1,700,000: Այս գինը նախ պիտի մղէր շինութեան ծրագրին մէջ «զգալի գեղչեր կատարելու», եւ թելադրելու շինութեան թեքնիք յանձնախումբին զեղչումներու հիման վրայ երկու շաբաթէն ներկայացնել ծրագիր մը, որ \$500,000-ի սահմանին մէջ ըլլար<sup>131</sup>:

Դրամական նեղութիւնը եւ շինութեան ծրագրի իրագործման սուղ գինը՝ պիտի շուարումի մատնէին նոր կեդրոն կառուցելու ցանկութիւնը, եւ Հովիւն ու Հոգաբարձութիւնը պիտի հետաքրքուէին քանի մը պատրաստ շէնքերով: Բայց պիտի վերագառնային սեփական կեդրոնը կառուցելու գաղափարին<sup>132</sup>:

Նոր ծրագիր պիտի պատրաստուէր: Մինչ այդ եր. Բաստըրմաճեան ՀՅԴ Միհրան Փափազեան կոմիտէին այսպէս գրած էր. «Վերջին տասը տարիներուն բեղուն գործունէութիւնները, ըլլան անոնք կրօնական, քաղաքական, մշակութային, դպրոցական եւ մարզական գետիններու վրայ, ապացոյց են, որ շատ համեստ պայմաններու մէջ կարելի է կարեւոր յաջողութիւններ եւ նուաճումներ ունենալ»<sup>133</sup>:

Նիւթական կացութեան անձուկ վիճակը դարձեալ պիտի մղէր Հովիւն ու Հոգաբարձութիւնը պահ մը շեղելու ծրագրէն եւ քիչ մը երկար զբաղելու հրէական կեդրոնը գնելու գաղափարով (այժմ՝ Պոլսահայ Միութեան կեդրոն — 2855 Victor Doré): Անկէ սակայն պիտի հրաժարէին եւ վերջնականապէս

վերադառնալին սեփական Տունը կառուցելու նպատակին:

Համայնքը սրտագին կապուղածուծիւն մը ունէր Գարեգին եպօ. Սարգիսեանի հետ: Հովիւն ու Հոգաբարձուծիւնը նամակ մը գրած էին անոր 1970-ին՝ տեղեկացնելով Հայ Կեդրոնի հիմնարկէքին մասին, որ նախատեսուած էր կատարել Յունիս 6-ին: Եւ Գարեգին սրբազան Մայրավանքէն կը պատասխանէր իր 23 Մայիս 1970 թուակիր նամակով ու կ'ըսէր. «Վանական այս անկիւնին մէջ ինքնամփոփուած, սա պահուն պայծառ արեւուն տակ բացուած սպիտակ իրականութեան պէս յստակօրէն կը դիտեմ հայկական Մոնթրէալը: Եւ ահա, հոգիիս աչքերուն դիմաց լուսապատկերներու պէս կը պարզուի այն ազգային եռուն կեանքը, որ Հայ Կեդրոնի դաղափարով եւ մօտալուտ իրազորման տեսիլքով վառ գոյն է զգեցած, տօնական ցնծութեան մը հանդերձանքը նետելով ողջ համայնքիդ մարմնին վրայ:

Կը հաւատամ, որ այսպիսի դաղափարակերտ հաստատութիւններ չեն շինուիր քարով, աղիւսով ու երկաթով...: Պէտք է շունչ, մարդկային, հայկական շունչ փչել քարին ու երկաթին, որպէսզի իմաստաւոր կեանք առնեն անոնք ու չըլլան շէնք, այլ՝ հոգիի բնակարան, չըլլան կառուցուածք՝ այլ մտքի հանդիսարան, չըլլան պատ, պատուհան, սենեակ ու սրահ, այլ ներշնչարան, վառարան, զէնք ու զրահ...:

...Թող բարձրանայ Հայ Կեդրոնը, թող շուտ խորանան իր արմատները հողին մէջ, թող արագ սլանան իր պատերը, կամարներն ու գմբէթը դէպի երկինք: Որովհետեւ երբ առնէ մարմին՝ պիտի դառնայ աղբիւր, ուրկէ առատաբուխ վտակօք պիտի հոսի կեցիւնի ջուրը Աւետարանին, Հայոց պատմութեան եւ հայկական կեանքի առուակներով»<sup>134</sup>:

Շինութեան աշխատանքները կը սկսէին 28 Սեպտեմբեր 1970-ին: Իսկ 1972-ի 8 Հոկտեմբերին, յետ եկեղեցական արարողութեան՝ ժամը 1.30-ին, հոծ բազմութեան մը ներկայութեան տեղի կ'ուսննար օծեալ քարերուն եկեղեցւոյ հիմերուն տակ զետեղումը՝ 16 կնքահայրերու ձեռամբ<sup>135</sup>:

Շինութեան աշխատանքներու աւարտը կը նախատեսուէր 15 Մարտ 1973-ին:

Այդ առիթով համայնքին յուզումը խտացնող յօդուած մը գրած է հրապարակագիր Վրէժ-Արմէն Արթինեան, եւ ըսած. «Հիմնարկէքը, որուն երկա՛ր, երկար ատեն է ի վեր կը սպասէ-ինք, յանկարծակիի բերաւ մեզ. մէկ օրէն միւսը յայտարարուեցաւ, թէ շինութիւնը սկսած է ու յառաջիկայ Կիրակի տեղի կ'ունենայ օրհնուած քարերուն զետեղումը հիմերուն մէջ:

Երբոր ժամը մէկին ընկերոջս հետ հասայ մեր հողը, ժողովուրդը արդէն բազմութիւն դարձած էր: Տօնական մթնոլորտ մը կար...

Եկեր էին մեծով, պզտիկով, հեռուէն ու մօտէն: Ներկաներուն մէջ կը տեսնէի՝ հայ ծերուկը ցուպը ձեռին, եկած՝ երիտասարդանալու համար: Ուշադրութիւնս գրաւեցին, սակայն, յատկապէս այն երիտասարդ հայրերն ու մայրերը որ խանձարուր գրկած, կանգնած էին այնտեղ ու կը դիտէին փորուած հողին, թափուած հիմերուն, եւ արդէն կ'երեւակայէին, թէ ինչպէս իրենց ձագերը վաղը պիտի այստեղ վագեն, վագվագեն ու ճռռողեն հայրէն, այնպէս ինչպէս իրենք ատենին կը վայելէին ջերմութիւնը մեր Տուներուն՝ ովկիանոսին միւս կողմը»<sup>136</sup>:

Շինութեան աշխատանքները աւարտեցան 1973-ի Մարտ ամսուան վերջաւորութեան: Իսկ նախկին եկեղեցւոյ եւ համայնքային կեդրոնին կալուածը վաճառուեցաւ 11 Դեկտեմբեր 1973-ին:



Վերադարձող Սկիհր

# ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

(1973- 2008)

## Ա. ԴՐՈՒԱԳ

*Աստուծաշունչին մէջ կը պատմուի Ուխտի Տապանակի գերեզմանը, վերադարձին, եւ ապա Սողոմոնի կառուցած Տաճարի Սրբութիւն Սրբոցին մէջ զետեղումին մասին: Այն ատեն թագաւորը աղօթք մը ըրած էր:*

*Համաձայն այդ աղօթքի ոգիին է, որ աքսորէն վերջ պիտի աղօթէ անյայտ իշխանաւորը հայոց: Պիտի աղօթէ՛:*

*Եւ կը լսեմ զայն:*

*Մինչ Ս. Յակոբի համայնքը կը պատրաստուէր նորակերտ եկեղեցւոյ օծման՝ 15 Ապրիլ 1973-ին, Ի՛նչ հրաշալի նշանակակցութեամբ աքսորական սկիհ մը հայոց հոգեղէն խորանի՝ իբր նոր իմն Տապանակ Ուխտի կը վերադառնար...*

*Գանատացի քարոզիչ՝ վերապատուելի E. C. Woodley ցեղասպանութեան օրերուն պազարէ մը պիտի գնէր աւարեալ սկիհ մը: Ըստ անոր վրայ ձգուած գրութեան, 18-րդ դարուն ապրած ոմն Կարապետ եպիսկոպոս 1722-ին զայն նուիրած էր Զէյթունի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցիին՝ ի յիշատակ իր ծնողաց: Սկիհով Ս. Պատարագ մատուցուած էր գրեթէ 200 տարիներ՝ մինչեւ Մեծ Աղէտը:*

*Քարոզիչը Մոնթրէալ վերադարձին՝ հետը պիտի բերէր զայն: Woodley 1955-ին կը մահանար, եւ իր ընտանիքը սկիհը Ս. Յակոբ եկեղեցւոյ կը նուիրէր<sup>137</sup>: 2002-ին Հովիւ եւ Հոգաբարձութիւն իրենց կարգին զայն պիտի փոխանցէին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, այսինքն՝ իրաւատիրոջ:*

*Սկիհը կը վերադառնար...*

*Ահա այդ ճամբուն սկիզբը՝ կը կառուցուի Ս. Յակոբ հայաչէն եկեղեցին:*



Անոր օրինակ առնուած էր Սեւանայ կղզիին վրայ 874 թուականին բարձրացուած Տիրամօր եկեղեցին: Նախքան անոր կառուցումը, խորքին կ'ամփոփուէր «սրուակ մը նուիրական հող, բերուած հայոց աշխարհէն, վերցուած Ս. Էջմիածնէն եւ զանազան այլ սրբավայրերէ»<sup>138</sup>:

Այն օրերէն ճշմարիտ ապրում մըն է հետեւեալը. «Մայր Հայրենիքէն ափ մը հող դրած ենք այս մեր նորաշէն տաճարի սիւներուն տակ: Ու հիմա, այս նորը կը կանգնի աւելի հարազատ ոճով, քան այն՝ որ թողած ենք ետին: Աշխարհագրական վայր մը ըլլալէ աւելի՝ հոգեկան մթնոլորտ է հայրենիքի գաղափարը մեզի համար, ու ատոր անունը դրած ենք հայկականութիւն: Այն գորշ հողը որ դերեր ենք այստեղ, մեզմէ զատ ոեւէ մէկուն համար հող է, քար ու աւազ պարզապէս: Մեզի համար՝ գոյութեան իմաստ, պատմութիւն, մշակոյթ, մայր»<sup>139</sup>:

Եկեղեցւոյ եւ կեդրոնի շինութիւնները աւարտած էին 1973-ի Մարտ ամսուան վերջաւորութեան: Ու Ապրիլի սկիզբը՝ համայնքի վարչական, եւ ապա կրթական ու մշակութային կեանքը իր առաջին քայլերը կ'առնէր նոր օճախին մէջ:

## Բ. Դրուագ

Հակառակ ցանկութիւններուն, 13 Ապրիլ 1973-ին նախատեսուած եկեղեցւոյ օծումը չի կատարուիր: Մեր հարցե՞րը...

Խորէն կաթողիկոսէն հեռագրով ներողութիւն կը խնդրուի՝ օծման թուականը յետաձգելու որոշումին համար<sup>140</sup>:

Եւ յետ եօթամեայ գործունէութեան, համայնքին հովիւը՝ Սուրէն վրդ. Գաթարոյեան 25 Յուլիս 1973-ին հրաժեշտ կ'առնէ իր հօտէն ու Մայրավանք՝ Անթիլիաս կը դառնայ, ըստ Վեհափառի հրամանին<sup>141</sup>:

Կիրակի, 22 Յուլիսին կազմակերպուած ողջերթի ձեռնարկին, Հոգաբարձութեան անունով Հայկ Մարգարեան այսպէս կը վկայէ.

«Լման եօթը տարիներու բեղմնաւոր պաշտօնավարութեանէ

մը ետք, մեր շատ սիրելի Հոգչ. Հայր սուրբը կը բաժնուի մեզմէ Յուլիս 25-ի երեկոյեան, վերադառնալու համար Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսարան: Ան կանչուած է Վեհափառ Հայրապետին կողմէ, վանքէն ներս ուրիշ պատասխանատու պաշտօններ ստանձնելու համար:

...Իր պաշտօնավարութեան երկրորդ շրջանին էր, որ սկսան ու վերջացան շինութիւններու ծրագրին գլխաւոր մասերը. եկեղեցի, սրահ, մանկապարտէզ, դիւանատուն եւ ժողովասրահներ: Հայ Ազգային Կեդրոնին մէջ առկախ մնացած միւս շինութիւններն ալ կ'իրականացնենք հետզհետէ, երբ մեր պայմանները թոյլատու ըլլան:

...Ան ծառայեց մեր համայնքին անսակարկ եւ օրինակելի գոհողութեամբ, արժանաւոր եկեղեցականի գիտակցութեամբ եւ վայել կեցուածքով: Հասաւ հոն՝ ուրկէ կը կանչուէր, օգտակար եղաւ բոլորին, կապ պահեց բոլոր կազմակերպութիւններուն հետ եւ իր հեզ բնավորութեամբ գրաւեց ամենուն սիրտը»<sup>142</sup>:

Սուրէն վարդապետ Մայրավանք վերադառնալէ եւ զանազան ծառայութիւններ ստանձնելէ յետոյ, կ'ընտրուի Առաջնորդ Բերիոյ Թեմին: Ան սակայն Մոնթրէալին համար միշտ պիտի մնար իր սիրելի «Հայր սուրբ»ը: Բազմամեայ առաջնորդական պաշտօնը աւարտելով, ան Մոնթրէալ կը վերադառնայ: Եւ Հովիւի ու Հոգաբարձութեան դիմումագրին ընդառաջելով՝ Առաջնորդ Խաժակ արք. Յակոբեան՝ 13 Սեպտեմբեր 2005-ին Սուրէն արքեպիսկոպոսը կը նշանակէ Հոգեւոր Տեսուչ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցոյ: Ան իր երիտասարդական օրերուն յանձնառութեամբ կը ծառայէ համայնքին եւ մեծապէս օգտակար կ'ըլլայ Ս. Յակոբ վարժարանի ֆոնտին:

Իսկ իրեն բաժին ծառայութիւնը լրումին հասած տեսնելով՝ Եր. Բաստրմաճեան իր գործօն յանձնառութեան ջահը կը յանձնէ:

26 Յունիս 1993-ին է, որ համայնքը մեծ հանդիսութեամբ մը կը մեծարէ զինք:

Հանդիսութեան Հովանաւոր Առաջնորդ սրբազանը՝ Մեսրոպ արք. Աշճեան կ'ողջունէ մեծարեալին մէջ «ամբողջական ու գլխազիր Մարդը, որ իր քրիստոնէական ազնիւ զգացումներ-

րով, ազգասիրութեամբ, նիւթական եւ մտաւոր առատ զոհողութիւններով, իր ամբողջ կեանքը նուիրաբերած է իր նմաններուն բարօրութեան եւ մեր ժողովուրդի գոյապայքարին»<sup>143</sup>:

Նաեւ կը կարդացուի Գարեգին Բ. Վեհափառ Հայրապետէն առաքուած Օրհնութեան եւ Գնահատանքի գիրը, որ կ'ըսէր.-

Երկար տարիներէ ի վեր, Մեր վարդապետութեան օրերէն սկսեալ, Ձեզ անձամբ ճանչնալու ուրախութիւնը ունեցած ենք, Ձեր մէջ միշտ տեսնելով քրիստոնէական առողջ հաւատքի, Առաքելական մեր Ս. Եկեղեցւոյ հաւատարիմ եւ նախանձախնդիր հաւատացեալի ու նուիրեալի գեղեցիկ արժանիքները:

Գանատահայ գաղութի սկզբնական օրերէն ասդին, դուք հանդիսացաք ընտրելագոյն անձերէն մէկը, որ իր իւրայատուկ, վճռական եւ բարերար դերը ունեցաւ գանատահայութեան ազգային-եկեղեցական համայնական կեանքի կառուցման եւ յառաջդիմութեան մէջ: Դուք տուիք ոչ միայն ինչ որ ունէիք, այլ նաեւ, ու մանաւանդ, ինչ որ էիք, Ձեր սէրը, զոհողութիւնը, ժամանակը, աշխատանքը: Գանատահայ պատմութիւնը չի կրնար գրուիլ առանց Ձեր անունին եւ դերին արժեւորման, որ ոսկի տառերով պէտք է արձանագրուի:

Դուք եղաք նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հաւատաւոր զաւակներէն մէկը, որ գիտցաւ դարաւոր այս Ս. Աթոռին արժէքը եւ առաքելութիւնը ի սպաս մեր եկեղեցւոյ եւ ժողովուրդին՝ ճշմարտօրէն հասկնալ եւ լիովին արժեւորել<sup>144</sup>:

## Գ. Դրուագ

Սուրէն վրդ. Գաթարոյեանի մեկնումէն տարի մը չանցած՝ Ս. Յակոբ եկեղեցին կ'ունենայ իր լիաժամ երրորդ հովիւր: Կարպիս (Կարօ) սրկ. Իշխանեան Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գարեգին արք. Սարգիսեանի ձեռամբ եւ նորաչէն եկեղեցւոյ մէջ քահանայական օծում կը ստանայ եւ կ'անուանուի Արմէն քհնյ. Իշխանեան, 3 Մարտ 1974-ին<sup>145</sup>:

Մինչ Տ. Արմէն քառասնօրեայ խոկումի շրջանին մէջն էր, Գարեգին սրբազան «Քահանային Հետ՝ Եկեղեցիին Եւ Ազգին Համար» վերնագրուած պատգամ մը կը զրկէր Լրաքաղին, եւ հովիւի տիպարը կը ներկայացնէր իբր Աստուծոյ սպասաւոր եւ իբր շաղկապ Աստուծոյ եւ ժողովուրդին: Ան կը բացատրէր, որ քահանան ժողովուրդի սիրոյն, յարգանքին, համակրանքին եւ մանաւանդ գործակցութեան պէտք ունի: Եւ կոչ կ'ուղղէր, որ համայնքի անդամները կանոնաւորաբար եկեղեցի յաճախեն<sup>146</sup>:

Հովուութեան առաջին օրէն մինչեւ փոխանցումը՝ 4 Նոյեմբեր 2001, Տ. Արմէն ճշմարտապէս կը դառնար շրջանին ամենայն հայոց հովիւը, վայելելով անխտիր բոլորին յարգանքը: Ամենուն լեզուն հասկցող այս քահանան՝ հայրական իմաստութեամբ կը գուրգուրար իր հօտին, եւ բոլորին կը ջանար հասնիլ, գնահատել ու մխիթարել:

Այստեղ արժան է յիշել, որ մինչեւ Սուրէն վարդապետի հովուութիւնը՝ եկեղեցւոյ ծիսական կեանքին ծառայած էին նախ Գրիգոր ա. սրկ. Փափազեան եւ Գրիգոր ա. սրկ. Հիսարլեան: Առաջինը վարած էր արարողութիւններ, իսկ երկրորդը յանձն առած էր դպրապետութիւնը: Իսկ Ս. Պատարագի եւ խորհուրդներու կատարման համար, Միացեալ Նահանգներէն այցելու եկեղեցականներ կու գային: Անոնցմէ՝ յատկապէս յիշատակելի են Տիգրան ա. քհնյ. Խոյեանը<sup>147</sup> եւ Արսէն ա. քհնյ. Սիմէօնեանցը<sup>148</sup>: Այս երկուքը նաեւ յաջորդական հանգրուաններով ծառայեցին՝ Բաբգէն վրդ. Թոփճեանի<sup>149</sup> կարճատեւ հովուութեան աւարտէն՝ մինչեւ Սուրէն վարդապետի ժամանումը, այսինքն՝ Յուլիս 1964-էն Դեկտեմբեր 1965:

Սուրէն վարդապետի ժամանակ՝ 1968-ի Հոկտեմբերին իրեն օգնականի եւ քարտուղարի հանգամանքով ծառայութեան կոչուեցաւ Ղեկունդ քհնյ. Փափազեան<sup>150</sup> (ապա՝ արժանացած աւագութեան պատիւին): Ան նաեւ Տ. Արմէնի սկզբնական տարիներուն պիտի շարունակէր օգտակար ըլլալ:

## Դ. Դրուագ

Այստեղ կ'ուզեմ ներկայացնել այն յանձնախումբերը եւ մարմինները, որոնք Ս. Յակոբի վարչական վերին կազմի կրթական սպասարկութեան օժանդակեցին՝ ծրագրելով, կազմակերպելով, եւ սրտագին մասնակցութեամբ: Անոնցմէ վերջինը՝ որ կը կրէ Կրթական Գործադիր Մարմին անունը՝ արդէն կը ծառայէ 1974-էն սադին:

1959-ի Սեպտեմբերին սկսած էր Շաբաթօրեայ վարժարանը: Անոր ծրագրաւորեալ յառաջընթացին համար, շատ չանցած կը նշանակուի կազմ մը, որուն կը տրուի Մշակութային եւ Կրթական Յանձնախումբ անունը: Ետքը՝ 1962-63 տարեշրջանին, այս կազմը միայն Կրթական Յանձնախումբ պիտի կոչուէր եւ իր առաքելութիւնը ամբողջապէս յատկացնէր դպրոցին: Այս փոփոխութի՞ւնը. որովհետեւ 1963-ին տեղական Համագգայինը կը հիմնուէր, ուստի մշակութային գործունէութեան ջանք Հոգաբարձութիւնը նախատեսած էր յանձնել անոր, եւ մնալ հովանաւորի դիրքին մէջ:

Համայնքը կը մեծնար: Կը մեծնային նաեւ կրթական կեանքի պահանջները: Արդար պիտի ըլլար, որ Հոգաբարձութիւնը իր ծանրաբեռնուածութիւնը թեթեւցնէր: Եւ 1965-ի Օգոստոս ամսուան մէջ կը յառաջացուի Շաբաթօրեայ Վարժարանի Խնամակալութիւնը, որուն կը վստահուի հաստատութեան վարչական եւ մատակարարական կարիքներու յանձնացումը:

1968-ին Խնամակալութիւնը եւ Հոգաբարձութիւնը երկար կ'ուսումնասիրեն եւ խորհրդակցութիւններ կ'ունենան մնայուն մանկապարտէզի մը ստեղծման համար: Սակայն չեն համարձակիր այդ ուղղութեամբ քայլեր առնել, որովհետեւ հաշիւ կ'ընեն դժուարութիւնները եւ նիւթական ծախսը, որոնք կրնային գգալիօրէն վնասել նոր կեդրոնի շինութեան ծրագրին<sup>151</sup>:

1969-ի վերջաւորութեան, յարմար կը տեսնուի «Ուսումնական Խորհուրդ» անուն մարմինին նշանակումը, որուն պարտականութիւնը կ'ըլլայ Շաբաթօրեայի կրթական ծրագրումը

կատարել, Նահանգային Կրթական Նախարարութեան մօտ հետաքրքրուելի ամէնօրեայ վարժարանի մը բացման կարելիութիւններով, եւ հարցախոյզ պատրաստել ու գաղութին տրամադրութիւնը շօշափել ամէնօրեայի մը ստեղծման մասին:

Այս մարմինին օրով է, որ կը հիմնուի Ամառնային Արարատ Ճամբարը:

1972-ին Հոգաբարձութիւնը որոշումը կ'առնէ Ուսումնական Խորհուրդը եւ Խնամակալութիւնը միացնելու: Եւ այս կազմին համար՝ «Խնամակալ Մարմին» անունը կ'որոշէ: Համադրումի այս ճիգը յաջողութիւն պիտի չունենար: Թէեւ յետագային գաղափարը ժամանակի մը համար իրականութեան պիտի վերածուէր Կրթական Գործադիր Մարմինին հետ:

1973-ին կը նշանակուի յանձնախումբ մը, որ ինքզինք կը կոչէ «Ամէնօրեայ Վարժարանի Վարչութիւն»: Անոր նպատակը կ'ըլլայ համայնքին ամէնօրեայ վարժարանի մը հիմնումին երկարամեայ ցանկութիւնը իրականացնել: Բազում ճիգեր եւ աշխատանք կը տանի այս յանձնախումբը, եւ կը յաջողի ճամբան գտնել ամէնօրեայի հիմնումին. անիկա Ծաղկոցին սկզբնաւորումն էր:

Յաջորդ տարին եւ անմիջապէս Ս. Յակոբ Նախակրթարանի ծննդեան, Հոգաբարձութիւնը կը նշանակէ անձնակազմ մը, որուն կը տրուին լայն իրաւասութիւններ: Ասիկա կը կոչուի Կրթական Գործադիր Մարմին: Այս Մարմինը կ'ըլլայ շարունակութիւնը Ամէնօրեայ Վարժարանի Վարչութեան: Կրթական Գործադիր Մարմինը կը ստանձնէ Ս. Յակոբի Կրթական հաստատութիւններուն պատասխանատուութիւնը: Այն օրերուն կային հետեւեալ հաստատութիւնները.

ա.- Շաբաթօրեան.

բ.- ՀՕՄ-ի Ծաղկոցը. եւ

գ.- Ամառնային Արարատ Ճամբարը:

1974-75 տարեշրջանին Կրթական Գործադիր Մարմինը կ'իրականացնէ այլ ծրագիր մը, որ ժողովրդային Զարգացման Հիմնարկը կ'ըլլայ: Ասիկա կ'ունենայ չափահասներու համար գիշերային դասընթացներ: Կը սկսի Ֆրանսերէն լեզուի դասուլանդութեամբ: Քանի մը տարիէն այս նիւթը կը դադրի ժո-

ղովրդային Զարգացման Հիմնարկի ծրագիրը ըլլալէ: Հիմնարկը, սակայն, կրթական նոր առաջադրութեամբ մը կը շարունակէ իր գործը: Կը դասաւանդուին Հայ Գրականութիւն ու Հայ Մշակոյթ եւ Քաղաքակրթութիւն նիւթերը: Հիմնարկին կեանքը կարճատեւ կ'ըլլայ:

Մարմինը պիտի աշխատէր եւ յաջողցնէր Ս. Յակոբի Երկրորդականին բացումը՝ 1983-ին: Անոր բաժինը յիշատակելի է նաեւ մանկամասուրի հիմնումին մէջ, որ տեղի ունեաւ 2007-ին:

Նշեցի, որ Կրթական Գործադիր Մարմինին տրուած էին լայն իրաւասութիւններ: Մինչ նախապէս կրթական կազմերուն պարտականութիւնները սահմանափակ էին, այս մէկը կու գար եւ կը յաջողէր իր ուսերուն առնել այլ պարտականութիւններ ալ: Իր նշանակման առաջին տարիէն մինչեւ 1980՝ այս Մարմինը ունէր հետեւեալ յանձնախումբերը.

- 1.- Խնամակալ Յանձնախումբը.
- 2.- Տնտեսական Յանձնախումբը.
- 3.- Ուսումնական Յանձնախումբը. եւ
- 4.- Անձնակազմի Ընտրութեան Յանձնախումբը:

Արդէն շուրջ երեսուն տարիներէ ասդին՝ Կրթական Գործադիր Մարմինը զուտ ուսումնական հոգատարութիւն կը մատուցէ:

Տակաւին շատ ընելիքներ կան, որոնք կը կարօտին նոր ծրագրումներու, հետապնդումներու եւ ճիգերու: Սահման քաջաց գէն իւրեանց, ըսած է Խորենացին:

## Ե. Դրուագ

Տակաւին եկեղեցին իր օժման կը սպասէր: Գարեգին արք. Սարգիսեան, որ նոր ընտրուած էր Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան Թեմին Առաջնորդ, բայց ծառայութիւնը ստանձնած իբր Կաթողիկոսական Փոխանորդ, 9 Յուլիս 1974-ին հրաւէր նամակ մը կը յղէ Կիլիկիոյ Հայրապետին, եւ զայն կը հրաւիրէ 27 Հոկտեմբեր 1974-ին կատարելու օժումը<sup>152</sup>:

Նախատեսուած էր, որ Խորէն Ա. Կաթողիկոս ամբողջ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի իր հօտին Հովուապետական այցելութիւն շնորհէր: Յանկարծ կը յայտնուի, թէ Միացեալ Նահանգներու Արեւելեան եւ Արեւմտեան Թեմերը անկարելիութեան մէջ են մինչեւ 27 Հոկտեմբեր պատշաճ եւ արժանավայել շուքով ընդունելութիւն կազմակերպելու: Ուստի նպատակայարմար կը տեսնուի աւելի ուշ թուականի մը ընդունիլ Հայրապետը<sup>153</sup>: Եւ Ս. Յակոբ եկեղեցւոյ օծումը կը յետաձգուի: Այդ ուրախ առիթը պիտի վիճակուէր Մեսրոպ Աշճեան սրբազանի առաջնորդութեան շրջանին:

Կը հասնի 16 Հոկտեմբեր 1978 թուականը:

Համայնքը ամիսներէ ի վեր տենդագին պատրաստութեան մէջ էր ընդունելու համար Շնորհազարդ Կաթողիկոսը: Կազմուած էր ընդունելութեան յանձնախումբ՝ ատենապետութեամբ Եր. Բաստրմաճեանի: Թէեւ գլխաւոր առիթը եկեղեցւոյ օծումն էր, բայց ծրագրուած էր միաժամանակ կատարել կառուցուելիք դպրոցին ու մարզարանին հողի օրհնութիւնը եւ Վեհափառի քահանայական ձեռնադրութեան եւ օծման քառասնամեայ յոբելեանական հանդիսութիւնը:

Հովիւն ու Հոգաբարձութիւնը հրատարակած էին «Յուշամատեան» անունով տետր մըն ալ, որուն մէջ ի շարք նամակներու, զանազան գրութիւններու եւ շնորհակարանքներու՝ կայ 8 Սեպտեմբեր 1978 թուակիր Ողջոյնի եւ Օրհնութեան Գիր մը կաթողիկոսէն: Զայն կը մէջբերեմ.–

«Եկայք շինեսցուք սուրբ զխորանն լուսոյ...»

Շարակսն Ս. Էջմիածնի:

Ազգ իմ սիրելի, ժողովուրդ հայոց,

Հոգեկան ցնծութեամբ եւ սրտի ամենախոր գոհունակութեամբ իմացանք տիրախնամ թեմիդ Առաջնորդ Գերշ. Տ. Մեսրոպ ս. եպիսկոպոսէն, որ Մոնթրէալի նորակառոյց եկեղեցւոյ օծումը պիտի կատարուի յառաջիկայ Հոկտեմբեր 16-ին, Կիրակի օր: Որքա՛ն խոր հրճուանք է Մեզի համար, որ Աստուծոյ կամքով եւ Ազգային Իշխանութեանդ հրաւերով անփոխարինելի երջանկութիւնը պիտի ունենանք անձամբ կատարելու օծման



սուրբ արարողութիւնը:

Անթիլիասի վեհապայրէն Ձեզի կ'ուղղենք այսօր Մեր ողջոյնի եւ օրհնութեան խօսքը, երբ հոգիով կը պատրաստուինք Ձեր համայնքի կեանքին մէջ դարձակէտ եղող այդ մեծ օրուան հանդիսութեան համար:

Ժողովուրդ հայոց սիրելի,

Եկեղեցի շինելը Հայ Ժողովուրդին իւրայատուկ առաքիլ-նութիւններէն մէկն է եղած եւ է՛ այսօր:

Մենք շինեցինք, մեր թշնամիները քանդեցին. մենք վերաշինեցինք, մեր ոսոխները վերստին աւերակեցին. բայց մենք շինեցինք շարունակ թէ՛ Հայաստանի մայր հողին վրայ եւ թէ՛ սփիւռքի ամբողջ տարածքին վրայ: Հո՛ն ուր հայը համախմբուած ապրեցաւ, իր առաջին պարտականութիւնը համարեց՝ իր սեփական տունին հետ — եւ երբեմն նոյնիսկ անկէ առաջ — իր հոգեւոր տունը շինել, իր աղօթքի տունը կանգնել՝ միշտ կենդանի ու պայծառ պահելու համար իր հոգին:

Դարեր շարունակ, հայուն գոյութեան ու տեւականութեան անառիկ ամրոցն ու անխորտակելի միջնաբերդը եղած է Հայ եկեղեցին եւ այսօր մեզի կը ներկայանայ որպէս միութեան միակ գետինը եւ մշտարթուն պահակը հայուն մշակութային գանձերուն ու հոգեւոր հարստութիւններուն:

Մեր պատմութեան ընթացքին չքացան թագեր ու թագաւորութիւններ, անյայտացան իշխանութիւններ ու իշխանապետութիւններ, բայց միշտ կանգուն մնաց ու գոյատեւեց Հայ եկեղեցին:

...Հայ եկեղեցին մերն է եւ մենք՝ անո՛րը: Անխախտ պահենք այս հարազատութիւնը. չհեռանանք երբեք անոր սրբազան կամարներուն հովանիէն. հաւատարիմ մնանք անոր ու սիրենք զայն, որպէսզի ան՝ Հայ եկեղեցին՝ իբրեւ պաշտպան մայր, անփորձ ու անվտանգ պահէ ու պահպանէ մեզ ապազգայնացումի, ձուլումի եւ օտարացումի բոլոր տեսակի չարիքներէն ու վտանգներէն:

Մեր պատուէրն է Ձեզի, որ Հայ եկեղեցւոյ հանդէպ Ձեր սիրոյն ու հաւատարմութեան ոգին փոխանցէք Ձեր զաւակնե-

րուն՝ Ձեր անձին իսկ բարի օրինակովը<sup>154</sup>:

Լիբանանի քաղաքացիական պատերազմի արհաւիրքը եւ տխուր դէպքերը «Չղաբրգիւ վիճակ մը» պիտի յառաջացնէին:

Վեհափառը այդ պայմաններուն մէջ իր հօտը անգլուխ չէր կրնար ձգել:

Մայրիներու երկրին «հայասոժ, հայաշունչ եւ հայակերտ» համայնքը՝ տառապանքի եւ նեղութեան մատնուած էր, եւ աւերն ու աւարը իրենց չարաղէտ արդիւնքներով խռոված էին զայն<sup>155</sup>:

Ու ահա Բերիոյ Թեմի Առաջնորդը՝ Սուրէն եպս. Գաթարոյեան կը հեռագրէ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան ու Գանատայի Թեմի Առաջնորդին՝ Մեսրոպ արք. Աշճեանի, թէ ինքն իր կաթողիկոս յետաձգած է իր այցելութիւնը<sup>156</sup>: Ուստի, Ընդունելութեան Յանձնախումբը կ'որոշէ Վեհափառ հօր յոբելեանական հանդիսութիւնը եւ իրեն ի պատիւ տրուելիք ճաշկերոյթը այլ թուականի մը վերապահել, ու կատարել միայն եկեղեցւոյ օծումը եւ հողի օրհնութիւնը՝ ձեռամբք Առաջնորդ սրբազանին եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին տեսուչ՝ Արտաւազդ արք. Թրթռեանի<sup>157</sup>, որ հարազատներուն այցելութեամբ Գանատա կը գտնուէր:

Ս. Պատարագ կը մատուցուի Զէյթունի Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցւոյ սկիհով:

Կ'օծուի եկեղեցին: Ապա կ'օրհնուի հողը՝ ուր են այսօր մարգարանը եւ Ծաղկոցը:

Ս. Պատարագին մէջ, ի ժամու քարոզի բեմ հրաւիրուած Արտաւազդ արքեպիսկոպոս՝ բնաբան ընտրելով Սաղմոսի «Տէր, սիրեցի գվայելչութիւն տան քո, եւ գտեղի յարկի փառաց քոց» համարը (Սղ 26), պատգամ մը կու տայ, եւ Ս. Յակոբ եկեղեցիին կը մաղթէ դառնալ խորհրդանիշ մեր ազգային զօրութեան եւ գոյատեւման, նման Սողոմոնի շինել տուած տաճարին, որուն համար մէջբերեալ սաղմոսը երգուած է:

Յետ Ս. Պատարագին, կը կատարուի հողի օրհնութիւնը: Եւ ուր Առաջնորդ սրբազանը մարգարէի պէս կը պատգամէ ըսելով. «Շատ յատկանշական եւ խորհրդաւոր օր մըն է այս: Ամիսը Հոկտեմբեր է. Հայ մշակոյթի ամիսը: Երէկ մեր եկեղեցին տօնեց Հայ

մշակույթի հիմնադրութեան տօնը՝ Սրբոց Թարգմանչաց տօնին ընդմէջէն. եւ այսօր կատարուեցաւ մեր հաւատքի բերդին՝ Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցւոյ օծումը: Ու հիմա հաւաքուած ենք այստեղ կատարելու համար օրհնութիւնը այն հողին, որուն վրայ պիտի բարձրանայ հայ դպրոցին ու մարզարանին շէնքը, իբրեւ լրացուցիչ մասը Մոնթրէալի հայութեան Կեդրոնին:

Օրհնեցինք այս բարի երկրին հողը, եւ անոր միախառնեցինք բուռ մը հող Արարատեան դաշտէն ու Ս. Էջմիածնէն, Սեւանի աւազանէն եւ Սարգարապատի ռազմաճակատէն: Այս հողը սուրբ է. այս հողը ոյժ ունի, զօրութիւն ունի, եւ վաղը՝ երբ պիտի գաք այստեղ, ձեր հոգիները պիտի տաքնան, ձեր սրտերը պիտի հայութեամբ բաբախեն, եւ այստեղ պիտի գտնէք դուք հաւատք՝ ձեր ժողովուրդի յաւերժութեան հանդէպ եւ յոյս՝ գալիքին համար:

Այս Կեդրոնը մեզի համար պիտի ըլլայ մշակույթի տուն: Պետութիւններ նախարարութիւններ ունին, որոնք մշակութային առաքելութիւններ կը կազմակերպեն, իրենց մշակույթը կը պահպանեն, իրենց մշակույթը կը տարածեն: Մշակույթի գործը պետական գործ է: Մեր պարագային՝ մենք է որ մեր մշակույթը կը պահենք, մեր զոհողութիւններով զայն աշխոյժ կը պահենք, կը տարածենք, կը հռչակենք, որպէսզի մեր մշակույթն ալ փոխադարձաբար պահէ ու պահպանէ մեզ, մեզի տալով սեփական դիմագծութիւն, եւ գաղութէ գաղութ՝ միութեան օղակ մը ստեղծելով տարագիր հայ բազմութիւններուն միջեւ, եւ զանոնք պատրաստ պահելով Հայոց պատմութեան կոչին»<sup>158</sup>:

Խորէն Ա. Կաթողիկոս, որ այժմեան Ս. Յակոբի հիմնաքարերուն օծումը կատարած էր, թէեւ չկրցաւ օծել կերտուածը, բայց իր ազօթական ներկայութեամբ զարդարեց ու քաջալիւրեց յառաջդիմասէր ոգին, որ համայնքինն էր:

## 2. Դրուագ

«...հայու շինարար ոգին,  
հոս ստացած է արտակարգ թափ մը»,  
Հորիզոն Ծաբաթաթերթ:

Հայ Կեդրոնի լրացուցիչ աշխատանքները կը սկսին 1979-ի Ապրիլին:

Կը կառուցուին Ծաղկոցը եւ մարզարանը: Հորիզոնի 18 Յունիս 1979-ին թիւով տրուած թղթակցութիւնը կը տեղեկացնէ. «լրացուցիչ շինութեանց աշխատանքները մեծ թափով յաւաջ կը տարուին»<sup>159</sup>:

Շինութեան եւ Հանգանակութեան Համադրիչ Մարմինին ատենապետը՝ Վարուժան Սերոբեան 2 Յունիսի երեկոյեան կազմակերպուած ընդունելութիւն-հաւաքոյթին կը գեկուցէ մինչ այդ կատարուած աշխատանքներուն եւ հանգանակութեան մասին, եւ կը յայտարարէ. «Ունինք վստահութիւնն ու հաւատքը, որ երազներ իրականացնող Հայ ժողովուրդը ընդհանրապէս, եւ մոնթրէալահայութիւնը յատկապէս՝ իր լրացուցիչ շինութիւններով պիտի հաստատէ, թէ կ'անք ու պիտի ըլլանք»<sup>160</sup>:

Շաբաթաթերթին 15 Հոկտեմբերի թիւին մէջ գրուած է, թէ կառուցումը «արդէն ձեւ ու մարմին ստացած է» եւ «արտաքին մասը գրեթէ վերջացած»: Թէ՛ աշխատանք կը տարուի ներքին դասաւորումներուն համար<sup>161</sup>:

Հայ Կեդրոնի շինութեանց այս փուլի գործերը շնորհիւ հաւաքական, համակարգուած ու շարունակական ճիգերու՝ 1979-ի Դեկտեմբերին կ'աւարտին, եւ Հայ շէնքը կ'օժտուի «կրկնակ չափի մարզասրահով մը», 160 տեղանոց (8 դասարաններ) Ծաղկոցի թեւով մը, փոքրիկներու համար ճաշարանով մը ու խոհանոցով, իբր մանկամասեր գործածելի երկու դասարաններով, Կրթական Գործադիր Մարմինի եւ ՀՄԸՄ-Կամֆի նոր գրասենեակներով, Համազգայինի նոր գրադարանով եւ ժողովասրահով, ընդլայնած Աւետիս Ահարոնեան սրահով<sup>162</sup>:

Այդ առիթով, հովիւը՝ Արմէն քհնյ. Իշխանեան փութաջանութեամբ քարոզչական յօդուած մը կը գրէ, ու գայն կը վերնագրէ՝ «Բարձունք Մը Եւս Նուաճեցինք»:

Ան յետագարձ ակնարկով մը կը չափէ կտրուած ճամբան, կը նշէ 20 տարիներ առաջ բուռ մը հաւատաւոր «տեսիլք ունեցող հայեր» ու քով քովի գալը եւ որոշելը՝ «համայնքային կեանք կազմակերպել»: Կը յիշատակէ, թէ «քանի մը հոգիի բացառութեամբ, բոլորն ալ նորեկներ էին, բեռնաւոր ընտանեկան առօրեայ մտահոգութիւններով», որոնք նիւթական մեծ բարիքներ չունէին, սակայն «ունէին միլիոններ արժող անսասան հաւատք՝ հայ ապրելու եւ ստեղծագործելու իրաւունքին ու կարողութիւններուն վրայ»: Կ'անդրադառնայ առաջին երկու տարիներու եկեղեցւոյ վերին վարչութեան՝ Գործադիր Մարմինի ընտրութեան եւ կը սեւեռէ հետեւեալը. «այդ օրերէն սկսեալ ԽԻՋԱԽՈՒԹԻՒՆը լաւագոյն հոմանիշը դարձաւ եկող ու գացող պատասխանատուներուն»: Իբր խիզախութեան նոր իրագործում կը ներկայացնէ Ծաղկոցին եւ մարգարանին կառուցումը: Ու կ'աւելցնէ. «Մէկէ աւելի պատճառներ կային զգոյշ ըլլալու, յետաձգելու, նոյնիսկ երբեք չմտածելու շինութեան մասին: Սակայն, հայու առողջ բնագոյն ու մեր ժողովուրդի շինարար ոգին կը մղէին նախաձեռնողները, որ երբեք չտատամսին»<sup>163</sup>:

Հովիւն ու Հոգաբարձութիւնը Դեկտեմբեր 15-ին համար Ծաղկոցի եւ մարգարանի բացման հանդիսութիւնը կը կազմակերպէ:

Բացման հանդիսութիւնը կը հովանաւորէ Առաջնորդը՝ Մեսրոպ եպս. Աշճեան: Հրաւիրեալներէն յատկապէս յիշատակելի է ներկայութիւնը Քէպեգի Փոխ-վարչապետ եւ Կրթական նախարար՝ Ժազ Իվան-Մորէնի<sup>164</sup>:

Օրուան գլխաւոր բանախօսը՝ Բիւզանդ Կուսնեան յուզուած ու ներշնչուած կը խօսի, ըսելով. «Այս շէնքին մէջ կը տիրէ յաւիտեանական Հայաստանը»: Կը յիշէ, թէ ինչպէս 21 տարիներ առաջ կը հիմնուէր Սէնթ Ջօթիքը: Կ'ակնարկէ Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ այդ թուականէն մինչեւ 1979՝ շուրջ 80 եկեղեցիներու եւ 17 ամէնօրեայ վարժարաններու կա-

ոււցումին: Կը յայտարարէ. «Մեր կորուստները շատ են, սակայն պատմութիւնը յաղթանակներու, հաւատքի՝ պատմութիւն է. հայկական չէ վհատիլը»<sup>165</sup>:

Առաջնորդ սրբազանը իր խօսքին մէջ կ'ըսէ—

Կարեւորը այս շէնքը չէ, այլ այն կեանքը, որ հոս պիտի ստեղծուի: ...Նիւ Եորքէն (Առաջնորդանիստ քաղաք - ԳՔ) եկողի մը համար հետաքրքրական է տեսնել Քէպեզի ինքնաշարժներու թիւերուն վրայ «Je me souviens» նշանախօսքը. հայերս շատ լաւ կը հասկնանք թէ ինչ կը նշանակէ տտիկա. յիշել մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր պատմութիւնը<sup>166</sup>:

Ժագ Իվան-Մորէն կը կատարէ հետեւեալ հաստատումը, թէ հայ ժողովուրդը մոխիրներէն վերածնած է, որովհետեւ «իր լեզուն եւ իր հաւատքը հանդիսացած են իր բարոյական ողնայարը: Այս է պատճառը ոչ միայն իր գոյատեւումին, որ հրաշքի համազօր է, այլեւ իր ապրելուն»<sup>167</sup>:

## Է. Դրուագ

7 Մայիս 1980-ին Քէպեզի Փոխ-վարչապետ եւ Կրթական նախարար Ժագ Իվան-Մորէն Ս. Յակոբ եկեղեցւոյ կրթական հաստատութիւնները կ'այցելէ: Ապա լաւագոյն տպաւորութիւններով եւ ապրումներով կը մեկնի:

Այդ օր ան ձգած է հետեւեալ արձանագրութիւնը.—

Միրելի բարեկամներ, հայ ժողովուրդի երկար երթի ընթացքին, գիտցած էք պահել ազգային եւ մշակութային ձեր ժառանգութիւնը: Ատիկա հիանալի է: Վարժարանը լաւագոյն միջոցն է ժողովուրդի մը արժէքները, բարքերը եւ ըլլալու եղանակը փոխանցելու համար: Ձեր ծաղկոցն ու վարժարանը ստեղծելու համար ձեր թափած ճիգերը ցոյց կու տան, որ հասկցած էք, թէ ուսումը անհրաժեշտ է հայ մշակոյթի վերապրումին համար: Նաեւ, հայ համայնքը քէպեզեան կեանքին ու մշակոյթին համարկելու ձեր կամքը նոյնպէս արժանի է հիացումի: Այդպէս

է, որ ձեր գաւազանները երաշխիքը պիտի դառնան միաժամանակ թէ՛ Քէպեզի եւ թէ՛ Հայաստանի ապագային: Սէն Լորանի հովիտին եւ Արարատ լեռան միջեւ ներդաշնակութիւնը ինծի ամբողջովին բնական կը թուի<sup>168</sup>:

1980-ի Յունիսին համայնքին սիրտը ուրախութեամբ կը լեցուի ի տես ամէնօրեայ կրթական հաստատութեան 6-րդ կարգի շրջանաւարտներու առաջին հունձքին: Նախքան ամալերջի հանդէսը Շաբաթօրեայի տնօրէն՝ Նազարէթ Աէֆէրեան յօդուած մը կը ստորագրէ Հորիզոնի մէջ:

Անդրադառնալէ ետքը Շաբաթօրեայ վարժարանի հայապահպանման ուղիով «փրկարար դեր»ին ու նաեւ պատասխանատու կազմերու «անխոնջ աշխատանք»ին, ծնողներու «անգին զոհողութեանց», կրթական մշակներու նուիրումին ու ծառայութեանց, ցոյց կու տայ համայնքին բուն մտահոգութիւնը, որ կը զբաղի ազգային «էական հարցերով ու ցաւերով», այլեւ յատկապէս անոր «մտատանջութիւնը»՝ «նորահաս սերունդի դաստիարակչական խնդրով»: Կը կատարէ ամէնօրեայի պատմականը, կ'ակնարկէ հայեցի դաստիարակութեան առնչութեամբ տարուած ճիգերուն, եւ հուսկ սա համոզումը կը յայտնէ, թէ Ս. Յակոբի աշակերտները այս երկրին մէջ «պիտի դառնան ջահակիրները հայութեան, պիտի դառնան առաքեալները իրենց աւարտած վարժարանին, ու հայութեան կնիքը իրենց ճակտին եւ հայու հաւատքը իրենց սրտերուն ու հոգիներուն մէջ, պիտի բարձրանան ու յառաջդիմեն»<sup>169</sup>:

Կրթական այս իրագործումներուն վրայ՝ կու գայ նոր յաջողութիւն մըն ալ: Կը սկսի Կիրակնօրեայ դպրոցը՝ 14 Սեպտեմբեր 1980-ին, Խաչվերացի օրը:

Այս հաստատութեան բացումը նշեալ թուականին՝ պատահական չէր, այլ կ'ուզէր համայնքի հոգիի տախտակին վրայ գրել կենսական սա միտքը եւ ոգին, թէ բոլոր դժուարութեանց, անտանելի անձկութեանց եւ նոյնիսկ խորտակիչ նեղութեանց՝ կայ յաղթանակը, ստոյգ վերաժամանումը երկնատուր փրկութեան: Տէրունական խաչը միշտ բարձր բռնուեցաւ մեր հայրերուն կողմէ: Անոր մէջն է եւ անով հասկնալի է մեր գոյատեւ-

ման եւ վերապրումին ծածկագիրը: Ո՞վ կամ որո՞նք կը հրաժարին յոյսի նշանէն... Կիրակնօրեայ դպրոցը մեր մատղաշ սերունդներուն այդ նշանը միշտ ցոյց կու տայ:

Արդէն Շաբաթօրեայ վարժարանին 20-ամեակը կը հասնէր:

Այս առիթին համար Հովին ու Հոգաբարձութիւնը պատուէր տուած էին կրթական մշակ Կարօ Պետրիկեանի, որ ուսումնասիրէ վարժարանին անցած ճամբան:

Պրն. Պետրիկեան կ'ուսումնասիրէր «քսան տարիներու համառօտ, եւ հնարաւորութեան սահմաններուն մէջ՝ ճշգրիտ պատմութիւնը»<sup>170</sup>: Համեստ այս աշխատանքը ներկայացուցած է Սեպտեմբեր 1959-Յունիս 1981 երկարած Շաբաթօրեայի կրթական ծառայութեան պատմութիւնը: Թէեւ յառաջաբանին մէջ վերջին թուականը Յունիս 1979 է:

Հատորիկի 63-րդ էջին մէջ ան գրած է. «Շաբաթօրեայ վարժարանի ուսուցչական կազմը 20 տարիներու ընթացքին որեւէ ատեն չէ յաւակնած, որ կատարեալ գործ տարած է. բայց ըրած է՝ ինչ որ կարելի էր ընել եւ ինչ որ կրցած է ընել, այս օտար, փորձութիւններով լեցուն եւ համայնակուլ շրջապատին մէջ, իր ունեցած շատ համեստ միջոցներով: Ջանացած է հայկական միջավայր ստեղծել, հայոց մեծաաքանչին հանդէպ սէր յառաջացնել եւ հայ պահել մեր տղաքը...»:

## Ը. Դրուագ

10 Յուլիս 1983-ին տօնուած էր Ս. Յակոբ եկեղեցւոյ հիմնադրութեան 25-ամեակը: Գարեգին Բ. Կաթողիկոս, որ իր Հովուապետական առաջին այցելութեան ելած էր, Մոնթրէալ փութալով՝ իր հօտը ներշնչած էր, եւ ըստ իր վկայութեան՝ ներշնչուած անկէ:

Ան Փլաս տէ գ'Արի մէջ բազմախուռն ժողովուրդին ոսկեբարբառ ճառ մը խօսած էր, եւ յայտարարած.

«Մենք պէտք չէ հաշտուինք այն գաղափարին հետ, որ



Սփիււթի մէջ պիտի մեռնինք: Եթէ պիտի մեռնինք անգամ՝ պէտք է հաշտուինք մեռնելու գաղափարին հետ: Հաշտուելն ինքնին կ'արագացնէ մահը, նման այն անձին, որ երբ տոգորի հիւանդութեան դէմ, ոյժ կ'առնէ իր տոգորումի կամքէն: Սփիււթը մեր ցանկութիւնը է: Մենք մեր կամքով է՛ք, որ Սփիււթ դարձանք, մեզի Սփիււթը պարտադրուեցաւ մեր անհաւոր ու դարաւոր թշնամիին կողմէ: Մենք Սփիււթի մէջ պէտք է՛ք որ այնպէս մը հաշտուինք եղածին հետ, որ հայուլթեան Սփիււթի մէջ ապրիլը անկարելիութիւն է, ո՛չ: Եթէ երբեք մենք գիտնանք նոր իմաստութեամբ մը, կեանքի առողջ փիլիսոփայութեամբ մը մօտենալ հարցերուն, կրնանք ապրիլ եւ ապրիլ այնքան՝ որքան մեր շունչը կը զօրէ, եւ թողունք մեր զաւակներուն, անոնց թոռներուն ու մեր ծոռներուն, որ իրենք շարունակեն իրենց ճիտին պարտքը: Մենք պէտք է ընենք այն միայն, ինչ որ գերագոյն աստիճանի մարդկային կարողութիւնը եւ հնարաւորութիւնը թոյլ կու տան մեզի. գերագոյն, ըսի: Մի՛ հաշտուիք յետդարձի եւ նահանջի հոգեբանութեան հետ»<sup>171</sup>:

Իսկ ճառին վերջաւորութեան անգանգած եւ կոչ ուղղած, ըսելով՝ «Ով որ քաջ է, ի՞նչ կը սպասէ, / Արդէն ժամանակն է՝ թող գայ, / Օրհասական մահ է/ Դէպի կեանք, օն առաջ»<sup>172</sup>:

Ժամանակին գիտակցութիւնն է, որ նաեւ պիտի մղէր համայնքին պատասխանատուները 26 Յունիս 1985-ին՝ խօսելու Ս. Յակոբի կրթական հաստատութիւններուն եւ յատկապէս ամէնօրեային համար Ս. Յակոբ Հիմնադրամի հաստատման մասին:

4 Սեպտեմբեր 1985-ին Հովիւի եւ Հոգաբարձութեան հրաւերով խառն ժողով մը կը գումարուի Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահին մէջ: Ժողովին կը մասնակցին ՀՅԴ Միհրան Փափազեան կոմիտէի, ՀՕՄ-ի, ՀՄԸՄ-Կամֆի, ՀՅԴ Երիտասարդացի վարչութեանց ներկայացուցիչները<sup>173</sup>:

Հոգաբարձութեան ատենապետը՝ բժ. Ժան Առաքելեան ժողովին նպատակը կը բացատրէ ներկաներուն: Կը յայտնէ, թէ վերջին տարիներուն Ս. Յակոբ վարժարանը բացեր կ'ունենայ, առաւել՝ կառավարութիւնն ալ նուազեցուցած է իր նպաստը: Թէ՛ Հոգաբարձութիւնը չ'ուզեր բացերը, որոնք ամէն տարի մօ-

տաւորապէս \$300,000 են, ծնողներուն վրայ բեռցնել: Ուստի նպատակադրած է յառաջիկայ ամիսներուն \$300,000-ը գոյացնել եւ աշխատիլ աւելին հաւաքել՝ հիմնադրամ ստեղծելու նպատակով<sup>174</sup>:

Ժողովեալները կը քաջալերեն հանգանակութեան եւ հիմնադրամի գաղափարները:

9 Սեպտեմբերին Հովիւի եւ Հոգաբարձութեան կողմէ նշանակուած Հիմնադրամի Յանձնախումբը կը գումարէ առաջին նիստը: Եւ յետ խորհրդակցութիւններու, կը սկսի իր առաքելութեան նախնական քայլերուն: Հորիզոնի մէջ խմբագրական մը կը գրուի եւ կ'ըսուի. «Անցնող տասնամեակներուն այս համայնքը ամէն կերպով ցոյց տուաւ, թէ ինչպէս կրնայ ոչինչէն ամէն ինչ ստեղծել, անապատը՝ ովասիսի վերածել...Արդարեւ, կարճ ժամանակի մէջ ան օժտուեցաւ իր գոյութեան անհրաժեշտ կռուաններով. ստեղծեց իր եկեղեցին, դպրոցն ու ակումբը, եւ այս բոլորը շէնք ըլլալէ առաջ՝ իբր կազմակերպութիւն, իբր անդամական շարքեր, իբր ոգի եւ ըմբռնում:

...Հարուստներ ու մեծահարուստներ չէին բոլոր անոնք, որոնք անդադար տուին՝ որպէսզի գոյութիւն առնեն ու ապրին մեր կառոյցները. բայց անպայման հոգիով հարուստ պէտք է ըլլալ, որպէսզի այդպէս անսակարկ ու յարատեւօրէն տաս, չունեցածը անգամ ընծայես՝ յանուն Գաղափարին եւ յանուն Նպատակին:

Եւ ահա այսօր, անգամ մը եւս հոգիով հարուստ այդ հայորդիներուն է, որ կը դիմեն Ս. Յակոբ եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը՝ ամրապնդելու համար մեր բերդին հիմերը, ու մանաւանդ նոր հունի մէջ դնելու համար դէպի ապագայ մեր ընթացքը»<sup>175</sup>:

Հանգանակութիւնը յաջողութեամբ կը զարգանայ: 16 Յունուար 1987-ին է, որ հիմնադրամը կը կոչուի Ս. Յակոբի անունով<sup>176</sup>: 1988-ին կը խօսուի զայն «լաւագոյն ձեւով գործածել» ու մասին: 1988-89-ին կը պատրաստուի Հիմնադրամին կանոնագիրը: 1989-90 տարեշրջանը սկիզբն է գոյացած գումարի շահարկումին:

Մինչեւ Ս. Յակոբ վարժարանի շէնքին գնումը, այսինքն՝ 2002 թուական, Հիմնադրամին գումարը պիտի բարձրացած ըլլար զգալի արժէքի. անկէ բաժին մը պիտի օգտագործուէր:

Հիմնադրամի հաստատման այս ընթացքին քովն ի վեր՝ եկած էր աւելնալու եւ աճելու ազգային բարերարներ տ. եւ տրիկ. Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեանի ֆոնտը<sup>177</sup>:

## Թ. Դրուագ

7 Դեկտեմբեր 1988-ին 6.9 ռիսթըր աստիճանի երկրաշարժ մը հարուածեց Հայաստանի հիւսիսային շրջաններէն՝ Կիրովական (նախկին Ղարաքելիսէն), Լենինական (նախկին Ալեքսանդրապոլը, Գիւմրին կամ Կումարին), Սպիտակ (նախկին Համամլուն) քաղաքները: Կիրովականը քանդուեցաւ 50 տոկոսով, Լենինականը՝ 75 տոկոսով, իսկ Սպիտակը՝ ամբողջապէս<sup>178</sup>:

Հայութիւնը կը սգայ իր բիւրաւոր գոհերը:

Բազմաթիւ կոչեր կ'ըլլան թէ՛ միջազգային մակարդակի վրայ եւ թէ՛ ազգային:

Գարեգին Բ. Կաթողիկոս Հայաստան կ'երթայ եւ Ս. Էջմիածնի խորանին վրայ Հայրապետական ոսկեայ արծիւը «իբր խմոր գալիք հանգանակութեանց» կը նուիրէ աղէտեալ ժողովուրդին, այսպէս ըսելով Վազգէն Ա. Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին. «ոսկիին փոխարէն թող հայու մը սեղանին հացը չպակսի, հայ որբի մը արցունքը սրբուի. ատիկա աւելի կ'արժէ քան ոսկին»: Եւ Սպիտակի խորտակուած շէնքի մը փայտերէն երկու փոքրիկ կտորներ վերցնելով, զանոնք խաչածեւ կապելով վրդը կ'անցընէ՝ որպէս յիշատակ ազգի ցաւին ու կը վերադառնայ Անթիլիաս:

Վազգէն Ա. եւ Գարեգին Բ. 19 Դեկտեմբերին Ս. Էջմիածնէն կը հրապարակեն միացեալ «Կոչ» մը եւ կը յորդորեն, որ «համազգային հանգանակութեան գործը կատարուի լիակատար միասնականութեամբ», նաեւ թէ՛ Հայաստանի եւ Սփիւռքի հայու-

Թիւնը աղէտեալներուն օգնելու եւ քանդուած քաղաքներն ու գիւղերը վերակառուցելու սրբազան գործը նկատէ «ամէն բանէ վեր պարտականութիւն», եւ աշխատանքի լծուի բարձր գիտակցութեամբ, նպատակասլացութեամբ ու կարգապահութեամբ»<sup>179</sup> :

Առաջնորդ՝ Մեսրոպ արք. Աշճեան իր կարգին կոչ կ'ուղղէ իր հօտին, եւ կ'ըսէ. «Հայաստանի երկրաշարժը՝ Չորեքշաբթի 7 Դեկտեմբեր առաւօտեան ժամը 11.47-ին, քանի մը ըրպէի մէջ ցնցեց, քանդեց, աւերեց տասնեակ տարիներու հայու վաստակը, հարիւրաւոր տարիներու մշակութային կոթողները: Ահաւոր սաստկութեամբ այս երկրաշարժը, որ ըստ պատմաբաններու՝ 1046 թուականէն ի վեր ամենէն աղիտաբերն էր, տասնեակ հազարաւոր զոհեր խլեց, 12,000 վիրաւորներ եւ կէս միլիոնէ աւելի գաղթականներ: Այս օրերուն՝ աղէտէն չորս հինգ օր յետոյ, տակաւին փլատակներու տակէն վիրաւորներ կ'ազատին եւ նոր կեանքի կը բերուին: Աստուած տայ որ մահացածներու թիւը նուազագոյնը ըլլայ, եւ վիրաւորները շուտով ապաքինին, եւ սկսինք վերակառուցման հայավայել ճիգին:

Աղէտին ահաւորութիւնը վեր է մարդկային գնահատանքէ եւ խօսքերը անգօր են նկարագրել այն՝ որ հայ ժողովուրդը կ'ապրի մեր Հայրենիքին մէջ: Փետրուարէն ի վեր, եւ Ղարաբաղեան շարժման իբրեւ հետեւանք, տնտեսական ծանր պայմաններու ներքեւ կ'ապրի մեր ժողովուրդը: Աւելին, անցեալ Նոյեմբեր 10-էն սկսեալ, եւ ազրբեջանական գրգռութիւններու եւ ոճիրներու իբրեւ հետեւանք, հարիւր հազարէ աւելի հայեր Պաքուէն, Գանձակէն (Կիրովպատ) եւ այլ շրջաններէ կը խուժէին Հայաստան, եւ արդէն իսկ անձուկ պայմաններու մէջ ապրող հայաստանցիները իրենց սրտերը բանալով, իրենց տունն ու տեղը, ազն ու հացը կը կիսէին գաղթականներուն հետ:

Եւ ահա աղէտը:

Բայց գիտենք, քաջ գիտենք եւ կը հաւատանք, որ մեր ժողովուրդը պիտի յաղթահարէ այս աղէտն ալ, եւ պիտի վերաշինէ իր տունը, պիտի նորոգէ մանաւանդ իր հոգին, իր ապրելու կամքով, ստեղծագործելու հաստատակամութեամբ:

Հայրենի տառապակոծ ժողովուրդին սակայն պէտք է, եւ

պիտի հասնի Սփիւռքի հայութեան եղբայրական ձեռքը»<sup>180</sup>։

Գոյժին վրայ, Գանատայի գաղութը իր բոլոր եկեղեցիներով, զանազան կողմերով եւ կառույցներով միակամօրէն եւ անմիջապէս գործի կ'անցնի օժանդակութեան աշխատանքը ծրագրելու։

Մոնթրէալի Հայ Կեդրոնը ամէնօրեայ եռուգրի մէջ կը մտնէ։ Անոր մէջ գործող բոլոր կազմակերպութիւնները կը լծուին աշխատանքի։ Հեռաձայնային կապերով Մոնթրէալի ամբողջ հայութիւնը կը հրաւիրուի իր օգնութիւնը տալու՝ ինչպէ՛ս եւ ինչո՛ւ որ կրնար։ Ըստ ականատեսի մը՝ «Ոտքի էր հայութիւնը իր մեծով ու փոքրով։ Ինքնաշարժներու խուժումը, հագուստեղէններով եւ այլ անհրաժեշտ կարիքներով բեռնաւոր, որոնք երկվայրկեաններու տեւողութեամբ կը պարպուէին՝ լեցուելու համար Ահարոնեան սրահ, մարգարան եւ ապա Ս. Յակոբ վարժարանի սրահները, գերոյէն վար 20 աստիճան ցուրտին՝ քրտնաթոր, բայց աշխոյժ պատանիներու կողմէ»<sup>181</sup>։

Բեռնակարգերու ժխորը նաւահանգիստի քարափի վերածած էր Հայ Կեդրոնի շրջափակը։ Հարիւրաւոր հայուհիներ, օրեր շարունակ՝ բերուած օժանդակութիւններու գտումը կը կատարէին, կօշիկը կօշիկին քով, բաճկոնը՝ բաճկոնին, վերարկուն՝ վերարկուին, եւ զանոնք կը տեղաւորէին տուփերու մէջ, անոնցմէ իւրաքանչիւրին մէջ աղօթքի եւ մաղթանքի մրմունջներ ըսելով։ Սրահէն ներս գրասենեակներու դասաւորում. մէկը՝ հեռաձայնային, միւսը՝ հանգանակութեան, ուրիշ մը թղթակիցներու արշաւանքին։ Կարգադիր յանձնախումբեր սենեակ չունէին, ժողովուրդին մէջ էին, անցքերու մէջ, իրենց մէկ ոտքը գերոյէն վար, միւսը՝ գերոյէն վեր ջերմաստիճանի մէջ։ Վերջին խօսքով՝ մրջնաբոյն մըն էր Հայ Կեդրոնը...»<sup>182</sup>։

Յ. Շիրազ իր «Հայոց ճակատագիրը» ոտանաւորին մէջ գրած է.

Մեզ էն գլխից են գարկել, բայց նորէն  
Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրեն։  
Հագար դարեր են գարկել, բայց նորէն  
Հայերն ապրել են, ապրում են, կ'ապրեն։

## Ժ. Դրուագ

«Այսօր մեր առաջ դրուած հիմնական հարցը այս է՝  
այնպէս ղեկավարուել, այնպէս գործել,  
որ մեր համագգային միասնութիւնը պահպանուի,  
այնպէս՝ որ մեր սկսած արդար դատը չձախողուի,  
այլ յաջողութեամբ պատկուի»,  
**Վազգէն Ա. Կաթողիկոս:**

«Այո՛, արդար է ձեր դատը, որ մերն է,  
ինչպէս բոլոր անոնց՝  
որոնք Հայկի նոյն արիւնը ունին իրենց երակներուն մէջ,  
Ս. Լուսատրշի սուրբ հաւատքն ունին իրենց հոգիներուն մէջ,  
Ս. Մեսրոպի ոսկի գիրն ունին իրենց ճակատներուն  
եւ մեծաւքանչ հայոց լեզուն՝ իրենց շրթներուն,  
Ս. Վարդանի արի արանց ժառանգ եղող կայծն ունին  
իրենց կամքերուն մէջ,  
սարդարապատեան շունչն ունին իրենց կուրծքերուն տակ»,  
**Գարեգին Բ. Կաթողիկոս:**

1988-ի Փետրուար 18-ին կը պողթկար Արցախեան շար-  
ժումը: Եւ Հագիւ շաբաթը մը անցած՝ 27 Փետրուարին Սումգա-  
յիթի կոտորածները տեղի կ'ունենային:

Աշխարհով մէկ ազգային պատասխանատուութիւնը  
կ'արթննար եւ «մէկ մարդու պէս ոտքի կը հանէր հայութիւնը»:

Սփիւռքը անմիջապէս կը հակազդէր. ցոյցեր կը կազմա-  
կերպուէին բոլոր գաղութներուն մէջ:

Մոնթրէալի հայութիւնը իր բոլոր կազմակերպութիւններով  
անմիջապէս երկու մեծ ցոյցերու կ'ելլէր, մէկը՝ իր քաղաքին մէջ,  
միւսը՝ Օթթաուայի. համայնքէն ներկայացուցիչներ առիթ կ'ու-  
նենային հանդիպելու Սովետի դիւանագիտական պատասխանա-  
տուներու, եւ հայութեան մտահոգութիւններն ու ակնկալութիւն-  
ները կը պարզէին անոնց:

Մոնթրէալի մէջ գաղութին անունով յուշագիր մը կը յանձնուէր Սովետական Ընդհանուր Հիւպատոսութեան՝ 28 Փետրուարին: Յուշագիրին մէջ գրուած էր.-

Մոնթրէալի հայ գաղութը ... կը հաստատէ թէ պէտք է թօթափել ստալինեան շրջանի դժնդակ պայմանները եւ թոյլ տալ, որ տիրապետեն Սովետական Սահմանադրութեան եւ Միացեալ Ազգերու Կանոնադրութեան տրամադրութիւնները ազգերու ինքնորոշման հարցերու վերաբերեալ:

...Սփիւռքի հայութեան եւ ամբողջ քաղաքակիրթ աշխարհի աչքերը սեւեռած են Մոսկուայի վրայ, ակնկալելով որ իշխանութիւնները որդեգրեն հետեւեալ սկզբունքները՝ որպէս առաջին դրական քայլ.

ա.- Սովետական իշխանութիւնները պարտին վերահաստատել իրենց գօրավիզը՝ ժողովուրդներու ինքնորոշման անուրանալի իրաւունքներուն նկատմամբ:

բ.- Ղարաբաղի հայութեան պէտք է տրուի պատեհնութիւնը, օրինական ձեւով կիրարկելու ընտրութեան իրաւունքը:

գ.-Զգալի միջոցառումներ պէտք է կատարուին հայ ժողովուրդի Ֆիզիքական, ստացուածքներու եւ մշակութային ժառանգի ապահովութեան համար, ոչ միայն Ղարաբաղի, այլ նաեւ ամբողջ Ազրբեջանի հանրապետութեան տարածքին<sup>183</sup>:

Իսկ Օթթաուայի մէջ, 26 Մարտին Սովետական դեսպանատան կը յանձնուէր այլ յուշագիր մը յանուն Մոնթրէալի, Թորոնթոյի, Գամպրիճի, Սէյնթ Գաթրինզի, Համիլթընի, Ուիննձըրի եւ Վանգուվըրի Հայ Կեդրոններուն: Անոր եզրակացութեան մէջ գրուած էր. «...կ'ուզէինք շեշտել, որ եղբայրական ժողովուրդներու բարեկամութիւնն ու յարակցութիւնը չեն կրնար բարգաւաճիլ առանց ճշնակ ժողովուրդներու իրաւունքներուն վերահաստատման»<sup>184</sup>:

Հակառակ բոլոր խժոժութիւններուն, հալածանքներուն եւ սպանդներուն՝ Արցախ ինքզինք կը յայտարարէ Խորհրդային Հայաստանի Ինքնավար Մարզ, 12 Յուլիս 1988-ին: Մոսկուայի «ոչ»ը տեղ չի հասնիր:

Մայր կ'առնեն հայ-թաթարական բախումները:

12 Յոննուար 1989-ին Մոսկուա կ'որոշէ Արցախը իրեն ենթարկել. անոր վարչական, քաղաքական, տնտեսական, մշակութային եւ այլ պատասխանատուութիւնները կը յանձնէ իննանդամ կոմիտէի մը, որուն անդամներէն հինգը կեդրոնական իշխանութեան պաշտօնատարներ կ'ըլլան, եւ չորսը՝ զարաբաղցիներ, որոնցմէ երեքը հայեր էին, իսկ մէկը ազերի<sup>185</sup> :

Նոյն տարուայ Յուլիսին Արցախ արդէն ենթակայ էր ազգամիջեան բախումներու ծաւալման սպառնալիքին<sup>186</sup> :

16 Օգոստոս 1989-ին, ի տես «ինքնավար մարզին շուրջ Սովետական Ազրբեջանի հաստատած պաշարումին եւ ի հակադրութիւն իր դատի արդարացի լուծման ձգձգումներուն»՝ Արցախի հայութիւնը պատմակշիռ քայլը կ'առնէ եւ ինքզինք կը հռչակէ սովետական անկախ տարածք<sup>187</sup> : Ապա ազերիական շրջափակումին, վայրագութիւններուն եւ պատերազմի պատրաստութեան դիմաց կը պատրաստուի գալիքը դիմագրաւելու : Եւ Արցախի մէջ ու շրջակայքին, ինչպէս նաեւ Հայաստանի եւ Ազրբեջանի սահմանային շրջաններուն մէջ բախումները կը սաստկանան<sup>188</sup> :

Գանատայի հայութիւնը 9 Հոկտեմբեր 1989-ին Հայ Դատի Գանատայի Յանձնախումբի կոչին ընդառաջելով երկու ցոյցերու կ'երթայ եւ կը բողոքէ Արցախի եւ Հայաստանի շրջափակումով ստեղծուած կացութեան դէմ եւ կը պահանջէ անոր վերացումը : Առաջին ցոյցը տեղի կ'ունենայ Օթթառուայի Սովետական դեսպանատան դիմաց, իսկ երկրորդը՝ Թորոնթոյի քաղաքապետարանին<sup>189</sup> :

Մոնթրէալէն դէպի Օթթառուա ուղղուած հայորդիներուն թիւը 700 էր : ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ընկերներէն եւ Մոնթրէալի հովիւ՝ Արմէն. քհնյ. Իշխանեանէ բաղկացած հնգանդամ պատուիրակութիւն մը կ'ընդունուի դեսպանատան աւագ խորհրդական՝ Ալեքսէյ Մակարովի կողմէ եւ Առաջին Քարտուղար՝ Անտրէյ Չուբէնի կողմէ : Մօտ մէկ ժամ տեւած հանդիպումի ընթացքին, պատուիրակութիւնը կ'արծարծէ Հայաստանի, Արցախի եւ Շահումեանի շրջափակման կացութիւնը, եւ դեսպանատան պաշտօնատարներուն յուշագիր մը կը յանձնէ : Յուշագիրը ուղղուած էր Սովետի Առաջին Քարտուղարին՝



Միխայել Գորբաչովին: Անոր մէջ յանուն Գանատայի Հայ Գաղութին պահանջուած էր, որ կեդրոնական իշխանութիւնները «վճռապէս» միջամտեն ապահովելու համար.

ա.- Լեռնային Ղարաբաղի եւ Խորհրդային Հայաստանի շրջափակման վերացումը:

բ.- Լեռնային Ղարաբաղի եւ Խորհրդային Ազրբեջանի հայութեան ապահովութեան երաշխաւորումը անհրաժեշտ բոլոր միջոցներով:

գ.- Լեռնային Ղարաբաղի ապագային նկատմամբ, մարզի բնակչութեան արդար պահանջները բաւարարող որոշում մը<sup>190</sup>:

Իսկ Թորոնթոյի քաղաքապետարանին դիմաց կատարուած ցոյցը պիտի ըլլար առիթ տարբեր ելոյթներու եւ քաղաքական դէմքերու կողմէ կատարուած զօրակցական հեռագիրներու ընթերցման<sup>191</sup>:

Այս ցոյցերուն մասին լրատուական զանազան միջոցներ լայնօրէն կ'արձագանգէին:

Գանատայի հայութիւնը ուրիշ առիթներով ալ ցոյցերու կ'ելլէր, եւ ամէն ճիգ ի դործ կը դնէր իր խօսքը հասցնելու Սովետական իշխանութիւններուն, նաեւ ապահովելու համար Գանատայի կառավարութեան նպաստաւոր կեցուածքը Արցախի հարցին մասին: Այդ ցոյցերէն ամենէն մեծը տեղի պիտի ունենար 1991-ի Ապրիլ 24-ին, Հայոց Յեղասպանութեան ոգեկոչման առիթով, Օթթաուայի մէջ: Մոնթրէալի, Թորոնթոյի, Գամպրիճի, Համիլթընի, Սէյնթ Գաթրինզի եւ Ուինձըրի հայութեան բազմութիւնները Օթթաուա ուղղուելէ առաջ, ցոյցին կազմակերպիչ Հայ Դատի Յանձնախումբերէն կ'իմանային, թէ 22 Ապրիլին Գետաշէնը ենթարկուած է Սովետական եւ ազերի ուժերու ռմբակոծումներուն եւ կը մնայ սպառնալիքի տակ: Եւ Գանատայի մայրաքաղաքին մէջ, Սովետական դեսպանատան առջեւ ցոյցը կը վերածուէր բարկութեան մեծ ալիքի եւ զանատական քաղաքական դէմքեր կը փութային իրենց ընդվզումը արտայայտելու եւ ձայնակցելու հայութեան պահանջքին: Ու Գանատան պաշտօնապէս իր մտահոգութիւնը կը յայտնէր Սովետական իշխանութիւններուն:

Հայաստանի բեմին վրայ անկիւնադարձային դէպք մը տեղի պիտի ունենար 30 Նոյեմբեր եւ 1 Դեկտեմբեր 1989-ին:

Հայաստանի եւ Արցախի ժողովուրդին կամքը արտայայտելով, Հայաստանի Գերագոյն Խորհուրդը եւ Արցախի Ազգային Խորհուրդը Երեւանի մէջ համատեղ նիստեր կը գումարեն եւ որոշում կ'առնեն Հայկական ԽՍՀ-ի Լեռնային Ղարաբաղի վերամիաւորման մասին<sup>192</sup>: Շուտով Պաքուի կոտորածները կը կատարուին եւ Ազրբեջան պատերազմ կը յայտարարէ Հայաստանի դէմ:

Այն օրերուն Հայաստանի համայնավարները կը կորսնցնեն իրենց իշխանութիւնը եւ Գերագոյն Խորհուրդի ղեկը կ'անցնի ՀՀ Շարժումին ձեռքը: 21 Օգոստոս 1990-ին ՀՍՍՀ-ն կը վերանվանուի Հայաստանի Հանրապետութիւն<sup>193</sup>: 1991-ի Յուլիսին, «Մեր Հայրենիք»ը կը հռչակուի Հայաստանի օրհներգ: Եւ հայուլթեան անկատար տենչերէն մէկը եւս կ'իրականանայ ու կը հռչակուի Հայաստանի Հանրապետութեան անկախութիւնը 23 Սեպտեմբեր 1991-ին<sup>194</sup>: Քիչ անց, 1918-20-ի Հայաստանի Հանրապետութեան զինանշանն ալ կ'ընդունուի՝ իբր զինանշան ժամանակակից Հանրապետութեան:

Նախքան Հայաստանի Հանրապետութեան անկախ հռչակումը, Լեռնային Ղարաբաղը ինքզինք հանրապետութիւն կը հռչակէր 2 Սեպտեմբեր 1991-ին, եւ կ'ունենար իր իշխանութիւնը<sup>195</sup>:

Թէ՛ Հայաստանի եւ թէ՛ Արցախի ուժերը կազմակերպուած էին արդէն: Շուշին կ'ազատագրուէր, նոյնպէս Լաչինը:

Մինչ ազատագրական պայքարի խոյանքը բռնկեցուցած էր համայն աշխարհի հայուլթեան սիրտերը, Հայաստանի Հանրապետութեան մէջ ժողովրդավարութիւնը կ'ոտնակոխուէր եւ նախագահը կը պարսաւէր հայրենիք վերադարձած ՀՅԴ-ն, եւ անոր գործունէութիւնը Հայաստանէն ներս կ'արգելէր: Ան դժբախտաբար չէր հասկցած, որ իր ազգային նուիրումին մէջ յարատեւող ոգին չէր կրնար կասեցնել... եւ ՀՅԴ-ն գործակցութեան ձեռք կ'երկարէր Հայաստանի իշխանութեան, այն համոզումով՝ որ Հայաստանն ու հայուլթիւնը «վեր են ամէն ինչէ», ու հարկ է պատմական դժուար այդ օրերուն անդրադառնալ, որ «միայն ու միայն, եւ դարձեալ միայն միասնականութեամբ

կայ փրկութիւնն հայոց»։ Երկարած ձեռքը օդին մէջ կը մնար։ Կ'անցնէր արգելողը, եւ ՀՅԴ-ն կը վերականգնէր հայրենական իր ծառայութիւնը։

Մինչ այս տագնապը կրնար հեռահաս վտանգաւոր հետեւանքներ ունենալ, պատասխանատուութեան գիտակցութիւնը կը փրկէր կացութիւնը, որովհետեւ համբերութիւն կու տար։

Ներքին լարուածութեան մէջ, ահա ազերի բանակները լայնածիր յարձակումներու կ'անցնէին, իսկ Արցախի մարտիկները հակահարուածի կը դիմէին։ Այնքան ծանր պիտի ըլլային ազերիին կորուստները, որ ան առաջին անգամ ըլլալով պիտի որոշէր ԼՂՀ-ի հետ ուղղակիօրէն բանակցել 1993 թուականի Յուլիսին<sup>196</sup>։

Բախումները պիտի չդադրէին, մինչեւ որ 27 Յուլիս 1994-ին Հայաստանի, Ազրբեջանի պաշտպանութեան նախարարները եւ Արցախի պաշտպանութեան բանակի հրամանատարը հրադարարի համաձայնագիր ստորագրէին<sup>197</sup>։ Այդ թուականէն ասդին դիւրաբեկ խաղաղութիւն մը կը տիրէ։

21 Սեպտեմբեր 2008-ի երեկոյեան Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահին մէջ, ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչը՝ Հրանդ Մարգարեան իր բանախօսութիւնը կը կեդրոնացնէր Արցախի շուրջ, եւ «հաշտարար» կողմերու երկու չափ եւ երկու կշիռին մասին ակնարկելով, կը յայտարարէր. «Մեր յոյսը մեր վրայ պէտք է ըլլայ։ Հայ ժողովուրդն է Արցախի անվտանգութեան երաշխիքը»։

Մոնթրէալի հայութիւնը կը հաւատայ, որ Արցախեան պայքարը կը պատկանի ամբողջ հայութեան, եւ ինքզինք կը զգայ իբր անոր մէկ զարկը։

## ԺԱ. Դրուագ

1989-ին լոյս տեսաւ Կարօ Չիչէքեանի «The Armenian Community of Quebec» գիրքը<sup>198</sup>: Գանատայի հայութեան մէկ հատուածին նուիրուած առաջին լուրջ աշխատութիւնն է ասիկա: Պատուիրատուն եղած է Քէպեգի Մշակութային Համայնքներու եւ Ներգաղթի Նախարարութիւնը:

Հեղինակը գիրքի սկզբնաւորութեան պարզած է, թէ իր նպատակն է Քէպեգի հայութիւնը ներկայացնել՝ բացատրելով անոր պատմութիւնը, աշխարհագրական վիճակը, համարկողական (integrative) կացութիւնը եւ հաստատութեանական (institutional), այսինքն՝ կառոյցներու պատկերը:

Կարօ Չիչէքեան իր այս առաջադրութեան մէջ նախ կատարած է հակիրճ ներածութիւնը Հայաստանի եւ հայութեան. ապա բացատրած է գաղութին եղափոխութիւնը. երրորդ՝ անոր աշխարհագրական բաշխումը. չորրորդ՝ գաղութին կազմակերպութեան պատկերը. հինգերորդ՝ անոր համարկումի/ձուլումի ընթացքը. վեցերորդ՝ 80-ական թուականներու մարդահամարային (demographic) եւ ընկերա-տնտեսական ուրուագիծը. եւ եօթներորդ՝ ներկայի պարզած պատկերն ու ապագայի մտահոգութիւնները:

Ուսումնասիրութիւնը ունի վեց գլուխներ.

- 1.- The Armenians.
- 2.- Armenian Immigration to Canada and Quebec.
- 3.- The Changing Distribution of the Armenian Community in Montreal.
- 4.- Integration or Assimilation.
- 5.- The Institutional Organization of the Armenian Community.
- 6.- The Present Profile of the Community; its Concerns and Future Challenges.

Կարօ Չիչէքեան գիրքի եզրակացութեան մէջ երկու տարրեր անհրաժեշտ տեսած է հայ ինքնութեան վերապրումին համար. առարկայականութիւն եւ գոհոգութիւն:

## ԺԲ. Դրուագ

Համայնքը մեծ խանդավառութեամբ կ'ընդունի Գարեգին Բ. Կաթողիկոսի երկրորդ այցելութիւնը:

1990 Յունիսի սկզբնաւորութեան Գարեգին Վեհափառ Գանատա կու գայ, եւ քանի մը օրեր կ'անցընէ Մոնթրէալի մէջ: Ան կու գայ «Անթիլիասի եւ Լիբանանի ցաւը սրտին, հայրական ժպիտը դէմքին»:

Վեհափառը իր ճանապարհը ըրած էր Լիբանանէն Պէլճիքա, եւ Պրիւքսէլի մէջ Վազգէն Ա. Կաթողիկոսին հետ օծած նորակառոյց Ս. Մարիամ Մազթաղինէ եկեղեցին<sup>199</sup>: Ապա շարունակելով իր ճամբան՝ Նիւ Եորք գացած էր ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղար՝ Խաւիէ Փերէզ տը Գուէլարին յանձնելու Մեծ Եղեռնի 75-ամեակի առիթով գրուած, Հայոց Յեղասպանութեան Յուշագիր մը, որ ստորագրուած էր Ամենայն Հայոց Վեհափառին եւ իր կողմէ<sup>200</sup>:

Հայրապետը Մոնթրէալ կը հասնի 6 Յունիսի երեկոյեան: Յաջորդ առաւօտ Ս. Յակոբ Երկրորդական Վարժարան կ'այցելէ: Եւ Բաստրմաճեան սրահին մէջ իրեն համար աշակերտներուն մատուցած ներշնչիչ գեղարուեստական յայտագրէն յուզուած՝ հետեւեալը կ'ըսէ. «Այսօր անհունօրէն հպարտ եմ...Նոյն մարդը չեմ, ինչ որ էի այս սրահը մտնելէ առաջ: Կը նմանիմ անոր՝ որ տաք օդին կը քրտնի, անտրամադիր կը դառնայ եւ յանկարծ կարկաչուն աղբիւրներով զով պարտէզ մը կը մտնէ, բաժակ մը ջուր աղբիւրի ակէն կը խմէ եւ կը զովանայ: Դուք ինծի այնպէս զովացուցիք այսօր եւ սիրտս զօրացուցիք, զիս երիտասարդացուցիք. փառք քեզ Տէր, որ այսպիսի սերունդ այս հողին վրայ կ'աճեցնես»<sup>201</sup>:

## ԺԳ. Դրուագ

Ս. Յակոբ եկեղեցին Առաջնորդ սրբազանին տնօրինութեամբ կը ստանայ «Մայր» կոչումը:

7 Յունուար 1994 թուակիր նամակով Մեսրոպ արք. Աշճեան Ս. Յակոբ եկեղեցւոյ Հովիւին եւ Հոգաբարձութեան գրած է. «Ուրախութեամբ կը ծանուցանենք ձեզի, որ թեմիս Ազգային Վարչութեան Կրօնական եւ Քաղաքական ժողովները Յունուար 7 1994-ի իրենց խառն նիստին, եւ մեր առաջարկութեան հիման վրայ, որոշեցին Մոնթրէալի Ս. Յակոբը հռչակել Մայր եկեղեցի, թեմիս Գանատայի շրջանին համար»<sup>202</sup>:

Ապա Առաջնորդ սրբազանը բացատրած է, թէ «Մայր եկեղեցի» կոչումը Ս. Յակոբի համայնքը նոր պատասխանատուութեանց դիմաց կը դնէ, յատկապէս իրմէ Լաւալի մէջ ծնած Ս. Գէորդ եկեղեցւոյ հանդէպ:

Նոյն թուականով Հաղորդագրութիւն մըն ալ հրապարակած է Առաջնորդարանը եւ ըսած.

ա.- Նկատի ունենալով, որ Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցին, 1958 թուականէն ի վեր մատուցած է անգնահատելի ծառայութիւն Մոնթրէալի եւ շրջակայ հայութեան հոգեւոր կեանքին աճման.

բ.- Նկատի ունենալով, որ Գանատայի շրջանին մէջ հետզհետէ աճեցան Թորոնթոյի Ս. Աստուածածին, Գամպրիճի Ս. Նշան, Վանգուվրրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիները, եւ վերջերս կազմուեցաւ Ս. Գէորդ համայնքը, եւ

գ.- Նկատի ունենալով, որ Գանատայի շրջանը կրօնական, ազգային, մշակութային, բարեսիրական, մարզական եւ երիտասարդական կալուածներէն ներս արձանագրած է փայլուն յաջողութիւններ եւ ձեռք ձգած շքեղ իրագործումներ՝

որոշեց Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցին հռչակել Մայր եկեղեցի<sup>203</sup>:

Իսկ Լաւալի Ս. Գէորդ եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը Ս. Յակոբ Առաջնորդանիստ եկեղեցւոյ 50-ամեակին առի-

թով, հետեւեալ վկայութիւնը պիտի տային. «Ի սկզբանէ Ս. Յակոբ եկեղեցին գուրգուրալից թեւերը միշտ լայն բացած՝ իր առաքելութիւնը շարունակեց եւ դարձաւ ծառան ու խնամատարը հայ ընտանիքներուն: Քրիստոնէական հաւատքով ամրացած՝ ան քաղեց հայ ժողովուրդի ամէնօրեայ ճանապարհով՝ թեւ թիկունք եղաւ բոլորին, սպասարկեց մեծին ու փոքրին, հարուստին ու աղքատին հաւասարապէս»<sup>204</sup>:

## ԺԴ. Դրուագ

Լաւալի հայութեան թուական աճը գլխաւոր պատճառ պիտի ըլլար այնտեղ կեդրոն/եկեղեցիի ստեղծումին՝ անմիջականօրէն հասնելու համար շրջանի ազգային եւ հոգեւոր կարիքներուն:

1993-ին Լաւալաբնակ ժողովուրդէն դիմում կը կատարուի Առաջնորդին, որ Լաւալի շրջանը ծխական վիճակ ունենայ: Եւ դիմումին ի պատասխան Մեսրոպ արքեպիսկոպոս կը գրէ 24 Մարտ 1993-ին. «Ամերիկահայոց Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Ազգային Առաջնորդարանս, իր հոգեւոր առաքելութեան եւ ազգային մտահոգութեանց թելադրանքով, կոչումը եւ պարտականութիւնը ունի ծխական շրջաններ կազմակերպել թեմիս սահմաններէն ներս, հետզհետէ աճող հայ գաղութներու համար ստեղծելով պայմաններ՝ որոնցմով Հայ եկեղեցւոյ զաւակները կարենան ստանալ քրիստոնէական դաստիարակութիւն եւ հայեցի շունչ եւ ոգի:

Մեկնելով այս սկզբունքէն եւ նկատի ունենալով, որ Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցին եւ համայնքը հսկայ կերպով աճած են եւ միաժամանակ Լաւալի շրջանին մէջ կարեւոր թիւով հայեր համախմբուած են, բազմաթիւ խորհրդակցութիւններէ եւ հանդիպումներէ յետոյ, առաջարկեցինք թեմիս Ազգային Վարչութեան<sup>205</sup>, որ Լաւալի շրջանին մէջ յարմար պիտի ըլլայ կազմակերպել առանձին ծխական շրջան մը»<sup>206</sup>:

Եւ կը նշանակուի Լաւալի Հայ եկեղեցւոյ առժամեայ Հոգա-

բարձութիւն մը, որուն կը վստահուի կազմակերպել ծխական նոր շրջանը<sup>207</sup>։

2 Յունուար 1994-ին Մեսրոպ սրբազան Ս. Պատարագ կը մատուցանէ Լաւալի Notre Dame de Fatima եկեղեցւոյ մէջ, եւ կը հռչակէ Լաւալի Ս. Գէորգի համայնքին սկզբնաւորումը<sup>208</sup>։

Ս. Գէորգ եկեղեցւոյ առաջին լիաժամ հովիւը կ'ըլլայ Հրանդ քահնյ. Երէցեան։ Ան կը ծառայէ 1995-1997։ Ապա կը մեկնի Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմ։ 1998-էն ծառայութեան կը կոչուի եւ ցայսօր կը հովուէ Հրայր ա. քահնյ. Նիկոլեան։

Համայնքը իր կեդրոնը եւ եկեղեցին պիտի ունենար 1998-ին՝ Laval des Rapides շրջանին մէջ, Boul. des Prairies-ի եւ Dussault փողոցին անկիւնը<sup>209</sup>։ Նոյն տարուան 22 Նոյեմբերին կը կատարուի կեդրոնին բացումը եւ եկեղեցւոյ խորանին օծումը<sup>210</sup>։

Այժմ համայնքը արդարօրէն կը ցանկայ Հայ Կեդրոնի իր ներկիւ մատուռէն դուրս ելլել եւ ունենալ իր եկեղեցին։

## ԺԵ. ԴՐՈՒԱԳ

Համայնքը կը սգայ վախճանումը Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ Վազգէն Ա.ի։ Հայրապետը կը վախճանէր 18 Օգոստոս 1994-ին։

Գարեգին Բ. Կաթողիկոս պատուիրակութեամբ մը 25 Օգոստոսին Հայաստան կ'երթայ, կ'օծէ բազմավաստակ Վեհին ճակատն ու աջ ձեռքը, եւ կը դամբանախօսէ եօթ երանիներ ըսելով։

Կաթողիկոսը երանիներ կու տայ, որովհետեւ Վազգէն կաթողիկոս եղած էր «հոգեշէն եւ ժողովրդաշէն», «էջմիածնաշէն եւ եկեղեցաշէն», «ոգեշէն եւ կրթաշէն», «միասնաշէն եւ միութեանակերտ», «հայրենաշէն եւ ազգաշէն», «բարեշէն եւ բարեգործ» եւ «աստուածաշէն»<sup>211</sup>։

Իսկ Անթիլիաս վերադառնալով կը վկայէ—

(Ան) Ամենայն Հայոց Կաթողիկոս եղաւ ո՛չ թէ տիրոջսով



միայն, այլ իր ապրումներով: Ամբողջ հայ ժողովուրդը իր հոգիին մէջ ներկայ էր. ինք միշտ ինքզինքը Հայ եկեղեցիին առաջին սպասաւորը կը յայտարարէր: Ճիշդ է, որ պայմաններու բերումով, եղան պահեր, ուր ստեղծուեցան անհասկացողութիւններ, վարչական տեսակէտէն՝ խոչընդոտներ, այնպիսի վերաբերումներ, այնպիսի յարաբերութիւններ, որոնք իր սրտին, եւ կը հաւատամ այդ օրերուն իրեն հետ գործող Կիլիկեան Աթոռի մէջ կամ ուրիշ տեղ եղող վերին պատասխանատուներու հոգիներուն վրէժ պատճառեցին: Բայց իր հոգիին, սրտին եւ միտքին մէջ պառակտումի զգացումը տեղ չգտաւ երբեք: Պարագաները այնպէս բերին, որ դժուար օրեր անցուցինք բոլորս ալ: Բայց այսօր, աչքերս դէպի երկիրք բարձրացնելով կրնամ ըսել. Վեհափա՛ռ, երջանիկ մեկնեցար այս աշխարհէն, որովհետեւ խոսովութիւնը խաղաղութեամբ փոխարինուեցաւ: Եւ վերջին տարիներուն այն սփանչելի մթնոլորտը, որ տիրեց հայ ժողովուրդին մէջ, հայ եկեղեցւոյ մէջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յարաբերութեանց ծիրէն ներս, Ձեզի համար ծաղկեփունջ ըլլայ՝ Աստուծոյ առաջ ընծայուած, որովհետեւ ամենէն գլխաւոր նարտարապետը եղար այդ միութեան ոգիի վերակազմութեան՝ մեր ժողովուրդի հոգիին մէջ<sup>212</sup>:

*Ըստ Մեսրոպ արք. Աշճեանի, գուցէ Վազգէն կաթողիկոսի ծածուկ փափաքն էր, որ Գարեգին կաթողիկոս իրեն յաջորդէր: Եւ 5 Ապրիլ 1995-ին, Ս. Էջմիածնի տաճարին մէջ Կիլիկիոյ Հայրապետը կ'ընտրուի Կաթողիկոս Ամենայն Հայոց, եւ կ'ըլլայ Գարեգին Ա.<sup>213</sup>:*

Եւ Հիւսիսային Ամերիկայի Արեւելեան ու Գանատայի Թեմի պատգամաւորները Անթիլիաս կը հասնին՝ ընտրելու համար Կիլիկիոյ գահակալը:

28 Յունիս 1995-ին՝ Լիբանանի Թեմին Առաջնորդ՝ Արամ արք. Քէշիշեան կ'ընտրուի Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ<sup>214</sup>: Նորընտիր գահակալը իր անդրանիկ խօսքին մէջ կ'ըսէ. «Եղբայրական սիրով կ'ողջունեմ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետ՝ ՆՍՕՏՏ Գարեգին Ա. Կաթողիկոսը, եւ հանդիսաւոր սա

պահուն կ'ըսեմ սրտիս բովանդակ անկեղծութեամբը — Մենք մի-ասի'ն պիտի գործենք, ձեռք-ձեռքի, սիրտ-սիրտ՝ ի խնդիր մէ'կ եկեղեցւոյ, մէ'կ հայութեան ու մէ'կ հայրենիքի համայնական կեանքին մէջ ու նո'յն եւ մէ'կ առաքելութեան նամբուն վրայ<sup>215</sup>»:

Եւ 1 Յունիս 1995-ին Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Երուսաղէմի Թորգոմ արք. Մանուկեան եւ Կ. Պոլսոյ Գարեգին արք. Գազանճեան պատրիարքներու առընթերակայութեամբ՝ կ'օծէ Կիլիկիոյ նորընտիր կաթողիկոսը, եւ կ'ըսէ. «...այսօր Հայց-եկեղեցին միութեան եւ ամբողջականութեան ոսկի կամար մը նետեց իր պատմութեան վրայ: Եւ կը հաւատամ ու կ'աղօթեմ որ այդ ամբողջականութիւնը մնայ ամուր, առողջ, Աստուծոյ ծառայութեան եւ մեր ժողովուրդի ծառայութեան համար»<sup>216</sup>:

## ԺԶ. Դրուագ

Ձոյգ կաթողիկոսները Մոնթրէյալ պիտի դային. նախ Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսը, ապա Կիլիկիոյ Արամ Ա. Կաթողիկոսը:

27 Յունուար 1996-ին, Ս. Յակոբի համայնքը երջանկութեամբ կը սպասէր Ամենայն Հայոց Հայրապետին այցը իր հօտին:

Ան կը մտնէ իր այնքան սիրած յարկէն ներս՝ սրտագեղ ընդունելութեամբ մը: Եւ Ս. Խորանէն խուռներամ ժողովուրդին կը փոխանցէ ողջոյնները Մայր Աթոռին, Անկախ Հայրենիքին, մեր դարաւոր յուշարձաններուն, Արարատին եւ Արցախին: Կը պատգամէ, որ մեր հայրենիքը եւ Ս. Էջմիածինը պարզապէս պատմութեան վկաներ չեն, այլ հայ ժողովուրդի պատմութեան մէջ, նոր հանգրուանի մը սեմին՝ նոր պատմութիւն կերտելու հրաւէրներ: Թէ այսօր հայութեան հազուադէպ պատահութիւն մը կը տրուի՝ կերտելու իր նոր պատմութիւնը<sup>217</sup>:

Յաջորդ օր Վեհափառը Ս. Պատարագ կը մատուցանէ Սէն Ժողէֆ Օրաթուարին մէջ, մասնակցութեամբ թէ՛ Էջմիածնեան եւ թէ՛ Կիլիկեան համայնքներու զաւակներուն:

Գարեգին կաթողիկոսի պատգամը Ֆրանսերէն եւ Հայերէն լեզուներով կ'ըլլայ: Ֆրանսերէն իր խօսքին մէջ կը շեշտէ մակերեսային, զգայարանական եւ սպառողական կենցաղակերպի մթնոլորտին մէջ՝ ոգեղէն արժէքներու պահպանման կարեւորութիւնը: Իսկ իր Հայերէն խօսքին մէջ կը ներակայացնէ Բարի ծառայի օրինակը (տե՛ս Քանքարներու առակը, Մտ 25.14-30 - ԳՔ), որ իրեն տրուածը իր աշխատանքով կը բազմապատկէ: Վեհափառը կոչ կ'ուղղէ ըսելով, որ իւրաքանչիւր մարդ, ուստի եւ իւրաքանչիւր Հայ նախախնամութենէն տրուած շնորհքներ ունի: Անոր կոչումն է իր շնորհները ի սպաս դնել մարդկութեան եւ Հայ ազգին ի նպաստ, որպէսզի իր կեանքը իմաստաւորուի<sup>218</sup>:

29 Յունուարին Վեհափառը կ'այցելէ Ս. Յակոբ Ազգային Երկրորդական եւ Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Նախակրթարան: Եւ Բաստրմաճեան սրահին մէջ ծափող ջոյներով կ'ընդունուի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ աշակերտութեան կողմէ: Գեղարուեստական յայտագրէ եւ խօսքի ելոյթներէ ետք, ան այս խօսքը կ'ուղղէ աշակերտներուն.-

...երբ յուշատետրիս մէջ ուզեմ գրել այս օրուան մասին, այդ գրելիքիս վերնագիրը պիտի ըլլայ՝ «Հայ Դպրոցի Օրը Իմ Հովուապետական Այցելութեան Պատմութեան Մէջ»: Ուրիշ անգամ եղած էի այստեղ եւ այսպիսի աշակերտութիւն հաւաքուած էր, թերեւս ձեզմէ ոմանք կը յիշեն, ուրիշներ նախակրթարան էին... եւ այս դպրոցը եւ մեր բոլոր դպրոցները մեր ազգի կեանքին մէջը այսօր ունին բացառիկ նշանակութիւն եւ կոչուած են ունենալու վճռադրոշմ առաքելութիւն մեր բացուող նոր հորիզոններուն առջեւ՝ հայոց պատմութեան այս հանգրուանին»<sup>219</sup>:

Արամ Ա. Կաթողիկոս 4 Նոյեմբեր 1997-ին Մոնթրէալ կը հասնի: Ասիկա Կիլիկիոյ Վեհափառ Հայրապետին Հովուապետական անդրանիկ այցելութիւնն էր:

Յաջորդ օր, Վեհափառը Ս. Յակոբ Երկրորդական ու Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Վարժարանին, նաեւ ՀՕՄ-ի Ծաղկոցին մէջ կ'ըլլայ: Բաստրմաճեան սրահէն ներս այս յայտարարութիւնը կ'ընէ, թէ Հայ դպրոցը՝ Հայ եկեղեցոյ եւ ընտանիքին հետ միասին մեր ժողովուրդին «սիրտ»ն է:

Այս այցելութեան առիթով Կիլիկիոյ Հայրապետին հիմնական հաստատումը եւ կոչը եղած է հետեւեալը. «Կ'ապրինք մեր պատմութեան ամենէն վճռադրոշմ ու անկիւնադարձային հանգրուաններէն մէկը: Նոր յոյսեր ու յուսախաբուծիւններ, նոր հարցադրումներ ու մարտահրաւէրներ կը շրջապատեն մեր կեանքը ամէն տեղ: Արդ, հրամայական անհրաժեշտութիւն է մեր ժողովուրդին համար ընտրել իր կեանքի ճիշդ ուղին, կատարել այն՝ ինչ որ կենսական ու առաջնահերթ է այսօր՝ մեկնելով համազգային գերագոյն պահանջներէն ու շահերէն: Պէտք է վեր մնալ լուսանցքային հարցերէն, մակերեսային ու մասնակի խնդիրներէ եւ կառչիլ արժէքին, մնայունին, առաջնահերթին»<sup>220</sup>:

## ԺԷ. Դրուագ

20 Մարտ 1999-ին Ս. Յակոբի համայնքը կը նշէ իր հիմնադրութեան 40-ամեակը: Այդ առիթին համար Արամ Ա. Կաթողիկոս Օրհնութեան Գիր առաքած էր, եւ ըսած. «...Քրիստոնէական ու ազգային իմաստով համայնք ունենալ կը նշանակէ առաջին հերթին եկեղեցի ունենալ: Եկեղեցին է, որ իր շուրջ խմբուած ընտանիքները կը դարձնէ ամբողջութիւն ու զայն կը վերածէ ընտանիքի՝ անոր տալով կազմակերպչական կառոյց եւ իւրայատուկ նկարագիր ու ինքնութիւն: Եկեղեցին է, որ իր շուրջ կը խմբէ մեր կրթական, դաստիարակչական, ընկերային ու մշակութային բոլոր միութիւնները, որպէս կենսական ու անբաժան կառոյցները համայնքին: Այսպէս կազմաւորուած է հայ Սփիւռքը իր համայնքներով: Ու Հայց. Առաքելական Ս. Եկեղեցին դարձած է առանցքային ներկայութիւն մեր բոլոր համայնքներէն ներս, ո՛չ որպէս կառոյց, այլ որպէս Քրիստոսի Աւետարանին ու մեր հոգեմտաւոր արժէքներու կենսագործման լծուած առաքելութիւն:

Ահա այսպէ՛ս եղաւ նաեւ Մոնթրէալի Ս. Յակոբ եկեղեցին: Ա՛յս հաւատքով ու գիտակցութեամբ գործեց ան անցնող քա-

ուստուն տարիներուն, դառնալով կենսատու սիրտը Մոնթրէալի մեր համայնքին:

Գանատայի հեռաւոր փերուն վրայ կայք հաստատած մեր ժողովուրդի զաւակներու կեանքին մէջ՝ առկայժ պահեց ան կանթեղը Լուսաւորչին, վառ պահեց Ա. Բ. Գ.ը Մեսրոպ Մաշտոցի եւ ամուր պահեց պահանջքը իրաւատէր հայութեան»<sup>221</sup>:

## ԺԸ. Դրուագ

1999 տարուայ 29 Յունիսին Մոնթրէալի համայնքը խոր վիշտով սգաց վախճանումը Ամենայն Հայոց Գարեգին Ա. Կաթողիկոսի:

Վեհափառին վախճանման գոյժին վրայ, 5 Յուլիս 1999-ին Արամ Ա. Կաթողիկոս պատուիրակութեամբ մը Ս. Էջմիածին կ'երթայ եւ կ'օծէ վախճանեալ Հայրապետին ճակատը, իսկ աջը կ'օծէ Կաթողիկոսական Տեղապահ՝ Ներսէս արք. Պողոսյանի»<sup>222</sup>:

Իր դամբանականին մէջ Արամ Վեհափառ կը վկայէ եւ ոգեկոչական սա խօսքը կ'ըսէ. «Քիչ յետոյ քեզմէ հողին պիտի յանձնենք այն ինչ որ հողին կը պատկանի: Սակայն դուն վեր պիտի մնաս գերեզմանի փոսէն: Պիտի մնաս մեր մէջ յաւերժօրէն քու ամուր հաւատքով, վառ յոյսով ու պայծառ տեսիլքով: Պիտի դառնաս ճանապարհ եկեղեցաշէն ու ազգանուէր ծառայութեան եւ հրաւէր ազգային միասնութեան»<sup>223</sup>:

## ԺԹ. Դրուագ

2001 տարին Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700-ամեակն էր: Եւ Հայ եկեղեցին աշխարհով մէկ յիշատակեց զայն զանազան արարողութիւններով եւ ձեռնարկներով:

Արամ Ա. Կաթողիկոս Միացեալ Նահանգներու եւ Գանատա-  
յի մէջ Հոփուապետական իր երկրորդ այցելութեան սկսաւ 3 Հոկ-  
տեմբեր 2000-ին, օրհնելու համար իր հօտի բազմաթիւ համայնք-  
ներուն մէջ կազմակերպուած 1700-ամեակեան ձեռնարկները:

Վեհափառը Մոնթրէալ կու գար 14 Հոկտեմբերին: Եւ Ս.  
Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ կը պատգամէր՝ «Միայն չհպար-  
տանանք աշխարհի առաջին քրիստոնեայ պետութիւնը եղած  
ըլլալու իրողութեամբ, այլ 1700 տարիներու անցեալը ուժի վե-  
րածենք»<sup>224</sup>:

1700-ամեակի ծիրին մէջ Հովիւ եւ Հոգաբարձութիւն  
իրենց մասնակցութիւնը ունեցան՝ նաեւ Մոնթրէալի քաղաքա-  
պետարանին մէջ ցուցահանդէս մը կազմակերպելով 2001-ի  
Նոյեմբեր 22-ին:

Յուցահանդէսին անունն էր «Հայ արուեստը. 1700 տարի  
քրիստոնէութիւն»։ Անիկա ամբողջական սպառիչ ըլլալու յա-  
ւակնութիւնը չունէր, այլ հայ քրիստոնէական արուեստի  
գլխաւոր արտայայտութիւններուն նմոյշներ կը բովանդակէր:

Յուցահանդէսին պատրաստութիւնը վստահուած էր յանձ-  
նախումբի մը՝ արուեստաբան Էլօ Պուտաքեանի գեղարուեստա-  
կան ղեկավարութեամբ:

Ձեռնարկին ներկայ էին քաղաքապետը՝ Փիեռ Պուրբ, ՀՀ  
հիւպատոսը՝ Կարինէ Տէրտէրեան, եկեղեցական, քաղաքական  
եւ ազգային ու բարեսիրական կառույցներու ներկայացուցիչներ  
եւ մշակութասէր բազմութիւն մը<sup>225</sup>:

Իր խօսքին մէջ քաղաքապետը դրուատեց հայութիւնը: Վեր  
առաւ Մոնթրէալի հայութեան դերը քաղաքի զարգացման մէջ:

Տիկ. Տէրտէրեան կարգաց ՀՀ դեսպանին՝ Արա Պապեանի  
գիրը: Դեսպանը գրած էր, թէ հաւատքը եւ Հայց. Առաքելական  
Ս. Եկեղեցին դարեր շարունակ առանձնայատուկ դեր ունեցան  
հայ մարդու կեանքին մէջ: Եւ թէ՛ Հայց. Եկեղեցին հայ ինքնու-  
թեան հիմնասիւններէն մէկն է:

Օրուան գլխաւոր բանախօսն էր դոկտ. Շաքէ Մինասեան:

Ան Հայ եկեղեցւոյ պատմականը ուրուագծեց: Ակնարկեց  
անոր վարչական կառույցներուն եւ շեշտեց անոնց աստուածա-

բանական միութիւնը: Եւ ամփոփ անդրադարձաւ Հայ ճարտարապետութեան երեք բացառիկ ստեղծումներու. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցիին, որ «Համայն աշխարհի արտաքնապէս հարթաքանդակուած առաջին եկեղեցին է», Անի քաղաքի Մայր Տաճարին, «որուն ոճը 125 տարիներով կը կանխէ Եւրոպայի գոթական ճարտարապետութեան ծնունդը», եւ Զուարթնոց տաճարին, որ թէեւ կործանած, սակայն համաշխարհային ճարտարապետութեան ամենէն սքանչելի իրագործումներէն մէկը եղած է<sup>226</sup>:

Յուցահանդէսը բաշխուած էր հետեւեալ ստորոգութիւններով. Հայ ճարտարապետութիւնը, Խաչքարային արուեստը, Հայ մանրանկարչութիւնը եւ Հայ գորգարուեստը:

## Ի. Դրուագ

Հորիզոն իր 23 Սեպտեմբեր 2002-ի առաջին էջին վերեւ գրած է. «Մեր Սեփական Տան Միացաւ Հայակերտման, Մտքի Պաշարի Եւ Գիտութեան Շէնքը»<sup>227</sup>:

Առաջին անգամ 1986-ի Ապրիլ 8-ին Հոգաբարձութեան սեղան պիտի գար այն լուրը, թէ Malcolm Campbell (Ս. Յակոբ վարժարանի ներկայ շէնքը) դպրոցը հաւանաբար ծախուի, եւ թէ պէտք է գայն գնելու մասին մտածել<sup>228</sup>: Ապա պիտի յայտնուէր, թէ դպրոցը չի կրնար ծախուիլ՝ կառավարութեան պարտք ունենալուն պատճառով:

Այնուհանդերձ Հոգաբարձութիւնը պիտի հետաքրքրուէր դպրոցի շէնքով եւ որոշէր ժամ մը առաջ այցելել, քննել ու տեղեկագիր մը պատրաստել անոր մասին: Եւ յետ տեսակցութիւններու եւ խօսակցութիւններու, դպրոցի պատասխանատուններուն հետ բանակցութեան պիտի սկսէր եւ գայն վարձելու առաջարկով ներկայանար:

Այդ առիթով Հովիւր՝ Արմէն քահանայ գրած է. «Ունէինք զօրաւոր մրցորդներ, որոնց հակազդելու համար, ոչինչ խնայուեցաւ, նոյնիսկ յատուկ տեսակցութիւններով, նախարարական

աստիճանի միջնորդութիւնն ապահովուեցաւ: Հոս պարտինք մեր յարգանքն ու շնորհակալութիւնը յայտնել նահանգային Ընկերային Գործոց նախարար եւ հայութեան անկեղծ բարեկամ Թերէզ Լավուա-Ռուին, որ իր հանգամանքին համապատասխան լրջութեամբ ու կշիռով, մեզի ի նպաստ միջամտեց առ որ անկ էր:

Համաձայնագրի ուսուսումնասիրութեանէն ետք, Հովիւն ու Հոգաբարձութիւնը միաձայնութեամբ վաւերացուցին այդ՝ 11 Փետրուար 1987-ին ժողովին:

Իսկ Protestant School Board of Greater Montreal-ի ներկայացուցիչը՝ Սերժ Թէրու 23 Փետրուարին կու գար իմացնել, թէ իրենք եւս ստորագրած են համաձայնագիրը եւ յղած Կրթական նախարար Գլոտ Ռայընի, անոր վերջնական վաւերացման»<sup>229</sup>:

Եւ նախարարը յիշեալ School Board-ի ատենապետին՝ էլլըն Պաթլըրին յղած իր 11 Մայիս 1987 թուակիր նամակով կ'արտօնէր դպրոցին շէնքը վարձու տալու քայլը՝ 5 տարիներու պայմանաժամով<sup>230</sup>:

1 Յունիս 1987-էն սկսեալ Ս. Յակոբի համայնքը վարձակալը կը դառնար նախկին Malcolm Campbell-ին մէջ<sup>231</sup>:

1987-1988 տարեշրջանին Ս. Յակոբի Ամէնօրեան եւ Շաբաթօրեան այնտեղ կը փոխադրուին:

Պայմանագրութեան ժամկէտը լրանալու վրայ էր եւ Հոգաբարձութիւնը որ 1992-ին վերանորոգած էր իր վարձակալութիւնը՝ 1995-ի Մայիսին կը յառաջացնէր դպրոցի շէնքին գնման կարելիութիւնները սերտող եւ բանակցող զոյգ յանձնախումբեր: Սակայն 10 Հոկտեմբեր 1996-ի իր ժողովին կը տեղեկանար, թէ դպրոցի շէնքի գնման համար 7-8 միլիոն տոլար կը պահանջուէր<sup>232</sup>: Ուստի կ'որոշէր հետապնդել՝ զայն դարձեալ վարձելու հնարաւորութիւնը: Եւ երբ դիմում կը կատարէր PSBGM-ին, կը տեղեկանար՝ թէ անիկա պիտի դադրէր գոյութիւն ունենալէ, եւ իբր հետեւանք դպրոցական յանձնաժողովներու (School Boards) վերագոյնացման (restructuring), պիտի վերածուէր The English Montreal School Board-ի:

8 Յունիս 1998-ի իր նիստին Հոգաբարձութիւնը կը տեղեկանար, թէ Քէպեզի Կրթական նախարարուհի՝ Փոլին Մարուա



յայտարարած է, որ PSBGM-ի չգործածած դպրոցական շէնքերը պիտի փոխանցուին Ֆրանսական Commission Scolaire de Montréal-ին: Այն շէնքերուն մէջ կ'իյնար նաեւ Ս. Յակոբի գործածածը<sup>233</sup>:

Արդէն երրորդ հանգրուանի վարձակալութեան աւարտը կը մօտենար, ուստի Հոգաբարձութիւնը վերստին վարձելու մասին կը մտածէր: Սակայն պայմաններու բերումով պիտի հարկադրուէր շէնքը գնելու ելլել: Շատ մեծ էր մարտահրաւէրը, բայց կը ստանձնուէր:

Արդ, միամեայ բանակցութիւններէ ետք, որուն պիտի օժանդակէր նաեւ Մոնթրէալի Հայ Դատը, 1 Մարտ 2002-ին, սկզբունքային համաձայնութիւն կը գոյանար Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ Commission Scolaire de Montréal-ի միջեւ՝ շէնքը գնելու առնչութեամբ<sup>234</sup>:

18 Մարտ 2002-ին Հորիզոնով հրապարակուած Հաղորդագրութիւնը կը բացատրէր.-

Շէնքի վարձքի պայմանագիրը կ'աւարտի 30 Յունիս 2002-ին:

Վերջին տարիներուն, հանրային վարժարաններուն մէջ աշակերտներու թիւի աճը ստեղծած էր տեղի պակաս, որուն հետեւանքով CSDM-ը կտրուկ կերպով մերժած էր վարձքի պայմանագիրը նորոգել եւ պահանջած՝ մինչեւ յառաջիկայ Յուլիս ամիսը՝ շէնքը պարպել եւ իր տրամադրութեան տակ դնել: Դժուար կացութեան առջեւ կը գտնուէինք: Հարկ էր ժամանակաւոր լուծումներէն անդին անցնիլ եւ այս կարեւոր կրթական հաստատութեան ապագան հաստատուն հիմերու վրայ դնել, առաջին հերթին տիրանալով եկեղեցւոյ եւ Հայ կեդրոնին յարակից այս համալիրին:

Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ ՀՅԴ Միհրան Փափազեան Կոմիտէի Հայ Դատի Յանձնախումբին համադրեալ ճիգերով, եւ այս ծրագրի իրականացման համար կազմուած յատուկ յանձնախումբի տեղագրին աշխատանքով, հարցը հասանահանգային կառավարութեան բարձրագոյն մակարդակներուն, որոնք նպաստաւոր միջամտութիւն կատարեցին, որ

CSDM-ի պատասխանատուները ետ կենան շէնքը առնելու իրենց ձգտումներէն եւ երկուստեք ընդունելի լուծում որոնուի: Պարզուեցաւ, որ շէնքի վաճառքը լաւագոյն լուծումը կը հայթայթէ կողմերուն՝ մէկ անգամ ընդմիջտ մեր վարժարանը կախեալ գրութենէն դուրս բերելով, եւ միւս կողմէն CSDM-ին նիւթական միջոցներ ապահովելով, որպէսզի ընդարձակէ իր շէնքերը եւ իր հերթին գոհացում տայ թաղաշրջանի հանրային կրթութենէ օգտուող աշակերտներուն:

Հիմա որ շէնքի գնման սկզբունքային համաձայնութիւն կայացաւ, կը սպասենք Քէյպեզի Կրթական նախարարութեան վաւերացման, որպէսզի գնման գործընթացը ամբողջացուի: Կը նախատեսենք, որ այս մէկը աւարտի յառաջիկայ Յունիս ամսուն<sup>235</sup>:

19 Յունիս 2002-ին, Մոնթրէալի Evangéline Երկրորդական վարժարանին մէջ պաշտօնական հանդիպում մը եւ մամլոյ ասուլիս մը տեղի կ'ունենայ, եւ կը տեղեկացուէի, թէ «վարժարանի շէնքին սեփականացման գործընթացը իր լրումին կը հասնի շուտով»<sup>236</sup>:

14 Սեպտեմբեր 2002-ին Հայ Կեդրոնի ՀՄԸՄ-Կաւֆ մարզադահլը «վերածուած էր գեղեցիկ, զարդարուած մեղուափեթակի»: Այնտեղ հաւաքուած էր շուրջ 600 հոգիներ հաշուող «դպրոցահաւատ զանգուած» մը համայնքէն: Ընդհանուր յանձնառութեան մէջ հանգանակուած էր \$2,717,000, որուն \$1,000,000-ը Բաստրմաճեան Հիմնադրամէն էր, իսկ \$250,000-ը վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Հիմնադրամէն: Այդ առիթով Հոգաբարձութեան ատենապետը՝ բժ. Մկրտիչ Տարագճեան յայտնեց. «...հանգանակութեան բացումը ըրաւ Ազգային բարերար պրն. Յակոբ Բաստրմաճեան, Բաստրմաճեան Ֆոնտէն ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՏՈՒԱՐ նուիրատուութեան խոստումով: Ան ուզած էր չափել վարժարանին հանդէպ մեր ունեցած հոգածութիւնը եւ պայման դրած էր, որ մենք նոյնքան գումար գոյացնենք հանգանակութեամբ: Յուրախութիւն մեր բարերարին եւ ի հպարտութիւն բոլորիս, այս երեկոյ կը յայտարարենք, որ մենք աւելիով իրականացուցած ենք այդ պայմանը:

Պարոն Յակոբ՝ համայնքիս հիմնադիր Բաստրմաճեան եղ-

բայրներուն վերջինն է: Մենք ուրախութիւնը ունինք զինք մեր մէջ ունենալու այս գիշեր: Այստեղ կ'ուզեմ յայտարարել, որ Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը առ ի գնահատանք պրն. Բաստրմաճեանի իշխանավայել արարքին եւ ի յարգանս իր հանգուցեալ եղբայրներուն՝ Հրանդի եւ Երուանդի, վարժարանիս բարձրագոյն բաժինը անուանակոչեց Բաստրմաճեան Երկրորդական»<sup>237</sup>:

## ԻԱ. Դրուագ

1 Յունուար 2002-էն սկսեալ Գանատան կը դառնայ անկախ թեմ:

Գանատայի իւրայատուկ պայմաններուն եւ հայ համայնքներու աճումի եւ կազմակերպչական եռանդուն յառաջընթացին պատճառով, Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի թեմին Ազգային Երեսփոխանական ժողովներու օրակարգերուն վրայ միշտ ալ եղած էր 1983-էն սկսեալ՝ Գանատան թեմական ուրոյն համակարգով մը օժտելու հարցը<sup>238</sup>:

Խաժակ ծ. վրդ. Յակոբեան 1996-ին Մոնթրէալ կը հասնէր եւ կը ստանձնէր Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ Հոգեւոր Տեսուչի պաշտօնը: 1997-ին «Առաջնորդական Փոխանորդ» տիտղոսը պիտի տրուէր իրեն, եւ եպիսկոպոսութեան աստիճանին բարձրացուէր:

1998-ին գումարուած Ազգային Երեսփոխանական ժողովը Գանատայի շրջանը կը ճանչնար իբր Առաջնորդական Փոխանորդութիւն<sup>239</sup>, որուն առաջին ներկայացուցչական ժողովը տեղի պիտի ունենար 1999-ին, Մոնթրէալ<sup>240</sup>:

Առաջնորդական Փոխանորդութիւնը ներկայացուցչական իր երկրորդ ժողովին, որ 2001-ին գումարուեցաւ դարձեալ Մոնթրէալի մէջ, միաձայնութեամբ որոշեց թեմական անկախ կարգավիճակ ստեղծել Գանատայի համար<sup>241</sup>:

Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի Երեսփոխանական

Ժողովը պիտի ընդունէր միաձայնութիւնը եւ զայն փոխանցէր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան: Ազգային Կեդրոնական Վարչութիւնը ներկայացուած հիմնաւորումներուն լոյսին տակ եւ նկատի ունենալով Գանատայի Կիլիկեան հօտին կամքը՝ իր կարգին կ'ընդառաջէր թեմական անկախ կարգավիճակ ունենալու Գանատայի առաջարկին: Արամ կաթողիկոս կը վաւերացնէր Ազգային Կեդրոնական Վարչութեան որոշումը եւ 1 Յունուար 2002-էն սկսեալ Գանատան կը հռչակէր իբր թեմական անկախ համակարգ<sup>242</sup>, իսկ Առաջնորդական Փոխանորդ սրբազանին կու տար «Կաթողիկոսական Փոխանորդ» տիտղոսը<sup>243</sup>:

Թեմական այս անկախացումը, ինչպէս հասկնալի է, ներքին վերադասաւորում մըն էր, այսինքն 1958-էն գործօն Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի մի թեմը՝ տեղական եւ գործնական մտահոգութիւններով վարչականօրէն երկուքի կը վերածուէր:

29 Յունիս 2002-ին Գանատայի Երեսփոխանական Ժողովը կ'ընտրէր իր առաջին Առաջնորդը՝ յանձին Խաթակ եպս. Յակոբեանի, որուն Հայրապետական վաւերացումը սակայն՝ 2004-ի Յունուարին պիտի ըլլար<sup>244</sup>: Ապա վեհափառ Հայրապետը արժուութեան պատիւ կը շնորհէր Խաթակ եպիսկոպոսին:

Առաջնորդի պաշտօնին վաւերացումէն ետք, Ս. Յակոբ Մայր եկեղեցին 12 Մարտ 2004-էն սկսեալ՝ «Առաջնորդանիստ» պիտի հռչակուէր<sup>245</sup>:

Ս. Յակոբի համալիրին կից՝ 27 Յունիս 2004-ին կը կատարուի Առաջնորդարանին յատկացուած հողաչերտին օրհնութիւնը: Եւ արագօրէն կը բարձրանայ Ազգային Առաջնորդարանի շէնքը:

31 Յունուար 2005-ին Ղեկնդեանց Քահանայից տօնի նախօրեակին, երբ թեմը կը հիւրընկալէր Հիւսիսային Ամերիկայի Կիլիկեան թեմերու Առաջնորդներն ու հոգեւորականները, կը կատարուի նորակառոյց շէնքին Օրհնութեան արարողութիւնը:

## ԻԲ. Դրուագ

*Դոկտ. Այտա Պուլչիքանեանի «L'insertion résidentielle et économique des Arméniens de Montréal» թեզը<sup>246</sup>, Մոնթրէալի Հայուլթեան վերաբերող երկրորդ կարեւոր ուսումնասիրութիւնն է:*

*Անտիպ է տակաւին եւ իբր դոկտորական աշխատութիւն ներկայացուած է 2003-ին, Université de Montréal-ի մէջ:*

*Թեզը գլխաւորաբար կը վերաբերի Մոնթրէալի Հայուլթեան բնակչական յեռումին եւ տնտեսական պայմաններու զարգացման. կամ աւելի պարզ բացատրութեամբ մը՝ անով ուսումնասիրուած է, թէ այս քաղաքը եկած Հայերը ո՞ր բնակած են եւ ինչո՞ւ, ինչպէ՞ս է որ կազմուած են Հայկական թաղամասերը, բնակավայրերը ո՞ր ուղղութիւններով զարգացած են եւ ինչո՞ւ, եւ ի՞նչ է այժմեան վիճակը: Նաեւ՝ այս քաղաքի Հայուլթեան տնտեսական պայմաններուն զարգացումը:*

*Ուսումնասիրութիւնը ունի եօթ գլուխներ, որոնք Հետեւեալներն են.*

I.- Les objectifs de la recherche : Les problématiques initiales et leur évolution.

II.- Concepts, théories et approches de recherche.

III.- Objectifs, modèle conceptuel et hypothèses de recherche.

IV.- Approche méthodologique et stratégie de recherche.

V.- Portrait sommaire de la population arménienne montréalaise.

VI.- La formation de l'espace résidentiel arménien.

VII.- Emplois et créations d'entreprises: l'insertion économique multidimensionnelle des arméniens montréalais.

*22 Յունիս 2005-ին դոկտ. Պուլչիքանեան Մոնթրէալի Հայ կեդրոն հրատիրուած էր դասախօսելու իր թեզին մասին: Յաւարտ դասախօսութեան, իր եզրակացութիւնը այսպէս բանաձեւեց, թէ Հայկական թաղամասի մը կազմութիւնը երեք պայմաններ կը պահանջէ, թէ*

*ա.- Կալուածային*

բ.- Ընկերային, եւ

գ.- Համայնքային կառույցներ նոյն վայրին մէջ միաժամանակ պէտք է գոյութիւն ունենան:

Եւ թէ՛

անոնք անջատաբար չեն կրնար պատճառ ըլլալ հայկական թաղամասի մը կազմութեան: Եթէ նշեալ պայմաններէն որեւէ մէկը չըլլայ, ապա անկարելի է հայկական թաղամաս մը ունենալ<sup>247</sup>:

## ԻԳ. Դրուագ

Գանատայի Ծերակոյտն ու Խորհրդարանը յաջորդաբար 2002-ին եւ 2004-ին Հայոց Յեղասպանութիւնը կը ճանչնան<sup>248</sup>: Որմէ ետք կարեւորագոյն աքթ մը կ'ըլլայ 21 Ապրիլ 2006-ին Գանատայի Կառավարութեան վարչապետ՝ Սթրիվըն Հարփըրի յայտարարութիւնը, որ կը ճանչնար Հայոց Յեղասպանութիւնը:

Արդարեւ, Գանատայի Հայ Դատի Յանձնախումբերուն հետեւողական աշխատանքը այդպէս կրնար վարձատրուիլ: Այստեղ Հայ Դատի իրագործումներուն պատմականին ամփոփումը չէ, որ պիտի տրուի, այլ ակնարկ մը Մոնթրէալի Յեղասպանութեան Յուշարձանի կանգնումին մասին: Քանի որ անիկա յատկապէս Ս. Յակոբի անդամներուն յանձնառութեամբ եւ զոհողութեամբ բարձրացաւ, եւ կ'ամփոփէ Հայ Դատի գործունէութեան բուն ոգին:

Հայ Դատի Մոնթրէալի Յանձնախումբը 1994-ին Մոնթրէալի քաղաքապետ Ժան Տօրէի վարչակազմին հետ խօսակցութիւններ ունեցած էր՝ Հայոց Յեղասպանութեան յուշարձանի մը կանգնումին համար: Քաղաքապետական ընտրութիւններուն Ժան Տօրէի կուսակցութիւնը կորսնցնէր, եւ քաղաքապետ կը դառնար Փիեռ Պուրբ: Հայ Դատի Յանձնախումբը նոր քաղաքապետին մօտ կը հետապնդէր իր նպատակը եւ 22 Ապրիլ 1995-ին Մոնթրէալի Գարթիէվիլ հայաշատ շրջանին մէջ գտնուող Մարսէլին Ուիլսըն զբօսայգիին մէջ տեղի կ'ունենար յուշարձանին հիմնարկէքի

*արարողութիւնը: Հարկ պիտի ըլլար մեծ ճիգ տանիլ՝ որպէսզի յուշարձանը իրականութիւն դառնար 4 Հոկտեմբեր 1998-ին<sup>249</sup>: Այս ճիգին մէջ կարեւոր դեր պիտի ունենար օրդ. Նուշիկ Էլոյեան, որ նախագահն էր քաղաքապետարանի Գործադիր Մարմինին: Իշարս այլոց, ինք եւս խօսք պիտի առնէր եւ ըսէր.*

«...nous célébrons la victoire de la conscience collective sur l'inhumanité de l'être humain envers son prochain.

...Montréal, ville ouverte et chaleureuse, accueille dans son sein des survivants du génocide arménien et leurs descendants et des victimes de persécution, d'intolérance et de tragédies de partout ailleurs.

La société montréalaise, une vraie mosaïque humaine, porte en elle les valeurs fondamentales et universelles pour bâtir un monde meilleur, plus humain et plus juste.

Nous sommes conscients que nous devons être d'une extrême vigilance, puisque de tels événements sont toujours susceptibles de se reproduire quelque part ailleurs dans le monde, et que nul n'est à l'abri d'une telle menace. On ne règle donc rien à essayer de faire disparaître des pages de l'histoire, aussi sombres sont-elles. On n'a pas le droit d'oublier les horeurs, les massacres, les souffrances, les exodes et les déracinements. Car cette mémoire est essentielle. Elle se peut paver la voie à la réconciliation et à l'harmonie, des valeurs qui sont chères à tous le Montréalais.

C'est ainsi que le 27 octobre 1997, le Conseil municipal de Montréal, une fois de plus et à l'unanimité, en saisissant l'occasion du 83<sup>e</sup> anniversaire du génocide arménien, entérinait le projet proposé par le Comité National Arménien, projet d'implantation d'une oeuvre d'art à la mémoire des victimes des génocides...»<sup>250</sup>:

*Յուշարձանը կը կրէ «Հատուցում» անունը եւ նուիրուած է 20-րդ դարու բոլոր ցեղասպանութիւններուն<sup>251</sup>: Այդ վկայարանին բացման առիթով, Մոնթրէալի Հայ Դատի ատենապետը՝ Ռուբէն Գոլյումճեան իր կարգին յուշարձանին իրականացումը կը ներկայացնէր որպէս «une victoire très explicite des droits de l'homme»<sup>252</sup>:*

## ԻԴ. Դրուագ

Արամ Ա. Կաթողիկոս կը շնորհէ Հովուապետական իր երրորդ այցելութիւնը: Վեհափառը Մոնթրէալ կու գայ 22 Սեպտեմբեր 2005-ին: Եւ կը շեշտէ հայ ժողովուրդի միասնականութեան կարեւորութիւնը, ըսելով. «Մեր ժողովուրդին համար հիմնական առաջնահերթութիւն է համագործակցութիւնը: Ինչպէս ամէն տեղ, այստեղ եւս, մեր ժողովուրդի բոլոր զաւակները պէտք է քով-քովի գալով, համագործակցութեամբ ապրին իրենց կեանքը»<sup>253</sup>:

## ԻԵ. Դրուագ

2005-ին կը հրատարակուի դոկտ. Իզապէլ Գաբրիէլեան-Չըրչիլի կոթողական գործը. «Like our Mountains. A History of Armenians in Canada»<sup>254</sup>:

Հեղինակին իսկ բացատրութեամբ՝ պատմագիրքը է «a piece of the great puzzle of the Armenian dispersion and diaspora»:

Ուսումնասիրութեան նպատակը եղած է ցոյց տալ, թէ ինչպէ՞ս կամ ի՞նչ պայմաններու մէջ հայեր Գանատա եկած եւ հաստատուած են, ի՞նչ տեսակի աշխարհ մը վերակերտած այս նոր երկրին մէջ, ինչպէ՞ս համարկուած գանատական ընկերութեան, եւ ի՞նչ տարողութեամբ կարողացած իրենց ազգային-մշակութային ինքնութիւնը պահպանել հարիւր տարիներու վրայ: Գիրքը կ'ընդգրկէ Գանատայի հայութեան առաւել քան հարիւրամեայ կեանքը՝ 1880-1988:

Դոկտ. Գաբրիէլեան-Չըրչիլ գրած է, թէ հայերը Գանատա գալով՝ ո՛չ թէ միայն սփիւռքեան նոր վայր մը ստեղծած են, այլ նաեւ յառաջացուցած եռանդուն գաղութ մը, որ նպաստած է գանատական ընկերութեան՝ մասնակցելով անոր տարբեր ասպա-



*ընդհանրու գարգացման:*

« Like our Mountains » *ուսումնասիրութեան գլուխներն են.*

I.- The Old World.

II.- Armenian Pioneers in Canada.

III.- Genocide, Survival, and the Response of Canadians.

IV.- Refugee Entry into Canada, Rehabilitation, and Reparations.

V.- Reconstructing New Worlds.

VI.- Old Foundations, New Communities.

*Պատմագիրքը շահեկան տեղեկութիւններ ունի Մոնթրէալի մասին:*

*Դոկտ. Գաբրիէլեան-Չըրչիլ իր եզրակացութիւն-վերջաբանը ակարտած է Պարոյր Սեւակէն ներշնչուած այս խօսքերով.*

If the diaspora is an entity unto itself, an entity with its own traditions, character, and history, then Armenians may wish to perpetuate that entity — their identity — and offer their creativity to the new world of their world. Like their mountains, Armenians are a peaceful people. When they were many and when they were strong, even then they did not destroy any nation. Over no people have they held the tyrant's whip. If they ruled, it was only with their literature. And if they prevailed, it was only with their genius. Yes, Armenians are few. But wherever they have settled, they have been builders. Wherever Armenians have called home, they have contributed to the sciences and philosophy, fashioned art and architecture, and created music and poetry<sup>255</sup>:

## ԻԶ. Դրուագ

*Ս. Յակոբ վարժարանի սանուհիներէն է Լալէ Մանճրիկեան, որուն մագիստրոսական թեզը՝ «Collective Memory and Home in the Diaspora: The Armenian Community in Montreal»՝ 2008-ին հրատարակուեցաւ<sup>256</sup>:*

*Ուսումնասիրութիւնը աշխատանք է հասկնալու Մոնթրէ-*

ալի հայուլթեան համայնքային կեդրոնները վարող ազգային եւ ընկերային գաղափարները: Հեղինակը այդ կեդրոնները ներկայացուցած է իբր «երկարաձգուած տուններ» (extended homes): Ան ուրուագծած է Մոնթրէալի վայրի հաշտեցման ճիգը՝ սփիւռքեան այլ վայրերու եւ Հայաստանի հետ: Նաեւ քննած է, թէ այդ «միջանկեալ միջոցներ»ը (mediated spaces) կամ «սփիւռքեան տուններ»ը (diasporic dwellings) ինչպէ՞ս կը ձեւաւորեն հաւաքական յիշողութիւնը:

Գիրքը այս գլուխները ունի.

I.- Home.

II.- Migration Roots.

III.- Community.

IV.- Extended Homes.

V.- Collective Memory.

Հայ կեդրոնները տակաւին որքա՞ն պիտի մնան իբր տուններ եւ հաւաքական յիշողութիւնը վերստեղծեն, վերապահպանեն եւ համայնքի անդամներուն մէջ բաշխեն: Ամէն ինչ կախում ունի անոնց ընթացքէն: Լալէ Մանճիկեան գրած է. «Rather than remaining fixed in post-genocidal mentality of victimhood and overprotection of identity, the centres should re-examine their raison d'être and continue to extend themselves to other local communities, as the struggle for recognition of the Armenian Genocide is pursued. While preserving Armenian identity is important, I contend that Armenian community centres in Montréal should no longer be viewed simply as a space representing a distant homeland in the diaspora. Instead of being considered as extensions of a real or imagined homeland, it would be useful to view the centres as extending themselves more actively to the local society, beyond the sporadic cultural exchanges and political activities, especially in terms of the recognition of the Armenian Genocide»<sup>257</sup>:

## ԻԷ. Դրուագ

*Ս. Յակոբ եկեղեցւոյ փոքրիկներու «Նոր Ծաղիկ» երգչախումբը կը ստեղծուի 2006-ի Սեպտեմբերին<sup>258</sup>: Ան Հայ հոգեւոր երաժշտութեան քովն ի վեր՝ նաեւ այլ երգեր կը սորվի: «Նոր Ծաղիկ»ի ելոյթները համայնքի յարատեւ վերածաղկումին խորհրդանշան են:*

*Փոքրիկներու այս երգչախումբը 50-ամեակի սեմին յոյսով եւ խանդավառութեամբ երգեց.*

Մեր դէմ կեանքի պայծառ առաւօտ,

Սրտերը մեր ազատ, արեւոտ,

Եռանդը մեր գետի պէս վարար,

Մենք միշտ կերտող, մենք միշտ շինարար:

# Բ. ԳԼՈՒԽ

## Ս. ՅԱԿՈԲԻ

### ՀԱՅԵՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՕՃԱԽՆԵՐԸ

*«Լաւ կազմակերպուած բարերարութիւնը  
քու անձէդ կը սկսի»,  
Ֆրանսական առած:*

1

## ՀԱՔԱԹՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԸ

### Ա. ԴՐՈՒԱԳ

*Քէպեգի մէջ առաջին հայ դպրոցը ստեղծուած է Մոնթրէ-  
ալի Հայուհեաց Բարենպատակ Միութեան կողմէ<sup>1</sup>:*

*Այս միութիւնը հիմնուած էր 1930-ին կամ 1931-ին<sup>2</sup>:  
Նպատակն էր մատղաշ սերունդի հայեցի դաստիարակութեան  
նպաստել, հասնիլ հայ կարօտեալներուն, եւ քաղաքի բոլոր մը  
հայութեան ազգային ոգին վառ պահել<sup>3</sup>:*

*Մոնթրէալի Հայուհեաց Բարենպատակ Միութեան դպրո-  
ցը, որուն սկզբնաւորման թուականը յայտնի չէ (գուցէ միու-  
թեան հիմնումի թուականին իսկ տեղի ունեցած ըլլայ) տունե-  
րու մէջ է եղած: Դասաւանդութիւնները, որոնք հայերէն լեզու,  
հաւանաբար քիչ մը հայոց պատմութիւն եւ գուցէ կրօնք սոր-  
վեցուցած են, ամէն Շաբաթ օր կատարուած են: Երկժամեայ  
դաս տրուած է Չորեքշաբթի օրերը, հաւանաբար երեկոններուն:  
Աշակերտութեան թիւը հազիւ թէ տասնեակը անցած է<sup>4</sup>:*

Դպրոցը 40-ականներու երկրորդ կէսին դադրած էր գործելէ՝ աշակերտներու մեծնալուն, դէպի Միացեալ Նահանգներ ընտանիքներու գաղթին եւ աշակերտական տարիքի սերունդ չըլլալուն պատճառով<sup>5</sup>։

1955-ին, երբ Մոնթրէալի համայնքը սկսած էր աճիլ եւ փոքրիկներու թիւը բազմանալ, դարձեալ կարիքը զգացուած էր հայ դպրոցի։

1956 Հոկտեմբեր 1-ին, վաստակաւոր ուսուցիչ՝ Սեդրակ Բարաղամեանի անձնական ջանքերով, եւ քաջալերութեամբ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ Մխական Խորհուրդի անդամներուն՝ Երուանդ Բաստրմաճեանի, Քերոբ Պտուկեանի, Խաչիկ Շիրոյեանի, Մկրտիչ Մկրեանի եւ Նուպար Սուքիասեանի՝ հիմը կը դնէր Մոնթրէալի երկրորդ հայ դպրոցին<sup>6</sup>։

Դասաւանդութիւնները տեղի կ'ունենային Շաբաթ եւ Կիրակի օրերը Avenue du Parc-ի վրայ գտնուող եռայարկ շէնքի մը (թիւ 5960) վարձուած ներքնայարկին մէջ։ Վայրը նաեւ կը գործածուէր իբրեւ հաւաքատեղի, եւ երբեմն ալ՝ աղօթաժողովներու կը ծառայէր։ «Պիւլպիւլին շէնքը» կ'անուանուէր եռայարկը<sup>7</sup>։

Ս. Յակոբի Սէնթ Զօթիքեան շէնքը նոր էր գնուած, եւ անմիջապէս՝ այն օրերու Հոգաբարձութիւնը, որ Գործադիր Մարմին կը կոչուէր, եւ որուն անդամ դարձած էին Եր. Բաստրմաճեան եւ Ք. Պտուկեան, կրթական իր յանձնառութեան կը լծուէր։

Գործադիր Մարմինը կ'որոշէ քայլեր առնել սեփական դպրոց ունենալու համար։ Կը դիմէ Սեդրակ Բարաղամեանի եւ զայն ժողովի կը հրահրէ 2 Սեպտեմբեր 1959-ին<sup>8</sup>։ Բարաղամեանի կ'առաջարկուի դպրոցին ուսուցչապետութիւնը, եւ ան կ'ընդունի։ Սկզբնական ծրագիրն էր 3 ժամեր տրամադրել Շաբաթ օրերը, եւ ժամ մը՝ Կիրակի օրերը<sup>9</sup>։

Սեդրակ Բարաղամեանի կը թելադրուի Գործադիր Մարմինին անունով շրջաբերական պատրաստել եւ արձանագրութիւններն ու դպրոցին բացումը ծանուցանել։

Ահաւաստիկ հատուած մը շրջաբերականէն.–

Սիրելի ծնողներ եւ յարգելի հայրենակիցներ,

Մոնթրէալի Անդրանիկ Հայաստանեայց Առաքելական

Եկեղեցւոյ Գործադիր Մարմինը կու գայ Հաղորդելու Համայնքիս մեր բոլոր եղբայրներուն եւ քոյրերուն՝ թէ ներկայ դպրոցական տարեշրջանէն սկսեալ՝ որոշեց բանալ իր սեփական Հայ Դպրոցը, ուր մեր զաւակները պիտի ստանան տոհմիկ դաստիարակութիւն, սորվելով մեր հայրենի լեզուն, կրօնն ու ազգային պատմութիւնը, երգն ու պարը<sup>10</sup>:

19 Սեպտեմբերին Հայ դպրոցը կը սկսի 29 աշակերտներով<sup>11</sup>: Աշակերտութեան թիւը շուտով պիտի բարձրանար 38-ի<sup>12</sup>: Անոնց տարիքը 6-14 էր<sup>13</sup>: Յաջորդող տարիներուն աշակերտութեան թիւը պիտի բարձրանար, մինչեւ 1973-74 տարեշրջանին հասնէր 330-ի<sup>14</sup>. Իսկ ներկայիս թիւը վերագարձած է գրեթէ նախնագոյնին...

Դպրոցը կ'ունենայ երկու բաժին. Մանկապարտէզ եւ Նախակրթարան:

Սկիզբի ամիսներուն, հակառակ եկեղեցւոյ եւ ներքնասրահի նորոգութեան աշխատանքներու արգելքներուն, դասաւանդութիւնները կը կատարուին: Նախ կ'օգտագործուի եկեղեցին, ապա՝ Դեկտեմբեր ամիսէն սկսեալ՝ եկեղեցւոյ գրասենեակին ու վերնատունը եւ ներքնասրահը: Մանկապարտէզին համար ներքնասրահը որպէս դասարան կը ծառայէ, իսկ նախակրթարանին համար՝ եկեղեցւոյ գրասենեակը, որ նոյն ատեն բանկալն էր, եւ վերնատունը<sup>15</sup>:

Կիրակի օրերը՝ ժամը 10.00-11.00 մէկ առարկայ կը դասաւանդուի, որ կրօնագիտութիւն կ'ըլլայ: Դասապահները յատկացուած են Նոր Ուխտի պատմութեան: Ապա աշակերտները եկեղեցի գացած են եւ ժամերգութեան մասնակցած<sup>16</sup>:

Դպրոցին մէջ կիրարկուած կրթական մեթոտին եւ նպատակին մասին Բարաղամեան գրած է. «Գիտակ գործին դժուարութեան, հայ ուսուցիչը խճողեալ ծրագիր չի հետապնդեր.-( Աշակերտը) հայերէնը պէտք է կարդայ եւ գրէ սահուն կերպով. պէտք է խօսի, պատմէ, բառամթերքը շատցնէ եւ հայախօսութիւնը իր մէջ սովորութիւն դարձնէ»<sup>17</sup>:

1961-1962 տարեշրջանի Յունիսին Շաբաթօրեան ունեցաւ իր առաջին շրջանաւարտները՝ թիւով 10<sup>18</sup>: Հանդէսին նախագա-

հը՝ Եր. Բաստրմաճեան «գեղեցիկ եւ գործնական խրատականով մը» շեշտած է, թէ հրաժեշտի պահը՝ բաժանում մը է, այլ հանգրուան մը, եւ թէ շրջանաւարտները իրենց պարտքը պիտի համարեն օգտակար ըլլալ Ս. Յակոբ եկեղեցւոյ կազմակերպութեան: Ան քաջալերած է, որ անոնք իրենց կեանքի ընթացքին ստորադաս չզգան իրենք գիրենք, «քանի որ հայը օժտուած է առաւելութիւններով, եւ ոչ մէկ ազգէ ետ չի մնար»<sup>19</sup>:

1962–63 տարեշրջանի սկզբնաւորութեան, ինչպէս եկեղեցին՝ նաեւ Հայ դպրոցին համար տրամադրուած սենեակները եւ սրահը արդէն նեղ կու գային<sup>20</sup>:

Տեղի անբաւարարութեան պատճառով, դասաւանդութիւնները երկու մասի կը բաժնուին. առաւօտեան ժամը 10.30–12.30 փոքրերուն համար՝ այսինքն մինչեւ Գ. Կարգի դասարանները, իսկ կէսօրէ ետք ժամը 14.30–17.00՝ Գ., Դ. եւ Ե. կարգերուն համար<sup>21</sup>:

Կրօնական դաստիարակութեան գրեթէ նօսը վիճակը՝ պատճառ կ'ըլլար յօդուածի մը, որ լոյս տեսած է Լրաքաղին մէջ:

«Թելադրութիւններ» անունին տակ գրուած է. «Ձծափահարենք եւ չհպարտանանք երբ տօնակատարութիւն մը, պարահանդէս մը, հանդիսութիւն կամ ձեռնարկ մը հրապարակային կատարելով, գոհունակ սրտով փառաւորութիւնք ու բազմիւնք մեր աթոռներուն վրայ, պարծենալով թէ սա ինչ պարահանդէսը սքանչելի անցաւ, ժողովուրդը շատ գոհ մնաց, նուազը առաջնակարգ էր: Եւ այս տեսակ տակաւին զանազան գովասանական խօսքերով ունենանք խղճի եւ հոգիի հանդարտութիւն: Չի բաւեր միայն եկեղեցի յաճախելով, կամ ազգային մեր տուրքերը վճարելով եւ կամ այլ ձեւերու տակ մեր նիւթական աջակցութիւնը բերելով, փրկած ըլլալ կարծենք մեր նորահաս սերունդը այլասերման վտանգէն, որուն տխուր պատկերին գուցէ մենք իսկ ականատես գտնուինք:

...Այստեղ մեր նոր սերունդը ունի բազմաթիւ դիւրութիւններ ընդհանուր զարգացում ստանալու համար: Երկրորդական վարժարան ու մինչեւ իսկ համալսարան յաճախելով: Այդ մա-

սին չունինք ոչ մէկ առարկութիւն: Մեզ մտահոգող միակ խնդիրը այդ ընդհանուր ուսման կից այն է, թէ ի՞նչ կերպով կարող ենք կառուցանել բարոյական գիտակցութիւնը եւ կրօնական դաստիարակութիւնը անհատներուն մէջ»<sup>22</sup>: Յօդուածագիրը Շաբաթօրեայի կրթական ծրագրին մէջ կ'ուզէր տեսնել կիրարկումը կրօնական դաստիարակութեան:

1963-64 տարեշրջանին Կիրակնօրեայ դասաւանդութիւնը արդէն դադրած էր աշակերտութեան թիւի թեթեւութեան եւ յաճախումի անկանոնութեան պատճառով: Կրօնքի ուսուցման ծրագիրը Շաբաթ օրուան պիտի անցնէր: Համայնքը կ'ունենար իր առաջին լիաժամ հովիւր՝ յանձին Բաբգէն վրդ. Թօփճեանի: Եւ ինչպէս ցանկացուած էր տեսնել, հովիւրը կը ստանձնէր կրօնքի դասաւանդութիւնը<sup>23</sup>:

## Բ. Դրուագ

1964-ին Հոգաբարձութիւնը կ'ըսէ. «Ձեռք յաւակնիր, թէ ունինք կանոնաւոր հայ վարժարան, մեր տեղական դժուարութիւնները մեծ են եւ դժուար հարթելի, բայց այն ճիգը եւ նուիրումը որ կը ցուցաբերեն մեր կրթական մշակները, ծնողներն ու ժողովուրդը ընդհանրապէս, մեզ կը յուսադրեն, որ աստիճանաբար պիտի յաջողինք բարելաւել մեր կրթական կեանքի պայմանները ու հասնիլ աւելի գոհացուցիչ արդիւնքներու»<sup>24</sup>:

Միջին Արեւելքէն եւ յատկապէս Եգիպտոսէն արտագաղթողները Մոնթրէալի գաղութին թիւը շուրջ 5000-ի պիտի հասցնէին: Եւ հետեւաբար Շաբաթօրեայի աշակերտութեան թիւը պիտի կրկնապատկուէր:

Ուստի, 3 Սեպտեմբեր 1964-ին Հոգաբարձական ժողովի ընթացքին Տիգրան ա. քհնյ. Խոյեան կ'առաջարկէ դիմում կատարել տեղական դպրոցներու՝ Շաբաթ օրերը քանի մը դասարան կարենալ գործածելու համար: Խոյեան քահանայի առաջարկը կ'ընդունուի: Անմիջականօրէն յարմար կը դատուի դի-



մել մերձակայ Sinclair Laird դպրոցի պատասխանատուներուն<sup>25</sup>:  
Շնորհիւ քահանային ջանքերուն, կարելի կ'ըլլայ համաձայնու-  
թեան գալ, եւ 13 Նոյեմբերին Շաբաթօրեան կը սկսի Sinclair  
Laird-ի մէջ<sup>26</sup>:

Հոգաբարձութեան 1964-65-ի Տարեկան Տեղեկագրին մէջ  
գրուած է.-

Առանց վարանումի է, որ յանձնառու եղանք այս նոր գո-  
հողութեան, ստեղծելու համար աւելի լաւ պայմաններ, թէ՛  
աշակերտութեան եւ թէ՛ ուսուցչական կազմին համար: Վար-  
ձատրութիւնը եկաւ առանց յապաղումի. աշակերտութիւնը  
աւելցաւ շատ շուտով ու ներկայիս կը հասնի 150-ի:

Sinclair Laird վարժարանին հետ մեր պայմանագրութիւնը  
պիտի վերանորոգուի յառաջիկայ տարեշրջանին եւս, մինչեւ որ  
մեր սեփական շէնքը սկսի բարձրանալ<sup>27</sup>:

Եւ համայնքը 1964-65 տարեշրջանէն կ'երազէ դպրոցի իր  
սեփական շէնքը ունենալու մասին:

9 Յունուար 1965-ին Շաբաթօրեայի տնօրէնութիւնը կը  
վստահուի Վիքթորիա Յովսէփեանի: Պրն. Բարադամեան կը շա-  
րունակէ իր կրթական ծառայութիւնը բերել մինչեւ ամսվերջ<sup>28</sup>:

1965-66 տարեշրջանին համար Հոգաբարձութիւնը կարե-  
ւոր քայլ մը կ'առնէ եւ կ'որոշէ Շաբաթօրեայի բոլոր վարչական  
եւ մատակարարական գործերը յանձնել գատ մարմնի մը, գոր  
կը կոչէ «Վարժարանի Խնամակալութիւն»: 3 Օգոստոս 1964-ին  
իսկ այս մարմինը կազմուած էր: Շնորհիւ Վարժարանի Խնամա-  
կալութեան՝ տնօրէնուհին պիտի կարենար իր ամբողջ ժամանա-  
կը յատկացնել կրթական եւ ուսումնական գործին<sup>29</sup>:

Լրաքաղի Հոկտեմբեր-Նոյեմբեր 1965 թիւին մէջ Շաբաթ-  
օրեային վերաբերող հետաքրքրական յօդուած մը կայ, որուն  
բաբախուն, տեղեկատուական եւ յորդորական նկարագիրը իր  
տեղը կը պահանջէ այստեղ: Կը մէջբերեմ.-

«...կը մտնեմ շատ արգիական, շատ սիրուն գանատական  
Նախակրթարան մը, որ այս Շաբաթ առաւօտ, մոգական չես գի-  
տեր ինչ հրաշքով դարձեր է հայկական: Ինծի ծանօթ երգի  
հնչիւններ կը լսեմ ու սիրտս կը լեցուի արդէն գորովով հանդէպ

բոլոր այն մանուկներուն, որ տեսնեմ պիտի քիչ ետք:

Խոշոր ապակեպատէն կը նայիմ ներս: Մանուկներուն գոյնզգոյն վերարկուները խայտաբղէտ թուչնոցի մը կերպարանքը կու տան սրահին:

Ներս կը մտնեմ:

...Երգի պահն է:

Երիտասարդ ուսուցչուհի մը դաշնակի առջեւ կը նուագէ ու կ'երգէ, մինչ ուրիշ երկու ուսուցչուհիներ կը ջանան կարգի բերել նապաստակ դարձած այս ձագուկները, որ հազիւ կը թոթովեն ու անհասկնալի բառերով՝ ցատկուտուքի մէջ Հայ Բառը կը փառաբանեն:

Ո՞վ է աւելի երջանիկ. անո՞նք թէ ես:

Քանի՞ հատ են — կը դժուարանամ հաշուել — 20, 30, թէ աւելի՞:

— Այո, — կ'ըսէ տնօրէնուհին՝ տիկ. Յովսէփեան, որ հետեւեր էր զարմացական նայուածքիս. 165 հոգի են արդէն, ու մինչեւ տարեվերջ թիւը շատ աւելի պիտի բարձրանայ:

Միօրեայ դպրոց մը, որ ունի կանոնաւոր վարժարանի մը բոլոր պահանջներն ու անձնակազմը: Գանատական այդ վարժարանը, որ վարձած ենք միայն Շաբաթ օրերու համար...

Հոգիս յոյսով լեցուած է, սակայն կը վախնամ շատ լաւատես ըլլալէ: Այս բոլորը հիանալի միօրեայ վարժարանի մը համար, բայց Ամերիկայի հնոցին մէջ ասիկա կաթիլ մը ջուր է: Ինչ որ մեզի պէտք է, մնայուն մանկապարտէզ մըն է, սկսելու համար ու ապա նախակրթարան մը:

...Տունը, դպրոցն ու եկեղեցին պիտի քալեն ձեռք ձեռքի, շինելու համար ապագայ հայ մարդը, որ պիտի կարենայ դիմանալ ամէն յորձանքի, անոր պիտի տան հոգեկան այն պատուաստը, որ անխոցելի դարձնէ պիտի զայն, երբ նետուի կեանքի պայքարին մէջ»<sup>30</sup>:

1967-68 տարեշրջանին Շաբաթօրեան իր դասաւանդութեանց երեք ժամերը կը վերածէ չորսի, նաեւ կ'ունենայ իր 6-րդ կարգը<sup>31</sup>:

Տնօրէնուհին իր Տեղեկագրին մէջ կ'ըսէ. «Այսօր Ս. Յակոբ

Շաբաթօրեայ վարժարանի կազմութեան իններորդ տարին կը լրանայ: Սկիզբի շրջանին, դժուարին պայմաններու մէջ ուսուցիչները իրենց զոհաբերութիւնը բերին կրթական գործին: 1964 Սեպտեմբերին աշակերտութիւնը փոխադրուեցաւ այս վարժարանը եւ հետզհետէ մեզի ընծայուած դիւրութիւններուն շնորհիւ հիմա բնականոն պայմաններու մէջ կը կատարուին 243 աշակերտներու դասաւանդութիւնները, առաւօտեան ժամը 10.00-էն կ. ե. ժամը 2.00:

Այս տարեշրջանին է, որ վարժարանին տեւողութեան մէկ ժամի յաւելումով՝ առիթը ունեցանք աւելի խորանալու հայերէնին մէջ: Զարկ տրուեցաւ ի մասնաւորի Ազգ. Պատմութեան, քերականութեան եւ շարադրութեան:

...Հոս պիտի ուզէի շեշտել, որ հակառակ բոլոր յարմարութիւններով օժտուած ըլլալուն՝ մենք մեզ քիչ մը օտար կը զգանք այս շէնքին մէջ, որովհետեւ մեր շարժումները կաշկանդուած են հոս: Եթէ մեր սեփական շէնքին մէջ եղած ըլլայինք, այս տարեշրջանին բազմասան դասարանները պիտի վերածէինք զուգընթացներու»<sup>32</sup>:

1968-69-ին կը հաստատուի 7-րդ կարգը<sup>33</sup>: Տարեշրջանի վերաբացման առիթով, հովիւը՝ Սուրէն վրդ. Գաթարոյեան «Խոհեր» անունին տակ ծնողներուն կոչ կ'ուղղէ, ըսելով. «Եթէ այսօր կրցանք լաւապէս կազապարել մեր մանուկներուն նկարագիրները, անկասկած որ պիտի ունենանք առողջ սերունդ մը, առջուն հայկականութեամբ եւ ազգային գիտակցութեամբ»<sup>34</sup>:

## Գ. Դրուագ

1967-1968-ի շրջանաւարտներուն համար, Համազգայինը կազմակերպած էր մտերմիկ ձեռնարկ մը, ուր հրաւիրուած էր ուսուցիչներուն անունով խօսք առնելու՝ մտաւորական դոկտ. Շաքէ Մինասեան: Ան մանկավարժականօրէն խօսած է եւ ըսած.-

Ես բնաւ չեմ սիրեր խրատ տալ, բայց եկէք եւ տեսէք, որ

ինծի խօսք տրուած է՝ ուսուցիչներուն կողմէ երկու բառ ըսելու համար ձեզի: Ուսուցիչ ըսածդ ալ ի պաշտօնէ դաս կու տայ: Այնպէս որ դժուարին կացութեան մէջ եմ: Վերջապէս պիտի ջանամ թէ՛ պարտականութիւնս կատարել եւ թէ՛ ալ կարելի եղածին չափ քիչ խրատ տալ:

Եթէ արդէն իսկ ըսուած չէ ձեզի, վստահաբար շուտով պիտի ըսուի, թէ վկայական ստանալը տեսակ մը հանգրուան է, ուր, ըստ օրինի, պէտք է կանգ առնել պահ մը, նախ շունչ քաշելու համար եւ յետոյ՝ ապագայի թուիչքը պատրաստելու համար:

Իւրաքանչիւր խրատ տուող, այս քնիչքը կը մեկնաբանէ իր հասկցած ձեւով: Ուսուցիչներն ու տնօրէնները, ընդհանրապէս, «ապագայ թուիչք» ըսելով կը հասկնան՝ յաւելեալ զարգացում, յետոյ մասնագիտացում, կեանքի ընկերային կառոյցին մէջ պատուաբեր եւ շահաբեր դիրք գրաւելու համար:

Բայց հարցը այն է, որ ես ՀԱՅ ուսուցիչ եմ, իսկ դուք ալ ՀԱՅ շրջանաւարտներ: Այս ՀԱՅ բառին պատճառով, շատ աւելի ճոխացած իմաստ կը ստանայ «թուիչք» բառը, գոնէ իմ մտքիս մէջ, եւ պիտի ուզէի ձեզի ալ փոխանցել զայն:

Անշուշտ անհատական յառաջդիմութեան մաղթանքը ներկայ է միշտ. «Լաւ կազմակերպուած բարերարութիւնը քու անձէդ կը սկսի», կ'ըսէ ֆրանսական առածը:

Ընտանեկան եւ ընկերական շրջապատի մէջ հետզհետէ աւելցող պարտականութիւններու գաղափարն ալ կայ: Բայց ասոնց վրայ կ'աւելնայ նաեւ որպէս ՀԱՅ անհատ զարգանալու եւ օգտակարութեան իր բաժինը բերելու գաղափարը:

Թիւով քիչ ենք մենք, հայերս, եւ այդ պատճառով ալ մեզմէ իւրաքանչիւրը իր արժէքը, իր որոշ տեղը եւ իր կատարելիք դերը ունի հայ կեանքէն ներս:

...Հայկական կեանքէն ներս դեր կատարել, իմ կարծիքովս, հետեւեալը կը նշանակէ.

- Նախ, ամէն բանէ առաջ, ըլլալ լաւ մարդ:
- Յետոյ, ինչ յաջողութիւններ եւ յառաջդիմութիւններ ալ արձանագրենք՝ չմոռնալ երբեք թէ ՀԱՅ մարդ ենք:
- Յետոյ, ինչ ալ ըլլայ կեանքին մէջ մեր ընտրած ասպա-

րէզը, իտէալը, կեանքի նպատակը, ձգտիլ այս երկու իրողու-  
թիւնները, այսինքն՝ իլլալ լաւ մարդ եւ ըլլալ լաւ ՀԱՅ մարդ,  
գուգահեռաբար զարգացնելու: Ծառայելով հանդերձ թէ՛ մեր  
անձին, թէ՛ մեր ընտանիքին, թէ՛ մեր ապրած երկրին, ՉՄՈՒ-  
ՆԱԼ երբեք որ մեզմէ իւրաքանչիւրը մասնիկն է հայութեան,  
որ ՊէՏՔ ՈՒՆԻ մեզմէ իւրաքանչիւրի ՏԱԼԻՔ ԲԱԺՆԻՆ ...<sup>35</sup>:

## Դ. Դրուագ

1970–71: Այս երկրորդ տարին է, որ Շաբաթօրեայ վարժարա-  
նը արդէն փոխադրուած է Sinclair Laird-էն Catholic School  
Commision-ի Ecole Barthélemy Vimont վարժարանը, որ կը գտնուի  
St- Roch եւ De l'Épée փողոցներուն անկիւնը (Մոնթրէալ)<sup>36</sup>:

«Այս կարգադրութիւնը եղաւ Քէյպեզի Ներգաղթի նախա-  
րարութեան ներկայացուցիչին միջամտութեամբ, ի հետեւանս  
մեր խնդրանքին, նկատի ունենալով, որ վերջին տարին Sinclair  
Laird դպրոցին մէջ որոշ դժուարութիւններ սկսած էին տալ»<sup>37</sup>:

Ըստ Հոգաբարձութեան 1970–71-ի Տարեկան Տեղեկագրին,  
Ներգաղթի նախարարութիւնը երկու տարի է որ, ինչպէս այլ  
էթնիք դպրոցներու, նաեւ Ս. Յակոբի Շաբաթօրեային կ'օժան-  
դակէ նիւթապէս, վերադարձնելով այն գումարը, որ որպէս  
վարձք կը վճարուի դպրոցի շէնքին<sup>38</sup>:

Յաջողութիւններուն հետ կայ նաեւ տխուր պատկեր մը,  
որուն անդրադարձ կատարուած է 1970-ի Լրաքաղներէն Նո-  
յեմբեր- Դեկտեմբերի թիւին մէջ: Գրուած է.-

«...Ցաւով կ'իմանամ, թէ շուրջ տասնչորս հազար անդամ  
հաշուող Մոնթրէալահայ գաղութը, համեմատաբար շատ քիչ  
աշակերտ կը դրկէ հայ դպրոց ու ժլատութեամբ կը բանայ քսա-  
կը կրթական այդ կենսական գործին ի նպաստ:

Անտարբերութիւն, անհոգութիւն է արդեօք թէ արդէն ու-  
ծացումի որդը հոս ալ սկսած է կրծել այս նորակազմ ածուին ար-  
մատները:

...Եթէ չբարեկալուելի դրուեթիւնը, տասնեակ մը տարիներ հետքը, արմատէն պոկուած ճիւղի մը անմխիթար երեւոյթը պիտի պարզուի մեր աչքերուն առջեւ. դեղնած, չորցած տերեւները անհետ պիտի տանին սառնաշունչ քամիները» (Վազգէն Այգուկի)<sup>39</sup>:

## Ե. Դրուագ

1970-ի 15 Նոյեմբերին, Համազգայինի նախաձեռնութեամբ պատիւի կ'արժանանայ Սեդրակ Բարաղամեան: Բանախօսելու հրահրուած էր դոկտ. Շաքէ Մինասեան: Անոր ելոյթէն այս միտքերը կը մէջբերեմ. —

...հայ ուսուցիչները, որովհետեւ հայ ուսուցիչ են, հարիւր առ հարիւր համեմատութեամբ լաւ ուսուցիչ (չ)են ու նոյն համեմատութեամբ ազգային-մշակութային գործիչ (չ)են: Անշո՛ւշտ, մեր իրականութեան մէջ կան ուսուցիչներ, որոնք այդ գործը ընտրած են այնպէս՝ ինչպէս ուրիշներ կը նետուին այլ ասպարէզներու մէջ: Ու այդ պատճառով ալ, առաւել կամ նուազ չափով իրենց պարտականութիւնը կատարելէն հետք, կը մտածեն թէ այլեւս առնելիք-տալիք չունին իրենց պատկանած համայնքին:

Սակայն այն ինչ որ կ'ուզեմ շեշտել այստեղ, սա է թէ մեր հայ իրականութենէն ներս շատ աւելի մեծ է համեմատութիւնը դաստիարակ-ազգային գործիչ ուսուցիչներուն, քան ուրիշ որեւէ ազգի մէջ: Ու այս իրականութիւնը ինքնին, բաւական է կրկնապատկել մեր յարգանքն ու գուրգուրանքը հանդէպ հայ ուսուցիչին<sup>40</sup>:

1971-72-ին Շաբաթօրեան կը կորսնցնէ Վ. Յովսէփեանը, որ Փետրուար ամսուան մէջ Ֆրզիքական տկարութեան հետեւանքով անկարող կ'ըլլար շարունակելու իր պաշտօնը: Այս վկայութիւնը կատարուած է անոր մասին. «Տիկ. Յովսէփեանի ժրաջան աշխատանքն ու բժախնդիր յարատեւութիւնը, ամենամեծ ազդակներն են եղած մեր դպրոցի անընդհատ բարեկալման

եւ բարձրացման: Ս. Յակոբ Շաբաթօրեայ վարժարանը իր գոյատեւման եւ վերելքի լաւագոյն պահերը կը պարտի իր սիրելի տեսչուհիին»<sup>41</sup>:

## 2. Դրուագ

1973-74: Վարժարանը կը փոխադրուի Հայ Կեդրոնին մերձակայ Լուի Louis Pasteur վարժարանի շէնքը՝ աւելի լաւ յարմարութիւններուն պատճառով<sup>42</sup>:

Այս տարեշրջանի յիշատակելի իրագործում մըն է հայերէն սորվելու դժուարութիւն ունեցող կամ բոլորովին հայերէն չգիտցող աշակերտներու համար դասարանի մը հիմնումը<sup>43</sup>:

1973-ի 22 Օգոստոսին Շաբաթօրեայ վարժարան կ'այցելէ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկեան: Ան գեղեցիկ ճառ մը կը խօսի, եւ կ'ըսէ. —

«Մենք գիտենք, որ աշխարհի բոլոր մանուկները այս տարիքում երգում են միայն թիթեռնիկների մասին, առուակների մասին, ծաղիկների մասին. սակայն մեզ վիճակուած է այնպիսի ճակատագիր, որ մեր երախաները միայն թիթեռնիկներով եւ առուակներով երեւի չպէտք է գոհանան, եւ պէտք է իրենց հանգստի հաշուին, շաբաթօրուայ հաշուին կարողանան գալ վարժարան, եւ ինչ որ ձեռով հաղորդուեն այն շնչին, որը գալիս է դարերից եւ որը կոչւում է հայ լեզու, հայ ոգի, հայ քերթութիւն, հայ դպրութիւն...»<sup>44</sup>:

1974-ի Ապրիլ 20-ին յետ երկարատեւ հիւանդութեան կը մահանայ Սեդրակ Բարաղամեան: Ան կը մեկնի այս աշխարհէն կրթական նուիրեալ մշակի իր սպասումը կտակելով: Իր նօթատետրին մէջ, որ կորսուած է (յուսանք օր մը գտնուի - ԳՔ), գրած է. «1956-ին գաղթային հոսանքը ամէն կողմէ դէպի Գանատա ծայր տուաւ: Մոնթրէալի մէջ անմիջապէս սկսան կազմակերպուել Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ դասընթացքներ, որոնք մինչեւ այսօր կը շարունակուին, շնորհիւ անձնուէր ու-

սուցիչ-ուսուցչուհիներու եւ զոհաբերուող անձերու: Տարակոյս չկայ, որ զիրար լրացնող այս դասընթացքները իրենց մեծագոյն նպաստը բերին հայ մանուկին եւ պատանիին հայեցի դաստիարակութեան, եւ սակայն անցնող 10 տարիներու ընթացքին, աննպաստ պայմաններու բերումով չկարողացանք ՀԻՄՆԱ-ԿԱՆ ԳՈՐԾ ԸՆՆԵԼ:

Այդ հիմնական գործը ԱՄԷՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ-ն է: Երբ իրականանայ այս յոյժ ցանկալի փափաքը, այն ատեն է, որ հիմը դրած կ'ըլլանք իրապէս հայեցի դաստիարակութեան»<sup>45</sup>:

## Է. Դրուագ

1974-75: Դասաւանդութիւնները կը կատարուին Transfiguration of Our Lord, եւ La Dauversière վարժարաններու շէնքերուն մէջ: Աշակերտութեան թիւը իր գագաթնակէտին հասած էր. 330<sup>46</sup>:

Նախորդ տարեշրջանին Ը. Կարգի դասաւորումը եղած էր, իսկ այս տարեշրջանին Թ. Կարգը կը հաստատուի<sup>47</sup>:

1972-74 տնօրէնի պաշտօնը զբաղցուցած էին Սոնա Տէր Սարգիսեան եւ Անահիտ Մարգարեան<sup>48</sup>:

1974-75-ին տնօրէնի պաշտօնը ստանձնած էր Յակոբ Սիմոնեան<sup>49</sup>:

Այս տարեշրջանին Ս. Յակոբ եկեղեցւոյ Հովիւն ու Հոգաբարձութիւնը կը թական կառոյցներուն ընդհանուր պատասխանատուութիւնը կը յանձնեն նորակազմ Կըթական Գործադիր Մարմինին:



## Ը. Դրուագ

1975–76: Դասաւանդութիւնները տեղի կ'ունենան La Dauversière վարժարանի շէնքին մէջ<sup>50</sup>: Ամէնօրեան ստեղծուած էր, եւ Շաբաթօրեայի աշակերտութեան թիւը նուազելու սկսած:

Այս տարեշրջանին 288 աշակերտ-աշակերտուհիներ կ'ունենայ Շաբաթօրեան<sup>51</sup>: Կը հաստատուին Թ. եւ Ժ. Կարգերը<sup>52</sup>:

Քէպեգի Կրթական նախարարութեան մօտ տարուած աշխատանքները իրենց արդիւնքը կու տան: Կրթական Նախարարութիւնը կը ճանչնայ Շաբաթօրեայ վարժարանի հայերէն լեզուի բարձրագոյն դասընթացքը եւ աշակերտները կրնան քննութիւն անցընել եւ յաջողելու պարագային՝ կրնան վարկանիշ ստանալ երկրորդական վարժարանի իրենց վիճակացոյցին մէջ<sup>53</sup>:

Յաջորդ տարեմուտին առիթով Առաջնորդ սրբազանը՝ Գարեգին արք. Սարգիսեան ծնողներուն եւ ուսանողներուն պատգամ մը ուղղած է եւ շեշտած, թէ կրօնական ու հայատոհմիկ դաստիարակութեան անհրաժեշտութիւնը:

Յոյց տուած՝ թէ ազգութիւն եւ կրօնք «արթուն ու կայտառ» պահելու «միջոց»ներն են. ա) Ամէն մէկ հայ անհատի եկեղեցի յաճախելը. բ) Ծնողներուն փութաջանութիւնը՝ իրենց զաւակները արձանագրելու Ծխական համայնքներէն ներս բացուած Շաբաթօրեայ եւ Կիրակնօրեայ դպրոցներուն մէջ, եւ կամ այլ դաստիարակչական ձեռնարկներու. գ) Իւրաքանչիւր հայու յանձնառութիւնը՝ ազգային թէ եկեղեցական կեանքին մէջ մասնակցութիւն բերելու:

Եւ հրաւիրած՝

կեանքի վերակոչել քրիստոնէական հաւատքը՝ իբր «մօտաւորապէս երկու հազար տարիներու արժէքներով հարուստ քրիստոնէական մշակոյթի տէր ժողովուրդ»<sup>54</sup>:

## Թ. Դրուագ

1977-1980, տնօրէնի պաշտօնը յաջորդաբար կը ստանձնեն Լորիս Մալոյեան եւ Նազարէթ Սէֆէրեան: 1977-1978 տարեշրջանին, Շաբաթօրեան իր ԺԱ. Կարգը կ'ունենայ<sup>55</sup>:

1979-1980: Շաբաթօրեան հիմնադրութեան 20-ամեակը կը նշէ:

Ն. Սէֆէրեան յօդուածով մը կը ներկայացնէ վարժարանին պատմականը եւ կ'արձանագրէ այս համոզումը թէ՛

«Անցեալին մեր վարժարաններն ու կրթական օճախները, եղած են մեր ժողովուրդի հաւատքի եւ յոյսի կեդրոնները, որոնց շնորհիւ յարատեւած ու ճոխացած է մեր լեզուն եւ ապահովուած է մեր դարաւոր ազգին գոյութիւնը:

Սակայն այսօր, այլ է դերը Սփիւռքի մէջ կառուցուող վարժարանին, ան ոչ միայն պէտք է ըլլայ նորահաս սերունդին ուսում ու դաստիարակութիւն ջամբող վայր, այլ նաեւ պէտք է ըլլայ գալիք սերունդներուն հայու ոգիին, հայկականութեան եւ հայեցի կեանքին ու ապրումին սատարող ներշնչարան, Հայ Դատին եւ հայ ժողովուրդին ամէն տեսակի արդար պահանջներուն ուղին սորվեցնող ու հարթող ու անոր յաջողութեան ձգտելու առաջնորդող միջավայր»<sup>56</sup>:

1980 Յունիսին Ամէնօրեայ վարժարանը կու տայ իր առաջին հունձքը՝ 16 երկսեռ շրջանաւարտներ: Այն շրջանաւարտներուն կապակցութեամբ Կրթական Գործադիր Մարմինը ծնողներու հետ համախորհուրդ կ'առնէ որոշում մը, ըստ որուն՝ Ամէնօրեայի շրջանաւարտները Շաբաթօրեայի մէջ երեք տարի եւս հայերէն դասի պիտի հետեւէին<sup>57</sup>:

Յաջորդ տարեշրջանին, 16 շրջանաւարտներէն 14-ը յատուկ դասարանի մը մէջ կը շարունակեն զարգացնել իրենց հայերէնը<sup>58</sup>:

1980-էն մինչեւ 1988՝ տնօրէնութեան պաշտօնը յաջորդաբար կը ստանձնեն Յակոբ Սիմոնեան, Յասմիկ Տէր Պետրոսեան եւ Վահէ Երէցեան:

## Ժ. Դրուագ

30-ամեակին տնօրէնն էր Յակոբ Տէր Խաչատուրեան: Իր նախաձեռնութիւններու շարքին մէջ յիշատակելի իրագործում մը կ'ըլլայ Տարեգիրք-Ալպոմի սկզբնաւորումը<sup>59</sup>: Անիկա լայն գիծերու մէջ կը ցոլացնէ Շաբաթօրեայի կեանքը: Յարգ կը շարունակէ լոյս տեսնել:

Այդ օրերուն Շաբաթօրեան փակելու խօսք կը շրջէր: Եւ հաւանաբար այնքան յաճախական դարձած էր այդ նիւթը, որ Հայդուկ Շամլեան կը ստորագրէր հակաճառական խիտ եւ յանդուգն գրութիւն մը, զայն «Գոցեցէ՛ք Շաբաթօրեան...» վերնագրելով: Կ'ըսէր. «Ձե՛ն գոցեր այս անվհատ Շաբաթօրեան... Որովհետեւ, այլազան պայմաններու բերումով, տակաւին անհրաժեշտ է այս սահմանապահ ամբողջը, այս չեզօք դաշտը, կէս-վարժարան, կէս-ակումբ, երեք-քառորդ հայաշինութեան գործարան՝ այս ազգային ապանեխումի կեդրոնը, այս անդադար վերսկսող Զարթօնքի դպրոցը...»<sup>60</sup>:

Իսկ 1999-ին, երբ օճախին 40-ամեակը կը վերառնուէր, հովիւը կոչ կ'ուղղէր. «...մեր իղձն է, որ Մոնթրէալի համայնքը աչքի լոյսի պէս պահէ ու գուրգուրայ Շաբաթօրեային վրայ»<sup>61</sup>:

## ԺԱ. Դրուագ

Ամէնօրեայի ստեղծումէն ետք Շաբաթօրեայի աշակերտութեան թիւը պիտի նուազէր, ինչպէս նչեցի: Հակառակ անոր որ ոմանք Ամէնօրեայի աճումը եւ գերազանցումը Շաբաթօրեային՝ քաջալերական կը գտնէին, սակայն Ս. Յակոբի առաջին դպրոցին նահանջը մտահոգիչ էր... եւ հետզհետէ աւելի անձկութիւն պիտի պատճառէր: Այնքան որ Կրթական Գործադիր Մարմինը «Կանգուն Պահենք Շաբաթօրեայ Վարժարանը» վերնագրութեամբ ահազանգային կոչ մը կը հրապարակէր 2000 թուականի

Տարեգիրք-Ալպոմին մէջ<sup>62</sup>:

4 Նոյեմբեր 2006-ին Հոգաբարձութեան եւ Միհրան Փափազեան Կոմիտէին կազմակերպութեամբ միօրեայ յատուկ խորհրդաժողով տեղի կ'ունենայ Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ: Խորհրդաժողովին արտայայտուած կարծիքներէն մի քանին ասուածսիկ:

ա.- Շաբաթօրեայի գոյութիւնը հայապահպանման առումով այլեւս չի ծառայեր իր նպատակին:

բ.- Շաբաթօրեան պէտք է ծառայէ հայ լեզուի եւ մշակութի նուազագոյն գիտելիքներ փոխանցելու միջոցի մը, ծրագրումի բովանդակութիւնը անհրաժեշտ է վերանայիլ եւ քարոզչութեան իմաստով յաւելեալ աշխատանք պէտք է տարուի:

գ.- Կարեւոր է յառաջացնել յանձնախումբ մը, որ զբաղի միայն Շաբաթօրեայի քարոզչութեամբ, ուսումնական հարցերով եւ պիտճէով, անջատելով այս պատասխանատուութիւնը Կրթական Մարմինէն:

դ.- Կարեւոր է, որ քննութեան ենթարկուի հայեցի դաստիարակութեան մօտեցումը, նկատի ունենալով որ այսօր գոյութիւն ունին դասնատահայ ծնողներու զաւակներ: Պէտք է յստակացնել Շաբաթօրեայի նպատակը, ինքնութիւնը եւ առաքելութիւնը եւ հաւանաբար բաւարարուիլ նուազագոյն գիտելիքներ փոխանցելով եւ մտածել չափահասներու համար հայերէնը որպէս երկրորդ լեզու դասաւանդելու կարելիութիւններուն մասին<sup>63</sup>:

Ներկայ տնօրէնն է Հայկ Գազանճեան: Ան իր պաշտօնը ստանձնած էր Վարդի Դանիէլեանի կարճատեւ տնօրէնութենէն ետք, եւ գայն կը վարէ 1995-96-էն:

Յիսունամեակի սեմին Շաբաթօրեայ վարժարանը ստիպողութեան առջեւ է իր ծառայութիւնը վերակազմակերպելու, եւ նոյնիսկ՝ վերստեղծելու:

## ԱՄԱՌԱՅԻՆ ԱՌԱՐԱՏ ԾԱՌԱՔԱՐԸ

Հովիւն ու Հոգաբարձութիւնը Ուսումնական Խորհուրդին հետ այս ճամբարով կը զբաղին 1971-ի Յունուարէն:

Արդէն պատրաստուած էր ուսումնասիրութիւն եւ ծրագիր մը, որ կ'առաջադրէր ամառնային շրջանին վեց շաբաթներով փոքր եւ պատանի հայ տղաքն ու աղջիկները ի մի խմբել «Ամառնային Ճամբար» անուան տակ, որպէսզի միասին խաղան, զուարճանան, հայերէն խօսին եւ երգեն, եւ սորվին սիրելի հայ միջավայրը: Շուտով ճամբարը պիտի կոչուէր «Արարատ»:  
Կը ներկայացուէր Թորոնթոյի համայնքին ճամբարը իբր «մեծ յաջողութիւն» մը: Եւ կ'առաջարկուէր անյապաղ Մոնթրէալն ալ օժտել ճամբարով: Համաձայնութիւն կը գոյանար, եւ կ'ապահովուէր Chomedey-ի St-Norbert դպրոցին շէնքը: Վարիչ-պատասխանատու կը նշանակուէր Սոնա Տէր Սարգիսեան:

1973-ին ճամբարը կը փոխադրուի Սէն Լորանի Cedarcrest դպրոցին շէնքը:

1974-ին վարիչ-պատասխանատուի պաշտօնը կը ստանձնէ Յակոբ Պուլկարեան: Ան այս պաշտօնը պիտի վարէր մինչեւ 1982:

1975-76՝ ճամբարը կը գործէ St-Martyr's-Canadiens դպրոցի շէնքին մէջ (Parthenais փողոց, Մոնթրէալ): 1977-ին՝ դարձեալ Cedarcrest-ի շէնքը, մինչեւ 1983: 1984-ին ճամբարը Glencoe դպրոցին մէջն է (Մոնթրէալ): Իսկ 1985-ին կը վերադառնայ Cedarcrest-ի շէնքը: Եւ այդ 1988-էն մինչեւ օրս ճամբարը կը գործէ Nadon փողոցի Ս. Յակոբ վարժարանի շէնքին մէջ:

Վարիչ-պատասխանատուի պաշտօնը կարճ տարիներով ստանձնած են Արա Իմամէճեան, Սամ Քէօշկէրեան, Սեդա Ղազրիկեան, Նուրիճա Մաթոսեան, Լուսին Փալանճեան, Մայտա Պապրիկեան, Տիան Պայկըն, Յասմիկ Մանուկ եւ Զարմինէ Թաշճեան:

Արարատ Ճամբարը ջերմիկ տուն մըն է:

## ԾԱՌԱՅՈՒՆ

«Révolution tranquille» կոչուած շրջումին կարեւորագոյն իրագործումը Կրթական նախարարութեան ստեղծումն էր 1964-ին: Այս յեղափոխութեամբ Քէպեզի նահանգային կառավարութիւնը կրթութիւնը կը վերածէր «Հանրօգուտ» սպասարկութեան մը: Եւ կրթական համակարգը «ժողովրդավարական» կը դառնար:

1968-ի Loi de l'Enseignement Privé-ն կը ստեղծէր Հնարաւորութիւնը, որ սեփական վարժարանները նիւթական յատկացում ստանան: Եւ Ս. Յակոբի համայնքը եւս ի շարս այլոց կ'օգտուէր այդ հնարաւորութենէն. անիկա իր ամէնօրեայ դպրոցը ստեղծելու քայլերը կ'առնէր՝ քաջալերուած պետական այդ տնօրինումէն:

Անկէ առաջ, Ս. Յակոբ եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը, 1965-ին իր յառաջացուցած Շաբաթօրեայ Վարժարանի Խնամակալութեան եւ տնօրէնուհիին հետ խորհրդակցութիւններ կ'ունենար 1967-ին՝ մնայուն մանկապարտէզի մը ստեղծման ծրագրով:

Յետ ուսումնասիրութիւններու եւ խորհրդակցութիւններու, թէ՛ Հոգաբարձութիւնը եւ թէ՛ Խնամակալութիւնը պիտի գային հետեւեալ եզրակացութեան. —

Նկատի ունենալով, որ նիւթական պարտաւորութիւնները կրնային զգալիօրէն վնասել նորակերտելի համայնքի տան շինութիւններուն, սպասել եւ ամէնօրեայ մանկապարտէզի ծրագիրը գործադրութեան դնել սեփական շէնքին մէջ:

Հայ Կեդրոնի եւ եկեղեցւոյ շինարարական աշխատանքներուն մեկնակէտ թուականն է 1972 տարուան 28 Սեպտեմբերը: Նախատեսուած էր, որ շէնքին վարի բաժնին մէջ մանկապարտէզի երեք դասարաններ ըլլան:

Հովիւն ու Հոգաբարձութիւնը 12 Նոյեմբեր 1969-ին կը յառաջացնեն կրթական մարմին մը եւ զայն կը կոչեն Ուսումնական Խորհուրդ<sup>64</sup>: Այս մարմինը պիտի շօշափէր սեփական ամէնօրեայ դպրոց մը ունենալու Մոնթրէալի հայութեան տրամադրութիւնը:

Երկու անգամ հարցախոյզներ պիտի առաքուէին. գաղափարին համաձայն պիտի ըլլար գաղութը, սակայն միայն 16 ընտանիքներ համաձայն պիտի ըլլային իրենց զաւակները զրկելու: Եւ պատասխանատուները պիտի անդրադառնային, թէ գաղութը տակաւին ամէնօրեայ դպրոց չ'ուզեր, այլ կը բաւարարուի Շաբաթօրեայով:

Ուսումնական Խորհուրդին փոխարէն Հովին ու Հոգաբարձութիւնը 23 Յունուար 1973-ին կ'որոշեն յանձնախումբ մը կազմել՝ որ ուսումնասիրէ ամէնօրեայ մանկապարտէզ մը բանալու կարելիութիւնները<sup>65</sup>:

Խորհրդակցական քանի մը հանդիպումներէ ետքը, յանձնախումբը իր առաջին նիստին՝ գումարուած 18 Մարտ 1973-ին՝ Վանուհի Իսաջանեանի տան մէջ (7755 Boul. L'Acadie) ինքզինք կը կոչէր «Ամէնօրեայ Վարժարանի Վարչութիւն»: Եւ իրեն նպատակ ունենար «Ամէնօրեայ վարժարանի գործը ճամբայ հանել եւ իրականացնել»<sup>66</sup>:

Հոգաբարձութեան ատենապետը՝ Երուանդ Պասմաճեան եւ Ամէնօրեայ Վարժարանի Վարչութեան ներկայացուցիչներ՝ Վանուհի Իսաջանեան եւ Վրէժ-Արմէն Արթինեան 13 Մարտ 1973-ին, տեսակցութիւն մը կ'ունենան Ներգաղթի Նախարարութեան պաշտօնատարներէն էրվէ Մաժորի հետ: Ան կը թելադրէ, որ Ամէնօրեայ Վարժարանի իրականացումը՝ ետքը քայլ առ քայլ յառաջ տարուի: Նախ սկսիլ մանկապարտէզով, որուն համար արտօնագիր ստանալը աւելի դիւրին կ'ըլլայ: Եւ իբր «garderie» ներկայանալով՝ կախում կ'ունենայ Ընկերային Գործոց Նախարարութենէն, ու կ'օգտուի անոր շատ նպաստաւոր յատկացումէն<sup>67</sup>:

Մինչ այդ նորակառոյց Հայ Կեդրոնին ներքնայարկը, որ նկատի առնուած էր իբր մանկապարտէզ գործածուելու, «առանց պատի, առանց որեւէ յարմարութեան, պարզապէս բաց» տարածութիւն էր: 24 Մայիսին պրն. Մաժոր հեռաձայնային խօսակցութեամբ կը յայտնէ, թէ Ընկերային Գործոց Նախարարութիւնը կ'արտօնէ մանկապարտէզ բանալ, ուստի կարելի է սկսիլ արձանագրութիւններուն: Ան կը վստահեցնէ, որ վաւերացումը պիտի գայ երբ տեղը պատրաստ ըլլայ:

Չորս օր վերջը, Հայ Կեդրոնի Աւետիս Ահարոնեան սրահին

մէջ Մայիս 28-ի տօնակատարութիւնը տեղի կ'ունենար: Եւ այդ օր կը յայտարարուէր, թէ մանկապարտէզը պիտի բացուի Սեպտեմբերին, եւ ունենայ ծիւ, բողբոջ եւ կոկոն դասարաններ: Տեղւոյն վրայ արձանագրութիւններ կ'ըլլային<sup>68</sup>:

Կ'որոշուէր մանկապարտէզը կոչել «Ս. Յակոբ Եկեղեցւոյ Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան ՀՕՄ-ի Ծաղկոց», իբր երախտագիտութիւն բարերար Սոֆիա Յակոբեանի, որուն ՀՕՄ-ին թողած կտակէն մեծապէս պիտի նպաստաւորուէր: Ապա Ծաղկոցը ընդհանրապէս պիտի ճանչցուէր «ՀՕՄ-ի Ծաղկոց» անուամբ:

1973-ի Սեպտեմբերին Ծաղկոցը կը սկսի գործել Ընկերային Գործոց նախարարութեան հովանիին տակ:

Արդէն 8 Յունիսին որոշուած էր, թէ Ծաղկոցի ընդհանուր պատասխանատուն կամ տնօրէնուհին պիտի ըլլար Վանուհի Իսաջանեան:

1974-75: Սկիզբ՝ Ս. Յակոբի Ամէնօրեայ Նախակրթարանին:

1974-75 տարեշրջանին համար Parthenais փողոցին վրայ գտնուած Holy Lady of Pompei դպրոցին փոքր շէնքը (annexe) կը վարձուի, ուր կը հաւաքուին Ծիւ, Բողբոջ, Կոկոն, Ծաղիկ եւ Առաջին դասարանները: Ծաղկոցի դասարաններէն երկուքը՝ Ծիւն ու Բողբոջը ետ Հայ Կեդրոն կու գան՝ տեղ բանալու համար նախակրթարանի աւելցող աշակերտութեան:

1975-76 տարեշրջանին Ծաղկոցի Ծիւ եւ Բողբոջ դասարանները կը մնան Հայ Կեդրոնին մէջ, իսկ միւսները՝ դարձեալ Փարթընէ: Յաջորդ տարեշրջանին Փարթընէի դպրոցը Ծաղկոցին յատկացուած է:

1977-78: Ծաղկոցը կը հարկադրուի Ave. Bruchesie-ի վրայ գտնուող վարձու շէնք մը փոխադրուիլ:

Հայ Կեդրոնի լրացուցիչ շինութիւնները աւարտած էին եւ Փետրուար 1980-ին Ծաղկոցը կը փոխադրուէր արդիական յարմարութիւններով իրեն յատկացուած բաժինը:

1980-81 տարեշրջանին Ծաղկոցի տնօրէնութիւնը կը ստանձնէ Անի Մելիքեան: Ապա 1981-էն մինչեւ 2000՝ Նազան Արթինեան: Իրեն կը յաջորդէ Սիլվա Քէօքէրեան:



## ԱՄԷՏՈՒԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

### Ա. Դրուագ

Եւ 1973-ի տասերորդ ամիսէն նախակրթարանի յառաջաման կարելիութիւնները կ'ուսումնասիրուին: Կրթական Նախարարութեան հետ թղթակցութիւններ կը փոխանակուին: Եւ Service Général de l'Enseignement Privé-էն դիմումագիրները կը հասնին, կը լեցուին եւ կը վերադարձուին: Աշխատանք կը տարուի շէնք մը ապահովելու համար:

«Ամէնօրեայ Վարժարանի Վարչութիւն»ը՝ «Կրթական Գործադիր Մարմին» պիտի կոչուէր:

Այս մարմինը 1974-ի Ապրիլ ամիսէն մինչեւ օրս պատասխանատուն է Ս. Յակոբի կրթական հաստատութիւններուն, բացի Կիրակնօրեայ Դպրոցէն:

1974-ի Յունիսին, Կրթական Գործադիր Մարմինի ներկայացուցիչներուն հետ Հայ Կեդրոնի մէջ երկար հանդիպում մը կ'ունենայ Կրթական նախարարին՝ տքթ. Ֆրանսուա Գլուծիէի անձնական քարտուղարը՝ Մորիլ Պուպլէն: Ի տես Ծաղկոցի 10 ամիսներու յաջողութեան եւ Կրթական Մարմնի ցուցաբերած լրջութեան եւ ձեռնհասութեան՝ կը վստահեցնէ, թէ նախարարութիւնը որոշած է նիւթապէս եւ բարոյապէս օժանդակել համայնքի կրթական ծրագրին<sup>69</sup>:

Եւ 5 Յուլիսին նախարար տքթ. Գլուծիէ պաշտօնական նամակով կը ճանչնայ Ս. Յակոբ Նախակրթարանը՝ իբր հանրօգուտ հաստատութիւն, որ պիտի ծառայէ օգնելու ոչ-Ֆրանսացի-գանատացի ծագումով աշակերտներուն, որպէսզի անոնք կարենան լաւապէս տիրանալ Ֆրանսերէն լեզուին<sup>70</sup>:

1974-75 տարեշրջանին է, որ կը սկսի Ս. Յակոբի Նախակրթարանը Holy Lady of Pompei դպրոցին մէջ: Նախակրթարանը

պիտի գործէր Կրթական Նախարարութեան հովանիին տակ:

1975–76 տարեշրջանին Նախակրթարանը պիտի ունենար իր Բ. Կարգը:

Այս տարեշրջանի Կրթական Գործադիր Մարմինի «Ամփոփ Տեղեկագիր»-ին մէջ կը կարդանք. «Գաղութի մը հայապահպանման ճիգերուն խարխիսը կրթական գործն է: Եթէ հայակրթութիւնը լաւ կազմակերպուած է, առողջ են նաեւ հայապահպանման քաղաքական եւ ազգային կազմակերպութիւնները...»

Այսօր Ս. Յակոբ եկեղեցւոյ կրթական յարկերուն մէջ կ'ուսանին աւելի քան 570 աշակերտներ եւ 40 չափահաս ուսանողներ»<sup>71</sup>:

1976–77 տարեշրջանն է եւ Նախակրթարանը Victor Doré-ի Louis Pasteur դպրոցը (Մոնթրէալ) կը փոխադրուի: Գ. Կարգը աւելցած էր: Նախակրթարանը կը զբաղցնէ դպրոցի շէնքին կէսը, միւս կէսը կը գործածուի որպէս տեղական այլ վարժարան: Յաջորդ տարի կ'աւելնայ Դ. Կարգը: Ապա՝ Ե. եւ Զ. Կարգերը: Ս. Յակոբի աշակերտութիւնը կը լեցնէր ամբողջ շէնքը... եւ շէնքը նեղ կու գար:

1980-ին՝ Նախակրթարանը իր առաջին հունձքը կու տար, սակայն համայնքը ցաւօք սրտի կը ճամբէր զայն, քանի որ տակաւին չէր արտօնուած, որ երկրորդական բաժնի առաջին կարգը՝ Է. դասարանը բացուի: Տարուայ մը թափուած ճիգերը անցած էին ի զուր: Կառավարութիւնը փոխուած էր եւ սեփական վարժարաններու նկատմամբ նուազ բարեացակամութիւն կը տիրէր: Նախարարութեան առաջնահերթութիւնն էր հանրային վարժարաններուն հոգ տանիլ ամենէն առաջ<sup>72</sup>:

Երկրորդական բաժնի ունենալու «յամառ հետապնդումները» պիտի շարունակուէին: 1983-ին կը բացուէր Է. Կարգը: 1984-ին՝ Ը. Կարգը: Իսկ 1986-ի Յունիս ամսուն կը ստացուի Քէյպեզի Կրթական Նախարարութեան արտօնագիրը՝ Երկրորդական վարժարանի բարձրագոյն Կարգերը՝ 9-րդ, 10-րդ եւ 11-րդ դասարանները բանալու: Անմիջապէս կ'որոշուէր սկսիլ 9-րդ Կարգը: 1987–88-ին՝ 10-րդ Կարգը: Իսկ յաջորդ տարեշրջանին՝ 11-րդ Կարգը: Եւ Ս. Յակոբի Երկրորդականը կու տար իր առաջին հունձքը:



Դպրոցը եւ եկեղեցին

Վանուհի Իսաջանեան որ Ծաղկոցի սկզբնաւորութենէն եւ Նախակրթարանի ստեղծումէն մինչեւ 1979-80 տարեշրջանը զոյգ կրթական հաստատութիւններուն մասնաժամ տնօրէնի պաշտօնը կատարած էր՝ Ծաղկոցի տնօրէնութիւնը կը փոխանցէր Անի Մեկիքեանի, իսկ Նախակրթարանի տնօրէնութիւնը՝ Աղաւնի Էլոյեանի: Տիկ. Էլոյեան պիտի պաշտօնավարէր մինչեւ 1989: Իրեն կը յաջորդէր Յակոբ Պուլկարեան:

Հաստատութիւնը պիտի ունենար նաեւ Ուսումնական Հարցերու պատասխանատուներ. անոնցմէ յատկապէս յիշատակելի է դոկտ. Տանիէլ Ռասին՝ իր երկարամեայ պաշտօնավարութեամբ (1991-2002):

Ըստ արժեւորման մը, վերջին 15 տարիներու ընթացքին Քէպեգի 463 երկրորդական հաստատութեանց բարձրագոյն կարգերու պետական քննութիւններուն մէջ Ս. Յակոբ երկրորդականը ապահոված է 9.0/10 կարգանիշը:

2008-ի Օգոստոսին, Յոլինէ Շամլեան կը նշանակուի փոխտնօրէն Նախակրթարանին, որ 1993-էն կոչուած էր բարերար տ. եւ տիկ. Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեանի անունով, իսկ Միհրան Ճգնաւորեան՝ փոխտնօրէն Երկրորդականին, որ 2002-ին կոչուեցաւ Բաստրմաճեան:

## Բ. Դրուագ

1981-82: Վերջին երկու ամիսները տարեշրջանին՝ ամենադժնդակ ժամանակները կ'ըլլան:

Արդէն 1982-ի Յունուարին Ս. Յակոբ վարժարանէն ներս ուսուցիչներու արհմիութիւնը իրականութիւն էր: Ուսուցիչներու կողմէ այս ուղղութեամբ նախաքայլը առնուած էր 1980-ի Յունիսին<sup>73</sup>:

Հոգաբարձութիւն եւ Կրթական Մարմին երկար ժամեր պիտի յատկացնէին, քննէին կացութիւնը, հնարաւորութիւններուն մասին խօսէին, եւ տեսնէին՝ թէ հարկ է պատրաստուիլ

արհմիութեան հետ համաձայնութեան գալու:

Բանակցութիւնը կը սկսի եւ կ'երկարի: Ապա հակամարտութեան եւ տագնապի կը փոխուի: 1982-ի Ապրիլի վերջաւորութեան ուսուցիչներու գործադուլը գլուխ կը բարձրացնէ: Դպրոցին մօտ ցոյցի տեսարան կը պարզուի, որ «անախորժ տպաւորութիւն» կը ստեղծէ շրջանին մէջ:

Այս անձկութեան մէջ, Հոգաբարձութիւնը եւ Կրթական Գործադիր Մարմինը՝ տնօրէնութեան օժանդակութեամբ եւ աւելի քան 100 ուսուցանելու կարողութիւն ու յատկութիւն ունեցող ծնողներու եւ ազգայիներու՝ կը վճռէ բաց պահել դպրոցը՝ «անգոսնելով ծառացող բոլոր տեսակի խոչընդոտները»<sup>74</sup>: Եւ վարժարանը բաց կը մնայ ու դասաւանդութիւնները կ'ըլլան հետեւողական: Նոյնիսկ ամալերջի յաջող հանդէս կը կազմակերպուի:

Ի վերջոյ համաձայնագիրը կը ստորագրուի 17 Յունիսին, եւ ուսուցիչները կը վերադառնան:

## Գ. Դրուագ

1987-88 տարեշրջանին Նախակրթարան եւ Երկրորդական կը փոխադրուին Malcolm Campbell High School-ի շէնքը (3400 Nadon փողոց): Այդ թուականէն՝ Ս. Յակոբի կրթական կեանքը պիտի զարգանար եկեղեցւոյ եւ Հայ Կեդրոնի անմիջական հովանիին տակ:

Հովիւը՝ Տ. Արմէն այդ առիթով յօդուած մը հրատարակած է Լրաքաղի մէջ, որ վերնագրած է՝ «Երկար Տարիներու Երազը Կ'իրականանայ»: Ահաւասիկ հատուած մը. «Ամէն անգամ որ Տիւտըմէնի կամօրջին վրայէն կ'անցնէի, հայեացքս դէպի ձախ ուղղելով, կը դիտէի Մալգըլմ Գէմպըլ վարժարանին հսկայ համալիրը ու ափսոսանքով կ'ըսէի...Այս շէնքը մեզի պէտք է պատկանէր...»

Ամէն անգամ որ սոյն երկրորդական վարժարանի տնօրէնութեան հրակէրով տարեվերջի վկայականաց բաշխման հան-

դէսին ներկայ կը գտնուէի, ու քիչ մը ներսէն կը դիտէի հսկայ սրահներն ու յարակից բաժինները, դարձեալ ներքին կսկիծով կը կրկնէի. այս շէնքը մեզի պէտք է պատկանէր...

Ամէն անգամ որ ՀՄԸՄ-Կամֆի միջ-մասնաճիւղային խաղի մը ընթացքին վարձուէին Մալգըլմ Գէմպըլի մարգասրահները ու ներկայ գտնուէի այդ խաղերուն, դարձեալ նոյն յանկերզը կը կրկնէի...այս շէնքին կարելիութիւնները մերը պէտք է ըլլային...

Ամէն անգամ որ Կիրակի օրեր Հայ Կեդրոնի շրջափակն ու յարակից փողոցները անանցանելի կը դառնային ինքնաշարժներու խճողումին պատճառով, ու քայլ մը անդին Մալգըլմ Գէմպըլի հսկայական շրջափակը ամայութեանէ կը յօրանջէր, նոյն մտածումն ու իղձը կու գար շրթներուս. այս կալուածը մեզի պէտք է պատկանէր...

Եւ դեռ քանի-քանի առիթներով նոյն մտածումը կը յաճախէր ինծի: Կասկած չունիմ, որ ինծի պէս շատ-շատեր նոյն զգացումները, նոյն մտածումները ունեցած էին»<sup>75</sup>:

Արդէն գրեցի այս շէնքի վարձուելուն մասին: Այն ատեն Հոգաբարձութեան սեղան կու գար նախկին դպրոցէն նոր դպրոց գրասեղաններու եւ զանազան իրերու փոխադրութեան հարցը: Ոչ թէ ծախսէ խուսափելու համար, այլ փոխադրութիւնը համայնքային յանձնառութեան մը վերածելու առաջադրութեամբ, տ. Արմէն կ'առաջարկէր, որ փոխադրութիւնը որեւէ ընկերութեան չյանձնուէր:

Եւ հանդէսներու բեմերէն, նոյնիսկ հարսանեկան խրախճանքներուն՝ մարտահրաւէր կը կարգար ու կը յայտարարէր. «Ազգային փոխադրութիւն պիտի ընենք»:

Կ'ականկալուէր 50 հոգի, սակայն պիտի գային 150 հոգի. մեծ ու պզտիկ, այր ու կին, հոգաբարձու, ուսուցիչ, բանուոր, խմբագիր...

Գործը պիտի ըլլար, եւ գրուէր. «...երբ վերջին բեռնակառքը դատարկուեցաւ, կարծէք ափսոսանքի զգացում մը պատեց բոլորը. դեռ կ'ուզէին աշխատիլ»<sup>76</sup>:

Հօտը լսեց հովիւին ձայնը:

## Դ. Դրուագ

2002: Ս. Յակոբ վարժարանի վարձուած շէնքը համայնքին սեփականութիւնը կը դառնայ: Այդ առիթով նաեւ խօսք կ'առնէ ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ՝ Յակոբ Տէր Խաչատուրեան, եւ կ'ըսէ. «Այսօր լուսաշող էջ մը եւս կը բացուի Մոնթրէալի հայոց պատմութեան մատեանին մէջ. այսօր՝ արդար հպարտութեամբ կ'արձանագրենք անկիւնադարձային նուաճում մը, որ պիտի ամրապնդէ Գանատայի մեծագոյն հայ վարժարանին հիմերը ու ապահովագրէ անոր ապագան: Եւ այս բոլորը կը պարտինք մեր սիրելի ազգային բարերարներուն եւ Մոնթրէալի, Լաւալի եւ շրջակայքի մեր համակիրներու աննկուն հաւատքին ու անսակարկ նուիրումին՝ հայակերտման դարբնոցին առաքելութեան հանդէպ»<sup>77</sup>:

## ԿՐՈՒԱԿՆՕՐԵԱՂ ԴՊՐՈՑՆԵՐ

### Ա. ԴՐՈՒԱԳ

Ս. Յակոբի Կիրականօրեայ դպրոցը սկսաւ Կիրակի, 14 Սեպտեմբեր 1980-ին, Խաչվերացի տօնին օրը:

1929-ին էր, որ Սահակ Բ. կաթողիկոս Խաչապեան՝ ծերունագարդ Հայրապետը Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին, ետքը իրեն Աթոռակից՝ Բաբգէն Ա. Կաթողիկոսի հետ համախորհուրդ, հիմը կը դնէր Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրականօրեայ Դպրոցներուն: Այն ատեն հրատարակած իր Կոնդակին մէջ Սահակ կաթողիկոս գրած է. «Մենք կ'ուզենք, որ մեր Մայրենի Եկեղեցւոյն զաւակները հարազատ զաւակները ըլլան իրենց ընտանիքին, իրենց ազգին եւ եկեղեցւոյն»<sup>78</sup>: Իսկ Բաբգէն Ա. գրած է. «... կրօնական դաստիարակութիւնը (հասկնալ՝ քրիստոնէական դաստիարակութիւնը — ԳՔ) պատմական իրաւունքն է հայ ժողովուրդին: Սահակ-Մեսրոպի եւ Վռամշապուհ թագաւորի կատարած մեծ գործին գնահատանքը շատ բան կը կորսնցնէ իր ներքին իմաստէն, եթէ զանց առնուի կրօնական դաստիարակութիւնը Հայ եկեղեցւոյ, Հայ Տան եւ Հայ Դպրոցին մէջ: Եթէ կ'ուզէք, որ այսօրուան պատանութիւնը վաղը չայլասերի, հոգ տարէք անոր կրօնական դաստիարակութեան Կիրականօրեայ Դպրոցներով»<sup>79</sup>:

Այս գիտակցութեամբ եւ ոգիով է, որ 1980-ին Հովիւ եւ Հոգաբարձութիւն կ'որոշեն Կիրականօրեայ Դպրոցով օժտել համայնքը:

Հովիւը որոշման իրականացումին համար գործը կը յանձնէ խումբ մը կամաւորներու: Սկզբնական այս աշխատանքին մեծապէս կ'օժանդակեն Այտա Պաղջէճեան, Յարութիւն Փալանճեան ու տ. եւ տիկ. Զաւէն եւ Վալանթին Ապտալեան<sup>80</sup>:

Ս. Յակոբ Կիրականօրեան շատ դժուարութիւններու մէջէն



անցնելով հասած է մինչեւ թուականս:

Համայնքին պատմութեան մէջ կարեւոր անկիւնադարձ մըն է 1987-88 տարեշրջանին 3400 Nadon փողոց փոխադրու-  
թիւնը Ս. Յակոբ Ամէնօրեային: 1995-էն սկսեալ Կիրակնօրեան  
եւս կ'օգտուի վարժարանին շէնքէն:

Մինչեւ 1997-98 տարեշրջան, Կիրակնօրեայի վերջին կար-  
գը 6-րդ դասարանը կ'ըլլայ: Այն տարեշրջանէն մինչեւ 2001-  
2002 տարեշրջան՝ վերջին կարգը 8-րդը կ'ըլլայ, իսկ այն թուա-  
կանէն ասդին՝ վերջին կարգը 11-րդ դասարանն է:

Տնօրէնն է Թորոս Պապիկեան: Ան իր պաշտօնը կամաւոր  
յանձնառութեամբ կը վարէ տասնամեակէ մը ի վեր:

## Բ. Դրուագ

Ս. Յակոբ Կիրակնօրեայի պատմութեան մէջ յիշատակելի է  
հրատարակութիւնը «Մաշտոցի Արձագանգ» պարբերականին:

Անիկա հրատարակութեան երեք հանգրուաններ ունեցած է:

Առաջին հանգրուանին զայն խմբագրած են խումբ մը ու-  
սուցիչներու օգնական աշակերտ պատանիներ: Առաջին թիւը  
լոյս տեսած է 20 Դեկտեմբեր 1992-ին. իսկ վերջինը՝ 11 Դեկտեմ-  
բեր, 1994-ին. 13 թիւեր հրատարակուած են: Թէեւ համեստ ճիգ  
մը, սակայն արդարեւ «Աւետարանի լոյսէն նշոյլ մը (...) մեր պա-  
տանիներուն, ինչու չէ՝ նաեւ Ժողովուրդին» (Տ. Արմէն):

«Մաշտոցի Արձագանգ»ին երկրորդ հանգրուանը կ'երկա-  
րի 1995-2002: Այս տարիներուն անիկա լոյս տեսած է իբր տա-  
րեգիրք՝ ամէն տարեշրջանի աւարատին:

Երրորդ հանգրուանին սկզբնաւորութիւնը կը զուգադիպի  
«Մաշտոցի Արձագանգ»ի հրատարակութեան 10-ամեակին.  
2000-2003 տարեշրջան: Տնօրէն եւ ուսուցչական կազմ կը փա-  
փաքին պարբերականը հրատարակել տարեշրջանի իւրաքանչիւր  
ամսուան մէջ. եւ այն թուականէն ասդին «Մաշտոցի Արձա-  
գանգ»ը լոյս կը տեսնէ տարեկան 10 թիւերով: Զայն կը խմբագրէ  
Շադրիկ Պոյաճեան: Այս վերջին հանգրուանի «Մաշտոցի Արձա-

գանգ»ը հարուստ բովանդակութիւն կ'ունենայ: Անկէ պատճէնահանեալ օրինակներ տրամադրելի կ'ըլլան, բայց անոր ամենէն շատ տարածումը համացանցի միջոցով կ'ըլլայ: «Մաշտոցի Արձագանգ»ը կարդալու համար մեծ թիւով ընթերցողներ կ'այցելեն Կիրակնօրեայ կայքէջը, որ է՝ [www.sourphagop.org](http://www.sourphagop.org): 2000 թուականին է, որ Կիրակնօրեան ունեցած է իր սեփական կայքէջը:

Հակառակ տնօրէնութեան եւ ուսուցչական կազմի նախանձախնդրութեան, թափին եւ նուիրումին աշակերտութեան թիւի նուազումը շատ զգալի է: Թէեւ ասիկա միայն Մոնթրէալի հարց մը չէ, սակայն կը մտահոգէ համայնքին պատասխանատուները:

Ակնարկեալ հարցին առնչութեամբ Արամ Վեհափառ եւս գրեց. «Կիրակնօրեայ Վարժարաններու ներկայ ցանցը անհրաժեշտօրէն կարիքը ունի վերաշխուժացման: Այս մարզէն ներս աշակերտութեան թիւի նուազում եւ ընդհանուր հետաքրքրութեան պակաս մը կը նշմարենք: Կիրակնօրեայ վարժարանին դերը անփոխարինելի է, որպէս ամբողջացուցիչ ընտանիքի ու դպրոցի կողմէ ջամբուող կրօնական դաստիարակութեան: Մեր սպասումն է, որ մեր թեմերը վերակազմակերպումի ենթարկեն եկեղեցիներու ու դպրոցներու կողքին գործող Կիրակնօրեայ վարժարանները: Մեր հայրական ջերմ թելադրանքն է, որ մեր ծնողները իրենց զաւակները եւ դպրոցները իրենց աշակերտները առաջնորդեն Կիրակնօրեայ վարժարան»<sup>81</sup>:

## ՄԱՆԿԱՍՈՒՐՈՒ

2002 թուականին, Քէպեզի Ընտանիքի, Տարեցներու եւ Կանանց Ստտար Նախարարութիւնը (Ministère de la Famille, des Ainés et de la Contribution Féminine) կը պահանջէր մանկապարտէզներէն (Centre de la Petite Enfance), որ «Ընտանեկան Միջավայր» (Milieu Familial) կոչուած խնամակալութիւն մատուցանեն:

Յետ ուսումնասիրութեան, 2004-ի Օգոստոսին Լիզա Թօմպազեան, Ծաղկոցի փոխ-տնօրէնուհին, Հոգաբարձութեան ու Կրթական Գործադիր Մարմինին կողմէ ծրագրին պատասխանատու կը նշանակուի:

24 Յունուար 2005-ին, Ծաղկոցը 50 պզտիկի համար Milieu Familial-ի արտօնագիրը կ'ունենայ: Կը սկսի երեք տուներով եւ ապա մինչեւ Յունիս 2005 կ'ունենայ վեց տուներ:

Յունիս 2006-ին, վերոյիշեալ Նախարարութիւնը այս սպասարկութիւնը կը փոխանցէ Bureau de Coordination-ներուն: Արդ, դիմում կ'ըլլայ, բայց պատասխանը դրական չի գար: Ուստի Հոգաբարձութիւնը կ'ուսումնասիրէ սեփական մանկամսուր մը բանալու կարելիութիւնը եւ տուեալները նպաստաւոր գտնելով՝ վերոյիշեալ նախարարութեան կը դիմէ եւ արտօնագիրը ստանալէ ետք՝ կը ձեռնարկէ Ս. Յակոբ Վարժարանի շէնքի գետնայարկէն տարածութիւն մը յարմարցնելու եւ սարքաւորուելու: Ապա նորածին կառոյցը կը կոչէ «Արամ եւ Պերճուհի Մարգարեան Մանկամսուր»՝ բարերար զոյգին անունով:

Մանկամսուրը սկսաւ գործել 15 Հոկտեմբեր 2007-ին, իսկ պաշտօնական բացումը կատարուեցաւ 23 Յունուար 2008-ին:

## Գ. ԳԼՈՒԽ

### ԱՊՐԻԼԵԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐ

«...անհիմաստ չէ՞ ամէն Ապրիլ 24-ին  
կրօնական արարողութիւններով  
եւ աշխարհական հանդիսութիւններով  
սգալ մեր զոհերուն համար,  
երբ մեր կեանքի ընթացքին ամէն օր  
նոր Ապրիլ 24 կը սարքենք...».

Զարեհ Ա. Կաթողիկոս:

### Ա. Դրուագ

Ամենայն Հայոց Վշտալի Կաթողիկոսը՝ Գէորգ Ե. Կոնդակ մը հրապարակած էր եւ Ապրիլ 24-ը հռչակած յիշատակի օր Մեծ Եղեռնեան զոհերուն:

Իսկ Կիլիկիոյ Սահակ Բ. Կաթողիկոսը անտանելի տառապանքներէ անցնելէ յետոյ, երբ Անթիլիաս կը հաստատուէր, համախորհուրդ եւ համակամ Ամենայն Հայոց Հայրապետին՝ թէ՛ կաթողիկոսարանի եկեղեցիին մէջ, եւ թէ՛ թեմերու եկեղեցիներուն՝ «Նահատակաց Տօն»ը կատարելու մասնաւոր յորդորներ տուած էր: Իր օրով էր, թէեւ իր յաջորդներէն՝ Կաթողիկոսութեան Ընդհանուր Փոխանորդ Պետրոս արք. Սարաճեանի նախաձեռնութեամբ, որ 1938-ի Ս. Յակոբի տօնին (17 Դեկտեմբեր), Անթիլիասի Մայր Տաճարին կից՝ Նահատակաց Յուշարձան-Մատուռին հիմնարկէքը կատարուած է:

Հայուլթեան ներկայ ժամանակներու իրականութենէն անանջատելի է Մեծ Եղեռնի արհաւիրքին յուշը, ինչպէս յանձնառութիւնը՝ արդարութեան վերականգնումին:

Թէ Մոնթրէալի մէջ ե՞րբ սկսաւ Հայոց Յեղասպանութեան

յիշատակումը եւ Հայ Դատին հետապնդումը:

Գաղութին պատմութիւնը դար մը ունի: Իսկ անոր կազմութեան զանգուածային ալիքները սկսած են 50-ական թուականներուն: Նախքան այդ՝ Մոնթրէալի փոքրաթիւ հայերը Յեղասպանութեան յիշատակման որեւէ ձեռնարկ կազմակերպած էին, կամ հաւաքաբար կամ անհատաբար որեւէ դիմում ըրած էին քաղաքական շրջանակներու մօտ՝ արձանագրութիւն մը կամ տուեալ մը չեմ գտած: Չեմ իմացած նաեւ, որ եթէ քաղաքական բարձր դասեր թակող Իսրայէլ Օրի մը կամ Յովսէփ Էմին մը եղած է այս քաղաքին մէջ: Գրեթէ վստահութեամբ կարելի է ժխտական պատասխան մը տալ:

Հայ Դատի աշխատանքին, ուստի նաեւ Հայոց Յեղասպանութեան յիշատակման խմորումը այստեղ կը սկսի ՀՅԴ Միհրան Փափազեան Կոմիտէութեան ծնունդով՝ 1956-ին:

Ս. Յակոբի համայնքին մէջ Մեծ Եղեռնի զոհերու յիշատակին առաջին ոգեկոչումը տեղի ունեցած է 23 Ապրիլ 1961-ին<sup>1</sup>:

Նախ, եկեղեցական ժամերգութիւն եւ Հոգեհանգստեան արարողութիւն կատարուած է, ապա եկեղեցական Գործադիր Մարմինին եւ Հ.Ն.Դաշնակցութեան կազմակերպութեամբ գեղարուեստական եւ բանախօսական յայտագիր մը մատուցուած<sup>2</sup>:

Ոգեկոչումը ներկայացուած է իբր ազգի ազատութեան համար նահատակուածներուն հանդէպ՝ հաւատարմութեան ուխտի վերանորոգման առիթ<sup>3</sup>:

## Բ. Դրուագ

1965: Յիսնամեակ Մեծ Եղեռնի:

Թէ՛ Ս. Էջմիածնի եւ թէ՛ Կիլիկիոյ հայրապետները 1965 թուականը յայտարարած էին աղօթքի, ոգեկոչումի եւ սրբազան ուխտի տարի: Անոնք միասնականութեան ոգիով Ատիս Ապապայի մէջ 24 Յունուար 1965-ին կատարած էին բացումը տարուան ընթացքին կազմակերպելի Հայոց Յեղասպանութեան յի-

չատակուճներուն: Օրինակելի այս աղօթակցութիւնը սակայն պիտի չիւրացուէր Սփիւռքի բոլոր գաղութներուն մէջ:

Ծանր տիրութեամբ է, որ Ս. Յակոբի համայնքէն հրապարակագիր Սմբատ Յոխիկեան գրած է, թէ մինչ կը սպասուէր որ Շնորհազարդ հայրապետներուն Քրիստոսաւանդ սիրոյ դաստիարակիչ կեցուածքը տարածում գտնէր ի սփիւռս աշխարհի ցրուած Հայաստանեայց եկեղեցւոյ բոլոր զաւակներուն մօտ, թէ՛ հոգեւորականներուն եւ թէ՛ աշխարհականներուն, քանի ըստ խօսքին՝ «օրինակը միշտ վերէն կու գայ», այդպէս չեղաւ սակայն: Ան աւելցուցած է. «Ըստ մեզի հասած լուրերուն, ուրախալի է, որ շատ մը գաղութներու մէջ գործադրութեան դրուած է ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ թէ՛ կրօնական արարողութեանց եւ թէ՛ աշխարհական հանդիսութիւններու ընթացքին<sup>4</sup>:

Եղած են վայրեր, ուր կրօնականը միասին, բայց աշխարհական ոգեկոչումը առանձին կատարուած են<sup>5</sup>:

Պատահած է նաեւ հակառակը, միեւնոյն քաղաքին մէջ հոգեհանգստեան արարողութիւններ կատարուած են զատ զատ՝ օտար եկեղեցիներու մէջ, երբ հնարաւորութիւն եղած է բոլոր հաւատացեալները ի մի համախմբել մէկ եկեղեցւոյ կամարներուն տակ: Բայց աշխարհական ոգեկոչումները կատարուած են միասնաբար, ձեռք ձեռքի, միեւնոյն յարկին տակ, մասնակցութեամբ գաղութի բոլոր համայնքներուն եւ հոսանքներուն<sup>6</sup>:

Յաւալի է նշել, որ Ամերիկայի Միացեալ Նահանգներու շատ մը հայաստոց քաղաքներու մէջ, Ապրիլեան Եղեռնի Ոգեկոչումները եղած են հատուածական, բաժան բաժան: Հոն տակաւին սաւառնող ատելավառ հոգին, թոյլ տուած չէ որ երկու եղբայրներ քով քովի կայնած աղօթեն իրենց նահատակուած հօր եւ մօր հոգիներուն խաղաղութեան համար<sup>7</sup>:

Մոնթրէալ կ'ողգէր բոլոր համայնքներով եւ յարանուանութիւններով ոգեկոչել յիսնամեակը: Կը յառաջացնէր մարմին մը, որ կը կոչուէր՝ «Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակի Միացեալ Յանձնախումբ»<sup>8</sup>: Մինչ աշխարհական ոգեկոչումը կարելի կ'ըլլար միասնականօրէն կատարել, եկեղեցական արարողութիւնը կը մնար համայնքային սահմանին մէջ<sup>9</sup>:

## Գ. Դրուագ

1966-ի Ապրիլ ամսուան Լրաքաղին մէջ Սուրէն վրդ. Գաթարոյեանէ քարոզ մը տպուած է: Անիկա շահեկան է, որովհետեւ թարգման մըն է հայ կեանքին մէջ նոր ոգիի մը յառնումին: Կը համառօտեմ գայն:

Հովիւը Եգեկիէլ մարգարէի շատ հզօր տեսիլքին 37.5-6 համարները առած է իբր բնաբան եւ քարոզած ըսելով. «70 տարիներու ընկճուած եւ գերեզմարուած այդ ժողովուրդը, կենդանի նահատակ այդ ժողովուրդը զարթնեցաւ իր ընդամասցած վիճակէն, կառչեցաւ իր օրէնքին, աչքերը սեւեռեց դէպի Երուսաղէմի տաճարը, եւ իր հաւատքին եւ յոյսին որպէս պսակումը՝ ազատագրուեցաւ գերութենէն, վերաշինեց իր վրատակուած տաճարը եւ վերականգնեցաւ Երուսաղէմը»<sup>10</sup>:

Ան այս «օրինակելի երեւոյթը» քաղելով, ուզած է ցոյց տալ, թէ ժողովուրդներ եւ ազգեր կրնան դժբախտութիւններու ենթարկուիլ, կամ հալածուիլ, նախատուիլ եւ նոյնիսկ՝ նահատակուիլ: Սակայն այդ բոլորը որեւէ ժողովուրդի կամ ազգի կործանման ազդակներ չեն կրնար ըլլալ: Երբ ժողովուրդ մը կամ ազգ մը իր արժէքներուն հանդէպ «ճշմարիտ եւ հաստատուն հաւատք» ունի, առաւել ունի «յոյսը վերականգնանացման», նոյնիսկ եթէ ամբողջապէս կոտորուած է, «չնորհիւ իր հաւատքին եւ անմար յոյսին, յարութիւն կ'առնէ անպայման եւ իր ցեղային առաքիչութիւնները որպէս պատուանդան ունենալով՝ կը կանգնի, կը ծաղկի եւ կը բարգաւաճի»<sup>11</sup>: Սուրէն վարդապետ հայտնեցաւ եւ Հայ եկեղեցւոյ վերստին ապրիլը մեկնաբանած է իբր վկայութիւն այս ճշմարտութեան<sup>12</sup>:

Ան տուած է այս յորդորը. «...երբ յիսնամեակէ մը ետքը՝ մեր առջեւ կը բացուի նոր շրջան մը, երբ աշխատելու եւ ստեղծագործելու նոր հորիզոններ կը բացուին մեր առջեւ, սխալ է այլեւս լացի պատ համարել Ապրիլ 24-ը, սխալ է այլեւս սգալ մեր նահատակներուն յիշատակին համար, ինչ որ պիտի խռովէ անոնց հոգիներուն անդորրը: Այսուհետեւ կ'ուզե՞նք ոգեկոչել

անոնց յիշատակը, ապա Ապրիլ 24-ը ընենք հաւատքի օր, յոյսի աղբիւր եւ ստեղծագործական մեր ոյժին նոր թափի առիթ: Ահա այն ատեն մեր նահատակները գտած կ'ըլլան իրենց փառքը...»<sup>13</sup>:

Սուրէն վարդապետ կոչ ուղղած է մտիկ ընելու նահատակներէն եկող պատգամը, որ կը ձայնէ. «Մի՛ ունենաք մահուան երկիւղը, վերակառուցանեցէք ձեր հոգւոյն բիւրեղեայ տաճարները, կրանիթեայ ամրութեան մը վերածեցէք ձեր հաւատքի պատուանդանները, զօրացուցէք միութեան զգացումները եւ ձեր սրտերը թող տրոփեն միմիայն ազգին յառաջդիմութեան եւ եկեղեցւոյ պայծառութեան համար»<sup>14</sup>:

## Դ. Դրուագ

1985-ը եօթանասունամեակն էր Մեծ Եղեռնին, եւ Գարեգին Բ. Կաթողիկոս կոչ ուղղած էր նո՛ր թափով, նո՛ր շեշտով, նո՛ր սեւեռումով՝ կեդրոնական գործունէութեան մը վերածել Հայոց Յեղասպանութեան միջազգային ճանաչումը<sup>15</sup>, եւ Անթիլիասի մէջ տասներկու վերապրողներու ոտքերը լուացած էր ու ըսած. «Սրբուեցան ոտքերը մեր հայրերուն. թող իրենց ոտքերուն սրբութիւնը անցնի մե՛ր ոտքերուն ու այս աշխարհի մէջ քալենք մաքո՛ւր ոտքերով...»<sup>16</sup>:

Իսկ այս կողմն աշխարհի, կատարուած ճիգերէն յատկապէս յիշատակելի է Ուաշինկթընի ոգեկոչումը, որ ամբողջ ծրագիրը մըն էր: Անոր առաջադրումին եւ իրագործման հտին ու մէջ կեցած էր Արեւելեան Միացեալ Նահանգներու եւ Գանատայի Առաջնորդը՝ Մեսրոպ արք. Աշճեան:

Կիրակի, 21 Ապրիլին Մեսրոպ արքեպիսկոպոս Մոնթրէալ եկած էր, Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ պատարագած, հոգեշունչ եւ հայրենաբաղձ պատգամ մը տուած<sup>17</sup>:

Նոյն օրը այցելած էր դարակեաց Լուսիա Խուպէսէրեանին, եւ անոր լամբակը զարգարած շքանշանով մը<sup>18</sup>: Տիկին Խուպէսէրեան այն սերունդէն էր, որ «Հաւատով Խոստովանիմ»ի բո-



լոր տունները «գոց գիտէր»<sup>19</sup>: Հայոց Յեղասպանութեան 70-ամեակի Համազգային Ոգեկոչման Կեդրոնական Մարմինը գինք իր կազմին ՊԱՏՈՒՈՅ ԱՆԴԱՄՈՒՀԻ ընտրած էր<sup>20</sup>:

24 Ապրիլին Մոնթրէալէն եւ Օնթարիոյէն աւելի քան 3000 հայեր Օթթաուա գացին եւ թրքական հիւպատոսարանին դիմաց ցոյց ըրին: Գանատայի Հայ Դատի կազմակերպած այս ցոյցերը սկսած էին 70-ականներու առաջին կէսին եւ ցարդ կը շարունակուին:

Յաջորդ օրը երեք փոխադրակարգեր ճամբայ կ'ելլեն դէպի Ուաշինկթըն: Անոնց մէջ կային 65 վերապրողներ: Ուաշինկթըն հասնելով անոնք կը միանան հարիւրաւոր այլ վերապրողներու<sup>21</sup>:

26 եւ 27 Ապրիլին տեղւոյն Հիլթըն պանդոկի ձեֆըրսըն սրահին մէջ լսարանային ծրագիր մը կար՝ առիթ տալու համար վերապրողներուն, որ երիզագրումի համար իրենց ահասարսուռ տեսածներէն, յուշերէն եւ փորձառութիւններէն պատմեն: Նոյն ատեն ներկայ եղած է Սի. Պի. էս կայանը եւ կարգ մը պատմումներ արձանագրած<sup>22</sup>:

Կիրակի, 28 Ապրիլի միջ-եկեղեցական պաշտամունքին, որ տեղի ունեցած էր Արլինկթընի գերեզմանատան մէջ, հաւաքուած էին 6500 հայորդիներ՝ «աշխարհի չորս ծագերէն եկած»<sup>23</sup>: Այս առիթով Մեսրոպ արքեպիսկոպոս անգլերէն եւ հայերէն լեզուներով ճառ մը խօսած է եւ իր պատգամի վերջաւորութեան հրաւիրած է երիտասարդ սերունդը, որպէսզի անիկա վերապրող սերունդին յայտնէ՝ արդարութեան հետապնդումին իր ստանձնումը<sup>24</sup>:

## Ե. Դրուագ

Տարիներ պիտի անցնէին, եւ պիտի գար հասնէր եօթանասունհինգամեակը:

22 Ապրիլ 1990-ին է, որ երկար սպասումէ յետոյ, Մոնթրէ-ալի մէջ Հայ եկեղեցին իր զոյգ համայնքներով եւ քոյր յարանուանութիւններով միասնաբար աղօթեց Եղեռնեան իր զոհերուն համար: Եւ ասիկա զարմանալի, պիտի ըսէի հրաշալի հնազանդութիւն մըն էր Մայր Հայրենիքի ճակատագրական պահուան եւ Արցախեան գոյամարտի կոչին, որ զգաստութիւն կը պահանջէր:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սրբազան Արարողութիւնը: Պատարագած է Ս. Յակոբի հովիւր՝ Արմէն. քհնյ. Իշխանեան: Ու նախքան «Եւ տուր մեզ»ը, եկեղեցւոյն հովիւ՝ Բարթող քհնյ. Խրգածեան կարդացած է Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսին 75-ամեակի Կոնդակը:

Եւ Հայրապետին կոչը այս էր. «1915-ի ցեղասպանութեան զոհ զնացած հայոց հոգիները այսօր մետ հետ են եւ միանում են մեր աղօթքներին, մեր մաքառումներին: Նրանք քաջալերում են ու զօրացնում մեզ եւ պատգամում բոլորիս՝ անշէջ պահել նրանց ուխտը, ամուր պահպանել մեր ազգային հաւատամքն ու հաւաքական կամեցողութիւնը, միասնական ուժերով յաղթահարելու համար մերօրեայ դժուարութիւնները, գործելով ողջմտութեամբ ու հեռատեսութեամբ...»<sup>25</sup>:

## Զ. Դրուագ

Հայոց Պատմութեան ուսուցիչ մը իր աշակերտներուն ըսած է, թէ ինչպէս տարուան մէջ ունինք Յեղասպանութեան յիշատակման եւ ոգեկոչման օրը, բարի կ'ըլլայ եթէ ազգովին ինքնաքննութեան եւ ինքնաքննադատութեան թուական մըն ալ ունենանք:

## Է. Դրուագ

Այստեղ կը նշեմ կարեւորագոյն հանգրուանները, երբ Հայ Դատի աշխատանքները վարձատրուեցան թէ՛ նահանգային, եւ թէ՛ հասարակապետութեան մակարդակներուն վրայ<sup>26</sup>:

1.- 27 Մարտ 1980-ին, Օնթարիօ նահանգի խորհրդարանը պաշտօնապէս ճանչցած էր Հայոց Յեղասպանութիւնը<sup>27</sup>:

2.- Շուտով՝ 10 Ապրիլին, Քէպեգի Ազգային ժողովը Հայոց Յեղասպանութեան ճանաչման բանաձեւ ընդունած<sup>28</sup>:

3.- 24 Ապրիլ 1986-ին Օնթարիոյի վարչապետ՝ Տէյվիտ Փիթըրսըն Ապրիլ 24-ը «Հայկական Յիշատակութեան Օր» հռչակած էր<sup>29</sup>:

4.- 23 Ապրիլ 1996-ին, Գանատայի խորհրդարանին մէջ, Պլոգ Քէպեգուայի որոշումով, Հայոց Յեղասպանութեան ճանաչման հարցը քննարկումի նիւթ կը դառնայ: Պլոգը բանաձեւ մը կը ներկայացնէ, որուն «ցեղասպանութիւն» բառը կը փոխարինուի «ողբերգութիւն»ով եւ կը վերածուի այս բանաձեւին.-

Խորհրդարանը մէկուկէս միլիոն զոհ խլած 24 Ապրիլ 1915-ի հայոց ողբերգութեան 81-ամեակին առիթով եւ ի յիշատակ մարդկութեան դէմ ոճիրներու՝ իւրաքանչիւր տարուան Ապրիլի 20-27 երկարող շաբաթը կը հռչակէ մարդուն դէմ՝ մարդուն անմարդկայնութեան յիշատակման շաբաթ<sup>30</sup>:

Այդ առնչութեամբ Հորիզոնի մէջ կը կարդանք. «1980-էն ի վեր, երբ Օնթարիոյի եւ Քէպեգի խորհրդարանները պաշտօնապէս ճանչցան եւ դատապարտեցին Հայոց Յեղասպանութիւնը, Գանատայի խորհրդարանին կողմէ Հայոց Յեղասպանութեան ճանաչման ճամբուն վրայ հիմնական քայլ է 23 Ապրիլ 1996-ին որդեգրուած բանաձեւը, որ սակայն, ամբողջութեամբ չի բաւարարեր Գանատայի հայութեան ակնկալութիւնները»<sup>31</sup>: Ապա մէջբերելով երեսփոխանի մը մէջ խօսքը, հաստատ յոյսը յայտարարած՝ թէ պիտի գայ օրը, երբ դէպքը պիտի կոչուի իր ճշգրիտ անունով՝ ցեղասպանութիւն<sup>32</sup>:

5.- 17 Ապրիլ 1997-ին Մոնթրէալի Քաղաքապետական

Խորհուրդը կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը<sup>33</sup>:

6.- 2002 թուականի 13 Յունիսն է, եւ Գանատայի Ծերակոյտը իր նիստին կ'ընդունի Հայոց Ցեղասպանութեան իրողութիւնը: Առաջադրուած բանաձեւը կը բովանդակէ տասնմէկ հիմնաւորումներ, եւ երկու պահանջք Գանատայի կառավարութեան: Պահանջքները.

ա.- Ճանչնալ Հայոց Ցեղասպանութիւնը եւ դատապարտել որեւէ փորձ որ կը միտի խեղաթիւրել պատմական ճշմարտութիւնը կամ նուազեցնել արարքին իբր ցեղասպանութիւն տարողութիւնը. եւ

բ.- Ապրիլ 24-ը հռչակել 20-րդ դարու առաջին ցեղասպանութեան զոհ մէկ ու կէս միլիոն հայերու յիշատակման օր<sup>34</sup>:

7.- 12 Դեկտեմբեր 2003-ին Քէպեզի Ազգային Ժողովը իր թիւ 194 օրէնքով, Ապրիլ 24-ը կը հռչակէ «Հայոց Ցեղասպանութեան Ոգեկոչման Օր»<sup>35</sup>:

8.- 2004 թուականի 21 Ապրիլին Գանատայի Դաշնակցային Խորհրդարանը M-380 բանաձեւով՝ պաշտօնապէս կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը եւ գայն կը հռչակէ իբր «մարդկութեան դէմ ոճիր»<sup>36</sup>: Կը յիշեմ. ի՜նչ մեծ յուզում էր, որ տիրեց այդ օր Խորհրդարան հրաւիրուած համայնքային ներկայացուցիչներու սրտերուն մէջ:

9.- 2006 թուականի 3 Ապրիլին Պրիթիշ Գոլումպիա նահանգի Օրէնսդիր Ժողովը կը ճանչնայ Հայոց Ցեղասպանութիւնը (Motion 59) եւ Ապրիլ 24-ը Յիշատակի Օր կը հռչակէ<sup>37</sup>:

10.- Քիչ անց՝ 21 Ապրիլին ալ Գանատայի վարչապետ Սթիւըն Հարփըր կը հրապարակէ դանատահայութեան ուղղուած 16 Ապրիլ 2006 թուակիր հետեւեալ հաղորդագրութիւնը.-

Իմ անկեղծ ցաւակցութիւնները կը յայտնեմ բոլոր անոնց, որոնք այսօր կը յիշատակեն Մեծ Եղեռնի տխուր տարելիցը:

91 տարի առաջ, հայ ժողովուրդը ենթարկուեցաւ անպատմելի տառապանքներու եւ մարդկային կորուստներու: Վերջին տարիներուն, Գանատայի Ծերակոյտը որդեգրեց բանաձեւ մը՝ այդ թուականը ճանչնալով որպէս «20-րդ դարու առաջին ցեղասպանութիւնը», մինչ ներկայացուցչական Տունը որդեգրեց

բանաձեւ մը, որ կը հաստատէ 1915-ի Հայոց Յեղասպանութիւնը եւ կը դատապարտէ այս արարքը մարդկութեան դէմ ոճիր»։ Ես եւ կուսակցութիւնս զօրակցեցանք վերոյիշեալ բանաձեւերուն եւ կը շարունակենք զօրակցիլ նաեւ այսօր։

Մենք երբեք պէտք չէ մոռնանք պատմութեան դասերը։ Նոյնպէս, պէտք չէ թոյլատրենք, որ պատմական թշնամութիւնները բաժնեն մեզ։ Գանատացի ժողովուրդին ընձեռուած ազատութիւնը, ժողովրդավարութիւնն ու մարդկային իրաւունքները, արմատաւորուած են իրարու հանդէպ փոխադարձ յարգանքի մեր հասկացողութեան մէջ։

Կը միանամ ձեզի այսօր, յիշատակելու անցեալը, քաջալերելով ձեզ որպէսզի պատուէք ձեր նախահայրերը եւ պայծառ ապագայ մը կառուցէք բոլորիս համար, Գանատայի մէջ<sup>38</sup>։

## Թ. Դրուագ

Եօթանասունամեակի միացեալ Ս. Պատարագէն եւ Հոգեհանգստեան արարողութենէն ետքը, տարբեր պատճառներ գերակշիռ եղան քան մէկ ու կէս միլիոն զոհերուն արիւնները, եւ ողբերգականօրէն առ Աստուած աղօթքները մնացին հատուածական հոգեբանութեան մէջ...

Կու գար 2007-ի 23 Ապրիլը։

Ս. Յակոբ եկեղեցին լեցուած էր բոլոր համայնքներու եւ յարանուանութեանց թէ՛ հրէցներու եւ թէ՛ փոքրիկներու երգչախումբերով, ու կը յորդէր ժողովուրդով։ Ներկայ էին նաեւ Հայաստանի Հանրապետութեան հաւատարմատարը՝ Արման Յակոբեան եւ կրօնական ու ազգային կառոյցներու ներկայացուցիչներ։

Այն օր Բագրատ եպս. Գալստանեան արտայայտուելով, ըսաւ. «Ձեմ եկած այստեղ ողբալու եւ լալու, այլ հաստատելու, թէ մեր մէկ ու կէս միլիոն զոհերուն մարտիրոսութեան գիտակցութեամբ է, որ մենք պիտի յաղթանակենք»<sup>39</sup>։

Իսկ խաժակ արք. Յակոբեան կոչ ուղղեց եւ ըսաւ. «Թող

*այս պահը դառնայ բոլոր համայնքներուն եւ յարանուանութիւններուն միջեւ գործակցութեան ճշմարիտ մեկնակէտ: Մեր պատմութեան այս ժամանակներուն՝ ստիպողութիւն եւ անհրաժեշտութիւն է գործակցութիւնը: Գանատայի հայութիւնը թէ՛ իր կրօնական եւ թէ՛ իր ազգային կառոյցներով՝ միասնականօրէն եւ համագործակցութեան ոգիով պէտք է շարժի, որպէսզի իր գոյապայքարը ամուր քայլերով յառաջ երթայ»<sup>40</sup>:*

## Փ. Դիրուագ

*2008-ի 6 Յուլիսին Քէպեգ քաղաքին մէջ տեղի ունեցաւ Կոմիտաս վարդապետի կիսանդրիին պաշտօնական բացումը: Այս վկայարանը, որ նախաձեռնուած էր Քէպեգի Հայ Դատին կողմէ, կը տեսնեմ որ ուխտավայր մըն է, որպէսզի ողբերգութեան արձանը արդարութեան վերականգնումին համար անլռելիօրէն ղօղանջէ, իսկ հայոց համար՝ նաեւ ստեղծագործ լինելութեան ամէնօրեայ այլ յուշարար մը եւս դառնայ:*

## Դ. ԳԼՈՒԽ

### ՀՈՎՈՒՄՊԵՏԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

1

ԽՈՐԷԱ Ա. ԿԱԹՈՒԿՈՍ ԲԱՐՈՅԵԱՆ

#### Ա. ԴՐՈՒԱԳ

Ամերիկահայ Ազգային Երեսփոխանական Ժողովը 23 Փետրուար 1957-ի նիստին կ'որոշէր դիմել Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Զարեհ Ա. Կաթողիկոսին, եւ խնդրել, որ ան հաճի ընդունիլ թեմը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կազմին մէջ<sup>1</sup>:

Եւ յաջորդ օրուան թուականով կաթողիկոսին խնդրագիր-նամակ մը կը զրկէր, ուր կ'ըսուէր՝ թէ ունին խորին հաւատքը, որ կաթողիկոսը պիտի ընդունէր գիրենք «որպէս Հայաստան-եայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ հարազատ գաւակ» եւ պիտի փրկէր գիրենք եւ իրենց գաւակները «օտարացման վտանգէն»<sup>2</sup>:

Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը իր հովանին կը շնորհէր<sup>3</sup>:

Խորէն արք. Բարոյեան 15 Հոկտեմբեր 1957-ին իբր Հայ-րապետական Լիագօր Պատուիրակ կ'անցնի Միացեալ Նահանգ-ներ: Այնտեղ՝ Ատլանտեանէն Խաղաղական կը շրջի հոգեւոր եւ ազգային խանդավառութիւն կը ստեղծէ: 19 Յունիս 1958-ին կը վերադառնայ Անթիլիաս:

1959-ին դարձեալ Միացեալ Նահանգներ կը գտնուի: Իր առաքելութիւնն էր՝ հովուել ու կազմակերպել 25 տարիներ Հայ եկեղեցւոյ օրհնութենէն գրեթէ զրկուած եւ այլ դաւանութիւն-ներու մատակարարածով իր հոգեւոր կարիքները գոհացնող ժողովուրդ մը<sup>4</sup>:

Խորէն արքեպիսկոպոս 1 Մայիսին կը նախագահէ Ազգային Երեսփոխանական Ժողովին, որ Ազգային Կեդրոնական Վարչութիւն կ'ընտրէ<sup>5</sup>, եւ իբր Առաջնորդական Տեղապահ՝ Հրանդ եպս. Խաչատուրեանը<sup>6</sup>:

Պատուիրակ Սրբազանը 26 Օգոստոս 1959 թուակիր նամակ կը ստանայ Մոնթրէալէն՝ Երուանդ Բաստրմաճեանէ: Նամակը կը յայտնէ Մոնթրէալի փափաքը՝ Դեկտեմբերին Սրբազանի ձեռամբ նոր սեփականացեալ եկեղեցւոյ օծման<sup>7</sup>:

Խորէն արքեպիսկոպոս 9 Սեպտեմբեր 1959 թուակիր նամակով կը պատասխանէ, գրելով. «Եկեղեցւոյ Հանդիսաւոր օծումը կը կատարենք 29 Նոյեմբեր 1959-ին, Կիրակի օր: Մեր վերջին Կիրակին է, որմէ վերջ կը վերադառնանք Լիբանան: Հաճեցէք, ուրեմն, նշանակուած այս օրուան համար կարգադրել ամէն ինչ եւ այժմէն իսկ գրել մեզի, թէ յարմա՞ր է այդ օրը Ձեզի համար: Այլապէս պիտի չկարենանք Ձեզի գալ, քանի որ ստիպուած ենք վերադառնալ մեր պաշտօնատեղին՝ Պէյրութ, Դեկտեմբերի առաջին շաբթուն»<sup>8</sup>:

29 Նոյեմբերին օծումը կարելի պիտի չըլլար իրականացնել, որովհետեւ եկեղեցւոյ ու սրահի նորոգութիւնները հակառակ նախատեսութեան՝ տակաւին ընթացքի մէջ պիտի ըլլային: Ուստի, Եր. Բաստրմաճեան խնդրած էր սրբազան արարողութիւնը կատարել յաջորդ տարուայ գարնան<sup>9</sup>: Օծումը պիտի վիճակուէր Առաջնորդ՝ Հրանդ եպս. Խաչատուրեանի, 5 Յունիս 1960-ին<sup>10</sup>:

Սակայն Գործադիր Մարմինը պիտի կազմակերպէր Հայրապետական Լիագօր Պատուիրակին այցելութիւնը ի Մոնթրէալ 1959-ի Հոկտեմբեր 27-30:

Խորէն արքեպիսկոպոս կ'այցելէ ու «պատմական եւ անմոռանալի օրեր» կ'ունենայ համայնքը<sup>11</sup>:



## Բ. Դրուագ

Զարեհ Ա. Կաթողիկոսի կանխահաս վախճանումէն ետքը, Կրիկիոյ Ս. Աթոռին կը բարձրանայ Խորէն արք. Բարոյեան եւ կ'ըլլայ Խորէն Ա. Կաթողիկոս:

Ան կ'ընտրուի 5 Մայիս 1963-ին եւ օծումը կը ստանայ շաբաթ մը անցած՝ 12 Մայիսին: Բիւզանդ. Եղիայեան Խորէն Վեհափառի գահակալութեամբ բացուող տասնամեակը «բացառիկ կարեւորութիւն ունեցող» որակած է, որովհետեւ այդ ժամանակամիջոցին Կրիկիոյ Կաթողիկոսութիւնը ներքնապէս կը բարեգարգուի, թեմերը կը կազմակերպուին, միջ-եկեղեցական յարաբերութիւնները կ'ընդարձակուին եւ շինարարական աշխատանքները «արտակարգօրէն արագ» կ'արդիւնաւորուին թէ՛ Կաթողիկոսարանին եւ թէ՛ թեմերուն մէջ<sup>12</sup>:

Խորէն կաթողիկոս Հովուապետական այցելութեան կ'ելլէ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի իր հօտին՝ 8 Ապրիլ 1969-էն սկսեալ:

Միացեալ Նահանգներու մէջ մեծ խանդավառութիւն ստեղծած էր եւ կենսունակութիւն ներշնչած՝ արեւելեան ափերէն մինչեւ արեւմտեան ափերը: Հակառակ առողջական բարդացումի մը՝ Հայրապետը Միացեալ Նահանգներու իր առաքելութիւնը նոյն եռանդով իր լրումին հասցուցած՝ 19 Յուլիս 1969-ին Գանատա կ'անցնէր եւ Մոնթրէալ կը հասնէր<sup>13</sup>:

Ան Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ խորապէս յուզուած կ'ողջունէ համայնքը այսպէս յայտարարելով. «Մեր Հովուապետական այցելութեան ձեռնարկէն յայնքան սիրալիր ու բազմամարդ ընդունելութիւնը Առաջին տեղը կը գրաւէ, եւ որով Մոնթրէալահայրապետական նուիրումն ու հաւատքը Հայց. Առաքելական Եկեղեցւոյ հանդէպ յստակօրէն կ'արտացոլայ»<sup>14</sup>: Եւ կը պատուիրէ գիտակից ու պարտաճանաչ քաղաքացիները ըլլալ այս երկրին՝ բարձր պահելով հայու արժանապատուութիւնը<sup>15</sup>:

Երեկոյեան կաթողիկոսը Ս. Յակոբ նորակերտելի եկեղեցւոյ հիմնաքարերու օծումը կը կատարէ<sup>16</sup>: 16 կնքահայրերու ձե-

ուամբ մատուցուած հիմնաքարերը օծելէ յետոյ, կը պատգամէ Հայ Դպրոցի եւ Հայ եկեղեցւոյ մասին՝ իբր «բարոյական շէնքեր», իբր բերդեր ինքնապաշտպանութեան<sup>17</sup>:

Յաջորդ առաւօտ, Հայ կաթողիկէ համայնքի Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ (615 Սէնթ Գրուա փողոց) Մոնթրէալի հայութեան մասին սա վկայութիւնը կու տայ Խորէն կաթողիկոս. «Հարիւր առ հարիւր հայ զանգուածի մը դէմ յանդիման կը գտնուինք, որ եկած է Միջին Արեւելքէն: Ազգային եւ եկեղեցական կեանքը այնպէս մը պէտք է կազմակերպել այժմէն, որ 5-10 տարի ետք չզղջանք մեր յապաղումը: Ուրախ ենք, որ դուք արդէն գիտակից էք ձեր պարտականութեան: Երէկ ազգապահպանման ու հայապահպանման երկու կառոյցներու՝ եկեղեցիի եւ դպրոցի հիմերը օծեցինք, ուր, վստահ եղէք, ձեր փոքրիկներուն զաւակներն անգամ հայ պիտի ըլլան ու հայ ապրին»<sup>18</sup>:

Երեկոյեան Շնորհազարդ Հայրապետին ի պատիւ կազմակերպուած ճաշկերոյթը իր աւարտին հասած էր, եւ հրաւիրեալ պաշտօնական անձինք մեկնած էին: Սրահին մէջ շրջող գաղափարներուն եւ խօսակցութիւններուն վրայ, ան կը կանգնի եւ Հայ Դատին ու երիտասարդութեան դերին մասին կ'արտայայտուի, յորդորելով. «...մենք բոլորս պէտք է գիտնանք, թէ արդար դատ մը ունինք. իրաւունքներ, հողային պահանջներ: Մեր դատը լուծուած չէ, անտեսուած կը մնայ տակաւին: Եւ մենք ժառանգորդն ենք մեր պապերու քրտինքով ոռոգուած հողերուն: Այդ սրբազան հողերուն վրայ, հայը՝ մարդկային քաղաքակրթութեան սատար հանդիսացաւ իր մշակոյթով: Արդ, ո՞վ պիտի պահանջէ հայուն արդար իրաւունքները, եթէ ոչ դո՛ւն, հայ երիտասարդ: Վերջին զուլումէն 50 տարի անցած է, բայց ի՞նչ է կէս դարը պատմութեան համար. ակնթարթ մը միայն: Պէտք է պատրաստուիլ յարմար պայմաններու: 451-ին ալ այդպէս եղաւ. հայութիւնը չէր շահած ճակատամարտը Աւարայրի մէջ, սակայն գիտէր, թէ պատերազմը պիտի շահի վերջին հաշուով: Արդարեւ, ատկէ 30 տարի ետք, նոր սերունդը Պերոզի ձեռքով ստորագրել տուաւ Նուարսակի դաշինքը՝ 482-ին, եւ ձեռք բերաւ իր ինքնավարութիւնը: Մենք ալ հիմա այդ-

պէս պէտք է կրթենք մեր զաւակները: Ահա ասոր համար է որ դպրոց, դպրոցներ պէտք են մեզի»<sup>19</sup>:

## Գ. Դրուագ

Խորէն Ա. Կաթողիկոս երեք անգամ հրաւիրուեցաւ գալու եւ կատարելու օծումը նորաշէն Ս. Յակոբ եկեղեցւոյ ու չկրցաւ մէկը՝ 1973-ին, միւսը՝ 1975-ին եւ երրորդը՝ 1978-ին:

Կիրակի, 15 Ապրիլ 1973-ին պիտի օծէր, սակայն իրեն իսկ «անծանօթ մնացած» պատճառով մը<sup>20</sup> կը յետաձգուէր թուականը:

Նաեւ՝ Կիրակի, 12 Հոկտեմբեր 1975-ին, սակայն Լիբանանի քաղաքական կացութեան յանկարծական վատթարացումը՝ կը ստիպէր արարողութեան յետաձգումը անգամ մը եւս<sup>21</sup>:

Եւ վերջապէս, Կիրակի, 15 Հոկտեմբեր 1978-ին. դարձեալ Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով...<sup>22</sup>:

## ԳԱՐԵԳԻՆ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

### Ա. ԴՐՈՒԱԳ

Գարեգին կաթողիկոսի մասին, ինչպես այլ տեղեր, նաև Մոնթրեալի մէջ հիացում տարածուած էր շատ կանուխէն:

18 Յունիս 1963-ի ատենագրութիւնը արձանագրած է, թէ խորէն կաթողիկոս նամակ մը գրած է Հոգաբարձութեան, յայտնելով թէ Մոնթրեալի մէջ տեղի պիտի ունենայ Եկեղեցիներու Համաշխարհայի Խորհուրդի (WCC/ԵՀԽ) Faith and Order-ի համաժողովը 8-26 Յուլիսին, որուն իբր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ներկայացուցիչ պիտի մասնակցի Դպրեվանքի տեսուչ Գարեգին Ծ. վրդ. Սարգիսեան<sup>23</sup>:

Գերապատիւ Հայր սուրբը Մոնթրեալ պիտի հասնէր 6 Յուլիսին: Ուստի, Հոգաբարձութիւնը միաձայնութեամբ կ'որոշէր օգտուիլ այս «աղուոր առիթ»էն եւ վայելել Հայր սուրբին «հոգեգմայլ» պատարագը եւ լսել «հոգեշունչ» քարոզը: Եւ եթէ պատահութիւն ըլլար՝ կազմակերպել նաև հրապարակային հաւաքոյթ մը<sup>24</sup>:

Գարեգին Ծ. վարդապետ Մոնթրեալ իր այս կեցութեան ատեն երեք անգամ կը պատարագէ եւ «ներշնչող կուռ քարոզներ» կու տայ, կը դասախօսէ, կը նախագահէ հանդիսութիւններու եւ հաւաքոյթներու. ի մի բան՝ հմայիչ ելոյթներ կ'ունենայ:

Ան 27 Յուլիսին կը մեկնի Մոնթրեալէն: Եւ 29 Յուլիսին Նիւ Եորքէն նամակ կը գրէ Հոգաբարձութեան ատենապետ՝ Եր. Բաստրմաճեանին, ուր կ'ըսէ. «Անջնջելի յիշատակներ կը պահեմ Մոնթրեալ այցելութենէս եւ վստահ եմ, որ միշտ քաղցրօրէն պիտի վերյիշեմ անցուցած օրերս Մոնթրեալի հայ համայնքի կեանքին մէջ: Ժողովուրդին հետ շփումը հոգեւորական մարդուն համար ներշնչման եւ զօրացման աղբիւր է...»

Հետզհետե՛ս աճող Ձեր համայնքին համար կ'աղօթեմ առ Աստուած, որ մնայ իր հայկական հարազատ նկարագրին մէջ անայլայլ եւ հայ կեանքը եկեղեցւոյ կեդրոնին շուրջ ըլլայ միշտ ծաղկուն ու բարգաւաճ»<sup>25</sup>:

Յաջորդ առիթը 1969 թուականին է: Լրաքաղի թղթակցու-  
թիւնը այսպէս սկսած է. «Մոնթրէալահայութեան համար խան-  
դավառութեան օրեր եղան 15-16 Փետրուարի Շաբաթ եւ Կիրա-  
կի օրերը»<sup>26</sup>: Ապա կը տեղեկացուի, թէ Գարեգին եպս. Սարգիս-  
եան, որ Միացեալ Նահանգներ այցելած էր իբր ԵՂՍ-ի Գործա-  
դիր Մարմնի անդամ՝ միջ-եկեղեցական ժողովներու մասնակ-  
ցելու համար եւ բանախօսելու կարգ մը աստուածաբանական  
ուսումնարաններու մէջ, Մոնթրէալէն հրաւէրի ընդառաջելով  
եկած էր Ս. Պատարագ մատուցանելու եւ բանախօսելու Սրբոց  
Վարդանանց մասին<sup>27</sup>:

1970: 18-19 Հոկտեմբերին ան վերստին Մոնթրէալ է: Ելոյթ  
կ'ունենայ Համազգայինի ռատիօժամէն եւ կ'ըսէ. «Ինչ որ տեսայ  
այս անգամ իմ (Մոնթրէալ) այցելութեանս ընթացքին, որ երրորդ  
այցելութիւնս էր արդէն, այն գեղեցիկ երեւոյթն է, թէ այս հա-  
մայնքը աճած է թիւով եւ ուճացած է իր ազգային-եկեղեցա-  
կան, մշակութային եւ երիտասարդական գործունէութեամբ... Հոն  
ուր հայն է գացեր, հոն հայր իր հայութիւնն է ապրեցուցեր. այ-  
լապէս ինք չէ ապրեր: Եւ այսօր, երբ մենք այս ընդարձակ ու  
բարգաւաճող երկրի մէջ մեր կեանքը կը խառնենք տեղւոյն ժո-  
ղովուրդի կեանքին, երբ ամբողջութեամբ կը նուիրուինք այս  
երկրի զարգացումին եւ մեր կեանքի վերակառուցումին, ես ի  
խորոց սրտէ կը մաղթեմ, որ այս նուիրումին մէջ միշտ ուժեղ  
մնայ հայուն ջիղը: Տոկունութեան, հաւատարմութեան եւ յաղ-  
թանակի հաւատքով պրկուած ջիղը, առանց որուն ժողովուրդ մը  
չատ բան կը կորսնցնէ իր արժանիքներէն եւ իր արժէքներէն»<sup>28</sup>:

1973-ի 6 Հոկտեմբերին Մոնթրէալ կու գայ իբր Կաթողի-  
կոսական Փոխանորդ Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի  
Թեմին: Յաջորդ օրը նորաչէն Հայ Կեդրոնի «Աւետիս Ահարոն-  
եան» սրահին մէջ Հոգաբարձութեան նախաձեռնութեամբ եւ  
Համազգայինի կազմակերպութեամբ տեղի ունեցած հանդիսու-

Թեան ներշնչիչ ճառ մը կը խօսի, ուր կ'ըսէ. «Այստեղ այն ժողովրդական ջերմ, գիտակցականօրէն յարգալիւր վերաբերումը, որուն ես անցեալին հանդիպած եմ, իմ կեանքիս երջանիկ պահերէն եղած է: Եւ հիմա որ կու գամ այդ նոյն բարեկամութեան եւ քաղցր վերյիշումներու զգացումով, կ'ըսեմ թէ երջանիկ եմ, որ իմ առաջին հովուական այցելութիւնը այդ խճողուած քաղաքէն ետք, այս տաք, բաց եւ սիրտ ալ բացող մթնոլորտին մէջ է, որ տեղի կ'ունենայ:

Չեմ կրնար չանդրադառնալ այն օրերուն, երբ ասկէ ճիշդ տասը տարիներ առաջ ես հայութեան առջեւ գտնուեցայ Մոնթրէալի մէջ, համեստ սրահի մը մէջ, խրճիթի մը մէջ թերեւս: Եւ երբ այդ օրերու պատկերը կը բաղդատեմ այս օրերու պատկերին հետ, իսկապէս որ ես փառք կու տամ Աստուծոյ այն համոզումով, որ մեր ժողովուրդը այսօր Մոնթրէալի մէջ իր պատկանած եւ իր պաշտած ազգի պատմական ճանապարհին վրայ կը գտնուի: Այն ճամբան՝ այսօրը երէկէն աւելի գեղեցիկ ընելու, եւ վաղը այսօրէն աւելի պայծառացնելու ճամբան է: Եւ հայութեան համար եթէ երբեք այս տեսիլքը, կեանքի այս ոճը եւ այս ճանապարհը չըլլայ, այս հայութիւնը աշխարհիս մէջ չի գիմանար»<sup>29</sup>:

Ան այլ անգամներ ալ պիտի գար: Յիշատակելի են Կարպիս (Կարօ) սրկ. Իշխանեանի քահանայացման առիթը, եւ իբր Առաջնորդ՝ 1976-ի Ս. Յակոբի տօնին, երբ Լիբանանահայութեան Օժանդակութեան Ազգային Գործադիր Մարմնի վարիչի հանգամանքով՝ Մոնթրէալի մէջ հանգանակութեան կազմակերպման մղում պիտի տար<sup>30</sup>:

22 Մայիս 1977-ին Գարեգին արք. Սարգիսեան կ'ընտրուէր Աթոռակից Կաթողիկոս Կիլիկիոյ: Այդ հանգամանքով ան 1979-ի Յուլիսին Թորոնթօ եւ Համիլթըն միայն կ'այցելէր<sup>31</sup>:

## Բ. Դրուագ

2 Յունիս 1983-ին Գարեգին Բ. Կաթողիկոս իր ամենէն երկար Հովուապետական այցելութեան կ'ելլէ, դէպի Միացեալ Նահանգներ եւ Գանատա:

6 Յունիսին է, որ հայրապետը Մոնթրէալ կը հասնի:

Գարեգին Կաթողիկոս Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ գոհաբանական աղօթք վերծընծայելէ եւ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անսասանութեան համար Աստուծոյ օգնականութիւնը խնդրելէ ետքը մարգարէական շեշտով մը կ'ըսէ.-

Մենք մէկ պատկանելիութիւն ունինք: Ու մեր պատկանելիութիւնը Հայց. Ս. Եկեղեցին է եւ մեր ազգային գիտակցութիւնն ու արժանապատուութիւնը:

...Կեանքի մէջ երկու աշխարհագրութիւն կայ. մէկը Աստուծոյ կողմէ գծուած, միւսը՝ մարդոց: Մարդոց գծածը կը փոխուի. Կիլիկիա էինք, Սիւ մայրաքաղաք էինք, ու հիմա ո՞ւր եկանք. պատմութեան ընթացքն է ասիկա: Աստուծոյ գծած աշխարհագրութիւնը՝ հոգիի աշխարհագրութիւն է: Անիկա անփոփոխ է: Աստուած ինք գծեց մեր հոգիին աշխարհագրութիւնը. յիշենք Միածնի էջքը եւ ոսկեայ ուռնակով բախելը հայոց հողին վրայ: Աստուծոյ գծած աշխարհագրութիւնը մեր պարագային ուրիշ անուն չունի, բայց միայն մէկ անուն՝ ՔՐԻՍՏՈՆԵՍԱՅ ՀԱՅ: Հայ եկեղեցւոյ զաւակներուն միջեւ խտրութեան ոգի պէտք չէ ըլլայ: Ամէնքս ալ կանչուած ենք, որ Աստուածաշունչի եւ մեր հայրերու լոյսին մէջ ապրելու իմաստութիւնը ունենանք եւ ապրինք»<sup>32</sup>:

10 Յունիսին Ս. Պատարագ կը մատուցանէ Մոնթրէալի Մարի Ռէն տիւ Մոնտ հոյակերտ եւ գեղակերտ տաճարին մէջ, եւ կը պատգամէ. «Հայոց Ս. Պատարագին ընթացքին վերածեցէք ձեր հոգիները Թափոր լերան ու դիտեցէք դուք զձեզ նայուածքովը Աստուծոյ, նայուածքովը մեր Մովսէսներուն եւ մեր Եղիաներուն: Չարիք մը կայ, գաղտնի, սուրէն աւելի վտանգաւոր: Չարիք մը կայ, որմէ անձնասպանութիւն յառաջ կու գայ: Ներքին

որդն է անհիկա, որ ներսէն կ'ուտէ, եւ ոչ թէ սուրը՝ որ ծառին կեղեւը միայն կրնայ կտրել. կամ կրնայ ճիւղ մը ծառէն անջատել: Ներքին այդ որդը, մեզ ներսէն ուտող որդը Սփիւռքի մէջ այն քաշողական ուժերն են, որ մեզ կը հեռացնեն մեր քրիստոնէատիպ հայութենէն եւ հայատիպ քրիստոնէութենէն»<sup>33</sup>:

Նոյն օրը երեկոյեան Փլաս տէ գ'Արի մէջ կազմակերպուած էր Ս. Յակոբ եկեղեցւոյ 25-ամեակի մեծ հանդիսութիւնը: Գարեգին Վեհափառ լայնաշունչ, հիանալի ճառ մը կը խօսի, որ քեզի ընթերցողիդ եւ ապագային համար կը մատուցանեմ ամբողջութեամբ.-

Ինչո՞ւ կը տօնէք 25-ամեակ:

Ի՞նչ ըսել կ'ուզէք:

Ինծի համար, ոչ մէկ ամեակ արժէք ունի իբրեւ յարգանքի ընծայում՝ եթէ հոն կենայ: Այնտեղէն կը սկսի: Մենք այսօր 25-ամեակը կը տօնենք Ս. Յակոբ եկեղեցւոյ, որպէսզի նախ յարգանք ընծայենք անոնց, որոնք վաստակեցան եւ տեսիլքը ունեցան, սկզբնատիպ եւ սկզբնաքայլ այն նախաձեռնութիւնները բերին, առանց որոնց, մենք այսօր այս հանգրուանին չէինք կրնար հասնիլ: Բայց յարգանքը այնքան պատեհ կ'ըլլայ, այնքան ճշմարտօրէն բարբախուն կ'ըլլայ, որքան յարգանքին տուն տուող ապրումը մեր մէջ ըլլայ յանձնառութիւն եւ շարունակական կամքի պրկում: Հետեւաբար, այս երկու երեսներուն կ'ուզեմ անդրադառնալ:

Մենք պէտք է յարգանք ընծայել գիտնանք: Մենք պէտք է յարգել գիտցող ազգ դառնանք: Ես այսօր կեցած եմ այս բեմին վրայ ու ձեր բոլորէն վեր՝ իմ աչքերս դէպի երկինք կը բարձրացնեմ յիշատակին համար անոնց, որոնք վաստակեցան, եւ այժմ երկրի վրայ չեն ու երկինքէն մեզ կը դիտեն: Թող խայտան ու ժպիտ դառնան իրենց դէմքերը երկինքէն մեր վրայ:

Եւ ապրողներուն՝ յարգանք. գիտակցական եւ խորունկ յարգանք բոլոր անոնց, որոնք քար մը գրին քարին վրայ: Հետեւաբար, եկէք այսօր մենք բոլորս ալ անդրադառնանք այն պահուն, երբ այս համայնքի կազմաւորման ճարտարապետները, յստակ կերպով հաւանաբար չէին գիտեր, թէ ուր կը հասնի այս համայն-



քը: Յստակ ու ճշգրիտ կերպով չէին կրնար հաւանաբար նախատեսել այն բոլոր իրադարձումները, որոնք 25 տարի հետքը՝ այսօր շքեղօրէն կը պարգուին մեր աչքերուն: Բայց անոնք տեսիլքով աշխատեցան եւ դէպի յառաջ նայիլ գիտցան եւ առաջին իսկ վայրկեանին՝ անտէր ու անկեդրոն, անեկեղեցի ու անդպրոց եւ անմշակոյթ այս բուռ մը հայութեան համար տուն մը ապահովեցին Սէնթ Զօթիքի փողոցին վրայ, եւ այնտեղը ըրին խմորումի նախադաշտը, ուրկէ՛ ծնունդ առին հետագայի բոլոր նախաձեռնութիւնները: Այն բոլորին ես այսօր յարգանքի խօսք ունիմ, բայց եթէ բոլորին անունները ուզեմ թուել, հաւանաբար շատ մոռացումներ կատարուին, բայց գոնէ, իբրեւ Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, եւ իբրեւ վկաներէն մէկը այդ օրերուն, ականատես ու հաղորդակից վկաներէն մէկը, ես այստեղ, 25-ամեակին առիթով, պարտք կը զգամ այդ սերունդին ուղղել իմ յարգանքի խօսքս եւ այդ սերունդին մէջէն այսօր անուամբ յիշել այստեղ ներկայ Բաստրամանեան Երուանդն ու եղբայրները, Լեւոն Տէր Ասատուրեանն ու իր ընտանիքը, եւ տակաւին շատ ուրիշներ, որոնց մասին պատմութիւնը եւ ժամանակը պիտի դան վկայելու անոնց հայու արժանաւորութեան վրայ, վկայելու անոնց դէպի ապագայ նայող ճակտին ու նայուածքին մասին, եւ պիտի ըսեն. «Անոնք եղան արժանի զաւակները հայութեան», որովհետեւ քար մը դրին քարին վրայ, որուն վրայ եկաւ կամարը, եկաւ դմբէթը, եկաւ դպրոցը, եկան... Յարգանք ձեզ, այս համայնքի սկզբնական սերունդ, որ գիտցաք այս ժողովուրդէն կազմակերպեալ համայնք ընել, կեդրոնի գաղափարը յղանալ եւ անով ծնունդ տալ այսպիսի ճոխ հայութեան: Յարգանքի այս տուրքը բնական տուրք է, սակայն, ամբողջական չի կրնար ըլլալ այս յարգանքը, եթէ երբեք մենք, մեր յանձնառութեամբ չկարենանք այս համայնքին կեանքը այնպէս ընել, որ 25-ամեակը դառնայ ոչ թէ հանգրուանակէտ մը, այլ՝ սկզբնակէտ մը, նոր իրադարձումներու:

Այսօր, Մոնթրէալի համայնքը չէ այն, որ էր 25 տարիներ առաջ՝ տնտեսականօրէն, ընկերայնօրէն, մշակոյթի տեսակէտով, սերունդի զարգացման տեսակէտով, ժողովուրդի բազմութեան տեսակէտով, եւ այլ տեսակէտներով:

Մենք պէտք է հաշտուինք այն գաղափարին հետ, որ Սփիւռքի մէջ պիտի մեռնինք: Եթէ պիտի մեռնինք անգամ՝ պէտք է հաշտուինք մեռնելու գաղափարին հետ: Հաշտուիլն ինքնին կ'արագացնէ մահը, նման այն անձին, որ երբ տոգորի հիւանդութեան դէմ, ոյժ կ'առնէ իր տոգորումի կամքէն: Սփիւռքը մեր ցանկութիւնը է: Մենք մեր կամքով է, որ Սփիւռք դարձանք, մեզի Սփիւռքը պարտադրուեցաւ մեր ահաւոր ու դարաւոր թշնամիին կողմէ: Մենք Սփիւռքի մէջ պէտք է որ այնպէս մը հաշտուինք եղածին հետ, որ հայութեան Սփիւռքի մէջ ապրիլը անկարելիութիւն է, ո՛չ: Եթէ երբեք մենք գիտնանք նոր իմաստութեամբ մը, կեանքի առողջ փիլիսոսափայլութեամբ մը մօտենալ հարցերուն, կրնանք ապրիլ, եւ ապրիլ այնքան՝ որքան մեր շունչը կը զօրէ, եւ թողունք մեր զաւակներուն, անոնց թողնելուն ու մեր ծոռներուն, որ իրենք շարունակեն իրենց ճիտին պարտքը: Մենք պէտք է ընենք այն միայն, ինչ որ գերագոյն աստիճանի մարդկային կարողութիւնը եւ հնարաւորութիւնը թոյլ կու տան մեզի: Գերագոյն, ըսի: Մի՛ հաշտուիք յետդարձի եւ նահանջի հոգեբանութեան հետ: Ձեր դպրոցը, ձեր մշակոյթը, ձեր հանդէսները ինծի յոյս կը ներշնչեն եւ ամէն զոհողութեան գնով արժանի է այսպիսի համայնք մը պահել, որովհետեւ չեմ կրնար հաւատալ, որ որեւէ մէկ զոհողութիւն աւելի արժէք կրնայ ունենալ, քան անմահութեան գինը: Զոհողութիւն մը, որ հոգեկան յաւիտեանական արժէք մը կ'իրականացնէ, զոհողութիւն է քրիստոնէական իմաստով, մարտիրոսական կնիքով, մեր հայրերուն կերպարով:

Իմացայ եւ հրճուեցայ, որ դուք Մաղկոցով սկսաք, նախակրթարանին հասաք եւ Սեպտեմբերէն անդին կը կտրէք նոր հանգրուան մը՝ երկրորդական վարժարանի բարձրացնելով ձեր դպրոցը: Ատկէ աւելի մեծ նուէր չէիք կրնար տալ ինծի. բայց ես այդ լուրը կ'առնեմ, քովս կը պահեմ եւ մէկ տարի ետքը, ձեզմէ հաշիւ կը պահանջեմ: Եթէ երբեք մեր հայ ժողովուրդը Մոնթրէալի մէջ պիտի չունենայ իմաստութիւնը իր զաւակը հայ երկրորդական վարժարանին յանձնելու՝ ինքն իր ճիգը յարգած եւ արժեւորած չըլլար: Որովհետեւ սիրելիներ, հոգեբանութիւնը ցոյց

կու տայ, դաստիարակութեան փիլիսոփայութիւնը յստակօրէն ցոյց կու տայ, որ 12-13 տարեկանին նախակրթարանէն շրջանաւարտ եղող փոքրիկը, որ իմացական կազմաւորման բոլոր տուեալները չունի իր մէջ, եւ կը նմանի այն ջուրին, որ կու տաս դաշտին եւ սակայն, այդ ջուրը հազիւ քանի մը խոտեր կամ ծիւղեր կը ծլցնէ, եւ յետոյ ջուրը կը դարձնես դէպի ուրիշ տեղ, եւ կը չորնայ: Ես գիւղացի եմ եւ շատ ածու ջրած եմ. գիտեմ թէ ինչ կը նշանակէ ջրտուքի հետեւողականութիւն: Եւ եթէ երբեք, մարդկային անձին կազմաւորման ամենէն որոշադրիչ հանգրուանը ճանչցուած է այն հանգրուանը, երբ մարդ գիտակցականօրէն իր մէջ կ'առնէ իրեն մատուցուածները. եւ ոչ թէ կաթին հետ ու կաթին պէս՝ մօր կողմէ, եւ կամ մանկապարտէզի ուսուցչուհիին կողմէ տրուածներուն պէս: Այլ՝ երբ ինք կ'առնէ, կ'իւրացնէ իր գիտակցական առողջ ճիգով: Այդ տարիներն են կազմաւորման ամենէն կարեւոր տարիները: Եւ կը կորսնցնէք դուք ձեր աշխատանքը նախակրթարանին մէջ, եթէ զայն չհարունակէք երկրորդականի մէջ: Անկէ ետքը, համալսարանին մէջ այլեւս, անձը կազմաւորուած է, եւ անոր մասին, ես գոնէ անձնապէս, մեծ մտավախութիւն չունիմ ապագայի հաշտոյն: Բայց, երկրորդական ուսման համար ձեր առած քայլը, ամենէն առողջ քայլերէն մէկն է, որ այս 25-ամեակին դուք պիտի առնէք իբր առաջին նոր հանգրուան մեր կրթական, հայակերտման զնացքին եւ առաքելութեան ճամբուն վրայ:

Հետեւաբար, կ'ուզեմ որ ամենէն խոր լրջութեամբ ծնողները յանձն առնեն այս պատրաստակամութիւնը՝ իրենց զաւակները հայ երկրորդական վարժարանի մէջ կազմաւորուած տեսնելու, որպէսզի հայ գիրն ու գրականութիւնը, հայ երգն ու երաժշտութիւնը միայն մանկութեան շրթներու վրայ ծաղկելիք բան չըլլան, այլ հասակ առած պարմանութեան մէջ եւս տեղ ու արտայայտութիւն գտնեն:

Վերջապէս, ես կ'ուզեմ երրորդ կէտի մը անդրադառնալ, այն ալ բառերուն եւ արարքներուն միջեւ կամըջուամի անհրաժեշտութիւնն է:

Մենք դարձեալ փորձութեան ենթակայ ենք: Փորձութիւնը

ես կը կոչեմ հռետորութեան փորձութիւն: Մշակոյթով հարուստ ենք, պատմութիւնը վկայ. եւ խանդավառութեամբ յատկանշուած ազգ մըն ենք, ուժական: Բայց այս օրերուն, քսաներորդ դարու այս հանգրուանին, ես կը նկատեմ, որ բառերը սկսած են տոգուել իբրեւ ապրում եւ իբրեւ գործ: Բառեր կը գործածենք, անուններ կ'արտասանենք, արժէքներ կը հռչակենք, հռետորութեան մէկ պահու մը, բանաստեղծութիւններ կը լսենք՝ «Մե՛նք», «Մե՛նք», «Մե՛նք»... Բանաստեղծութիւնը լաւ է, մեզ կը վերացնէ, մեզ հողէն կը կտրէ, մեզի հաճոյք կը պատճառէ, բայց ազգ մը միայն բանաստեղծութեամբ չապրիր: Եթէ քիչ առաջուան բանաստեղծութիւնը ես գիտականօրէն ուզեմ վերլուծել, մենք ահաւոր թերութիւններու մէջ ենք: Մենք այն ե՞նք, ինչ որ ժագ Ս. Յակոբեան կ'ըսէ: Այդ ենք բեմի՞ն վրայ, հարց կու տամ ձեզի: Այդ է՞ք ձեր ընտանեկան կեանքին մէջ: Տարէք այդ բանաստեղծութիւնը ձեզի հետ ու կարդացէք: Այդ է՞ք ձեր համայնքային կեանքին մէջ: Հետեւաբար, բառերով ինքնամխիթարութիւնը ազգի մը նահանջի եւ մահուան քայլն է: Ըսուած է, թէ Հոռմը գրաւեց Յունաստանը, բայց Յունաստանը նուաճեց Հոռմը: Յունաստան Հոռմը գրաւեց իր մշակոյթով, իր արժէքներով, որոնք թափանցեցին հոռմէացիներու հոգիներուն մէջ եւ Հոռմը կերտեցին յունական փիլիսոփայութեան եւ արուեստի տուեալներուն վրայ: Մենք այսօր, Սփիւռքի մէջ, երբեմն այնպիսի ալիքներէ կը տարուինք, բանաստեղծութիւններ դիւրին-դիւրին կ'արտասանենք, եւ կ'ելլենք ու Չարենցին ոճով կ'ըսենք. «Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ». մեր հայրերը՝ կ'ըսենք. Խորենացին՝ կ'ըսենք. Եղիշէն՝ կ'ըսենք, եւ այլն եւ այլն: Ո՞վ, ո՞վ կը կարդայ, ո՞վ կ'իւրացնէ, ո՞վ իր արեան մէջ կը շողէ այս արժէքները: Կը դառնանք շեփորային ազգ մը, բայց ես կ'ուզեմ, որ դառնանք սրինգային ազգ մը, այսինքն՝ հոգիէն բխող, հոգիին գացող, եւ հոգիին մէջ սուղուող այդ աւիշը հայկական, որ ալիք առ ալիք, ելեւէջ առ ելեւէջ կը խառնուի մեր նկարագրին մէջ: Շեփորային ազգ մը դատարկութեան կ'երթայ: Դէպի սպանական դղեակներ ապրելու հոգեբանութենէն կը տարուինք: Ուրեմն, իմ երրորդ խօսքն է ձեզի, որ դուք կարենաք մեր արժէքները այն-

պէս մը շաղախել ձեր կեանքին մէջ, որ անոնք այլեւս դադարին անու՛ն ըլլալէ ու դառնան կեանք, գաղափար, ապրում, ներշնչում, գիտութիւն եւ հաղորդութիւն:

Ինքնատես ըլլանք, ինքնաքննադատ ըլլանք, որպէսի կարենանք առողջ ապրիլ:

Կամքին ու կեանքին միջեւ կամուրջ պէտք է նետել: Գաղափարին եւ գործին միջեւ պէտք է կամուրջ նետել, այլապէս գաղափարները «պալոն»ներու պէս կը մնան օդին մէջ, ու կեանքը կ'երթայ իր ընթացքով, առանց գաղափարներէն ներագդուելու:

Սիրելիներ, մենք այսօր Սփիւռքի մէջ եթէ գիտնանք նոր փրկիստիպալութեամբ մը մեր արժէքները մեր կեանքին շաղախել եւ միջազգայնացնել, հաւատացէք՝ մենք կը մնանք հայ, եւ պատուով հայ: Ոչ թէ ինքնագոհութեամբ հայ, ոչ թէ ինքնամխիթարութեամբ հայ, այլ՝ գիտակցականօրէն հպարտ հայ, եւ ոչ թէ՝ դատարկամտօրէն հպարտ հայ:

Հպարտ կ'ուզէք ըլլալ. իմաստ չունի ձեր հպարտութիւնը, իրաւունք չունիք հպարտ ըլլալու առանց ճանաչումի: Ո՞վ կրնայ հպարտ ըլլալ բանով մը, որ չի ճանչնար. անարժէք է, անհիմն է, անգոյն է, անհամ է այս հպարտութիւնը: Հպարտութիւն մը, որ գիտակցական ճանաչումէն կու գայ, մարդուս կարծէք թէ արեան գոյնն է, իսկ միւսը՝ մարդուս վրայ դրուած ներկ մըն է: Ահա թէ ինչու, ես որ այսքան օտար աշխարհներու մէջ գտնուեցայ, մեր ժողովուրդի բոլոր խաւերուն հետ եղայ, ու մեր մշակոյթը ջանացի իմ տկար ոյժերովս, որքան կրնայի, ուսումնասիրել, կ'ապրիմ այդ տազնապը եւ կ'ուզեմ այդ տազնապը ձեզի հետ բաժնել: Մի չորցնէք հայոց մշակոյթը ձեր կեանքին մէջ: Եկեղեցին եթէ սրբութիւն է ձեզ համար, եթէ «Եկեղեցին հայկական ծննդավայրն է» ձեր հոգւոյն, եթէ «Եկեղեցին հայկական ծովուն դիմաց ալեկոծ, նաւահանգիստ մ'է խաղաղ. ցուրտ գիշերին հուր եւ բոց», եւ եթէ երբեք «տօթակէզ ցերեկին անտառ մըն է ստուերոտ»՝ շուշաններ կը ծաղկի՞ն Ծարականի գետին մօտ. կը ծաղկի՞ն: Ծարականները ո՞վ գիտէ: Եւ այսօր իմացաք հինգերորդ դարէն եկող շարականներու փունջ մը Աւագ Ծաբթուան, որ Սո-

վետական Հայաստանի աշխարհական մարդը կը որակէ գեղար-  
ուեստական արժէք: Իսկ մենք, այդ շարականներուն շուշանին  
մէջ կը ծաղկինք եւ կը ծաղկեցնե՞նք:

Արդ, եկեղեցի, ազգ, դատ, գրականութիւն, երգ, մշակոյթ,  
եթէ բառեր են որոնք արժէք ունին, ձեր կեանքն է միակ տեղը  
ուր այդ արժէքը ես կրնամ կարդալ: Այլապէս, զանոնք կը կար-  
դամ գիրքերուն մէջ, եւ դուք կապ չունիք անոնց հետ, իրաւունք  
չունիք ատոնցմով հպարտանալու: Եթէ եկեղեցին եկեղեցի է,  
ձեզմով եկեղեցի է: Եթէ գրականութիւնը գրականութիւն է, ձեր  
ընթերցումով գրականութիւն է: Եւ հետեւաբար բառերը յարգել  
գիտցէք եւ ոչ թէ՛ արտասանել միայն. եւ յարգանքը բառերուն՝  
բառերուն իմաստին ապրումն է մարդու կեանքին մէջ:

Եւ վերջապէս, եթէ դուք իսկական նախանձախնդրութիւն  
ունիք հայու ապրումին ու զայն կը յայտարարէք հռետորական  
ճառերով, եկէք դուք զձեզ շաղախել գիտցէք հայութեան այդ  
ամբողջական էութեան, in the itops, dans l'esprit այս ազգին, որ  
մեր մշակոյթով կ'արտայայտուի:

Սիրելիներ, եթէ ձայն ունիս՝ ձայնդ արժեցուր. եթէ տաղանդ  
ունիս՝ տաղանդդ արժեցուր. եթէ գրականութեան շնորհք ունիս՝  
գրէ՛. եթէ երբեք ժամանակ ունիս՝ աշխատէ՛. եթէ երբեք կամք  
ունիս՝ գործէ՛: Այլապէս, մնացեալն ամբողջ ունայնութիւն է:

Վերջերս, առիթով մը, Reader's Digest-ի մէջ խօսք մը  
կարդացի, որ շատ սրտիս դպաւ եւ որ կրնայ փակումը ըլլալ իմ  
այսօրուայ խօսքիս. «Love has always its ways, indifference has  
only excuses» (Մէրը միշտ իր միջոցները, անտարբերութիւնը՝  
միայն պատրուակներ): Եթէ երբեք մարդ էք, ու եթէ երբեք հայ  
էք, եղի՛ր, եղի՛ր, ոչ անունով, ոչ «եան»ով, ոչ հայերէնով, այլ  
քու կեանքով, եւ դէպի ապագայ նայող քու պրկուած հայեաց-  
քով: Եւ այն արձանագրութիւնը, որ ես Նոր Զուղայի մեր տո-  
մարին մէջ կարդացեր եմ, վանեցի հայ մը գրեր է. «Երբ այս  
թանգարանը մտայ, ես ինքզինքս երկու հազար տարեկան զգա-  
ցի»: Ոչ այսինչ այսինչեան, այլ՝ ազգի մը մէկ մասնիկը, որ եր-  
կու հազար տարի ապրած է: Ո՞վ կ'ուզես եղիր: Տաղա՞նք ըլլաս,  
եղիր. հարո՞ւստ ըլլաս, եղիր. բայց ոչինչ ես առանձին: Ոսկին

հողին մէջ քար է, ոսկին ոսկի է կեանքին մէջ: Տաղանդը տաղանդ է կեանքին մէջ: Մարդը մարդ է կեանքին մէջ: Հայը հայ է կեանքին մէջ: Եկէք ուրեմն, ձեռքերնիս սոթթենք ու մտնենք կեանքի ճանապարհին մէջ հայութեան եւ ըսենք:

Ով որ քաջ է, ի՞նչ կը սպասէ,  
Արդէն ժամանակն է թող գայ,  
Օրհասական մահ է  
Դէպի կեանք, ոն առաջ<sup>34</sup>:

## Գ. Դրուագ

1990: 6-8 Յունիս Մոնթրէալի մէջ է Հայրապետը:

Ինչպէս գրած եմ, Գարեգին Ա. Կաթողիկոս իր ճանապարհը ըրած էր Լիբանանէն Պէլճիքա: Ապա Նիւ Եորք գացած էր ՄԱԿ-ի Ընդհանուր Քարտուղար Խաւիէ Փերէզ տը Գուէլարին յանձնելու Մեծ Եղեռնի 75-ամեակի առիթով գրուած, Հայկական Յեղասպանութեան Յուշագիր մը, որ ստորագրուած էր իր եւ Ամենայն Հայոց կաթողիկոսին կողմէ<sup>35</sup>:

Մոնթրէալ գալով, Գարեգին Վեհափառ Ս. Յակոբ Վարժարանին մէջ աղօթած էր, ըսելով. «փառք քեզ Տէր, որ այսպիսի սերունդ այս հողին վրայ կ'աճեցնես»<sup>36</sup>:

## Դ. Դրուագ

4 Ապրիլ 1995-ին Գարեգին Բ. Կաթողիկոս Կիլիկիոյ Ս. Էջմիածնի մէջ ընտրուելով՝ կը կոչուէր Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Յաջորդ տարուան 27 Յունուարին, Ս. Յակոբի համայնքը երջանկութեամբ կը սպասէր Հայոց Հայրապետին այցը իր հօտին:

Ինչպէս գրած էի, ան կը մտնէ իր այնքան սիրած յարկէն

ներս՝ սրտագեղ ընդունելութեամբ մը: Եւ Ս. Խորանէն կը յայտարարէ, թէ այսօր՝ հայութեան հազուադէպ պատեհութիւն մը կը տրուի՝ իր նոր պատմութիւնը կերտելու<sup>37</sup>:

Յաջորդ օր Գարեգին կաթողիկոս Ս. Պատարագ կը մատուցանէ Սէն Ժոզէֆ Օրաթուարին մէջ եւ կը պատգամէ, թէ իւրաքանչիւր հայ նախախնամութենէն տրուած շնորհքներ ունի: Անոր կոչումն է իր շնորհները ի սպաս դնել մարդկութեան եւ մեր ազգին ի նպաստ, որպէսզի իր կեանքը իմաստաւորուի: Այլապէս խոտի նման կու գայ եւ կ'երթայ<sup>38</sup>:

29 Յունուարին Գարեգին կաթողիկոս կ'այցելէ Ս. Յակոբ Ազգային Երկրորդական եւ Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Նախակրթարան եւ կ'ըսէ.-

Այս դպրոցը 1973-ին 60 աշակերտներով սկսաւ, ես ալ կնքահայրերէն մէկը եղայ, որովհետեւ այդ տարին էր, որ ես այս գաղութին առաջնորդութեան կոչուեցայ: Եւ 20-ամեակ մը ետքը 60 աշակերտներով սկսած այս դպրոցը, ութը հարիւր անցնող աշակերտութիւն ունի:

... այսօր երբ կը տեսնեմ այս սրահը լեցուն պատանիներով եւ պարմանուհիներով եւ վառ հայերէն արտայայտութեամբ, կենսունակ հոգիով, խայտալից հայեացքներով, ապագայատեսիլ նայուածքներով, ես փառք կու տամ Աստուծոյ, որ վերածնունդը զոց չէ մեր կեանքին մէջ, այլ կեանք է, իրականութիւն է, եւ նշում է դէպի բարձրը, դէպի աւելին, դէպի լաւագոյնը:

Այսօր դուք այն սերունդն էք, որ ոչ թէ միայն Սփիւռքի մէջ, մեր ինքնութիւնը պահելու առաքելութիւնը պահելով պիտի ապրիք, այլ նաեւ այդ ինքնութիւնը առողջ պահելով, կենսունակ պահելով, Մայր հայրենիքը զօրացնելու հեռանկարով պիտի ապրիք, որովհետեւ այդ հայրենիքը բոլորինն է, անոնց որոնք այնտեղ կը բնակին, եւ անոնց որոնք այնտեղ չեն բնակիր, բայց իրենց սիրտը այնտեղ է, որովհետեւ իրենց պատմութիւնը այնտեղ կերտուած է:

Մարդ երկու անգամ կը ծնի. առաջին անգամ կը ծնի ի հօրէ եւ ի մօրէ. բնախօսական երեւոյթ մըն է այդ կեանքը: Երկրորդ անգամ կը ծնի, երբ կը գիտակցի թէ ինչո՞ւ համար ծնած



է: Իմաստը կեանքին երբ կը հասկնանք, այն ատեն է որ կեանքը իրեն համար արժէք կը ստանայ:

Եկեղեցի, հայրենիք, պետութիւն, լեզու ամէն բանէ վեր է, ասոնց մէջ պէտք է ըլլանք այնպէս գօտեպնդուած, որ մեր մարմինը այդ գօտիով ամուր մնայ, այլապէս կը տկարանանք ու կը թուլնանք: Ազատութիւնը պարտաւորութիւն ու պարտականութիւն է: Յանձնառութիւն ստանձնել պէտք է»<sup>39</sup>:

## ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՔԷՐԵՇԵԱՆ

### Ա. ԴՐՈՒԱԳ

28 Յունիս 1995-ին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը կ'ունենայ իր նոր գահակալը՝ յանձին Արամ Ա. Կաթողիկոսի:

Պատմական դէպք մըն էր Արամ կաթողիկոսի ձեռնադրութեան եւ օծման արարողութիւնը, որ կատարեցին Գարեգին Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց, Երուսաղէմի Պատրիարք՝ Ն. Ամենապատուութիւն Թորգոմ արք. Մանուկեան եւ Կ. Պոլսոյ Պատրիարք՝ Ն. Ամենապատուութիւն Գարեգին արք. Գազանձեան, այլեւ Էջմիածնի եւ Կիլիկիոյ ուխտի արքեպիսկոպոսներ:

Այդ առիթով նորօծ Վեհափառ Հայրապետին յայտարարութիւնը կ'ըլլայ. «Կիլիկիոյ Ս. Աթոռը պիտի ծառայէ մէկ եկեղեցի, մէկ ժողովուրդ եւ մէկ հայրենիք տեսլականով»:

Արամ Վեհափառ Հովուապետական իր առաջին այցելութեան կ'ելլէ 1 Հոկտեմբեր 1997-ին: Նախ՝ Միացեալ Նահանգներ, ապա՝ Գանատա:

Հովուապետը 40 օրեր արեւմտեան այս աշխարհի իր հօտին մէջ եւ հետ կ'ըլլայ:

4 Նոյեմբերին է, որ Արամ Ա. Մոնթրէալ կը հասնի:

Ան համայնքին ուղղած իր առաջին պատգամին մէջ, Հայ եկեղեցւոյ մեծ դերը ցոյց կու տայ իբր «ինքնութեան իրագործում»ի ամբողջ, եւ կը ներբողէ, ըսելով.-

Հայ եկեղեցին կեանք եղաւ մեզի, երբ մահը շրջապատեց մեզ:

Հայ եկեղեցին լոյս տուաւ մեզի, երբ խաւարը պատեց մեր աշխարհը:

Հայ եկեղեցին յոյս ներշնչեց մեր ժողովուրդին, երբ անիկա իր պատմութեան ամենէն տխուր պայմաններուն մէջն էր:

Կարելի է հայոց պատմութեան խորհուրդը հասկնալ՝

առանց Հայ եկեղեցւոյ<sup>40</sup> :

Արամ կաթողիկոս այցելութիւն կու տայ Ս. Յակոբ Երկրորդական եւ Վարդգէս եւ Աստղիկ Սարաֆեան Վարժարան, նաեւ ՀՕՄ-ի Ծաղկոց:

Վարժարանի Բաստրմաճեան սրահին մէջ, Վեհափառը աշակերտներուն ուղղելով իր խօսքը, կ'ըսէ. «Նս պիտի ուզէի, որ դո՛ւք գիտնաք, սիրելի աշակերտներ, որ այս դպրոցը, հայ դպրոցը տեղ մը չէ ուր մենք կ'երթանք բան սորվելու համար միայն: Դուք կը գտնուիք այնպիսի տեղ մը, որ մեր ժողովուրդի գոյութեան հիմնաքարը եղած է անցեալին, այսօր ու ապագային: Կարելի չէ մեր ժողովուրդի ապագային մասին խօսիլ, յատկապէս Սփիւռքի մէջ, առանց հայ դպրոցին»<sup>41</sup>:

Արամ կաթողիկոս ՄըգԿիլ Համալսարանին մէջ դասախօսութիւն մը կու տայ, նիւթ ունենալով կրօնքի եւ մշակոյթի փոխազդեցութեան թեման: Վեհափառը դասախօսելու հրաւիրուած էր Համալսարանի Նախագահին կողմէ:

20-րդ դարու Հայ աստուածաբանական մտքին կարկառուն մի քանի դէմքերէն է Արամ Ա.: Անոր գաղափարներուն արդիականութիւնը եւ կարգաւորեալ ու յստակ մտածողութիւնը գինք դարձուցած են նաեւ միջազգայնօրէն ծանօթ հոգեիմացական սպասարկու մը եւ յոյժ փափաքուած դասախօս մը: Այս հռչակով է, որ ան կը դասախօսէ համալսարանին մէջ:

Արամ կաթողիկոս նախ կը սահմանէ կրօնք եւ մշակոյթ եզրերը: Ապա կը խօսի ներկայ ընկերութեան գլխաւոր յատկանիշներուն մասին, որպէս շրջագիծ կրօնքի եւ մշակոյթի արտայայտութեան: Արդի մշակոյթը կը բնորոշէ որպէս քանդումի, սարսափի, բռնութեան ու անարգարութեան մշակոյթ, եւ յետոյ կը շեշտէ կրօնքին դերը՝ որպէս մշակոյթը ազատագրող եւ վերանորոգող: Վեհափառը կ'անդրադառնայ տեղական կամ մասնաւոր մշակոյթներու այլասերումին, եւ միջազգային սպառողական մշակոյթի մը յառաջացումին, որ կրնայ վտանգել մարդկութեան եւ աշխարհի ապագան: Կրօնքներու անհանդուրժողութեան մասին արտայայտուելով, կ'ըսէ թէ ատիկա արդիւնքն է քաղաքական ու ցեղային նպատակներով շահագործումներու<sup>42</sup>:

Այս այցելութեան առիթով Վեհափառը վկայած է, թէ հայտնութեամբ ապրող ու հայ սրբազան արժէքներուն ու նուիրական ձգտումներուն համար պայքարող ժողովուրդ մը կայ Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ: Եւ այս պատգամը կու տայ.–

...Մեր ժողովուրդի կեանքին առաջին ու հիմնական առանցքը հայրենիքն է: Վա՛յ մեզի եթէ հայրենիքին հետ վերաբերինք այնպէս որ այդ առանցքը թուլնայ ու դառնայ անկայուն: Մեր բոլոր կարելիութիւններով պէտք է զօրացնենք մեր ամուր գոյութեան ու մեր յաւերժութեան առանցքը՝ հայրենիքը:

...Սփիւռքի առաւել կազմակերպումն ու հզօրացումը յատկապէս մեր պատմութեան այս հանգրուանին, կը դառնայ աւելի քան հրամայական: Սփիւռքը ինքնանպատակ չէ, ինքնավախճան չէ: Սփիւռքը կ'ապրի ու կը պայքարի Հայաստանին ու մեր ժողովուրդի գերագոյն շահերուն համար միայն: Սփիւռքի մէջ կատարուած իւրաքանչիւր նախաձեռնութիւն, ձեռք ձգուած իւրաքանչիւր յաջողութիւն, եղած իւրաքանչիւր իրագործում Հայաստանին ու ամբողջ հայութեան համար է»<sup>43</sup>:

9 Նոյեմբերին Հայրապետական Ս. Պատարագը կը մատուցուի Մոնթրէալի Մարի Ռէն տի Մոնտ տաճարին մէջ, ուր Վեհափառը կը պատգամէ եւ կոչ կ'ուղղէ կեանքը իբր առաքելութիւն ապրելու<sup>44</sup>:

## Բ. Դրուագ

2001 տարին Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700-ամեակն էր:

Արամ Ա. Կաթողիկոս Միացեալ Նահանգներու եւ Գանատայի մէջ Հովուապետական իր երկրորդ այցելութեան կը սկսի 3 Հոկտեմբեր 2000-ին: Իր այս ճանապարհի սկիզբին, Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ մէջ Վեհափառը տօնելի դէպքը ցոյց կու տայ ոչ թէ իբր պարզ հանդիսութիւններու առիթ, այլ Հայ եկեղեցւոյ վերանորոգութեան բարձրագոյն նպատակին ծառայող պատեհութիւն:

Վեհափառը Մոնթրէալ կու գայ 14 Հոկտեմբերին: Եւ Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ կոչ կ'ուղղէ վերադառնալու հայ հաւատքի արմատներուն: Ան կ'ըսէ՝ «հաւատքը զգացական երեւոյթ չէ, այլ ինքնընծայում է գոհողութեան ճանապարհին մէջ», եւ թէ՝ «իւրաքանչիւր զաւակ Հայ Եկեղեցւոյ կանչուած է իր կեանքը լեցնելու այնպիսի արժէքներով, որոնք Աստուծոյ ներկայութեան մասին կը վկայեն»<sup>45</sup>:

Հովուապետական այս այցելութեան ամենէն յիշտակելի դէպքը 15 Հոկտեմբերին Լաւալի Հայ Կեդրոնին եւ Ս. Գէորգ Եկեղեցւոյ օրհնութիւնը կ'ըլլայ<sup>46</sup>:

Հայրապետը 1997-ի 7 Նոյեմբերին լաւալահայութեան կոչ ուղղած էր, ըսելով. «Կ'իմանամ, որ Եկեղեցիի մը կարիքը ունիք: Կը քաջալերեմ ձեզ որ շինէք զայն, որովհետեւ որքան Եկեղեցի շինէք Հայց. Եկեղեցին աւելի կը պայծառանայ, մեր ժողովուրդը աւելի կը զօրանայ իր հաւատքին մէջ եւ Աստուծոյ օրհնութիւնը կ'աւելնայ մեր ժողովուրդին վրայ»<sup>47</sup>:

Ահա իր օրհնութիւնն է, որ Աստուած կը հեղէր 15 Հոկտեմբեր 2000-ին, եւ առաւել պիտի հեղէ այնքան ըղձացուած հայատիպ Եկեղեցւոյ մը կառուցման հետ...

## Գ. Դրուագ

22 Սեպտեմբեր 2005-ին Արամ Վեհափառ Մոնթրէալ կու գայ եւ Ս. Յակոբ Եկեղեցւոյ բեմէն կոչ կ'ուղղէ միջ-թեմական համագործակցութեան<sup>48</sup>:

Հովուապետական այս այցելութեան ընթացքին, կը տօնախմբուի աքսորեալ Կաթողիկոսութեան Դպրեվանքին 75-ամեակը:

Բանախօս կարգուած էր Կիլիկիոյ Միաբանութեան երիտասարդ, այլ բազմաշխատ անդամներէն ու Կաթողիկոսութեան Հաղորդակցութեանց եւ Տեղեկատուութեանց գրասենեակի վարիչ՝ Գրիգոր Ծ. վրդ. Չիֆթճեան: Ան կը տեղեկացնէ, թէ իր գո-

յուլիսի 75 տարիներու ընթացքին՝ Դպրեվանքը Հայ եկեղեցւոյ եւ հայ մշակոյթին տուած է շուրջ 500 սպասարկուէնէր: Ապա կը յիշատակէ մեծ տեսիլք մը, որ իր մարմինը պիտի առնէ. «Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան վերագարթօնքով այնքան տագնապած ու անոր Դպրեվանքը բարձրագոյն կրթարանի մը վերածման համար այնքան աշխատած Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոս, Դպրեվանքին մէջ տեսած էր վերածաղկումը նոր Կիլիկիային, եւ ըսած՝ Եթէ կորցրել եմք նիւթական Կիլիկիան, կորած չէ՛ եւ մեր ձեռքն եմ հոգեւոր Կիլիկիոյ վերակենդանութեան եւ բարգաւաճման հնարաւորութիւնները...: Մեմք կամենում եմք, որ նա դառնայ կրօնական-եկեղեցական կեդրոնի հետ՝ գիտութեան, արուեստի եւ մշակոյթի կեդրոն, որ կրօն եւ գիտութիւն, արուեստ եւ մշակոյթ, մեզ մատչելի սահմանների մէջ կապուեն միմեանց՝ բարձրացնելու այս ժողովրդի հոգեւոր եւ մտաւոր կեանքի մակարդակը<sup>49</sup>:

Իսկ Արամ Վեհափառ իր եզրափակիչ խօսքին մէջ կոչ կ'ուղղէ, ըսելով. «Դպրեվանքը կը պատկանի մեր ժողովուրդին: Կը սպասեմ, որ մեր ժողովուրդը նախանձախնդիր ըլլայ անոր հանդէպ»<sup>50</sup>:

## Ե. ԳԼՈՒԽ

### ԾԻՍԱԿԱՆ

#### 1

*Մինչեւ 1964, եկեղեցին լիաժամ հովիւ չունէր:*

*Սէնթ Զօթիքի եկեղեցւոյ առաջին գործածութիւնը կ'ըլլայ 4 Յունուար 1959-ին, երբ կրամաֆոնի վրայ հոգեւոր երաժշտութիւն սփռուած է: Այն օրը եկեղեցի այցելած են 150 հոգիներ<sup>1</sup>:*

*Գործադիր Մարմինը իր 11 Մարտ 1959-ի նիստին հրաւիրած էր Գրիգոր ա. սրկ. Փափագեանը, եւ խնդրած անոր ներդրումը եկեղեցական կեանքին: Սարկաւազը խոստացած էր իր բաժինը բերել<sup>2</sup>: Այն թուականին, Ս. Յակոբ եկեղեցւոյ դպրաց դասը կազմուած է Փափագեան սարկաւազի ջանքով: Դպրապետութեան պաշտօնը ստանձնած է Գրիգոր ա. սրկ. Հիսարլեան:*

*Դպրաց դասը պիտի պատրաստուէր: Անոր անդամները Ս. Պատարագի եւ Գիշերային, Առաւօտեան ու Արեւագալի երգեր պիտի սորվէին:*

*Գործադիր Մարմինը յարմար կը տեսնէր, որ Գրիգոր ա. սարկաւազ 1959-ի Հոկտեմբերին սկսի Կիրակնօրեայ ժամերգութիւնները առաջնորդել: Մինչ Հիսարլեան սարկաւազ խմբավարած է, Փափագեան սարկաւազ իբր ծիսավար եւ քարոզիչ կիրակնօրեայ պարբերականութեամբ իր ծառայութիւնը ունեցած է:*

*Գործադիր Մարմինին անունով Եր. Բաստրմաճեան դիմած էր Առաջնորդարան եւ խնդրած, որ Ս. Զատիկուան համար եկեղեցական մը առաքուի Մոնթրէյլ: Եւ 11 Մարտ 1959 թուակիր նամակով Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենադպիր Հայկազն Ղազարեան հաղորդած էր, թէ այդ առիթին համար Մոնթրէյլ պիտի առաքուէր եկեղեցական մը, որ իրեն հետ Վէմ-Քարմըն ալ պիտի բերէր<sup>3</sup> (այս Վէմ-Քարըն այսօրուան Ս. Յակոբի խորանին վրայ կը պահուի):*

*1959-60 տարեշրջանի տեղեկագրէն հետեւեալ տեղեկու-*

Թիւնը կարելի է քաղել, թէ համայնքը «յաճախակի» այցելու քահանաներ ունեցած է Ամերիկայէն, որոնք պատարագած են, քարոզած եւ այլ ծառայութիւններ մատուցած:

Այդ տարեշրջանէն մինչեւ այսօր Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ կատարուած են բազմահազար Մկրտութեան եւ Ս. Պսակի Խորհուրդներ, նաեւ թաղման արարողութիւններ: Ս. Պատարագներու Կիրակնօրեայ կանոնաւոր պարբերականութեամբ ընծայումը սկսած է առաջին լիաժամ հովիւին՝ Բարբէն վրդ. Թոփճեանի հետ:

Այժմեան Ս. Յակոբի մէջ առաջին Ս. Պատարագը մատուցուած է 1973-ի Ծաղկազարդին՝ Սուրէն վրդ. Գաթարոյեանի կողմէ: Ան քարոզած է իրեն բնաբան ունենալով Ս. Էջմիածնի շարականի այս համարը. «Եկայք շինեսցուք Ս. գիտորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Համայնքի հոգեւոր եւ ժողովրդային կեդրոնին գոյացման մէջ իր կատարեալ մասնակցութիւնը բերած հովիւը՝ այսպէս ըսած է.-

Իր տեսիլքէն ետքը, Լուսաւորչի հրաւէրն է ասիկա՝ ուղղուած քրիստոնէական լոյսին նոր բացուած հայութեան:

Այս կոչին ընդառաջեցին հայոց թագաւորէն մինչեւ խոնարհագոյն շինականը եւ կառուցին հայոց հաւատքի տաճարը...

Նոյն կոչը մեր համայնքին ուղղուած էր, եւ ան լսած ու գայն իրականութեան վերածած: Թող լոյսի այս յարկը վառ պահէ քրիստոսի աւանդը, որ մեզի փոխանցուեցաւ առաքեալներուն եւ մեր եկեղեցւոյ հայրապետներուն միջոցաւ: Պահենք գայն մեր աչքի բիբին պէս:

## 2

Հայ եկեղեցին այս փին վրայ ալ կը գտնուի լրջագոյն հարցի մը առջեւ: Խառն ամուսնութիւններու համեմատութիւնը արդէն անցած է յիսուն առ հարիւրը: Ասիկա նոր պայմաններ արդէն կը ստեղծէ: Պայմաններ՝ որոնք թէ՛ հոգեւոր եւ թէ՛ լեզ-



ուսական մակարդակներու վրայ՝ վերատեսուծիւն պիտի պահանջեն Հայ եկեղեցիէն:

Այժմ Ս. Յակոբ եկեղեցին կը սպասարկէ շուրջ 10,000 ծխականներու:

## Զ. ԳԼՈՒԽ

### ԼՐԱՔԱՂ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԸ

Գործադիր Մարմինը իր 29 Յունուար 1959-ի նիստին կ'որոշէ «պարբերական մը հրատարակել»: Անոր նպատակ կը սահմանէ համայնքին մէջ գործող կազմակերպութիւններուն կամ անհատներու մասին հետաքրքրական լուրեր տալ. նաեւ կ'առաջադրէ չզբաղիլ «քաղաքական, համայնքային կամ անձնական վիճալարոյց խնդիրներով»<sup>1</sup>:

Սակայն որոշումը կարելի չըլլար իրականացնել մինչեւ 1960-ի վերջին ամիսները:

Լրաքաղը կը սկսի իբր երկամսեայ:

Առաջին թիւը կը կրէ Սեպտեմբեր-Հոկտեմբեր ամսանունները: Տարուան թուականը չէ գրուած վրան, սակայն 1960 տարին է: Կողքին նշուած է՝ «Պարբերաբերք Եկեղեցական Եւ Մշակութային Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ»:

«Լրաքաղին նպատակը» անունով խմբագրականէն կը տեղեկանանք, թէ պարբերականին հրատարակութիւնը յանձն առած է Գործադիր Մարմինին նշանակած Մշակութային եւ Ընկերային Յանձնախումբը<sup>2</sup> (այստեղ հարկ է նշել, որ խմբագրի աշխատանքը Շաբաթօրեայի առաջին տնօրէնը՝ Սեդրակ Բարաղամեանը ստանձնած էր)<sup>3</sup>:

Ըստ խմբագրականին, պարբերականը նպատակադրած է ծառայել հայ մշակոյթին, «զարկ տալով անոր եկեղեցական, կրթական, մարզական, գեղարուեստական եւ ազգային կեանքին՝ հետեւելով բոլոր ձեռնարկներուն, զանոնք գնահատելով եւ ի հարկին քննադատելով»<sup>4</sup>: Նաեւ արտայայտիչը ըլլալ համայնքի ընտանեկան եւ ընկերային կեանքին, թէ՛ անոր ուրախ եւ թէ՛ տխուր առիթներուն<sup>5</sup>:

Հակառակ ցանկութեան՝ պարբերականը «կանոնաւորաբար եւ առանց յապաղումի» հրատարակելու<sup>6</sup>, երբեք կարելի պիտի չըլլար ատիկա:

Ներկայանալի կամ, ինչպէս ըսուած է՝ «գեղազարդուած»

կողքով առաջին թիւը չորրորդ հրատարակութիւնը կ'ըլլայ (Յունուար-Փետրուար 1961): Մինչ նախորդ երեք թիւերուն վրայ Սէնթ Զօթիքի եկեղեցին նախնական գծագրութեամբ մը տրուած էր, չորրորդին վրայ՝ անիկա շնորհալի գծանկար մըն է: Կողքի գրութիւնները եւս, այսինքն՝ «Լրաքաղ/Պարբերաթերթ Եկեղեցական Եւ Մշակութային/Սուրբ Յակոբ Եկեղեցւոյ», որոնք նախապէս ձեռագիր էին, գրաշարեալ են: Նոյնպէս գրաշարեալ աւելցուած են եկեղեցւոյ անգլերէն անունն ու հասցէն:

25 Սեպտեմբեր 1962-ին կարծիքներ կը փոխանակուին Լրաքաղին բնաբան մը ընտրելու մասին: Եւ կ'որոշուի հետեւեալը. «Կը հաւատանք Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութեան Պահանք էջմիածնայ եւ Կիլիկիոյ Ս. Աթոռները, ինչպէս պահած են մեր նախահայրերը»:

6 Նոյեմբեր 1962-ին՝ Հոգաբարձական ժողովը «երկարօրէն կը գբաղի Լրաքաղի բովանդակութիւնը ճոխացնելու եւ նոր մարգեր ընդգրկելու, նաեւ բազմօրինակումի աշխատանքը կանոնաւորելու հարցով»<sup>7</sup>:

Թէ նախքան Յունիս 1963-ը Լրաքաղի լոյս տեսած թիւերուն քանակը ի՞նչ եղած է՝ չէ նշուած: Անհաւանական չէ, որ շուրջ 100 ըլլար: Բայց նշեալ ամսուն կ'որոշուի 300 օրինակներով հրատարակել իւրաքանչիւր թիւ: 1970-ին անոր քանակը պիտի բարձրացուէր 800-ի<sup>8</sup>:

Լիաժամ առաջին հովիւին՝ Բաբգէն վրդ. Թոփճեանի ժամանումով խմբագրումի գործը իրեն կը վստահուի: Արդար է ըսել, որ Թոփճեան վարդապետի խմբագրական կարճատեւ շրջանին, Լրաքաղ որակի ուստում մը կ'արձանագրէ: Անոր գրութիւնները հոգե-խմացական նորութիւն մը եղան պարբերականին համար:

Վարդապետին մեկնումէն ետքը, դարձեալ Ք. Պտուկեան կը ստանձնէ պարբերականին պատրաստութիւնը «Բարաղամեանի եւ ուրիշներու աջակցութեամբ եւ աշխատութեամբ», մինչեւ «նոր կարգադրութիւններ ըլլան»<sup>9</sup>: Այդ ուրիշներէն յատկապէս յիշատակելի են Տիգրան ա. քհնյ. Խոյեան<sup>10</sup> եւ Սմբատ Յոսիկեան<sup>11</sup>:

9 Մարտ 1965-ի Հոգաբարձական ատենագրութեան մէջ գրուած է հետեւեալը. «Լրաքաղի փետրուարեան թիւը լոյս տե-

սած է արդէն: Ժողովականները նկատել տուին, որ հակառակ տրուած նիւթերուն շահեկանութեան եւ օգտակարութեան՝ Լրաքաղ դարձեալ հեռացած է իրեն սահմանուած ուղիէն: Անիկա պէտք է պահէ գլխաւորաբար տեղական գործունէութեանց եւ անդրադարձներու լրատուի իր հանգամանքը եւ շատ աւելի քիչ տեղ տրամադրէ արտատպումներու եւ ուրիշ գաղութներու լուրերուն եւ առհասարակ 20 էջերու սահմանը չանցնի»<sup>12</sup>:

Երկրորդ լիաժամ հովիւր՝ Սուրէն վրդ. Գաթարոյեան ժամանած էր եւ 1966-ի Յունուարին յանձն առած պարբերականին խմբագրումը: Վարդապետին խմբագրած առաջին թիւը, որ Յունուարինը եղաւ, գնահատուած է իբր «կոկիկ ու մաքուր, հետաքրքրական բովանդակութեամբ»<sup>13</sup>: Քովն ի վեր ծիսական օժանդակի եւ քարտուղարի պաշտօնին, Սուրէն վարդապետի խմբագրական աշխատանքին պիտի օգտակար դառնար Ղեւոնդ քհնյ. Փափագեան (յետագային՝ աւագ) 1968-ի Հոկտեմբերէն սկսեալ: Փափագեան քահանան իր այս ծառայութիւնը եւս պիտի շարունակէր մինչեւ Արմէն աւագ քահանայի սկզբնական տարիները, երբ հանգստեան կը կոչուէր:

Սուրէն վրդ. Գաթարոյեան Լրաքաղի մէջ ի լոյս ընծայեց քարոզներ, ծիսական յօդուածներ, հովիւի տարեկան զեկոյցներ եւայլն: Այստեղ պէտք է նշել, որ ան «Հայաստանեայց Եկեղեցւոյ Եօթը Սրբազան Խորհուրդները» անուն իր Վարդապետական աւարտաճառէն մասեր ալ մատուցեց Լրաքաղի էջերուն վրայ. 1966 տարուան Փետրուարի (էջ 10-12), Մարտի (էջ 10-11), Յունիսի (էջ 8-9), Յուլիս-Օգոստոսի (էջ 6-7), 1967-ի Յունուար-Փետրուարի (էջ 4-6) եւ Մարտ-Ապրիլի թիւերուն մէջ (6-9): Այդ մասերը կը վերաբերէին Մկրտութեան, Պսակի եւ Ձեռնադրութեան Խորհուրդներուն: Որեւէ տեղեկութիւն չէ տրուած, թէ ինչո՞ւ չէ շարունակուած աւարտաճառին հրապարակումը:

Մինչեւ 1969 տարուան սկիզբը, Լրաքաղը ձրիօրէն կը բաժնուէր: Այդ թուականէն ետքը, թեթեւցնելու համար ծախսերը՝ Հոգաբարձութիւնը կ'որոշէ «խորհրդանշական բաժանորդագին մը» գանձել<sup>14</sup>:

Լրաքաղի կողքը իր առաջին փոփոխութենէն ետքը երկար

ժամանակ նոյնը մնացած է, այլ միայն երբեմն երբեմն տարբեր գոյներով է ներկայացուած է: 1970-ի Օգոստոս-Սեպտեմբերեան թիւէն մինչեւ 1979-ի վերջին թիւը՝ կողքին վրայ կը տեսնենք Ս. Յակոբ եկեղեցւոյ գեղակերտ ծրագրին գծանկարը (ափսոս որ նիւթական պատճառներով մարմին չէ առած ծրագիրը): Նաեւ կողքին գրուած թիւնը փոփոխութեան ենթարկուած է, այսպէս՝ Լրաքաղ / Ամսաթերթ / Ս. Յակոբ Հայց. Առք. Եկեղեցւոյ Մոնթ-ըէալ / EGLISE ARMÉNIENNE / SOURP HAGOP / ARMENIAN CHURCH: Կողքին երրորդ փոփոխութիւնը կատարուած է 1980-ի Յունուարեան թիւով: Կողքին գոյնը կապոյտ է՝ գրուած թիւնը նոյնը: Գծանկարը այժմեան Ս. Յակոբի համալիրն է, ուր ներկայ Ծաղկոցի շէնքը՝ աւելի մեծ շինութիւն մը (ասիկա գծանկարն էր Հայ Դպրոցի ծրագրին): Եւ առաջին էջին վերեւ գետեղուած լոգոնդը («Կը հաւատանք Հայաստանեայց Եկեղեցւոյ միասնականութեան Պահենք էջմիածնայ եւ Կիլիկիոյ Ս. Աթոռները, ինչպէս պահած են մեր նախահայրերը») վերցուած է:

Երրորդ լիւթամ հովիւը՝ Արմէն քհնյ. Իշխանեան կը ստանձնէ խմբագրութեան աշխատանքը, ինչպէս ակնարկեցի՝ Ղեկունք քհնյ. Փափազեանի օժանդակութեամբ:

Արմէն քահանայ ողջախոհ խմբագրականներ եւ համով հոտով պատմուածքներ գրած է:

Հակառակ ի սկզբանէ առկայ որոշումին, պարբերականը ամսական կանոնաւորութեամբ կարելի պիտի չըլլար լոյս ընծայել: Այս վերջին հանգրուանին աւելի պիտի դանդաղէր անիկա ու դառնար երկամսեայ, եռամսեայ, եւ քառամսեայ հրատարակութիւն մը, որ աշխատակիցներու չգոյութեան պատճառով՝ խճողուէր արտատպեալ էջերով, եւ ալ դադրէր:

Լրաքաղի աշխատակիցներէն յատկապէս յիշատակելի են Պերճ Մոմճեան, Սմբատ Յոխիկեան եւ Վրէժ-Արմէն Արթինեան:

Պարբերականը եղաւ հայ մամուլի համեստագոյն հրատարակութիւն մը, որ դադրեցաւ 1991-ին՝ Մարտ-Ապրիլ-Մայիս-Յունիսի միացեալ թիւով:

Անոր արժէքը կը կայանայ համայնքի կեանքին վերաբերող տեղեկութիւններուն մէջ:

## Է. ԳԼՈՒԽ

# ԱՆՈՒԱՆԱՅԱՆԿ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐՈՒ ԵՒ ԵՐԵՍՓՈԽԱՆՆԵՐՈՒ (1958-2008)

Այս անուանացանկը կ'ընդգրկի անունները Ս. Յակոբ եկեղեցւոյ հոգաբարձուներուն եւ երեսփոխաններուն:

Երուանդ Բաստրմաճեան (նաեւ երեսփոխան), Լեւոն Տէր Ասատուրեան (նաեւ երեսփոխան), Քերոբ Պտուկեան, Քերոբ Պայման, Երուանդ Սաւոյեան, Յակոբ Բաստրմաճեան, Օննիկ Քէօթաչեան, Հայկ Մարգարեան, Գաբրիէլ Գաբրիէլեան, Կարապետ Բարձրեան, Սերգօ Պոյաճեան, Վարդգէս Տօլապճեան, Նուպար Սերոբեան, Սուրէն Կէօնճեան, Յակոբ Փիլիկեան (նաեւ երեսփոխան), Շահապաղ Մելիքեան, Թորոս Տրմիթեան, Շահան Բագրատունի, Վարուժան Մինասեան, Լեւոն Թուրեան, Զարեհ Զէլիքճեան, Վահէ Հոռուփեան, Վարդէս Յակոբեան, Յակոբ Ս. Փիլիկեան, Եղուարդ Մըսըրլեան, Երուանդ Պասմաճեան (նաեւ երեսփոխան), Յակոբ Սեւակեան, Պերճ Սեմերճեան, Հայկ-Արամ Առաքելեան, Յակոբ Պ. Սիմոնեան, Արթօ Մարգարեան, Վարուժան ձեսուրեան, Աւետիս Պալապանեան (նաեւ երեսփոխան), բժ. Վաղարշ Էհրամճեան (նաեւ երեսփոխան), Արթին Յակոբեան, բժ. Վիգէն Մասէրէճեան, բժ. Անդրանիկ Պէնօհանեան (նաեւ երեսփոխան), Յարութիւն Պէշլեան, բժ. Ժիրայր Պասմաճեան (նաեւ երեսփոխան), Տիգրան Հաճէթեան (նաեւ երեսփոխան), Յարութիւն Մարգարեան, Ուիլֆրիտ Շայն, Սուրէն Պէշլեան, Պերճ Պետրեան, բժ. Ժան Առաքելեան (նաեւ երեսփոխան), Խաչիկ Ալեքսանեան, Յովիկ Պետրիկեան, Գառնիկ Համբարձումեան, Վարուժան Խաչատուրեան, Սարգիս Մարաշլեան, Մանուկ Մանուկեան, Վարդգէս Էհրամճեան, Վահագն Շամլեան, Կարօ Գնաճեան, Գէորգ Օհանեան (նաեւ երեսփոխան), Թովմաս Յրունճեան, Շահէն Մինասեան (նաեւ երեսփոխան), Արա Փալանճեան (նաեւ երեսփոխան), Եղուարդ Յրունճեան

(նաեւ երեսփոխան), Ժիրայր Շատախցեան, Լեւոն Նաճարեան, Գրիգոր Գուլումճեան (նաեւ երեսփոխան), Մկրտիչ Վառվառեան, Զաւէն Լալէեան, Վարդգէս Գիւբէլեան, Պետիկ Քաւիլէճեան, Տիրուկ Մանճիկեան, Սերոբ Կիրակոսեան, Ճորճ Պասմաճեան, Վարուժան Սերոբեան (նաեւ երեսփոխան), Արտաւազդ Մուրատեան, Հրայր Գրիգորեան, Գրիգոր Տէր Ղազարեան (նաեւ երեսփոխան), Արա Մարգարեան, Արսէն Օհանեան, Հրանդ Խոզոզեան, Լեւոն Պէնկեան (նաեւ երեսփոխան), Զաւէն Ինճէճիկեան (նաեւ երեսփոխան), Վիգէն Սարգիսեան, Սեդա Մալխասեան, Վիգէն Թորիկեան, Գէորգ Միրզայեան, Յասմիկ Մանուկեան, Արթօ Գապասագալեան, բժ. Վազգէն Տէր Ղազարեան, Յովսէփ Եմէնիճեան, բժ. Մկրտիչ Տարագճեան, Գէորգ Զատոյեան, Յարուժիւն Վարժապետեան, Կարապետ Գաթարոյեան, Մոսէս Քէօսէեան, Շանթ Թօպի, Նորա Գաբրիէլեան, Լեւոն Պօյաճեան, Ռաֆֆի Տօնապետեան, Յակոբ Մանճիկեան (նաեւ երեսփոխան), Հայկ Վանլիեան, Գէորգ Գալլօղլեան, Սարգիս Գուլումճեան, Արբի Գազարեան, Թորոս Տիմիթեան, Կարէն Տէր Ասատուրեան, Մանուէլ Քէօսէեան, Լիւսի Շահինեան:

Միայն՝ իբր երեսփոխան. Յակոբ Գաբթանեան, Ղազարոս Նազարեան, Թորոս Տէր Սարգիսեան, բժ. Օհան Թապաքեան, Խաչիկ Յակոբեան, Վիգէն Յովսէփեան, Վահան Տէր Ասատուրեան, բժ. Վազգէն Տէր Գալուստեան, մեթր Վարդգէս Շամլիեան, Ստեփան Զաքմաքճեան, Լեւոն Եաղճեան, Յակոբ ա. սրկ. Գասպարեան եւ Թորոս Պապիկեան:

## Ը. ԳԼՈՒԽ

### ՅԱՐԱԿԻՅ ԿԱՌՈՅՅՆԵՐ

Այս բաժնով կը թուեմ անուանները այն կառույցներուն, որոնք Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ կողքին՝ Հայ Կեդրոնին մէջ իրենց գրասենեակները ունին կամ կը գործեն փոխադարձ պատասխանատուութեամբ ու նուիրումով:

ՀՅԴ Գանատայի Կեդրոնական Կոմիտէն եւ Հայ Դատի Գանատայի Յանձնախումբը, Հորիզոն շաբաթաթերթի խմբագրութիւնը, Միհրան Փափազեան Կոմիտէն եւ Մոնթրէալի Հայ Դատի Յանձնախումբը, ՀՅԴ ԳԵՄի Կեդրոնական Վարչութիւնը եւ տեղական՝ «Լեւոն Շանթ» մասնաճիւղը, «Դրօ» Պատանեկան Միութիւնը, ՀՕՄի Շրջանային եւ Տեղական Վարչութիւնները, ՀՄԸՄ-Կամֆի Շրջանային եւ Տեղական Վարչութիւնները եւ Համազգայինի Շրջանային ու Տեղական Վարչութիւնները:

Այս շարքին մէջ իր մեծ ներդրումով մասնակից է նաեւ Տարեցներու Միութիւնը:



## ԵԼՔԸ

«...Եւ հրեշտակապետը տուեց սուրբին տապանի փայտից մի փոքրիկ կտոր ու անյայտացաւ :

Վերցրեց սուրբ մարդը այդ երկնային պարգեւը, համբուրեց, լացեց, նորէն երեսնիվար ընկաւ, աղօթեց Աստծուն ու փառաբանեց իր մեծ ողորմութեան համար :

Յետ դարձաւ սուրբ Յակոբը, եւ այնուհետեւ, այլեւս ոչ ոք չի փորձում Մասսի կատարը բարձրանալ : Աստծու հրամանը անդառնալի է :

Այն ժամանակ Մասսի լանջերին, սուրբի արցունքից մի վնիտ, քաղցրահամ աղբիւր ժայթքեց, եւ նրա շուրջը՝ ժայռերի վրայ յայտնուեցին ինչ որ անծանօթ թռչուններ, սարեակների մման, բայց խտուտիկ — սուրբ Յակոբի թռչունները, որոնք ոգիների պէս կապուած են աղբիւրին, ուստոստում են նրա շուրջը, նուուողում ժայռերի վրայ :

Երբ մորեխն է գարկում մեր դաշտերին, ոչնչացնում արտ ու անդաստան, ժողովուրդը շտապում է դէպի սուրբ Յակոբի աղբիւրը, ամաններով սուրբ ջուր է վերցնում ու յետ գալիս, ու նրա հետ նուիրական թռչուններ ահագին բազմութիւնով, երամ-երամ գնում են ջրի յետեւից, հասնում են մորեխին, եւ Աստծու հրամանով սկսում են ջարդել, ոչնչացնել աւերիչ միջատներին : Երամներն իրար են յաջորդում, մինչեւ որ վերջին մորեխը մեռնում է մեր դաշտերում : Այն ժամանակ միայն, նրանք խմբեր կազմած՝ նուուողելով թռչում, յետ են գնում Մասսի, դէպի սուրբ Յակոբի աղբիւրը» (*Հատուած Ա. Ահարոնեանի «Իմ Գիրքը » Հատորէն*):

# ԾԱՆՕԹ-ԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

- 1.- Census of Canada / 1851-52, vol. II, Quebec, 1855:
- 2.- Isabel Kaprielian-Churchill, Like Our Mountains / A History of Armenians in Canada, McGill Queen's University Press, 2005, էջ 26: Յետ այսու, այս հատորին նշումները պիտի գրուին՝ IK-Ch:
- 3.- Նոյն, էջ 58:
- 4.- Նոյն, էջ 352:
- 5.- Garo Chichekian, The Armenian Community of Quebec, Montreal, 1989, էջ 41-42: Յետ այսու՝ CCh:
- 6.- Երուանդ Բաստրմանեանի արխիւէն: Անաւարտ եւ պատռուած գրութիւն մը՝ վերնագրուած «Կոչ Քանատահայ Քաղուքին»:
- 7.- Կարօ Գէորգեան, Ամէնուն Տարեգիրքը, Պէյրուք, 1962, էջ 334: Յետ այսու՝ ԿԳ:

Այստեղ ամփոփ կու տամ Երուանդ Բաստրմանեանի կենսագրութիւնը: Ան էր յիշատակեալ եղբայրներէն ամենէն մեծ ներդրում ունեցողը:

*Եր. Բաստրմանեան ծնած էր Կեսարիա, 1906-ին:*

*Մեծ Եղեռնեան օրերուն ընտանեօք աքսորական Հալէպ գացած էր, ապա Զմիւռնիա: Յետ Զմիւռնիայի գրաւման՝ անցած էր Թեսաղոնիկէ: Հոնկէ շուտով ծնողքին եւ եղբայրներուն հետ փոխադրուած էր Փարիզ:*

*1925-ին Քանատա կը գաղթէր, եւ Թորոնթօ կ'ուղղուէր: Այնտեղ Babayan Rug Co.-ի մէջ կ'աշխատէր՝ իբր նորոգող արեւելեան գորգերու:*

*Ան իր ասպարէզին կողքին՝ կը նուիրուէր տեղւոյն փոքրաթիւ համայնքի մշակութային գործունէութեան:*

*1928-ին Մոնթրէլ կը հաստատուէր, եւ կարճ ժամանակ մը կը շարունակէր Պապայեան ընկերութեան այս քաղաքի մասնաճիւղին մէջ աշխատիլ: Այդ տարիներուն, աւելի ճիշդ՝ 1933-ին Յակոբ՝ կրտսեր եղբայրը կը միանար իրեն: Աւելի ուշ՝ 1948-ին, անդրանիկ եղբայրը՝ Հրանդ, որ մօր՝ Արուսեակի հետ կու գար: Հայրը՝ Բարսեղ մահացած էր 1947-ին եւ թաղուած Փարիզ:*

*Եր. Բաստրմանեան 1935-ին կը բանար իր սեփական գորգի ընկերութիւնը Sherbrooke փողոցին վրայ: Քանի մը տարիներ ետքը՝ գորգի ուրիշ վաճառատուն մըն ալ կը բանար De*

Sorel *փողոցին վրայ*։

1949-ին կը սկսէր Գանատական Հայ Գոնկրէսը։ Եր. Բաստրմաճեան անոր մէջ երկար տարիներ եւ մինչեւ կազմակերպութեան վախճանը ծառայեց իբր անոր նախագահը։

Ինչպէս սոյն պատմագիրքին ընթերցումը ցոյց պիտի տայ, անոր դերը համայնքի կազմակերպման առաջին տասնչինգ տարիներուն՝ արժանի է գովերգելի յիշատակութեան։

1969-ին Խորէն Ա. Կաթողիկոս իրեն շնորհած է Կիլիկեան Իշխանի շքանշան։ Նոյն պատիւին պիտի արժանանար նաեւ Յակոբ եղբայրը՝ Ս. Յակոբ վարժարանի շէնքին գնման առիթով։

Եր. Բաստրմաճեան հայ կեանքէն դուրս եւս կարեւոր դերակատարութիւն ունեցած է. բարեգործութիւններ կատարած է գանատական ընկերութեան մէջ եւս։

1979-ին՝ իր եղբայրներուն հետ կը մտադրէ Գայիանէ անուն հայկական ծերանոցի մը հիմնումը։ Ասիկա երազ պիտի մնար։

Եր. Բաստրմաճեան իր մահկանացուն կնքեց 2001-ին։ Մայրը մահացած էր 1970-ին, անդրանիկ եղբայրը՝ 1995-ին, իսկ կրտսերը մահացաւ 2005-ին։

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

8.- IK-Ch, էջ 386։

9.- GCh, էջ 46։

10.- Նոյն, անդ։

11.- «Multicultural Canada» կայքէջէն, յօդուածաշարք՝ «Encyclopedia of Canada's Peoples»։ Իգապէլ Գաբրիէլեան-Չըրչիլի գրութիւն՝ «Armenians / Arrival and Settlement»։

12.- Aïda A. Keuroghlian-Boudjikianian, L'insertion résidentielle et économique des Arméniens de Montréal, 2003, էջ 94։ Անտիպ դոկտորական թեզ։ Յետ այսու՝ AK-B։

13.- ԿԳ, էջ 336։

14.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 14 Հոկտեմբեր 1965։

15.- Յուշամատեան Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ Հիմնադրութեան Տասնամեակի, Պրիթիշ Գոլումպիա, Գանատա, 1990։ Յօդուած՝ «Ուրուագիծ Վանգուվըրի Հայ Համայնքին», էջ 22։

16.- Նոյն, անդ։

17.- AK-B, էջ 94։

18.- Վահագն Շամլեան տարիներով պատրաստած է Մոնթրէալի

«Հայկական Հեռաձայնի Տետրակ»ը: Իր տուած թիւը արդար կը գտնեմ:

- 19.- Ըստ Թորոնթոնի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ հեռաձայնի գրքոյկին: Հրատարակուած 2008-ին:
- 20.- IK-Ch, էջ 352:
- 21.- Նոյն, անդ:
- 22.- Նոյն, անդ:
- 23.- GCh, էջ 57:
- 24.- Նոյն, էջ անդ:
- 25.- Նոյն, էջ 64-65:
- 26.- Նոյն, էջ 68:
- 27.- AK-B, էջ 127:
- 28.- Արսէն ֆհնյ. Աշնեան, Վիճակացոյց եւ Պատմութիւն Առաջնորդական Թեմին Հայոց Ամերիկայի, Նիւ Եորք, 1949, էջ 18: Յետ այսու՝ ԱՔԱ:
- 29.- Նոյն, անդ:
- 30.- Նոյն, անդ:
- 31.- Մանուկ Գ. ձիզմէնեան, Պատմութիւն Ամերիկահայ Քաղաքական Կուսակցութեանց, 1890-1925, Ֆրէզնո, 1930, էջ 4: Յետ այսու՝ ՄԳՃ:
- 32.- ՄԳՃ, էջ 7-8: Անտիպ մագիստրոսական թեզ՝ Oshagan Minassian, A History of the Armenian Holy Apostolic Orthodox Church in the U. S. / 1888-1944, Boston, 1974, էջ 89: Յետ այսու՝ ՕՄ:
- 33.- Զաւէն ա. ֆհնյ. Արզումանեան, Ազգապատում, Գ. հատոր, Ա. գիրք, յօդ. 3154, Նիւ Եորք, 1995, էջ 9: Յետ այսու՝ ԶԱԴԱ: Եւ՝ ՕՄ, էջ 93:
- 34.- ՕՄ, էջ 95:
- 35.- ԶԱԴԱ, էջ 9:
- 36.- ԱՔԱ, էջ 18:
- 37.- Նոյն, անդ:
- 38.- ՄԳՃ, էջ 19: ԶԱԴԱ, էջ 9: ՕՄ, էջ 108:
- 39.- Մաղափա արք. Օրմանեան, Ազգապատում, Գ. հտ., Գ. մաս,

յօդ. 3009, Երուսաղէմ, 1927, էջ 5102-5104:

- 40.- Ա.ՔԱ, էջ 21:
- 41.- Նոյն, անդ:
- 42.- ԶԱԴԱ, յօդ. 3271, էջ 183,184:
- 43.- Ա.ՔԱ, էջ 25:
- 44.- Նոյն, անդ:
- 45.- Նոյն, էջ 26:
- 46.- Արմէն Պարտիզեան, Հայ Եկեղեցւոյ Տագնապը, Պոսքըն, 1936, էջ 169: Յետ այսու՝ Ա.Պ:
- 47.- Նոյն, էջ 173:
- 48.- Ա.ՔԱ, էջ 31:
- 49.- Նոյն, էջ 34:
- 50.- IK-Ch, էջ 279:
- 51.- Ա.Պ, էջ 247:
- 52.- Ա.ՔԱ, էջ 42:
- 53.- Prelacy Yearbook / 1993, էջ 56: Յետ այսու՝ P.Y:
- 54.- Ստեփան Ստեփանեանց, Հայ Առաքելական Եկեղեցին Ստալինեան Բռնապետութեան Օրօք, Երեւան, 1994, էջ 121:
- 55.- P.Y, էջ 58:
- 56.- Բիւզանդ Եղիայեան, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիրիլիոյ / 1914-1972, Անթիլիաս, 1975, էջ 720-721: Յետ այսու՝ ԲԵԿ:
- 57.- Նոյն, էջ 722:
- 58.- Նոյն, անդ:
- 59.- Կենսագրական առաջին Առաջնորդին: *Ան ծնած էր Հալէպ (Սուրիա), 1926-ին: Աւագանի անունը Յարութիւն էր: Իր նախնական կրթութիւնը ստացած էր տեղւոյն Ազգային Հայկազեան վարժարանին մէջ: Ապա ընդունուած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք: Անոր ընթացքը աւարտելէ ետքը, 1948-ին քահանայական կարգ ստացած էր: 1952-58 Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ հոգեւոր հովուութեան կոչուած էր, եւ նախ ծառայած իբր արեղայ, եւ ապա իբր վարդապետ: 1958-ին Անթիլ-*

իսա վերադարձած էր եւ ծայրագոյն վարդապետութեան տիտղոս ստացած ու եպիսկոպոս ձեռնադրուած:

9 Մայիս 1959-ին Հրանդե եպո. Խաչատուրեան կ'ընտրուէր Առաջնորդական Տեղապահ Ամերիկայի Թեմին: Ան 11 Նոյեմբեր 1961-ին կը կոչուէր Առաջնորդի պաշտօնին:

1964-ին կը ստանար արքութեան պատիւ եւ տիտղոս:

Առաջնորդ իր ընտրութեան թուականէն մինչեւ 1973, Խաչատուրեան սրբազան ձեռնհասօրէն կատարած է իր ծառայութիւնը: Ան գարկ տուած է թեմի կազմակերպչական աշխատանքներուն, նաեւ հոգեւոր, մշակութային, եկեղեցական, շինական, վարչական եւ յարաբերական եռանդուն գործունէութիւն ունեցած է:

Իր օրով թափ առած է նաեւ Ամերիկայի կարգ մը շրջաններու մէջ հայկական դպրոցներ բանալու աշխատանքը:

1974-ին, ան ձեռնարկած է համալսարանական ուսման, հետեւած է պատմագիտութեան եւ 1979-ին Փրովիտէնս Գալլի-ճէն (Ռոտ Ալլընտ) արժանացած է Դոկտոր Փիլիսոփայութեան տիտղոսին:

Հրանդ արք. Խաչատուրեան վախճանեցաւ 1980-ին, Նիւ Ճըրզիի մէջ, Միացեալ Նահանգներ:

60.- Կենսագրական Հիւսիս-Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Կիլիկեան երկրորդ Առաջնորդին: Աւագանի անունով Նշան: Ծնած էր Քեսապ (Սուրիա), 1932-ին: Յաճախած էր ծննդավայրի Ազգային Ուսումնասիրաց Միացեալ Նախակրթարանը: 1946-ին ընդունուած էր Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք: 1952-ին քահանայական օժոմ ստացած էր եւ կուսակրօնութեան ուխտ կատարած:

Անոր կրթական ծառայութիւնը մեծ եւ պողաբեր եղած է Դպրեվանքին մէջ: Վարած է հսկիչի պաշտօն, եւ ապա հասած Դպրեվանքի տեսուչի կարգին: Տարիներու ընթացքին դասաւանդած է գրաբար, մատենագրութիւն, ծիսագիտութիւն, վարդապետական եւ հովուական աստուածաբանութիւն, Հայ եկեղեցւոյ պատմութիւն, Ընդհանուր եկեղեցւոյ պատմութիւն, եւ այլ նիւթեր:

1957-ին մեկնած է Լոնտոն, Օքսֆորտ համալսարանի աստուածաբանական բաժանմունքին մէջ ուսանելու: Յետ երկամեայ ուսումնառութեան տիրացած Պսակաւոր Գրականութեան տիտղոսին:

1960-ին վերստանձնած է Դպրեվանքի տեսուչի պաշտօնը:

1963-ին ստացած է վարդապետական ծայրագնութիւնը:

Կանուխէն կը ճանչցուէր միջ-եկեղեցական շրջանակներու մէջ: Արդարեւ, ան եղաւ Հայ եկեղեցւոյ միջ-եկեղեցական յանձ-

նառույթեան կերտիչներէն մէկը: Այդ ճամբուն մէջ, Ուփսալայի Համաժողովին (1968) կ'ընտրուի անդամ ԵՂԽ-ի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն: Իսկ Նայրոպիի Համաժողովին (1975), կ'ընտրուի ԵՂԽ-ի Կեդրոնական եւ Գործադիր Վարչութիւններուն փոխ-ատենապետ:

Ան եպիսկոպոսութեան կարգին կը բարձրանար 1964-ին, իսկ արքութեան պատիւի եւ տիտղոսի կ'արժանանար 1973-ին:

1971-ին ստանձնած է Իրանա-Հնդկաստանի թեմին Հայ-րապետական Պատուիրակի առաքելութիւնը, ապա ընտրուած է Առաջնորդ նոյն թեմին:

1973-ին նշանակուած է Առաջնորդական Փոխանորդ Հիւսիսային Ամերիկայի եւ Գանատայի թեմին, ապա Առաջնորդ ընտրուած: Իր առաջնորդութեան շրջանին բազմաթիւ նախաձեռնութիւններ ունեցած եւ խանդավառութեան ալիք ստեղծած է իր շուրջը: Յատկապէս հսկայական պիտի ըլլար Լիբանանի հայութեան օժանդակելու իր ճիգը՝ մայրիներու երկրին քաղաքացիական պատերազմի սկզբնաւորութեան:

1977-ին կ'ընտրուէր Աթոռակից Կաթողիկոս Կիլիկիոյ: Իսկ 1983-ին կը դառնար Ս. Աթոռին Գահակալը:

Գարեգին կաթողիկոս իմաստութեամբ եւ բեղուն գործունէութեամբ հովուեց Կիլիկեան իր հօտը: Եւ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսի վախճանումէն յետոյ՝ 1995-ին ընտրուեցաւ Գահակալ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին:

Ի Տէր հանգեաւ 1999-ին մեծ իրագործումներու ծրագիր մը իրեն հետ տանելով: Ան նոր ժամանակներու մարգարէ մըն էր, որ իր տեսիլքէն այրեցաւ:

61.- Կենսագրական երրորդ Առաջնորդին: Աւագանի անունով Հրայր, ծնած էր Պէյրութ (Լիբանան) 1941-ին: Նախնական ուսումը ստացած էր Ս. Նշան Ազգային Վարժարանին մէջ: 1957 թուականին ընդունուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք:

Դպրեվանքի Ընծայարանի աստուածաբանական եւ հայագիտական եռամեայ ուսումնական ընթացքը աւարտելէ ետքը, 1961-ին ձեռնադրուած էր կուսակրօն քահանայ: 1963 թուականին՝ ստացած Վարդապետական Գաւազանի իշխանութիւն: 1977 թուականին՝ ծայրագնութեան տիտղոս եւ եպիսկոպոսական օժով, իսկ 1983 թուականին արքութեան պատիւ:

Մերոպ սրբազան Իրանա-Հնդկաստանի թեմի առաջնորդ եղած էր 1974-1977 Նոր Զուղայի մէջ, եւ ապա Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի եւ Գանատայի առաջնորդ՝ 20 տարիներ՝ 1978-1998:

Մերոպ արք. Աշճեան համալսարանական բարձրագոյն

ուսման հետեւած էր նախ Պոսէր Էքիւմենիք կազմաւորման կեդրոնին մէջ (Զուիցերիա), ապա Փրինսթընի համալսարանին մէջ (ԱՄՆ), ուրկէ 1970 թուականին ստացած աստուածաբանութեան Մագիստրոսի աստիճան: Նոյն համալսարանին մէջ շարունակելով ուսումը, ամբողջացուցած էր դոկտորայի աստիճանին համար անհրաժեշտ ընթացքը, սակայն 1974 թուականին Իրանա-Հնդկաստանի առաջնորդութեան պաշտօնին կոչուելով, ի վիճակի չէր եղած գրելու դոկտորական իր ակադեմիայի ատենախոսքը:

1991 թուականին Փրինսթընի համալսարանը իրեն շնորհած է Մագիստրոսի երկրորդ տիտղոս մը:

Միջ-եկեղեցական յարաբերութեանց մարզէն ներս, Մեսրոպ արք. Աշճեան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անունով մասնակցած էր միջազգային բազմաթիւ հանդիպումներու եւ ժողովներու: Անդամ եղած նաեւ ԵՂԽ-ի «Հաւատք եւ Կարգ» Բաժանմունքին:

Մեսրոպ արք. Աշճեան նոր ժամանակներու Հայ եկեղեցւոյ ամենէն գործունեայ եկեղեցականը եղաւ: Ի՛նչ ներշնչիչ էր իր ծառայութիւնը Հայաստանի մէջ:

Վախճանեցաւ 2003-ին՝ Նիւ Եորք, Միացեալ Նահանգներ:

62.- Կեմսագրակաւ չորրորդ Առաջնորդին: Աւագանի անունով Մանուկ: Ծնած է Հալէպ (Սուրիա), 1947-ին: Յաճախած է տեղւոյն Հայկազեան Ազգային Վարժարանը: 1960-ին Կիլիկիոյ Դպրեվանք ընդունուած է: Քահանայական օժով ստացած է 1967-ին: Եպիսկոպոսական կարգին արժանացած է 1994-ին:

Ան Պէյրութի Ամերիկեան Համալսարանին մէջ ուսման հետեւած է 1968-70: Ապա Միացեալ Նահանգներ անցնելով՝ Փրինսթըն համալսարանին մէջ, ուրկէ վկայուած է մագիստրոսի գոյգ տիտղոսներով՝ թէ՛ Մանկավարժութեան եւ թէ՛ Եկեղեցւոյ պատմութեան:

1980-ին նշանակուած է Քուէյթի եւ Արաբական Էմիրութեանց Կաթողիկոսական Փոխանորդ, ապա երբ շրջանը թեմի վերածուեցաւ, ընտրուած է Առաջնորդ:

Ան տարի մը՝ 1977-78 վարած է Ամերիկայի Արեւելեան Շրջանի եւ Գանատայի Թեմին Առաջնորդական Տեղապահի պաշտօնը: Ծայրագոյն վարդապետ ձեռնադրուած է 1983-ին:

Առաջնորդ ընտրուեցաւ 1998-ին եւ ապա ստացաւ արքունութեան պատիւ:

Իր վաստակին մէջ յատկապէս յիշատակելի պիտի մնայ Նոր Կտակարանի արդի արեւմտահայերէնով թարգմանութեան մէջ մասնակցութիւնը: Իր գործընկերներն էին Զարեհ եպս. Ազնաւորեան եւ Վերպ. Մանուէլ ձինպաշեան:

Ներկայիս ան կը ղեկավարէ Հին Կտակարանի թարգմա-



*նույնիսկ անհատները: Իր գործակիցներն են խառնակ արք. Յակոբյան, Անուշահան եպս. Դանիելյան եւ Վերայ. Մանուէլ ձին-պաշան:*

63.- Archbishop Mesrob Ashjian, The Armenian Church in America, New York, 1995, էջ 89-90:

64.- Արամ Ա., Ազգ / Եկեղեցի / Հայրենիք, Անթիլիաս, 1999, էջ 197:

65.- Կենսագրական Գաճաճայի Հայոց Թեմի առաջին Առաջնորդին: Աւագանի անունով՝ Սարգիս: Ծնած է Սուրբի, 1946-ին: Փոքր տարիքին Լիբանան փոխադրուած է եւ իր նախնական ուսումը ստացած Պէյրութի Ազգային Թորգոմեան վարժարանին մէջ: 1961-ին ընդունուած Կիլիկիոյ դպրեմանք: 1968-ին քահանայական օժով կը ստանայ եւ կուսակրօնութեան ուխտ կ'ընէ:

1971-ին Բերիոյ Թեմի Ազգային խառն ժողովին կողմէ կ'ընտրուի Առաջնորդական Փոխանորդ Սուրբիոյ ձէգիւրէի շրջանին: 1979-ին կը վերադառնայ Լիբանան, ուր կը հետեւի համալսարանական ուսման՝ Մերձաւոր Արեւելքի Աստուածաբանական դպրոցէն ներս:

1981-ին Առաջնորդ Մեսրոպ արք. Աշճեանի եւ Հիւս. Ամերիկայի Արեւելեան Թեմին Վարչութեան հրաւերով կը փոխադրուի Նիւ Եորք եւ կը նշանակուի յատուկ օգնական Առաջնորդին:

1983-ին կը ստանձնէ Թորոնթոյի նորահաստատ Ս. Աստուածածին եկեղեցւոյ եւ համայնքին հոգեւոր հովուութիւնը եւ աւելի քան տասնըմէկ տարիներ կը վարէ այդ պաշտօնը: 1985-ին ծայրագոյն վարդապետ կ'ըլլայ: 1994-ին Էնսինոյի Սրբոց Նահատակաց համայնքին եւ եկեղեցւոյ հոգեւոր տեսչութիւնը կը ստանձնէ (Հիւս. Ամերիկայի Արեւմտեան Թեմ): 1995-ին՝ Նիւ Եորքի Ս. Լուսաւորիչ Մայր եկեղեցւոյ հոգեւոր տեսչութիւնն ու ամէնօրեայ վարժարանին տնօրէնութիւնը:

1996-ին կը կոչուի Մոնթրէալի Ս. Յակոբ Մայր եկեղեցւոյ հոգեւոր տեսչութեան եւ ապա Գաճաճայի Առաջնորդական Փոխանորդի պաշտօններուն:

1997-ին կը բարձրանայ եպիսկոպոսական կարգին:

2002-ին, Թեմական ներքին վերադասաւորումով եւ Գաճաճայի իւր ուրոյն Թեմ հաստատումով, կը նշանակուի Կաթողիկոսական Փոխանորդ: Նոյն տարուան մէջ ալ կ'ընտրուի Առաջնորդ:

2003-ին իրեն կը շնորհուի արքութեան պատիւ:

66.- Յուշատետր Գաճաճայոց Առաջնորդութեան / 2008:

67.- Յուշատետր Գաճաճայի Ազգային Առաջնորդութեան / 2008:

## Ա. ԳԼՈՒԽ - ԵԿԵՂԵՑԱԾԻՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱԿԵՐՏՈՒՄ

- 1.- Polyphony, The Bulletin of the Multicultural History Society of Ontario, Armenians in Ontario, vol. 4 No. 2, 1982, էջ 89: Նաեւ՝ Հորիզոնի Շաբաթաթերթ (յետ այսու՝ Հ), 23 Հոկտեմբեր 2000, էջ 2:
- 2.- Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տանար, 35-ամեակի հրատարակութիւն, Մոնթրէալ, 2005, էջ 12: Յետ այսու՝ ԳԼ35:
- 3.- Հայաստանեայց Եկեղեցին՝ Կեանքի ձանապարհ, Մոնթրէալ, 2000: Յօդուած՝ Արմինէ Քէօշկէրեանի, «Թորոնթոյի, Համիլթընի, Ս. Գաբրիելի եւ Մոնթրէալի Գաղութներուն Կազմաւորումը», էջ 20:
- 4.- ԳԼ35, էջ 13: Նաեւ՝ Chapter 175, An Act to incorporate The Armenian Holy Apostolic Church of Montreal:
- 5.- Ծխական Խորհուրդ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ, Շրջաբերական Թիւ 1:
- 6.- ԳԼ35, էջ 15:
- 7.- Բուրաստան, Դեկտեմբեր 1970, էջ 4:
- 8.- Տարեկան Տեղեկագիր Հոգաբարձութեան, 27 Օգոստոս 1960:
- 9.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան Ա. Ժողովի, 18 Յուլիս 1958:  
Արդար է այստեղ արձանագրել, որ 1958-ի Յունիսին ՀՅԴ Միերան Փափագեան Կոմիտէին նախաձեռնութեամբ՝ Քուրնգ պանդոկին մէջ (ասիկա Քուրն էլիզապէթ պանդոկը չէ) նաշկերոյթի մը կը հրաւիրուին գաղութի անդամներ: Ճաշկերոյթին նպատակն էր մշակութային ակումբ մը հիմնելու համար հանգանակութիւն կատարել: Այն ատեն քաղաքին հայութեան թիւը երեքէն չորս հարիւր էր (Հ, 27 Յունիս 1983, էջ 9): Մշակութային ակումբ մը հիմնելու այս առաջադրութիւնը շուտով պիտի փոխուէր կեդրոն/եկեղեցի մը ունենալու գաղափարին:
- 10.- Նոյն:
- 11.- Նոյն:
- 12.- Նոյն:
- 13.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 24 Յուլիս 1958:
- 14.- Նոյն:

- 15.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան: 31 Յուլիս 1958:
- 16.- Ճոն Հարֆնըս Տիֆսըն Եպիսկոպոսի նամակը Chesebrough-Pond Canada Limited ընկերութեան գանձապահին՝ Ն. Ռ. Ռիչըրտսընի: Հաւանաբար, 1958-ի Օգոստոսին գրուած է:
- 17.- Ք. Պտուկեանի 28 Օգոստոս 1958 թուակիր նամակը Ռ. Ռիչըրտսընի ուղղուած:
- 18.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 26 Սեպտեմբեր 1958:
- 19.- Ն. Ռ. Ռիչըրտսընէ 11 Նոյեմբեր 1958 թուակիր նամակ՝ ուղղուած Եր. Բաստրմանեանին:
- 20.- Ռ. Ու. Կրէյտընէ 31 Հոկտեմբեր 1958 թուակիր նամակ՝ ուղղուած Եր. Բաստրմանեանին:
- 21.- Պատուելի Allan S. Reid-է 2 Դեկտեմբեր 1958 թուակիր նամակ՝ ուղղուած Norman Clelland-ի: Եր. Բաստրմանեանի խնդրանքով՝ վերջինը դիմած էր A. S. Reid-ի եւ խնդրած Livingstone Church-ի այս նախկին սպասաւորի ոչ-ամբողջական լուսաբանութիւնը: Որմէ կը մէջբերեմ.-

The following is an outline of the history of the church as far as I know it. In the first part of this century the people began to build their houses and move up north and east of the C. P. R. tracks. This district at that time was somewhat isolated as the street cars on Park Avenue did not go beyond Van Horne Avenue and there were no subways under any of the C. P. R. tracks. Those interested in the religious conditions of the new and out-lying sections of Montreal felt that there should be at least a Sunday School established up in that district adjacent to Park Avenue. The Methodist Church attempted the establishment of a mission but their effort failed. The Congregationalists tried also with no better success. The Sunday School Association, Presbyterian, became interested in the district. Mr. Huger Cully, a member of St. Giles Church, owned a four flat house on Park Avenue facing on Pacific Avenue. On a certain winter one of these flats was vacant and Mr. Cully turned it over for the use of a Sunday School... The Sunday School prospered and then it was decided to have an evening service. The situation soon developed to such an extent that the Presbytery of Montreal considered it advisable to erect a church building. Interest was taken in the matter by the Session of Crescent Street Church and two of the elders, Mr. Robert Munroe and Mr. Charles Hyde took a special interest in the situation and to a large extent were responsible for securing the erection of the church. They bought five building lots on the corner of Atlantic and Mance Street. The building was erected during the year 1908 and was opened for public worship

on the first Sunday of the year 1909...in 1925, the church split on the question on Church Union. By a small majority the congregation voted to go into the United Church. The Minority withdrew and moved their place of worship into Park Avenue Extension and erected a substantial church building on the corner of Jean Talon and de l'Epee Avenues and continued the name of Livingstone Presbyterian Church. A few years after this the congregation that had gone into the United Church sold the church building on the corner of Atlantic and Mance Street and also moved into Park Avenue Extension. They built a church almost along side of that of the Presbyterians and they continued their name as Livingstone United Church.

- 22.- Հայկազ Գ. Ղազարեանէ 29 Հոկտեմբեր 1958 թուակիր նամակ՝ ուղղուած Եր. Բաստրմանեանին:
- 23.- Եր. Բաստրմանեանէ 6 Նոյեմբեր 1958 թուակիր նամակ՝ ուղղուած Յակոբ Մուրատեանին:
- 24.- Եր. Բաստրմանեանէ 6 Նոյեմբեր 1958 թուակիր նամակ Արամ Նալպանտեանին:
- 25.- Շրջաբերական Գործադիր Մարմինի: Անթուակիր: Անկասկած հրապարակուած 1958-ի Դեկտեմբեր ամսուան վերջին երկու շաբաթներուն:
- 26.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 7 Յունուար 1959-ի:
- 27.- Նոյն:
- 28.- Նոյն:
- 29.- Նոյն:
- 30.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 11 Մարտ 1959-ի:
- 31.- Նոյն:
- 32.- Եր. Բաստրմանեանէ 12 Փետրուար 1959 թուակիր նամակ՝ ուղղուած Ազգային Կեդրոնական վարչութեան - յետ այսու՝ ԱԿՎ:
- 33.- Նոյն:
- 34.- ԱԿՎ-էն 21 Փետրուար 1959 թուակիր նամակ՝ ուղղուած Գործադիր Մարմինին:
- 35.- Շրջաբերական Գործադիր Մարմինի, 10 Մայիս 1959:
- 36.- Ատենագրութիւն Անդրանիկ Ընդհանուր Ժողովի, 10 Մայիս

- 1959:
- 37.- Նոյն:
- 38.- Նոյն:
- 39.- Նոյն:
- 40.- Նոյն:
- 41.- Գործադիր Մարմինի Գ. Զեկոյց. Հոկտեմբեր 1959 թուակիր:
- 42.- Նոյն:
- 43.- Գործադիր Մարմինէն 4 Ապրիլ 1960 թուակիր ցամակ՝ ուղղուած Հրանդ եպս. Խաչատուրեանին:
- 44.- Հրանդ եպս. Խաչատուրեանէ 13 Ապրիլ 1960 թուակիր ցամակ՝ ուղղուած Հոգաբարձութեան:
- 45.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 14 Յունիս 1960: Եւ Տարեկան Տեղեկագիր Գործադիր Մարմինի 1959-1960:
- 46.- Remembrance Booklet of the Holy Consecration of Sourp Hagop Armenian Apostolic Church, 250 St. Zotique West, June 5, 1960, էջ 3:
- 47.- Զեկոյց Ս. Յակոբ Եկեղեցւոյ Գործադիր Մարմինի, Լրագիր (յետ այսու՝ Լր), Սեպտեմբեր-Հոկտեմբեր 1960, Ա. թիւ պարբերականին, էջ 2:
- 48.- Հոգաբարձութեան Ութամսեայ Գործունէութեան Տեղեկագիր . 1960-61, Լր, Յունուար 1961, էջ 2-3:
- 49.- ԲՆ, էջ 743:
- 50.- Հոգաբարձութեան Ութամսեայ Գործունէութեան Տեղեկագիր . 1960-61, Լր, Յունուար 1961, էջ 2-3:
- 51.- Loi pour constituer en corporation Sourp Hagop Armenian Church, BILL 226.
- 52.- Եր. Բաստրմանեան, Կուսակցութիւններու Մասին, Լր, Յունուար-Փետրուար 1961, էջ 1-2:
- 53.- ՀՅԴ Միերան Փափագեան Կոմիտէութիւն / Յիսունամեակ / 1956-2006, Մոնթրէալ, 2006, 12:
- 54.- ՀՕՄ-ի Մոնթրէալի Մասնաճիւղ / Յիսունամեակ / 1957-2007, Մոնթրէալ, 1957, էջ 4:
- 55.- Նոյն, էջ 23:

- 56.- Լր, Մարտ-Ապրիլ 1961, էջ 6:
- 57.- Կարօ Գեորգեան, Ամէնուն Տարեգիրքը, Պէյրուք, 1962, էջ 333-355:
- 58.- Նոյն, էջ 336:
- 59.- Նոյն, էջ 336-337:
- 60.- Նոյն, էջ 340:
- 61.- Նոյն, էջ 354:
- 62.- Նոյն, էջ 355:
- 63.- Նոյն, էջ 348:
- 64.- Նոյն, անդ:
- 65.- Նոյն, անդ:
- 66.- Նոյն, անդ:
- 67.- Նոյն, էջ 349:
- 68.- Զեկոյց Ս. Յակոբ Հայց. Եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Լր, Մայիս-Յունիս 1961, էջ 1:
- 69.- «Նոր Տարեշրջանի Առօրէի» խմբագրական, Լր, Յունիս-Օգոստոս 1961, էջ 1:
- 70.- Նոյն, անդ:
- 71.- «Զայնը Որ Պիտի Հնչէ Միշտ... Հոգելոյս Կաթողիկոսի Սրտաբուլի Քարոզներէն», Լր, Փետրուար 1963, էջ 1:
- 72.- Հոգելոյս Զարեհ Ա. Կաթողիկոսի Հոգեհանգստեան Արարողութիւնը Ս. Յակոբ Եկեղեցւոյ Մէջ, նոյն, էջ 2:
- 73.- Նոյն, անդ:
- 74.- Եօթներորդ Անդամական Ընդհանուր Ժողով, Լր, Յունիս-Յունիս 1963, էջ 4:
- 75.- Խորէն Ա. Կաթողիկոսի Արժանիքներուն Վկայութիւնները՝ Իր Ուսուցչին Բիւզանդ Եղիայեանի Կողմէ, Քաղուած Հայրենիք Օրաթերթէն, Լր, Մայիս 1963, էջ 2-3:
- 76.- ԲՆ, էջ 766:
- 77.- ԲԿ, էջ 58:
- 78.- Գործադիր Մարմինի Գ. Զեկոյց. Հոկտեմբեր 1959 թուակիր:

- 79.- Անդամական ժողովի Ատենագրություն, 23 Մայիս 1963:
- 80.- Նոյն:
- 81.- Ատենագրություն Հոգաբարձության, 30 Յուլիս 1963:
- 82.- Ատենագրություն Հոգաբարձության, 16 Յունիս 1964:
- 83.- Հոգաբարձության Տարեկան Տեղեկագիր, 1964-65:
- 84.- Ատենագրություն Հոգաբարձության, 2 Ապրիլ 1963:
- 85.- Ատենագրություն Հոգաբարձության, 18 Յունիս 1963:
- 86.- Ատենագրություն Անդամական Զ. Ընդհանուր ժողովի, 26 Մայիս 1963:
- 87.- Տեղեկատուություն Ս. Յակոբ Եկեղեցույ Հոգաբարձության, Լր, Մարտ 1965, էջ 11:
- 88.- Ատենագրություն Հոգաբարձության, 7 Հոկտեմբեր 1965:
- 89.- Ատենագրություն Հոգաբարձության, 14 Հոկտեմբեր 1965:
- 90.- Նոյն:
- 91.- Նոյն:
- 92.- Նոյն:
- 93.- Ատենագրություն Հոգաբարձության, 30 Նոյեմբեր 1965:
- 94.- Ատենագրություն Հոգաբարձության, 10 Մայիս 1966:
- 95.- Նոյն:
- 96.- Ս. Յակոբ Եկեղեցույ Օծման Եօթներորդ Տարեդարձի Ոգեկոչումը, Լր, Մայիս 1966, էջ 10:
- 97.- Ատենագրություն Հոգաբարձության, 14 Յունիս 1966:
- 98.- Նոյն:
- 99.- ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութենեն 15 Յուլիս 1966 թուակիր նամակ՝ ուղղուած Հոգաբարձության:
- 100.- Հոգաբարձութենեն 23 Օգոստոս 1966 թուակիր նամակ՝ ուղղուած ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան:
- 101.- Ատենագրություն Հոգաբարձության, 28 Յունիս 1966:
- 102.- Օրինակելի Երեսոյթ, Գեորգ Գ. Գաբրիէլեանէ 13 Նոյեմբեր 1966 թուակիր նամակ՝ ուղղուած Հոգաբարձության եւ Անդա-

- մական ժողովին, Լր, Հոկտեմբեր-Նոյեմբեր-Դեկտեմբեր 1966, էջ 10-11:
- 103.- Ժամանակագրական Տեղեկութիւններ Վազգէն Ա. Եւ Խորէն Բ. Կաթողիկոսներու Եթովպիա Եւ Գահիրէ Այցելութեան Մասին (ԺՎԽ), Լր, Փետրուար 1965, էջ 8: Նաեւ՝ Ապրիլեան Եղեռնի Յիսնամեակը Մեծ Շուքով Ոգեկոչուեցաւ Մոնթրէալի Մէջ (ՅՄ), Լր, Ապրիլ 1965, էջ 5:
- 104.- ԺՎԽ, Լր, Փետրուար 1965, էջ 11:
- 105.- ՅՄ, Լր, Ապրիլ 1965, էջ 6:
- 106.- Նոյն, անդ:
- 107.- Նոյն, անդ:
- 108.- Նոյն, էջ 7:
- 109.- Նոյն, էջ 10:
- 110.- «Մեր Առաջին Յիսուն Տարիները» / Յիսունամեակ Մոնթրէալի ՀՄԸՄ-ին, 1958-2008, Մոնթրէալ, 2008, էջ 3: Յետ այսու՝ ՀՄ50:
- 111.- Նոյն, էջ 4:
- 112.- Նոյն, անդ:
- 113.- Հաղորդագրութիւն Մոնրէալի Կամֆ Մարմնամարզական Ակումբի Եւ Հայ Հետազօտիչներու Ընկերակցութեան», Լր, Մարտ 1965, էջ 13:
- 114.- Նոյն, անդ:
- 115.- ՀՄ50, էջ 5:
- 116.- ՀՄԸՄ-Կամֆէն 10 Յունուար 1967 բուսակիր մամակ՝ ուղղուած Հովիւ եւ Հոգաբարձութեան:
- 117.- ՀՄ50, էջ 2:
- 118.- Յուշամատեան ՀՄԸՄ-ի 90-Ամեակին, 1918-2008, Մոնթրէալ, 2008, էջ 4:
- 119.- «Համագգայինի Հիմնումը», Լր, Օգոստոս 1963, էջ 4:
- 120.- Նոյն, անդ:
- 121.- Համագգային/75, 1928-2003, Պէյրութ 2003, էջ 5:
- 122.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 22 Մայիս 1968:



- 123.- Նոյն :
- 124.- Նոյն :
- 125.- Ազգային Կեդրոնական Վարչութենէն 1 Յուլիս 1968 թուակիր  
նամակ՝ ուղղուած Հովիւին եւ Հոգաբարձութեան :
- 126.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 31 Յուլիս 1968:
- 127.- Ատենագրութիւն Յանձնախումբի, Նիստ Ա.:
- 128.- Հայրենիք օրաթերթ, 9 Փետրուար 1969: Կտրօն եր. Բաստրման-  
եանի արխիւին մէջ պահուած :
- 129.- Առաջնորդ Հրանդ արք. Խաչատուրեանէ 8 Մայիս 1970 թուակիր  
նամակ՝ ուղղուած Հովիւ եւ Հոգաբարձութեան :
- 130.- Խորէն Ա. Կաթողիկոս, Հայրապետական Պատգամ Մարդկային  
Իրաւանց Միջազգային Տարուան Առթիւ, Լր, Յունուար 1969, էջ  
3-4:
- 131.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 12 Մայիս 1970:
- 132.- Ատենագրութիւն Հոգաբարձութեան, 3 Նոյեմբեր 1970:
- 133.- եր. Բաստրմանեանէ 29 Մարտ 1970 թուակիր նամակ՝ ուղղուած  
Միհրան Փափագեան Կոմիտէին :
- 134.- Գարեգին եպս. Սարգիսեանէ 23 Մայիս 1970 թուակիր նամակ՝  
ուղղուած Հովիւ եւ Հոգաբարձութեան :
- 135.- Պերն Թ. Մոմենեան, Հայ Կեդրոնի Հիմնարկէքը, Լր, Սեպտեմ-  
բեր-Հոկտեմբեր 1972, էջ 8:
- 136.- Վրէժ-Արմէն Արթինեան, Մեր Տան Հիմերը, Լր, Սեպտեմբեր-  
Հոկտեմբեր 1972, էջ 11:
